



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



ՈՒԽՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



Թարգմանութիւնը, առաջարանը եւ
ծանօթագրութիւնները Վարագ Առաքելեանի

Խմբագիր՝ Ալ. Յակոբեան



ԵՐԵՒԱՆ

2006

Հրապարակուել է պետական պատուէրով

ՈՒԽՏԱՆԵՍ ԵՊԻՄԿՈՊՈՍ: ՀԱՅՈՑ ՊԱՏՍՈՒԹԻՒՆ:
Թարգմանութիւնը, առաջարանը եւ ծանօթագրութիւնները
Վարագ Առաքելեանի: Խմբագիր՝ Ալ. Յակոբեան:
Երևան, «Հայաստան», 2006, 264 էջ:

Ժ դարի պատմիչ Ուխտանես եպիսկոպոսի երկասիրութեան 3 հատուածներից պահպանուել են առաջինը՝ նուիրուած Հայաստանի վաղժօվական պատմութեանը՝ սկզբից մինչև քրիստոնութեան ընդունման ժամանակաշրջանը, եւ երկրորդը՝ Ժ դարի սկզբին տեղի ունեցած Վրաց եւ Հայոց եկեղեցիների բաժանման մասին: Երջանկայիշատակ քանատէր-լեզուարան, պրոֆեսոր Վարագ Առաքելեանի կատարած աշխարհաբար թարգմանութիւնն աչքի է ընկնում իր ճշգրտութեամբ եւ շարադրանքի պարզ ոճով: Ուսումնասիրող Ուխտանեսի՝ 1871 թ. Վաղարշակատի երատարակութեան բնագիրը համեմատել է պահպանուած Ժ դարի ձեռագրի եւ պատմիչի օգտագործած սկզբնադրիների ընթերցումների հետ: Գիրը նախատեսուած է պատմաբանների, քանատէրների, հայագէտ ուսանողների եւ ընթերցող լայն շրջանակների համար:

ՈՒ 6503020913
701(01)2006 2006 պա.

ISBN 5-540-02043-x

ԳՄԴ 63.3

© Վարագ Առաքելեան, թարգմ., 2006 թ.:
© «Գրական հայրենիք» («Հայաստան») 2006թ.:

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Նախորդ դարի երկրորդ կէսի հայ ամենից աւելի վաստակաշատ բանաէր-լեզուարաններից մէկը, նաև ազգային ու հասարակական գործիք եւ իր հայրենիքի անկախութեան զաղափարի ու պայքարի անմնացորդ նուիրեալ պրոֆեսոր Վարագ Առաքելեանը (1911-2001 թթ.) Ժ դարի պատմիչ Ուխտանես եպիսկոպոսի այս բաւականին ծաւալուն երկի թարգմանութիւնը կատարել է իր անշափ տառապալից, բայց միաժամանակ նախանձելիութեան աստիճանի բեղմնաւոր կեանքի վերջին տասնամեակներին: Պահպանուած մեքենագիրը կրում է հեղինակի՝ բում է, թէ արդէն դողդոցուն ձեռքով արած բազմաբի ուղղումները եւ «1991 թ.» ձեռագիր նշումը:

Աշխատանքի խմբագրման լնրացքում այդ մեքենագիրը եւս մէկ անգամ համեմատել ենք հեղինակային ձեռագիր օրինակի եւ Ուխտանեսի մասին նրա բազմաբի գրառումների հետ, որոնք մեծ խնամքով ու հոգաւարութեամբ պահպանում են լնտանեկան արխիվում:

Վարագ Առաքելեանի այս թարգմանութիւնն աշքի է ընկնում գրաբար բնօրինակի ծայրահետ ճշգրիտ վերաբարդութեամբ, որն արդիւնք է հեղինակի բազմակողմանի եւ խոր գիտելիքների: Միաժամանակ այն շափականց մատչելի է ու պարզ: Ամեն ինչից երեսում է, որ թարգմանից Առաքելեանը յատուկ ջանացել է ստեղծել ընթերցանութեան համար դիւրին բնագիր՝ հնարաւորինս գերծ դժուար հասկանալի տեղիներից ու խրճաբանութիւնից, որը պէտք է նախ եւ առաջ համակարգը, յարգանք ու սէր բորբոքէր Ժ դարի հայրենասէր մատենագիր ստեղծագործութեան նկատմամբ թէ՝ իր բովանդակութեամբ, թէ՝ անմիջական լնկալման հմայրով:

Առանձնակի խնամքով ու բարեխսութեամբ են մշակուած ծաւալուն ծանօթագրութիւնները: Դեռևս իր ուսուցիչներից եկած՝ գիտական թարգմանութեան լաւագոյն աւանդոյթներին հետեւելով՝ Վ. Առաքելեանը մանրակրկիտ համեմատել է Ուխտանեսի բարոր յայտնի աղբիւրները՝ պատմահայր Մովսէս Խորենացու, Զենոռ Գլակի, Փիլոն Տիրակացու երկերը, «Գիրք բղբոց»-ի փաստարդերը եւ այլն: Շատ լէացելում գիտականը կարողացել է մատուցել բացարձակապէս նոր եւ չափազանց ուշագրաւ փարկածներ հենց այդ աղբիւրների բնագրերի լնկալման խնդիրներում, իսկ գրեթէ ամեն բայլափոխին ճշգրտումներ ու վերականգնումներ է կատարել Ուխտանեսի՝ մեզ հասած միակ (Ժ դարի) գրչագրի լնթերցումներում:

Ուշադիր լճերցուրը թերեւս կը նկատի ծամօթազրութիւններում գրականութեան յղումների սպառապինը եւ անկատարութիւնը, որի պատճանն, իհարկէ, դժուար չէ գուշակել: Սակայն անհրաժեշտութեան դէպրում նա պէտք է դիմի աշխատանքի վերջում հեղինակի առաջարկած մատենագիտական բարական ընդարձակ ցանկին եւ նրա օգնութեամբ ստանայ սպառիչ պատասխանները: Նշենք, որ այդ ցանկի վերջում մեր կողմից յարմար ենք լիտեն՝ կրկնակի փակագծով աւելացնելու վերջին տասնամեակում ի յայտ եկած եւ մեզ ծանօթ գրականութիւնը: Յուսով ենք, որ ընթերցույթին օգտակար կը լինեն նաեւ մեր կազմած անուանացանկերը, որը հեղինակն ինքը, բնականաբար, չէր կարող ամփոփել, քանի դեռ գործը չէր հասել տպագրական փուլին¹:

Տարիմեր առաջ, 1969 թուականին լոյս տեսած Մովսէս Կաղանկատուացու (կամ Դասխուրանցու) «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի աշխարհաբար քարգմանութեան առաջարանի վերջում Վարագ Առաքենամը գրում էր. «Մեր պատմական սկզբնադրիւթերը մեզ են հասել քազմաքի արտագրութիւններից յետոյ եւ իրենց վրայ կրում են այդ արտագրութիւնների անխուսափելի սխալանքները: Մենք ճգուել ենք, որքան մեր կարողութիւնը թոյլ է տուել ընթերցողին յանձնել ճշգրիտ քարգմանութիւն»: Ֆիրափի, այս խօսքերը լիովին վերաբերում են ընթերցողի սեղանին երջանկայիշատուկ բանասէր-լեզուաբանի կողմից թէկուզ եւ յետմահու դրուած սոյն աշխատանքին: Մեր մշակոյթի ու գիտութեան համար կարեւոր է, որպէսզի այդպիսին լինի իրաքանչիր հայ մատենագրի ստեղծագործութեան աշխարհաբար քարգմանութիւն, եւ դա նաեւ հայագետների տուեալ սերնդի պատասխանատութեան խնդիրն է:

Ա. Յ.

¹ Նշենք նաեւ, որ դասական ուղղագրութեան կանոնները կիրառուել են ըստ վերջին աշխատանքի՝ Հ. Պ. Գոծաննեան, Ուղեցոյց դասական ուղղագրութեան, Վիեննա-Երևան, 2006:

ՈՒԽՏԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ուխտանեսը 10-րդ դարի հայ պատմիչ է: Գիտենք, որ նա Սեբաստիայում է ծնուել, որովհետեւ պահպանուած միակ իին ծեռագրի ընդհանուր վերնագրից յետոյ եղած բացատրագրի մէջ գրուած է. «Զպատմութիւն յերիս հատուածս, զոր ասացեալ է տեառն Ուխտանիսի Սե Ե եպիսկոպոսի ի խնդրոյ հօրն Անանիայի Նարեկայ վանաց առաջնորդի եւ նախաշար վարդապետի»: Ընդգծուած Սե-ն ենթադրում է Սեբաստիայի, որը ճիշտ վարդապետի: Ընդգծուած Սե-ն ենթադրում է Սեբաստիայի, որը ճիշտ է, քանի որ այն ուրիշ բան չի կարող նշանակել եպիսկոպոս բարից առաջ: Մնում է անհասկանակի յաջորդող Ե-ն՝ կարմիր քամարով եւ մեծատառով գրուած: Այդ Ե-ն կարող էր եպիսկոպոս բանի առաջին Ե-ն լինել, որը գրելուց յետոյ գրիչը մտածել է, թէ եպիսկոպոսը մեծատառով եւ կարմիր քամարով գրելը ճիշտ չէ, բայց է առանց ջնջումի: Խակ էլ ի՞նչ փաստեր կան Ուխտանեսին սեբաստիայի համարելու օգտին:

Հոռմէացի Լիկիանեսը Սեբաստիայում նահատակում է 40 մանկան: Ուխտանեսն ինքն է տօն սահմանում այդ լէաքի օրը: Վարդան Արենեցի պատմիչը գրում է. «Չոր Ուխտանէս տօն կարգեաց, որ է սկիզբն հանդիսին նոցա եւ կատարումն ի մարտի ինն»²: Միայն զաւահի կամ քաղաքի եպիսկոպոսը՝ առաջնորդը, կարող էր տօն սահմանել: Այդպիսի գործը նրա իրաւասութեանն է ենթակայ: Սակայն ամենաանառարկելի փաստը հենց իր՝ Ուխտանիսի հաղորդումն է: Իր գրի առաջին հատուածի վարանմէկերորդ գլխում նա պատմում է, թէ ինչպէս կուրքերին զոհ չմատուցող քրիստոնեաներից քառասուն մանուկներ քաղաքից (Սեբաստիա) փախչում եւ թաքնում են Ալիս գետի ափին գտնուող մի ամրոցում: Լիկիանեսը հրամայում է քաղաքի դրսին ու դատարկին, որ գտննեն քառասուն մանուկներին: Վերջապէս գտնում են, եւ երբ նրանք չեն հնազանդուում, բոլորին նահատակում են: Ահա այս առջիւ Ուխտանէսը գրում է. «Եւ էր օրն, յորում հանին զնոսա ի բնակութեն իրենաց, տասն եւ իինգն Արեգ ամսոյ, զոր մեր ոչ վարկապարազի ինչ, այլ ստուգի քննեալ յուսումնասիրաց ոմանց, որը էին մարդասէրք եւ աստուածասէրք, եւ վասն այնորիկ կարգեցաք մեր զօրն զայն տօն սրբոց քառասունիցն եւ սահմանեցաք մերոյ վիճակելոցն՝ տօնել ամ յամէ անխափան ի փառա Աստուծոյ» (Էջ 87): Այստեղ ընդգծուած եւ սահմանեցաք մերոյ վիճակելոցն բառերը ծեռագրից են եւ ինչ-որ մի վրիսման հետեւանքով տպագրում չկան: Ուրեմն

1. Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վեսնտիկ, 1862, էջ 42:

Ուխտանէսը Սեբաստիայում առաջնորդ եպիսկոպոս է եղել, ուստի և Սեբաստիայի ժողովրդին կոչում է իր Վիճակեալներ՝ թեմականներ:

Ուխտանէսին Սեբաստիայի եպիսկոպոս է կոչում նաեւ 13-րդ դարի պատմիշ Միփրար Այրիվանեցին՝ միաժամանակ յիշեցնելով, որ Ուխտանէսի գրքի երրորդ մասը ինքը՝ Այրիվանեցին տեսել է: Նա գրում է. «Եւ ի տոյն աւորս բաժանեցաւ ի Հայոց ազգն ծաղ ի ձեռն Փառսմանայ ումեմն փառանոյ քահանայի, որպէս պատմէ սուրբն Ուխտանէս եպիսկոպոսն Սեբաստիոյ»²:

13-րդ դարի մի այլ պատմիչ եւս՝ Ստեփանոս Օքքեանը Ուխտանէսին Սեբաստիայի եպիսկոպոս է կոչում. «Որպէս հաւատի ուսար ի սրբյն Ուխտանէսէ՝ Սեբաստացոյ եպիսկոպոսէ»³:

Այս հարցը, կարծում ենք, այլևս վէճերի տեղիք չպէտք է տար, սակայն 13-րդ դարի մի այլ պատմիչ Ուխտանէսին կոչում է Ուոհայի եպիսկոպոս: Հայոց պատմիշների շարքում Կիրակոս Գանձակեցին է դա, որ Ուխտանէսին համարում է Ուոհայի եպիսկոպոսը⁴: Ուխտանէսը Գանձակեցու նման սիրել է շրջագայել. նա եղել է Կիլիկիայում, Շիրակում, Նարեկավանքում եւ երկրի ուրիշ վայրերում, ամենայն հաւանականութեամբ՝ նաեւ Ուոհայում, որի արձագանքը էլ գուցէ հասել է Գանձակեցուն:

Իսկ սեբաստացի լինելը մէկ անգամ եւս հաստատում է Սեբաստիայի գիտերի, շէների, քաղաքի շրջակայ վայրերի մասին Ուխտանէսի լաւատեղնակությամբ: Կապուտակելք զաւառ, Թեւլախունելք, Անատավիկելք, Խարտանայք, Արմենիակը, Դագիմոն թեմներ, Մելեսիտն, Քաջ Վահան ամրոցներ, Տախալասուն, Տեւկոնց լեռներ, Եկեղեցածոր վայր, Ամասիայի մօտակայ Պուամին գլու և այլն՝ միայն տեղացին կարող է այսպիսի մանրութներ իմանալ. օտարն այդքան հեռուն չի գնայ:

Ուխտանէսը հայ մատենագիրներին յայտնի է 13-րդ դարից: Առաջին նրան յիշատակում է Վարդանը, որի մի յիշատակութեանն արդէն ծանօթացանը Ուխտանէսի՝ սեբաստացի լինելը քննելիս: Երկրորդ պատմիշը Կիրակոս Գանձակեցին է, որն Ուխտանէսին յիշատակում է Կաղանկատուացու եւ Ասողիկի միջեւ հետեւեալ ձեւով: «Եւ Տէր Յովիաննէս կաթողիկոս Հայոց, եւ Մովսէս Կաղանկատուացի՝ պատմազիր Աղուանից, եւ Ուխտանէս եպիսկոպոս Ուոհայի, որ գրեաց զբաժանումն Վրաց ի Հայոց ի ձեռն Կիրոնի եւ Ստեփանոս վարդապետ՝ մականուն Ասողիկ»⁵:

2. Գ.Հովսեպեան, Միփրար Այրիվանեցի, Երուաղեմ, 1931, էջ 46:

3. Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 99:

4. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմութիւն, Եր., 1982, էջ 24:

5. Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», Եր., 1961, էջ 7:

Կիրակոս Գանձակեցին երկրորդ անգամ Ուխտանէսին յիշատակում է, եթի խօսում է Հայոց եւ Վրաց եկեղեցիների յարաբերութեան, աւելի ճիշտ Վրաց եկեղեցու՝ հայկականից բաժանուելու եւ քաղկեդոնականութիւնների մէջ նտնել՝ Կիրակոսը գրում է. «Զայս ամենայն ատուգութեամբ ուստուցած քեզ Ուխտանէս եպիսկոպոս, զի նա զամենայն լիով գրեաց՝ գրութիւն եւ զպատախանիսն, եւ գրաջախօսութիւնն Պետրոսի եպիսկոպոսի»⁶:

Յաջորդ պատմիչը, որը դարձեալ յիշատակում է Ուխտանէսին, Միփրար Այրիվանեցին է, որի՝ Ուխտանէսի սեբաստացի լինելու մասին կարծիքն արդէն ծանօթացանք: Միւս անգամ «Պատմագիրը ի սկզբանե» վերանագրի տակ նա բուարկում է պատմիշներին եւ Ուխտանէսին տեղ յատկացնում Ղետնի Երեցի եւ Յովիաննէս կաթողիկոսի միջեւ: Իսկ Երկրորդ անգամ՝ 981 բուականի տակ, խօսքն այսպէս է սկսում. «Աստ եղել սկիզբն թագաւորելոյ Բագրատունեաց ի Վերայ Վրաց, զի Գորգէն ի Վրաս եւ Սմբատ Եղբայր նորա՝ ի Հայս թագաւորեցին: Սա զԱնոյ պարիսպն ամրացոյց եւ զմեծ կաթողիկէն իմբնարկեաց: Վահրամ իշխանն զՄարմարաշէնն շինեաց: Աստ Աղուանից պատմագիրն՝ Մովսէս Կաղանկատուացի եւ Գրիգոր Նարեկացի եւ Ուխտանէս պատմագիր»⁷:

13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օքքեանը քաջածանօթ է Ուխտանէսի երկին: Ինչպէս արդէն վերեւում տեսանք, նա եւս վճռականորեն Ուխտանէսին սեբաստացի է համարում: Երկրորդ անգամ, խօսնով Հայոց, Աղուանից, Սիսեաց եկեղեցիների յարաբերութիւնների մասին՝ Օքքեանն այսպէս է գրում. «Եւ արդ՝ ո՞վ զներեցաւէր, զայս փոքր ի շատ համառօտիք ցուցի քեզ զբայական միայն. եւ թէ զիովն եւ զերկայնն կամիս լսել, լըներցիքի զՈւխտանէսն եւ զԱղուանից պատմութիւնն եւ ի Գիրս բղբցն տեղեկացիր»⁸:

Սուրեն Քոյլանչեանը, որը կազմում է Ուխտանէսի բնագիրը եւ խորապէս ուսումնասիրել է Ուխտանէսին վերաբերող ամեն մի յիշատակութիւն, գրում է. «Պատմիշը դարձեալ միայն Ուխտանէս ձեւով է յիշում նաեւ Յովիան Դամասկոսուն վերագրուած թորի հայ-հոռոս մեկնիչի կողմից: Դարձեալ իբրեւ միայն Ուխտանէս է յիշում 17-րդ դարին վերաբերող երկու մատենագիտական ցանկերում՝ Մաշտոցի անուան Մատենադարանում եղորդ. «Այս եւ պատմագիր ամենայն եւ Վարդան Բաղդիեցու կազմած «Պատմագիրը Հայոց» ցուցակներում: Այնինչ Ուխտանէսին միայն

6. Նոյն տեղում, էջ 46:

7. Նոյն տեղում, էջ 57:

8. Ստեփանոս Օքքեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 106:

իրեն Ուոհայի թեմակալ են ճանաչում 18-րդ դարի մեր բոլոր մատենագիրները, ինչպէս Ղազար Զահկեցին, Եսայի Հասան Զալալեանը, Պետրոս Զուղայեցի Մարտիկենցը (1772 թ. տեղեկացրել է Միքայէլ Չամքեանին): Միքայէլ Չամքեանը իր «Պատմութիւն Հայոց»-ում 1797 թ. Յարութիւն Սահակեան Զուղայեցուն գրած բլրում, երբ Վենետիկի Մատենադարանում շտոնուող մատենագիրների երկերն է թում. եւ վերջապէս Մադրասում հրատարակուած անդրանիկ պարբերականում՝ «Ազդարարում» Յակոբ Ամիքեանցի հրատարակած մատենագիտական ցուցակում⁹:

Այժմ համառօտակի շարադրենք նոր ժամանակի հայ գրականութեան, պատմագիտութեան եւ բանասիրութեան մէջ արտայայտուած կարծիքներն ու բնութագրումները, որոնք վերաբերում են Ուխտանեսին եւ նրա թերի վիճակով մեզ հասած երկին:

Նոր ժամանակներից առաջինը պետք է նշենք Մ. Չամչեանին, որը երկու անգամ է յիշատակում Ուխտանեսին. առաջին անգամ ասում է, որ իրենք (Միխիթրեանները) շտոնեն Ուխտանեսի գլորը, իսկ երկրորդ անգամ յիշատակելիս վկայակոչում է Գանձակեցու ասածը նրա մասին. «Այս ամենայն ստուգութեամբ ուսուցանէ քեզ Ուխտանես եալիսկոպսն, զի նա զամենայն լիով գրեաց եւ զբուրսն եւ զպատասխանիսն»¹⁰:

Ուխտանեսի գրքի հրատարակիչը (Արել Միխիթրեանց¹¹) առաջարանում զնահատելով պատմիչի երկը՝ ասում է, որ գիրքը կարենոր տեղեկութիւններ է հաղորդում վրացիների՝ մեզանից բաժանուելու, Մովսես Բ եւ Աբրահամ Ա կաթողիկոսների մասին, որոնք գործել են 6-րդ դարում:

Գրականագէտ Գ. Զարպիհանալեանը պատմում է գրքի բովանդակութիւնը եւ իրեն զնահատութիւն նշում է. «Ուխտանեսի լեզուն պատմական արժեք ունի, նաև լեզուն ու ոճը ունեն իրենց յարգը, ուստի եւ իրաւամբ հաճելի է բանասէրներին»¹²:

Նետն Ալիշանը ամենից առաջ բարձր է զնահատում Ուխտանեսի լեզուն, ասում է, որ ոճն ու լեզուն բաւական վայելուց եւ կրկ են, միանգամյան եւ հանդարս, հետաքննին եւ հմուտ եւ հոգեսէր. Կարելի է մտածել, որ գրութքը (առաջին հատուածը) Խորենացուց բաղուածք է, բայց այնտեղ կան նորութիւններ նաև ինչպէս՝ բառասունների մասին, Շապուհից բերուածը Դարի բայի մասին, Հրաչի եւ Տրդատի մենամարտը, Տրդատի

9. Տե՛ս Ս. Քոլանշեանի «Ծչքրտումներ Ուխտանես պատմիչի կենսագրութեան վերաբերեալ» յօրուածը, որտեղ նշուած են յիշատակումների աղբիրները. «Պատմաբանասիրական հանրէս», 1980, հար. 4, էջ 162:

10. Մ. Չամչեան. Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1785, հու. Ա, էջ 18 և հու. Բ, էջ 556:

11. Հ. Գ. Զարպիհանալեան, Հայկական իհն դարութիւն, Վենետիկ, 1897, էջ 560:

դաշնաղրութիւնը Կոստանդիանոսի հետ, Հայոց երեսուն նախապատի արողութեան եալիսկոպոսների մասին, Ամասիայի վկայութեան, Շուշանիկի Ուփեր բերդում տառապանքի եւ այլնի մասին: Ենուոյ Ալիշանը մանրամասնօրէն պատմում է գրքի երկրորդ հատուածի բովանդակութիւնը¹³:

Ուխտանեսի «Հայոց պատմութիւն» գիրքն ամենամանրամասն ու բազմակողմանի քննութեան է ենթարկել Ներսէս Ակինեանը: Գրքի առաջին հատուածի վերաբերեալ նա ասում է, որ չնայած քաղագրութիւն է, բայց ունի բանասիրական արժեք իհն ասանդութիւնների, զրոյցների քննութեան առումով: Ակինեանը նաև նշում է Շապուհ Բագրատունու գրքից մի ամրող գլխի արտագրութիւնը Ուխտանեսի կողմից:

Ըստ Ակինեանի՝ Հայոց եւ Վրաց եկեղեցիների բաժանման պատմութեան համար Ուխտանեսի երկրորդ հատուածը այս միակ նիւթն է, որ գրուած է շատ խնաճրով, վկայութիւններով, նամակներով, մարդկանց խօսեցնելով եւ այլ միջոցներով: Եթի անիրածեցին է եղել, հեղինակը ճամփորդել է ու տեղեկութիւններ հաւաքել բանիմաց մարդկանցից: Այս նիւթի համար Ուխտանեսն օգտագործել է Կաղանկատուացու (Դասխուրանցու) «Աղուանից պատմութիւնը», Սեբիոսի «Հերակի պատմութիւնը», Կիրակոս քահանայի՝ Վրացերենից թարգմանուած երկու նամակները, Մովսեսի՝ Կիրոնին գրած եւ Կիրոնի՝ Մովսեսին գրած բոքերը, որոնք ոչ մի որիշ տեղ չկան¹⁴:

Ուխտանեսն իրեն պատասխանատու է զգում ոչ միայն իր բարեկամի, գուցէ եւ ուսուցչի՝ Անանիա Նարեկացու առջեն, այլև յարգանք է տածում պատմութեան նկատմամբ: Այս առումով նա հետեւում է Խորենացուն, ձգտում ամեն իհն ստուգել, ծշտել եւ ապա միայն գրի առնեն, որպէսզի պատմութեան մէջ անձշտութիւն չանցնի: Պատմիչի այսպիսի նկարագիրը նրա ամենաբարձր արժանիքն է: Ինչքա՞ն արժեքաւոր գործ կը լինէր, եթէ այս բոլորի հետ նա միեւնոյն հոգատարութեամբ ու խնաճրով գլուր իր ժամանակի պատմութիւնը: Իր երկի 2-րդ հատուածի մէջ գլխում նա գրում է. «Իսկ նախքան Կիրոնի եւ մեզնից նրա բաժանուելու մասին խօսքներին ու գործներին մեր կողմից ծեռնարկելը՝ կը կամենայի պատմել եւ մի այլ պատճառի մասին, որ մենք լսել ենք շատերից բազում անգամ, չնայած գրաւոր որեւէ գրքում չենք զտել: Թեեւ սա նաև դատարկաբան գրոյցներից չէ, այլ ծերերի աւանդութիւնից եւ ընթերցասէր վստահելի մարդկանցից է ասուած, որ կը կամենայի շարադրել այս պատմութեան գրութեան հերթականութեան մէջ»: Իր ձգտան մասին աւելի որոշակի է խօսում

12. Հ. Գ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 86:

13. Հ. Ն. Ակինեան, Կիրոն կաթողիկոս Վրաց, Վենետիկ, 1910, էջ 61-62:

ԿԲ գլխում ասում է, որ ինքը պատուիր է ստացել ամեն բանի մասին հոգակ եւ միայն հաւաստին շարադրել, քանզի իր կարծիքով՝ պատմոթեան մեջ անձիշտ բան գրելը՝ դիտաւորեալ, թէ անդիտում յանցանք է:

Աքրահամ Զամինեանը գտնում է, որ Ուխտանէսը վախճանուել է 986 քուականից առաջ, որովհետեւ այլ ժամանակ Սեբաստիայի առաջնորդն էր Սիսն Եպիսկոպոսը: Իրեւ գնահատութիւն՝ Զամինեանը Ուխտանէսի մասին ասում է, որ պատմիչը չունի ընտիր հայերէն, քայց իր ժամանակի միև գրողների համեմատութեամբ լեզուն բաւական սահուն է, «ազատ այն խրճնացուցիչ բառակոյտերէն, որն այնքան սիրելի եղած են Յովիաննես կարողիկոսին ու Թովմա Արծրունուն»: Ըստ Ա. Զամինեանի՝ աւելի կարեւոր է գրի երկրար մասը, որը վերաբերում է հայ եւ վրաց եկեղեցիների բաժանմանը: Ուխտանէսը օգտուել է բանաւոր ալրիւրներից, քայց «Գիրք թրթոցի» երատարակութիւնից յետոյ գրի այս մասն էլ իր արժեքը կորցրել է: Այնուամենայնիւ Ուխտանէսը շատ լաւ տեղեկութիւններ է տալիս 7-րդ դարի գործիչների մասին՝ Սմբատի, Վլթանէսի, Մովսէսի եւ այլն: Կարեւոր են նաեւ այն տեղեկութիւնները, որոնք երկրարդ հատուածում վերաբերում են վրացիներին¹⁴:

Վրանէս Փափազեանը Ուխտանէսի մասին ասում է, թէ տասնմերորդ եւ տասնմէկերորդ դարերի պատմիչներից յատուկ ուշադրութեան արժանի եւ նաեւ Ուխտանէս Եպիսկոպոսը, որը գրել է Վրաց եւ Հայոց (Եկեղեցիների) բաժանման պատմութիւնը: «Ուխտանէսի պատմութիւնը կիսատ է մեզ հասել, քայց հասած կտորները կարեւոր են հայ եկեղեցական պատմութեան համար»¹⁵: Ուխտանէսի մասին որեւէ գնահատականի խօսք չի ասում Եղիշէ Դուրեանը. գրում է միայն պատմութեան հատուածների նիւթի մասին շատ համառօս մի պարբերութիւն¹⁶:

Ինչպէս նկատում ենք, Ուխտանէսն անտեսուած է մնացել եւ այս անտեսուածութիւնն ունի իր պատճառները: Ուխտանէսի գրի առաջին մասն խկապէս քաղագրութիւն է: Առաջին գրիսի մի նամակ է, որը պատմին ուղղել է իր մեկնասին, որը նրան առաջարկել էր Հայոց պատմութիւն գրել: Ուխտանէսն այնքան է յարգել ու սիրել իր մեկնաս Անանիա Նարեկացուն, որ պատկերացուն խսկ չունենալով իր գրելիք նիւթի մասին եւ իրեն պատրաստ զգալով այդպիսի ծանր բեռի տակ մտնելու՝ յանձն է առել միայն իր բարեկամի (ոմանց կարծիքով նաև ուսուցչի) կամքը եւ պահանջը կատարած լինելու համար: Այդ յարգանքն ու պատկառանքն իր

14. Ա. Զամինեան, Հայ գրականութեան պատմութիւն, Նոր Նախիջեան, 1914, էջ 154-55

15. Վ. Փափազեան, Պատմութիւն հայոց գրականութեան, Թիֆլիս, 1910, էջ 165

16. Ե. Դուրեան, Ամբողջական երկեր, Խո. Ա. Երուսաղեմ, 1933, էջ 177

բարեկամի հանդէա նա արտայայտել է մի պերճ, քայց եւ այնպիսի խրթին ու վերամբարձ լեզուով, որ ժամանակին Ուխտանէսի գիրքը ֆրանսերէն բարգմանող ակադեմիկոս Մարի Բրուտէն քաց է քողել երկի այդ առաջին գլուխը, ամենայն հաւանականութեամբ՝ գլուխ չհանելով: Քայց հենց այս գլուխ շարադրանքը ցոյց է տալիս, որ Ուխտանէսը սպորական դպրոցական ուսումից աւելի բարձր կրութիւն է ունեցել եւ կամ ընդունակ է եղել հայերէն այնպիսի ոճով գրութիւնները շարադրելու, որ Անանիա Նարեկացին ոչ միայն նամակով, այլև երես առ երես հենց նրան է առաջարկել գրել Հայոց պատմութիւնը:

Հնարաւոր է, որ Անանիա Նարեկացին Հայոց պատմութիւն ասելով հասկացել է պատմութիւնը մինչեւ իրենց ժամանակը, այլ ոչ թէ միայն՝ խորենացու եւ որիշների հաւաքածի կրկնութիւնը: Չենոք Գլակից եւ Կայսերաց գրքից քաղագրութիւնները թերեւս այն ժամանակ էլ Հայոց պատմութեան համար չին կարող մնել արժէք ունենալ, որովհետեւ կարելի էր այդ երկերը պարզապէս մէկ անգամ էլ արտագրել, մանաւանդ կար նաեւ հանրահոչակ Քերքողահայր խորենացու Պատմութիւնը: Իսկ Կայսերի գրի կամ աւելի ճիշտ՝ 7-րդ դարի երկրորդ կեսում ստեղծագործած Փիլիս Տիրակացու ժամանակագրութեան քաղագրութիւնը Հայոց պատմութեան համար զիշ նշանակութիւն ունեցող մի աշխատանք էր: Ամենաշատը դա կարող է ծառայել միայն որոշ քուականներ ճշտելու համար, այն էլ՝ եթէ այդ տեղեկութիւնները ստոյգ են:

Այժմ համառօտ կերպով տեսնենք, թէ ինչ են ներկայացնում այդ քաղագրութիւնները, որոնք պատճառ են դարձել, որպէսզի Ուխտանէսի գիրքը համարեա անտեսուի նոր պատմագիտութեան մեջ: Գուցէ նաեւ իիները երեք դար այդ գրի հանդէա հետաքրքրութիւն հանդէս չեն թերեւ:

Առաջին գլուխ մասին ասացինք, որ այն պատմութիւն գրելու մասին մի տեսակ նամակ-յանձնառութիւն է, որն ուղղուած է Անանիա Նարեկացուն: Դա բաւական ընդարձակ, վերամբարձ ու խրթին լեզուով շարադրուած գրութիւն է, որի հեղինակը փորձում է Աստուածանչի խօսքերու ու սկզբունքներու իիմնաւորելու իր արածի կամ մտածածի ճշմարտացիութիւնը: Այդ նամակ-նախադրյութիւնը՝ յիշեալ բովանդակութեամբ, Ուխտանէսը գրում էր Անանիա Նարեկացուն՝ եւ զգիտեմ՝ սեփական ճշմարտանութեամբ, որին այդ ժամանակ ինչ-ինչ ուժեր մեղադրում էին աղանդաւորական հոսանքներին համակրելու մեջ: Յամենայն դէպս, յիշեալ բովանդակութեամբ այդպիսի մտերմական նամակ գրելու անհրաժշտութիւնը ուշադիր ընթերցողի համար մինչեւ վերջ ընկալելի չէ, մանա-

თანი თე Անանիան իրեն՝ Ուխտանէսին ճանաշում էր, ուստի եւ վերջինս պէտք չունէր, թերեւ՝ առաքելական պատուիրանների նկատմամբ իր հաւատարմութիւնը ցուցադրելու:

Բայց այդ առաջին գլուխը նաեւ մի տեսակ առաջարան-ճախադրութիւն է, որտեղ Ուխտանէսը փաստօրէն յայտնում է, թէ ինչի մասին է գրելու: Սկզբում՝ իր վարդապետի ծրագրածի օրինակով. «Արդ՝ քանզի մենք լսել էինք քո պատմութեան մասին, որ ստեղծելու էիր ոչ մեծ հատուածով՝ [Հայոց] նախնի թագաւորների սկզբից մինչեւ մեր ժամանակը ... ընթերցողներին մխիքարելու եւ լսողներին լուսաւորելու, ... սուրբ եկեղեցու պայծառութեան համար...» (տե՛ս ստորեւ, էջ 27-28): Ապա լրացնում է իր անելիքի մասին. «Նախ՝ պէտք է դասաւորեմ մեր թագաւորների ու հայրապետների թիւը, եւ ապա՝ Վրաց բաժանումը Հայոց միաբանութիւնից, եւ դրանից յետոյ՝ այն ազգի մկրտութիւնը, որ կոչում է Ծայր» (տե՛ս ստորեւ, էջ 29): Այս վերջինի նմանութեամբ գրուած է երկի պահպանուած միակ հին ծեռագրի վերնագրում. «Հատուածն առաջին. Յաղագ թագաւորաց եւ հայրապետաց մերոց. եւ երկրորդն. Վասն բաժանման Վրաց. եւ երրորդն. Յաղագ մկրտութեան ազգին այնմիկ՝ Ծայրն կոչեցեալ»:

Այս առաջարանից յետոյ հեղինակը 26 գլուխ քաղուածաբար, վերապատմելով կամ բառացի արտագրելով, վերցնում է Խորենացու առաջին գրքի Դ, Ե, Ը, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԵ, ԺՉ եւ այլ գլուխներից (կրկնենք, որ մեր կարծիքով՝ Անանիա Նարեկացին թերեւ Ուխտանէսին առաջարկել է գրել իր ժամանակի պատմութիւնը, այլապէս մի՞թէ վարդապետը չգիտէր, որ Խորենացին արդէն Հայոց պատմութեան սկիզբը շարադրել է, եւ Ուխտանէս այլ բան չի կարողանալու անել, բան եղածը կրկնելը): Եւ անմիջապէս, հենց երկրորդ գլխից սկսում է պատմել Աղամի եւ նրան յաջարդած նահապետների կեանքն ու գործը, որոշ խառնակութեամբ խօսում նրանց յատկացուած տահմանների ու վայրերի մասին, մի բան, որ ինչպէս ասացինք, Խորենացին շատ նահրամասն եւ կուր է շարադրել:

Միայն 15-րդ գլխից Ուխտանէսն սկսում է Հայոց նախահայրերի՝ Հայկի եւ նրա սերունդների պատմութիւնը, սրանց գործերն ու Հայատանում գրաւած երկրամասերը, որ լարձեալ համապատասխանում է Խորենացու պատմածին՝ կամ ազատ շարադրութեամբ, կամ բառացի վերցրած, եւ կամ էլ որոշ կրծատուններով մէջբերուած: Միայն երբեմն յիշատակուում են Պարսից, Յունաց ու իրեանների տիրակալներն իրենց տարիների բանակով եւ նրանց մասին եղած չնչին տեղեկութիւններով:

Այս շարադրանքը հասցնում է մինչեւ Կոստանդիանոս Սնձին եւ Հայոց թագաւոր Տրդատին ու Գրիգոր Լուսաւորչին: Եւ այն ժամանակաշր-

ջանի մասին, որ շատ կարենոր էր Հայոց պատմութեան համար, այսինքն՝ Տրդատին յաջորդող թագաւորների եւ Գրիգոր Լուսաւորչի շառավիճների սրանց յաջորդող այլ կաթողիկոսների կեանքի ու գործունեութեան մասին, Ուխտանէսը ոչ մի խօսք չունի ասած: Մի՞թէ նրա ձեռքի տակ չեն եղել Փատոսոս Բուզանձնը, Եղիշէն, Ղազար Փարացեցին, Սերենոսը, Ղևոնդը եւ այլ պատմիչներ, որոնց նիւթը ծաղկաբաղելով կարողանար պատմութիւնը քերել հասցնել իր ժամանակները:

Ն. Ակինեանն ասում է, որ չենք կարող պնդել, թէ այդ մասերը չեն եղել գրում¹⁷: Ուզում է ասել, թէ ինչպէս որ գրքի երկրորդ հատուածի մի մասը եւ ամբողջ երկրորդ հատուածը կորել են, այլպէս էլ հնարաւոր է, որ գրքի առաջին հատուածի վերջին մասը նոյնպէս կորսուած լինի:

Մենք այն կարծիքին ենք, որ առաջին հատուածից ոչինչ չի պակասում, իսկ երկրորդ հատուածից շատ քիչ բան է կորսուած, որովհետեւ ամբողջ երկրորդ հատուածի նիւթը հիմնուած է «Գիրք թղթոցի» վրայ: Ուխտանէսը միայն նամակներն են նոյնութեամբ բերում համառու թացատրութեամբ ու մեկնաբանութեամբ: Իսկ, ինչպէս գլխենք, նրա գրքի երկրորդ հատուածը վերաբերում է Հայոց եւ Վրաց եկեղեցիների բաժանմանը՝ այսինքն Կիրոնի՝ Վրաց կարողիկոս դատանարարութիւններուն, մի բան, որ յանգեցնուն է եկեղեցիներ բաժանմանը եւ Հայոց եկեղեցուն գերիշխանութիւնը մերժելուն: Իսկ «Գիրք թղթոցի» այն նամակները, որոնք վերաբերում են հայ եւ վրաց եկեղեցական յարաբերութիւններին, վերջանում են «Ծուոք շրջաբերական» («Գիրք Ծորոցում»՝ շրջագայական) տեառն Արքահամու Հայոց կարողիկոսի» նամակով: Դրանից յետոյ «Գիրք թղթոցում» այլեւ ոչ մի նամակ չկայ, որ առնչուի Հայոց եւ Վրաց եկեղեցիների յարաբերութիւններին: Մնացած նամակներն այլ բնոյրի են, ուստի եւ Ուխտանէսը իր նիւթը սպառուած է համարել, մանաւանդ որ շտապելուց այդ վերջին նամակի շատ մասեր էլ կրծատուած են (կրծատումը մօտ կիսով չափ է):

Արքահամ Աղքարաննցու շրջաբերական նամակի վերջում տասնեօր տող է կիսատ, որը մենք թարգմանութեամբ բերում ենք «Գիրք Թղթոցից» թառակուսի փակագծում իրեն վերականգնուու: Մեր կարծիքով՝ երկրորդ գիրքը նոյնպէս աւարտուած է՝ չնայած Սուրեն Քոլանջեանն իր յօդուածում ասում է, թէ ծեռագիր պատառիկների մէջ ինքը 11 էջ հենց գրքի երկրորդ հատուածից յայտնաբերել է¹⁸: Հետաքրքրական կը լիներ տեսնել այդ 11 էջը եւ իմանալ, թէ ի՞նչ բնոյրի նիւթ է, կամ արդեօք Ուխտանէսինն 13

17. Տե՛ս Հ. Ակինեան, Կիրոն կարողիկոս Վրաց, էջ 68-89:

18. Տե՛ս Ս. Քոլանջեան, ճշգրտումներ Ուխտանէս պատմիչի կննագրութեան վերաբերեաւ, էջ 160:

է, թէ՞ մէկ ուրիշ անձի:

Ինչ վերաբերում է երրորդ գլխին, ապա այն ես հաստատապէս եղել է: Սխիքար Այրիվանեցին մեզ այդ մասին տեղեկացնում է հետեւեալ ձեռվ. «Արդ՝ որպէս առաջին ասացար՝ սորրն Ստեփանոս զայր ի կարողիկոսարանին եւ լուսաւորէր զամենեսեան քանի Վարդապէսութեան իւրոյ: Հանդիպեցաւ նմա հակածառութին ընդդէմ Սմբատայ Երկարնակի, որ էր սպարապէտ Հայոց եւ դաւանակից Յունաց, զոր յետոյ ՄՀ քոյին ի համանուն քոնճ սորա յայտնեցաւ աղանդն քոնդրիկեցոց յաւորս Դաւրի կաթողիկոսի Կալվատեցոյ: Եւ ի այն աւորս բաժանեցան ի Հայոց ազգն Ծաղ ի ձեռն Փարամանայ ու մերն փառամոլ քահանայի, որպէս պատմէ սուրբն Ուխտանեւ եպիսկոպոսն Սերաստիոյ»¹⁹:

Խորենացոց բացի Ուխտանէսի գրքի առաջին հատուածի գլխաւոր աղբիւրներից մէկն է Ուխտանէսի մէկ-Երկու անգամ յիշատակած «Գիրք կայսերաց»-ն է, որ այժմ հրատարակուած է «Անանուն Ժամանակագրութին» խորագորվ կամ Անանիա Շիրակացու անունվ, սակայն իրականուն Սոլորատի յայտնի քարգմանիշ Փիլին Շիրակացու ժամանակագրական երկն է²⁰: «Կայսրեր» Ենթավերնագրերի տակ շարադրուածները բաղուած են այս գրքից: Երրորդ աղբիւրը Զենոր Գլակի «Պատմութիւն Տարօնյ» երկն է (Յովիան Մամիկոնեան եպիսկոպոս պատմիչի գրքի կազմում), որը հրատարակուած է Վենետիկում 1889 թ. եւ Երեւանում՝ 1944 թ.: Երեք աղբիւրներն էլ Ուխտանէսը յանուանէ յիշատակում է:

Բացի այս հիմնական աղբիւրներից Ուխտանէսի ձեռքի տակ եղել են նաև այլ կարգի գրութիւններ, ինչպէս՝ Շապուհ Բագրատունու «Հայոց պատմութիւնը», որը դժբախտաբար կորած է: Շապուհ Բագրատունուց պատմիչը մի ամբողջ գլուխ է վերցրել: Երանի չէ՞ր աւելի շատ օգտուէր, որպէսզի Շապուհ Բագրատունու գրուածքից աւելի ծաւալուն նիւթ ունենայինք՝ այդ կորած գրքի վերաբերեալ ընդարձակ զաղափար կազմելու համար: Այս գլխի վերնազիրն է. «Յաղագ բազին երանելոյն Կոստանդնուպոլիսի, թէ ուստի՝ կամ որպէ՞ն յաջողեալ եղել նմա ի Տեառն՝ Շափինյ՝ որինոյ Աշոտոյ ապահի պատրկի ասացեալ ի Պատմութեան իւրոյ» (զլ. ՀԵ):

Եթէ Ուխտանէսի գիրքը բազմակողմանի գնահատելու լինենք, ապա

19. Գ. արքեպ. Յովսէփինաց, Սխիքար Այրիվանեցի, էջ 19:

20. Անանուն Ժամանակագրութին. Խմբագիր յօրինեալ յէ բարու ի հնագոյն Ժամանակագրաց եւ հրատարակեալ Ենթածութեամբ եւ բաղդատութեամբ [Հ. Բ. Սարգսինամ], Վենետիկ, 1904, Աշ. Արքահամեան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 372-399, Հ. Բարքիկեան, Անանիա Շիրակացու վերագրուող «Ժամանակագրութեան» եւ նորա բանարադի հարցի շուրջը, «Բանքեր Մատենադարանի», թի 8, Եր., 1967, էջ 57-76:

պէտք է առաջին հերթին գնահատենք լեզուի տեսակետից: Չնայած 10-րդ դարից շատ աղբիւրներ ունենք, բայց Ուխտանէսի պատմութիւնն ամբողջացնում է մեր զաղափարն այդ դարի հայոց լեզուի վերաբերեալ: Մենք արդէն գիտենք, թէ Յովիաննէս Դրասխանակերտցին ինչպէս է որակում Շապուհ Բագրատունու լեզուն՝ «գեղջուկ բան» է կոչում: Սա նշանակում է, որ 10-րդ դարում զարարի նկատմամբ նտայնութիւնը փսխուել էր: Պահանջ էր զգացում խօսակցական լեզուով գրելու: Այս պահանջին արձագանքողներից մէկն էլ Ուխտանէսն է եղել:

Մեր պատմիչը «գեղջուկ բանի» չի գրել բայց գրել է այնպիսի զրաբարով, որ շատ պարզ է ու հասկանալի: Եթէ առաջին գրուխը որոշ խրնաբանութիւն ունի, ապա այն պէտք է զատել ընդիհանուր գործից: Այդ գրուխը նամակ է՝ ուղրուած մի նշանաւոր հոգեւորականի: Ժամանակի ընդունուած կարգն ու սովորույթը, որ հեուց էին զալիս, թոյլ չէին տայ աստիճանով վար կանգնած հոգեւորականին աւելի բարձր կանգնած մի այլ հոգեւորականի հասարակ ոճով, «գեղջուկ բանի» նամակ գրել: Սա պատշաճ չէր, ուստի եւ Ուխտանէսը լիմել է աւելի խրին լեզուի եւ բարձր ոճի, որպէսզի հասցեատիրոջը յարգանք մատուցած լինի եւ միաժամանակ ցոյց տայ իր գրագիտութեան աստիճանը, մի բան, որ մեր օրերում պահանջում է դիմում եւ նամակ գրողից: Իսկ այն, ինչ ընդիհանութիւն համար է գրել, արդէն գրել է 10-րդ դարի խօսակցական լեզուին մօտ մի լեզուով, որպէսզի սովորական ընթերցողը լրի հասկանայ եւ գրական լեզուի որոշակի մակարդակը շխախտուի:

Ուխտանէսի գիրքը զալիս է ես մի անգամ ապացուցելու, որ Հայաստանում նտայորական շարժումը կենդանի էր, եւ կային մարդիկ, որ պահանջ էին ներկայացնում եւ պատուէր տալիս ժողովրդի պատմութիւնը գրելու, որպէսզի պատմութիւնն անզիր մնալով չմոռացուի ու չկորչի: Այն գրոյցը, որ Ուխտանէսը եւ Անանիա Նարեկացին վարում են Աշուրեանի ափին, ցոյց է տալիս հայ մարդու մշակութային բարձր մակարդակը: Երկու բարեկամներ հանդիպել են եւ փոխանակ առօրեայ կեանքից ու հոգեւորից խօսելու, զիր ու գրականութիւնից են խօսում, Հայոց պատմութիւն գրելու պատուէր են տալիս ու առնում:

Ուխտանէսի գիրքը գնահատուել է նաև այն առումով, որ նա պաշտօնական փաստաբեր (նամակներ, ձեռնարկներ) ու մանր գրութիւններ է օգտագործել եւ դրանց հիման վրայ պատմութիւնն կերտել: Ուխտանէսի ձեռքի տակ է եղել նաև Ազարանգեղոսի պատմութիւնը, որից նա օգտուել է Լուսաւորչի կեանքն ու գործունեութիւնը, քրիստոնեութեան ընդունումն ու տարածումը նկարագրելիս: Նրա տրամադրութեան տակ են

Եղել Մովսէս Կադանկատուացու «Աղուանից աշխարհի պատմոթիւնը», զանազան ճառեր, վկայաբանութիւններ եւ այլ կարգի նիւթեր:

Ոմանք կարծում են, թէ առաջին գիրքը նոյնպէս կիսատ է, բայց այդ կարծիքը անտեղի է: Նախ, առաջին գրքի վերջում կայ աւարտման բանաձեւ, որն աւելի մեծ հաւանականութեամբ ենդինակինն է, ոչ թէ մի որեւէ գորինը: Ոչ որ չէր յանդզին կիսատ գործին այսպիսի աւարտուն բանաձեւ դնենլու: «Փառք փառաց փառապելոյն յամենայն յարարածոց. ամէ՞ն»: Պատմիչն առաջին հատուածը շտապ աւարտել է, որպէսզի անցնի Վրաց եկեղեցու բաժանմանը եւ ծաղերի մկրտութեամբ: Աւելին ասենք. առաջին գիշից կարծես երեւում է, որ Ուխտանէսն իրեն պատրաստ չէր զգում ընդարձակ պատմութիւն գրելու: Նա այս կամ այն երկից իր առաջին գիրքը ծաղկաբաղել է եւ թերեւս զգացել, որ Հայոց պատմութիւն չի ստացում, ուստի հետագայ շարունակութիւնն աննպատակ է համարել եւ այդ մասը դադարեցրել ու անցել է Վրաց բաժանմանը: Իսկ այս երկրորդ մասի համար նա դարձեալ դիմել է նամակներին եւ դրանք մէջ է թերեւ ամբողջութեամբ կամ կրծատումներով: Այդ բոլոր նամակները նա քաղել է «Գիրք բրոցից», որը նրա ժամանակ կազմուած է եղել իրքեւ մի ամբողջական ժողովածոյ (մի դէպրում միայն պատմիչին յաջողուել է այդ ժողովածոյի պակաս բրերը գտնել իր բարեկամ Կիրակոս քահանայի օգնութեամք²¹, որն ամենայն հաւանականութեամբ մի տփիսիսեցի հայ էր): Եւ այդ զլուխը երկարել է, որովհետեւ թերեւ է տարբեր մարդկանց գրած նամակները, որոնք բանավիճական, յանդիմանական, մասսամբ էլ բամբասանքի բնոյք ունեն եւ պարունակում են նաև կրկնութիւններ: Այլապէս երէ դա լինէր երկու եկեղեցիների բաժանման պարզ պատմութիւնը, ապա ամենաշատը քան-քանինգ էջը լրիւ բարեկան էր: Մովսէսը Կիրոնին կարողիկոս է օծել եւ ուղարկել Վրաստան: Նա էլ՝ յունական կրութիւն ստացած մի մարդ, միացել է մի ուն խուժիկ նեստորականի հետ եւ մտել կայսերական եկեղեցու գերիշխանութեան տակ՝ աւելի ճիշտ անկախացել է, որովհետեւ հեռաւոր գերիշխանութիւնը չէր կարողանում այնպէս կաշկանդել Վրաց եկեղեցու անկախութիւնը, ինչպէս որ հարեւանը:

Հաս Ա. Զամբնեանի՝ Ուխտանէսը պէտք է վախճանուած լինի 986 թ. առաջ, որովհետեւ այդ ժամանակ Սերաստիայի առաջնորդը Սիռն եպիսկոպոսն էր: Այս կարծիքը ճիշտ է բայում: Ն. Ակիմեանը 1908 թ. այն տեսակէտին էր, որ Ուխտանէսն իր պատմութիւնը գրել է 987 թ., մինչդեռ այդ

21. Պատմիչն այդ մասին տեղեկացնում է. «Ակսեղինը փնտրել եւ գտանք Տփիսիս քաղաքում... Քանզի մի քահանայ, որի անունը Կիրակոս էր, գտել էր վրաց գրերում եւ հետո ինը մեծ շարշարանք արտագրել ու քարզմանել էր մեր լեզուով» (տե՛ս ստորեւ, էջ 116):

ժամանակ նա մեռած պէտք է լինէր: Հետազայում հոգեւորական-գիտնականը տոմարագիտական աւելի մանրակրկիտ հաշուարկների հիման վրայ ծշտում է իր սխալ կարծիքը եւ գրում, որ Ուխտանէսն իր գիրքը գրել է 982 թուականին, իսկ Անանիա Նարեկացուն հանդիպել է 980-ին²²:

Այսքանը միայն կարելի է ճշտել, քանի որ մեր պատմիչը բեպէտ սիրում է հանդէս զալ առաջին դէմքով, սակայն ինքն իր մասին ուղիղ ծեւով շատ քիչ բան է յայտնում: Լաւ է, որ գրել մէկ անգամ տալիս է իր անունը՝ դիմելով իր բարեկամ վարդապետին, եւ այն էլ ահա այսպիսի համեստուրեամբ. «համարձակուում եմ ծառայի խօսրով [նև]» քո յետին ու նուաստ աշակերտոց, կամ թէ որդիոյ, եթէ հաճելի է քո մեծապատութեանը կամ թէ ինձ համար համարձակելի է՝ Ուխտանէս անուանեալս, որ իրաման առանք նաև ողջոյն տալ աշակերտաբար, ինչպէս վայել է հրաշափառգոյն վարդապետին» (տե՛ս ստորեւ, էջ 27):

Ուզում ենք այս համառօտ առաջարան աւարտել ֆրանսիացի հայագէտ Մարի Բրուսէ կարծիքով. «Կը կարծեմ, թէ Ուխտանէսի այս գործը մի միակ մատեանն է բովանդակ արեւելեան մատենագրութեան մէջ, ուր արեւեցի մը կ'ուսումնասիրէ մանրամասնօրէն պատմական խնդիր մը վաւերագիրներու համենատ»²³:

Վաղարշապատի 1871 թ. իրատարակութիւնը, որից կատարուած է ներկայ բարգմանութիւնը, ոչ մի կերպ չի կարող համարուել օրինակելի: յակայն քանի որ Ուխտանէսի երկի ԺԷ դարի ճեռագիրը մնում է միակը (մի քանի ճեռագիր արտագրուել են նրանից 19-րդ դարում), մեզ համար դժուար չի եղիլ Մատենադարանում գտնուող այլ ճեռագրում (թիւ 1774) ստուգել տպագրի բոլոր կասկածելի տեղերը: Բացի այդ, Ուխտանէսի բաղագրուած հատուածները համեմատել ենք նրա աղբիւների հետ (Խորենացի, «Գիրք բրոց», Փիլոն Տիրակացի եւ այլն) եւ յաճախ վերջիններս օգտագործել ենք վերականգնուածներ առաջարկելու համար՝ համալսարանական ժանօրագրութիւններ տալով: Յաճախ նշել ենք նաև այն դէպքերը, երբ Ուխտանէսի ճեռագրում պահպանուած լըթերցումները կարող են աւելի գերարդասելի համարուել, քան արձանագրուած է նրա աղբիւների՝ մեզ հասած ճեռագրերում: Բնագրում դրուած եւ հիմնականում չժանօրագրուած քառակուուի փակագծերի մէջ մի դէպքում լրացումներ ենք կատարել՝ այսօրուայ հայերեւով սահուն շարադրանք ստանալու նպատակով, իսկ երկրորդ դէպքում բացատրական նշում արել նա-

22. Հ. Ակիմեան, Բանասիրական հատակուորաներ. 3. Ե՞րբ գրած է Ուխտանէսն իր Պատմութիւնը, «Անտիք», Բեյրութ, 1944, հար. 5-8, էջ 57:

23. Տե՛ս Հ. Ակիմեան, Կիրիլոն կաթողիկոս Վրաց, էջ 69:

խորդող բառի համար, եթե վերջինս հեղինակային յատուկ եզրոյք է կամ խրայատուկ բառային միաւոր, որը չենք ցանկացել բարգմանելով կորցնել ընթերցողի տեսադաշտից:

Ցաւօք սրտի. չենք կարողացել մեր բարգմանածը մանրակրկիտ համեմատել մեզնից առաջ արուած ֆրանսերէն, վրացերէն ու անգլերէն բարգմանութիւնների եետ: Փոխարէնը աշխատել ենք հնարաւարին չափ հարազատորէն վերարտադրել մեր պատմիշի շարադրանքի բովանդակութիւնը եւ իրայատուկ բառազանձը՝ յաճախ ի վճաս խօսքի սահունութեան, որի համար բռդ յարգարժան ընթերցողը ներողամիտ լինի:

Վարագ Առաքելեան

ՀԱՏՈՒԱԾ Ա

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԵՒ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ

ԳԼՈՒԽ Ա

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՆԱՆԻԱՅԻ ՆԱՍԱԿԻՆ ԵՒ ՆՐԱ ԽՆԴՐԱԾԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԽՈՍՏՈՒՄ "

Հայր [Աստծոյ] լոյսի շնորհներին արժանաւորի, նրա Միածին Որբու կացարանի եւ [նրանց] համագոյակից [Սուրբ] Հոգու ընդունողի՝ իմ պատուական տիկրոց եւ հոգեւոր հօր՝ կատարեալ օրինութեամբ, մեծ զրով ու հոգեւոր ողջոյնով գրածներն ստացայ, որ սիրով լի գործի համար եկան մեզ, որ քո շրբունքների՝ սուրբ սրտից եւ բարի մտքերից բխած խօսքն է եւ քո մեծանմութիւնից իմ կրտսերութեամն [ուղղուած] մեծարանքը, որ քերուեց մեր սիրելի ու հաւատարիմ [հոգեւոր] եղբայր Փիլիպպոս քահանայի միջոցով:

Եսկ որ քո հրամանին ընդիմացայ՝ իմ տկարութիւնը պատճառ բերելով, [դա նոյն է], ինչպէս որ մէկը իին ժամանակ ծայնի բուլութիւնը եւ լեզուի ծանրախօսութիւնը¹ Տիրոց առջեւ պատճառարանեց, եւ նրանից յետոյ մէկ ուրիշը տարիքի վոքրութիւնը պատճառ բերեց²: Քանի որ լաւ է նաև փոքր ինչ զիջել Աստծուն՝ գրուած է [Սուրբ Գրքում], խնդրում եմ անմեղադիր լինել, որովհետեւ դա չէր միայն պատճառը: Այլ մի ուրիշ պատճառ էլ կար, քանի որ ծգտում էի տեսնել ոչ միայն այն զրի հաւաստիութիւնը, որ՝ քո կողմից ուղարկուեց, այլև երկու եւ երեք վկաների կողմից դրա ամբողջապէս հաստատուելը: Լսել էի նաև, որ դր միս անզամ գալու ես մեզ մօտ, եւ ըստ այնմ սպասում էի, [որ] կը տեսնեմ քեզ եւ երես առ երես կը խօսեմ ու քո շուրբերից ստոյգ [կը լսեմ] եւ յետոյ [միայն] կը ճշտեմ նախապէս քո կողմից գրուածը:

Ինչպէս որ իսկապէս էլ եղաւ, եւ [քիչ] յետոյ կը պատճեմ քո գալու ժամանակի ու պատճառի մասին, որի համար եկար, նաև վայրը կը յիշեց՝³ Զեռագրի այս գլուխ վերնագիրը Վաղարշապատի 1871 թ. տպագրում չի ընդգրկուած (բեպէտ դրուած է զիսացանկում):

նեմ, որ սկսուեց խօսակցութիւնը, [երբ] հարցրեցիր այս պատմութեան՝ [իրտեղից] սկսուելու պատճառի մասին, թէպէտե նախապէս որոշ չափով վերահասու էիր եղել իմ այն գրութիւնից, որ քերուեց քեզ Սիմէնն քահանայի ձեռքով, եւ ապա բառացի⁴ [զլոյցի] միջոցով լիովին տեղեկացար:

Իսկ այժմ դառնում եմ քեզ համար Ահարոն ու Եսայիհաս⁵ (չնայած այս ասելի յանդգնութիւն է) եւ պատրաստակամօրեն զայխ եմ այն հարցմանը, որ արուել է քո կողմից, եւ շտապում եմ խելամտութեամբ հատուցել այն, ինչը խոստացայ՝ վստահելով քո ալօքքներին: Քանզի կարօտ եմ քո ալօքքների օգնութեանը, ո՞վ դու վեսմականդ հայրերի մէջ, հայր սուրբ, թէպէտե Սուրբ Հոգին էլ հասնի օգնութեան ինձ՝ տկարիս, որպէսզի գուցէ կարողանամ պատմութեան այս փոքր մատեանում քո առջեւ դնել քո կողմից խնդրուածը՝ ամենը հերթականութեամբ ու մի առ մի, որպէսզի իմանաս ստոյգը:

Սակայն նախապէս իմ տիրոջ՝ պատուական ու պատկառելի հօր մեծապատութեանը իմ խօսքերի աղերսանքն եմ առաջարկում եւ աղաչում եմ, որպէսզի ոչ թէ միայն [բաւարարութեան] ցանկութեամբ կամ յօժարութեամբ, որ հակուեցիր իմ տզիսութեանը, այլև անդադար աղօքք ամեն Աստծուն: Որպէսզի իմ տկարութեամբ թերեւս կարողանամ լսու քո ցանկութեան կատարել այնշափ յօժարութեամբ քո կամեցածը, որ բոլոնելով քեզ, [որ] զլուխն [ես], ինձ՝ ոտքին, ապակինեցիր: Որովհետեւ այս քո կողմից հրամայուածը արժանի էր, որ դու կատարէիր իմ խնդրանքով, ինչպէս որ նախօրօք գրեցի քեզ՝ այս[պիսի] պատմութեան խնդիրն ինչ-որ չափով ի յայտ բերելով, քանի որ բնաւ չէի մտածում, թէ այս ամենը կը լինի, այլ [միայն ցանկանում էի] մի փոքր բացատրութեամբ յիշեցում անել իմ նամակի միջոցով, որը քեզ բերուեց:

Արդ՝ քանզի սկզբում խնդրանքի միջոցով պահանջեցիր եւ այս երես առ երես խօսելով յորբորեցիր իմ մխտը, որ ոսումով կրտսեր եմ, ամենքից յետինը, իսկ տարիքով՝ աւելի փոքր քան իմ բազմաքի պաշտօնակիցները, հասկանում եմ, [որ, ինչպէս] ասում են՝ սիրոյ եւ խոնարհութեան [համար] եղաւ սա ինձ քո կողմից: Արդ՝ այսուետե կը սկսեմ՝ սկզբում դնելով սէրն ու խոնարհութիւնը, ինչպէս որ վայել է քո սրբութեանն ու պարկեշտ վարքին, ո՞վ պատուական զլուխ եւ պատկառելի: Որովհետեւ ասես հայելու մէջ նայելու պէս՝ քո մէջ ենք տեսնում ամենայն բարեկարգութեան ծերը, նամանութիւնը, առարկան ու օրինակը՝ նախ առաջնորդական ղեկավարութեամբդ բարգաւաճած եւ ապա լաւագոյն խորիրդապահութեամբ առաջադիմած: Իսկ աստուածային փառքով առաւել պայծառացած [ես] ու աւելի մեծ պատուվ պանծացած՝ ի պարծան մեզ

եւ ի փառս Զրիստոսի:

Արդ՝ բոլոր աստուածաշնչական եւ օգտակար գրքերը մեզ սովորեցնում են իրեն օգուտ [ինտենեալ] պատուիրանը. նախ՝ «Ամրող սրտով, անձով, զօրութեամբ եւ մտքով սիրել Տէր Աստծուն»⁶, ինչպէս որ ուսուցանում է օրէնտիր Մովսէսը. եւ սրա հետ միասին՝ «Միրել ընկերոջն իրեն [իր] անձը», եւ այլ [խրատներ]: Եւ մէկ այլ տեղում էլ՝ աստուածային օրէնքների խրատներ ու խօսքեր, որ յարմարում են սրան. «Եւ երանելի է [նա], ով գիշեր ու ցերեկ մտածում է Տիրոջ օրէնքների մասին»⁷ լստ մարգարէական խօսքի: Եվ դարձեալ՝ «Երանին» նրան, ով մտածում է աղքատի ու տնանկի մասին»⁸. սրան էլ Աստուած իրենն է համարում: Եվ դարձեալ միւս մարգարէն երանի է տայխս անքիծ ճանապարհով ընթացողներին: [Պէտք է ուսանել]⁹ նրա բարեվայնչութիւնը ամբողջ սրտով եւ անել այն, որ բոլոր գրքերում գրուած է նրա մասին, եւ այնուետե ամեն բանով երանելի լինել: Եւ այսպիսի իմաստունների ու աստուածաէրների մեծագործութիւնն է՝ կարողանալ իմաստութեամբ ճանաչն լիրատը, լստ իմաստունների [այն] խօսքի, թէ՝ Տէր Աստծուն ամբողջ սրտով սիրելի բարի է, ինչպէս վերեւում ասացինք: Եւ [դա] ամենից բարեվայելուն է ու ամելի կատարեալ, քան բոլոր սէրերը: Եւ երեք անձը չպէտք է զանց առնի՝ աստուածային սէրը. Աստծուն սիրելու համար գրուած է. «Եւ ով Աստծուն սիրում է, նա է ճանաչուած նրա կողմից»¹⁰: Եւ ամեն ժամ նրան յիշելը ուրախութիւն է՝ լստ մարգարէի: Քանզի Աստծուն սիրելիս [Սուրբ] Հոգուն հաղորդակից եւ աստուածախու»¹¹ է դառնում ինքը՝ սիրուղը:

Եւ Աստծուն կանչելը խրաքանչիրի համար զօրութիւն է դառնում՝ լստ Դաւիթի խօսքի, նաեւ ամենքի համար՝ փրկութեան առիք: Ովքեր Աստծուն ի զօրութիւն են՝ կանչում՝ դա եւս վերին իմաստութիւնից է տրուած, որը սուրը է, խաղաղաբար, լի արդարութեան բարիքներով»¹² ու պլոտուներով: Որովհետեւ Աստուած աղբիւրն է բոլոր բարիքների եւ բոլոր պապակուած հոգիներին խրաքանչիրին իր ցանկութիւնների համաձայն խմեցնում է բարի ու սուրը շնորիներից, քանզի տուողն ու լցնողն է բոլոր բարիքների: Եւ ինքը բարի է ու բարութիւնների աղբիւր, եւ նրանից են բխում բոլոր բարիքները: Եւ ովքեր սիրում են նրան, պարզեւատու է լինում նրանց, նաեւ

¹ Մարկ. ԺԲ 33:

² Սաղմ. Ա 2:

³ Սաղմ. Խ 2:

⁴ Ա Կորն. Ը 3:

⁵ Իմա՝ Աստուած խօսում է նրա հետ:

⁶ Բնագրում՝ բարօք է, որը համարում ենք ոչ շրջանի ձեւ:

ովքեր նրան սիրում են, նրա կողմից սիրում են: «Ով սիրում է ինձ, ասում է, կը սիրուի իմ Հօր կողմից, և ես կը սիրեմ նրան»¹¹: ուրիշների հետ միասին: Որովհետեւ ոչ ոք այնշափ չի սիրում նրան, որշափ նա մեզ սիրեց: Ասում է: «Աստուած մարդկանց այնշափ սիրեց, որ մինչեւ խսկ իր Միածին Որդուն տուեց»¹²:

Եւ դարձեալ լսում ենք Աւետարանից, թէ՝ «Այս բանում երեւաց մեր նկատմամբ նրա սէրը, որ [ասաց, թէ] իր անձը կը դնի մեզ համար»¹³: Եւ այսպիսի սէր ոչ ոք չի ունենայ, որ իր անձը դնի իր քարեկամների համար: Եւ դարձեալ՝ «Դուք իմ քարեկամներն եք, երէ միմեանց սիրեք»¹⁴: Եւ դարձեալ Տիրոց խսկ կողմից իրամանատքուեց, թէ՝ «Բոլորը սրանից կ'խանան՝ թէ իմ աշակերտներն եք, երէ միմեանց սիրեք. որովհետեւ ով սիրում է ընկերոջ՝ օրենքն է կատարում»¹⁵, խսկ օրենքների կատարումը սէր է: Եւ կատարեալ սէրը մերժում է երկիւղը, քանզի սիրոյ մէջ երկիւղ չկայ, քանի որ երկիւղը տանջանքների հետ է: Արդ՝ լինենք եղբայրասէրներ աւելի՝ քան անձնասէրներ, որովհետեւ ով եղբօրը սիրում է՝ Աստծուն է սիրում, խսկ Աստծուն սիրենք ներումն է տանջանքների, որ այն աշխարհում [պէտք է լինեն]. նաեւ այստեղ է մեզ բազում անգամ ներում: Եւ այդ սիրոյ պատճառով է, որ մեր դարձն է պահանջում դէպի ինքը. «Դարձէք, ասում է, դէպի ինձ, եւ ես կը դառնամ դէպի ձեզ»¹⁶:

Արդ՝ իր անձը մահու տուեց մեզ համար, եւ այն էլ՝ Հօր կամքով, որովհետեւ նա տուեց իր Միածին Որդուն: Խսկ այս բանում առաքեալմ է վկայում, թէ՝ «Ով իր Որդուն չխնայեց, այլ մեզ ամենքիս համար նրան մատնեց [մահուան]»¹⁷: Եւ մէկ այլ տեղում, թէ՝ «Իր անձը մեզ համար խաչի շարչարանքին ու մահուան տուեց, որպէսզի մեզ փրկի մահից»: Եւ դարձեալ մի այլ տեղ, թէ՝ «Իր անձը շատերի փոխարէն իբրեւ փրկանք տուեց»¹⁸: Արդ՝ այս է մեր նկատմամբ նրա սէրը: Խսկ մերը նրա նկատմամբ [այս պիտի լինի]՝ սիրել նրան ամքող սրտով, բովանդակ մտքով ու գորութեամբ եւ կատարել նրան հաճելին իր առջեւ ամենայն ժամի, շարչարակից լինել նրան ու նմանուող ամեն բանով, ամեն ինչում: Ինչպէս որ

Պօղոսն [է ասում], թէ՝ «Ինձ նմանուող եղէք, ինչպէս որ ես՝ Զքիստոսին»¹⁹, եւ այն էլ՝ կամաւոր ու յօժարութեամբ: Այլեւ՝ «Այժմ մենք խսկ սպանելով երկրային ցանկութիւնները՝ ըստ նրա խօսքի», եւ թէ՝ «Ես Աստծու [համար] կ'ապրեմ»²⁰ եւ Զքիստոսի հետ խաչ կը բարձրանամ»²¹: Եւ դարձեալ, թէ՝ «Ես չեմ կենդանի, այլ իմ մէջ Զքիստոսն է կենդանի». Եւ՝ «Ով մեռնում է մարմնապէս, կենդանանում է Աստծու առջեւ հոգով»: «Սպանեցք, ասում է, ծեր երկրային ցանկութիւնները՝ դեմ նետելով բոլոր կրքերը»²², որ հակառակ ծշմարտութեամբ ըստ [մարմնական] աշխարհի է գործում», եւ՝ «Եսաչ բարձրանալ [մարմնական] աշխարհում», ինչպէս որ գրուած է նաեւ: «Եթէ մահն խսկ վրայ հասնի՝ այն եւս [պէտք է] ընդունել», ինչպէս որ առաջին սրբերն էին կամաւոր յօժարութեամբ մտնում կապանքների մէջ ու բամտերը եւ իրենց անձերը մատնում էին շարչարանքների ու մահուան: Եւ երէ որուն մէկին փախչել էր յաջողուում, ինչ-որ ժամանակ անց տարբեր հնարքներով իրենց գողանուում էին Աստծու համար եւ դարձեալ մահուան մատնում: Եւ դարձեալ ուրիշներն Աստծու համար եւ աստուածայինին պաշտպան լինելով՝ նախքան թշնամիների կողմից նրանց բռնելլը իրենք իրենց վաղ թէ ուշ՝ վայր էին զցում: Թեպէտեւ իրաւունք չկար դա անելու, բայց նրանք բռնուելիս մահն իրենց համար աւելի լաւ էին համարում, քան թէ անօրէնների շարութիւնը: Քանզի նախապէս այն օրէնքներից ու մարգարէներից սովորել էին սիրել Տէր Աստծուն եւ շերկրպագել օտար աստծու: Ասում է՝ «Քո Տէր Աստծուն կ'երկրպագես եւ նրան միայն կը պաշտես»²³: Եւ դարձեալ, թէ՝ «Ինձնից բացի քեզ համար այլ աստուածներ թող չլինեն»²⁴: Եւ դարձեալ, թէ՝ «Ով զոհ նատուուի օտար աստծու՝ կը կորչի»:

Արդ՝ մենք Սուրբ Գրքից ունենք այսպիսի բազմաբի յիշատակութիւններ՝ սիրել Տէր Աստծուն եւ ընկերոջը իբրեւ իր անձը, եւ սա պէտք է կատարել ամենայն ժամի: Ասում է՝ «Բազմաբի պատուիրաններից յիշեցում ունեն բարին գործելու, զանց մի՛ անիր»: Արդ՝ պէտք է հետեւել եւ բարի գործերը բաց շրողնել եւ գնալ Տիրոց ճանապարհներով անշեղ ու անխոտոր եւ պահել նրա պատուիրանները եւ օրէնքները կատարել եւ արդա-

¹¹ Յովի. ԺԴ 21:

¹² Յովի. Գ 16:

¹³ Յովի. Ժ 13:

¹⁴ Յովի. Ժ 14:

¹⁵ Հոռո. Ժ 8:

¹⁶ Զարար. Ա 3:

¹⁷ Հոռո. Ը 32:

¹⁸ Մարկ. Ժ 45:

¹⁹ Ա Կորնը. ԺԱ 1:

²⁰ Բնագրում պակասվ է՝ երէ ես աստուածոց [...] կեցից: Լրացնում ենք՝ ըստ Գալդ. Բ 19:

²¹ Գալդ. Բ 20:

²² Կող. Գ 5:

²³ Տպագրում՝ ի վազից է, սակայն ծեռագրում՝ ի վաղից:

²⁴ Բ Օրէնք Զ 13:

²⁵ Ելք Ի 3:

բութին անել ամենայն ժամի՝ մինչեւ Քրիստոսի [կողմից] կանչուելու սահմանուած պահը: Որովհետեւ աշակերտներն ենք Աստծու օրէնքների եւ մարգարէների, նաև ինց առաքեալների եւ բոլոր սուրբ հայրերի, վարդապետների, որոնք մեզ քարոզեցին կենաց խօսքը: Մանաւանդ որ սրբերին բնակակից եւ որդեգրութեան շնորհներով Աստծուն հարազատ [լինելով] նրանք նաև բնակութեան տաճար տուեցին Քրիստոս Աստծուն, որը շինուեց առաքեալների ու մարգարէների հաւատի հիմքի վրայ: Արդ՝ այսուհետեւ գնանք հաւատով, յոյսով ու սիրով, եւ սիրենք միմնանց: Ինչպէս որ Աստուած մեզ սիրեց, մենք էլ սիրենք նրան եւ նրա պատուիրանները պահենք, որովհետեւ հենց ինքն ասաց, թէ՝ «Սիրեցէք ինձ եւ իմ պատուիրանները պահէք»¹:

Արդ՝ Աստուած սէր է, իսկ սէրը բերում է թիւր, անոնք եւ Երրորդութեան խորհուրդը իբրեւ համար եւ օրինակ: Կայ Հայրը, Որդին, Հոգին, եւ սրանով է Սուրբ Երրորդութիւնը խոստովանում մեր կողմից՝ անձով երկրպագուած եւ անոնով բաժանուած, իսկ էութեամբ եւ աստուածութեամբ միաւորուած ու երկրպագուած: Եւ սրանք մնում են մեզ եւ մեր բաժինն են ու ժառանգութիւնը. «Տէրն է իմ ժառանգութեան բաժինը»², ասում է մարգարէն: Արդ՝ մեզ մնում են հաւատքը, յոյսը, սէրը. հաւատը Հօր հանդէպ, յոյսը՝ Որդու, սէրը՝ Սուրբ Հոգու: Քանզի սրանք են մնում մեզ, եւ սրանցով են կատարում բոլոր արդարութիւնները: Ասում է՝ «Աքրահամը հաւատաց Աստծուն եւ նրա համար համարուեց իբրեւ արդարութիւն»: Եւ շատերը յոյսով ապրեցին: Եւ սէրն է, որ զարդն է կատարման: Եւ սէրն իր ընկերոջ համար շար բան չի անում, եւ օրէնքի լրումն է սէրը:

Արդ՝ փոքրիշատէ գրեցինք քեզ սա սիրոյ մասին՝ վստահ լիներվ քո հեղութեանը, ո՞վ հոգեւոր հայր, քանզի գիտենք, որ հեզ ու մարդասեր Քրիստոսի ծննարիտ աշակերտն ես եւ նրանից ես սովորել հեղութիւնը, արդարութիւնը եւ խոնարհութիւնը, որն ինքը սկսեց անել ու [նաև] ուսուցանել՝ «Սովորեցէք ինձնից, որովհետեւ ես սրտով հեզ եմ ու խոնարի»³, եւ՝ «Ես ո՞ւր կը բնակվեմ, եթէ ոչ հեղերի ու խոնարհների մէջ»⁴: Արդարն այդախիսները Սուրբ Երրորդութեան կացարանն են: «Ես եւ իմ Հայրը կը զանք նրա մէջ, ասում է, եւ նրա մօս օրեւան կը սարքենք»⁵ (իսկ որտեղ Հայրը եւ Որդին են բնակում Սուրբ Հոգին էլ անբաժան է լինում): Քան-

զի ով իր անձը խոնարհեցնում է նրանց կողմից բարձրացում է, ով սիրում է Աստծուն, Աստուած նրա մէջ է բնակում, իսկ նա՝ Աստծով: Եւ պարտ ու արժան է սուրբ սրտով եւ հաստատուն հաւատով սիրել ու պաշտել Սուրբ, անբաժանելի եւ երկրպագելի Երրորդութեանը:

Բայց Երրայրասիրութեան մասին պէտք չկար քեզ գրելու՝ ըստ առաքեակի այս խօսքի, թէ՝ «Դու ինքդ ես Աստծուց սովորելի»⁶: Կարող ես նաև այդ մասին գրութեան ուսուցանել ժողովուին, որովհետեւ Աստծուց սովորելով եւ շատերին բազմից սովորեցնելով, մանկութիւնից ստանձնելով խոնարհութեան լուծը՝ նրանում⁷ [ես] դաստիարակուել եւ առվորել, որպէս զարդարնութեան բոլոր գործերը նաև աստուածային բարեպաշտութեամբ խնամարկես եւ ուսուցանես Նոր Սիրոնի հաւատի մանուկներին⁸:

Արդ՝ այս գրածներս քո մէջ կատարեալ ենք տեսնում եւ աստուածային շնորհով պայծառացած ու Սուրբ Հոգու գիտութեան ձիրքերով լցուած, հոգեւոր երգի գեղգեղանքով բոլորից բարձր եւ Աստծու բոլոր պատուիրաններին հասած ու աւելի հաստատուած քան շատերը, ո՞վ աստուածազարդ ու վսեմ իմ սէր, սէր՝ ու տիեզերական վարդապէտ, իբրեւ մի բազմապտուղ ծառ՝ բարձր ու վայելուց, Նարեկ⁹ անուանուած ուխտի աստուածատունկ դրախտի մէջ, որ սաղարթատրուել եւ վարսաւորուել ես առաջին վարդով եւ ապա ծաղկել ես Տիրոջ տանը եւ Աստծոյ գաւրում եւ բերել ես արդար պտուղ մէկի փոխարէն հարիւր, մէկի դիմաց վարսուն, մէկին՝ երեսուն¹⁰, եւ բազում ճգնութեամբ ու առաջինութեամբ գերազանց դարձած շատերի մէջ: Եւ ինքն նախապէտ քեզ առաջնորդելով հոգեւոր անդաստաններում զարբնած ու զգուշաբրուն մշակների հետ սպասում ես Տիրոջ զալատեանը՝ արդիւնաւորելով քո շնորհների քանձարը սեղանաւորներին տալու անտոկոս դրամ՝ գոյատրելով հոգեւոր մարդուն, որպէս զալատ Տիրոջ զալատեան պահին առնես լրաւատը Հօրից բարիքների պարզեների անարատ ու անապակախում յորդութիւնը եւ լսես աւետարեք այն ձայնը, թէ՝ «Եկէք ինձ մօտ, բոլոր հոգնածներ ու ծանրաբեռնուածներ, եւ ես ծեզ կը հանգստացնեմ»¹¹: Եւ դարձեալ, թէ՝ «Եկէք, իմ Հօր կողմից օրինուածներ, ժառանգեցէք ծեզ խոստացուած արքայութիւնը»¹²: Եւ սա աջ կողմում գտնուաղներին [ուղղուած] ձայնն է: Իսկ յետոյ ասում է ծախս կողմինների մերժման եւ դրանից յետոյ [եկող պատիժների] մա-

¹ Ա. Թեսաղ. Դ. 9:

² Այսինքն՝ եկեղեցու սաներին:

³ Մատթ. Ժ. 8:

⁴ Մատթ. Ժ. 28:

⁵ Մատթ. Խ. 34:

¹ Ելք Ժ. 17:

² Սաղմ. Ժ. 5:

³ Մատթ. Ժ. 29:

⁴ Ես. Կ. 2:

⁵ Յովհ. Ժ. 23 (մեր բնագրում՝ առ նա է, իսկ այս աղքատում՝ առ նմա):

սին: Եւ այս ծայներն այնտեղ են, որտեղ կանգնած է Աստուած՝ աստուած ու բազաւոր եղածների մէջ առանձնացնելով ու զատելով վատքարը լաւագոյնից, եւ արժանաւորներին դնում է վերին երանութեան մէջ՝ դասելով արդարների, բոլոր սրբերի հետ աջ [կողմում]:

Որովհետեւ արժան չէ այլ կերպ ասել, եթէ ոչ քեզ արժանի համարել Աստծու բարութեան շափով, որն ամեն շափով ու կշռով ուղղում է ու հատուցում տալիս իրաքանչիրին ըստ իր գործերի՝ զատելով վատքարը լաւագոյնից, ինչպէս թի առաջ ասուեց: Որովհետեւ Սուրբ ու Երկրապագելի Հոգու շնորհների անսայս շարժումն ենք քո մէջ տեսնում, ո՞վ աստուածարեալ տէր եւ բազմերօշանիկ հայր, Երկրորդ Կեֆան¹¹ եւ առաջին առաքեալ: Եւ դու նրա շաւիդներով ես շրջել, յար եւ նման ես նրան, եւ առաւել նրա հաւասարապատի օրինակն ես մեզ ցոյց տուել, նաեւ նրան¹² նոյնահաւասար ել երեւացել ես մեզ, որովհետեւ մարմնական փափուկ հանգստից հոգեւոր խրախճանքի ժամանելով՝ փափագել ես եւ փափագելի ես եղել արդարների հանգստեան համար: Քանզի համարում եմ, որ ոչ միայն նրան ես նման, այլև ուրիշ աստուածասէր եւ բարեպաշտ այրերին, որոնք մարդասէր են ու աստուածասէր, նրանք, որոնք ըստ իրենց բարեպաշտութեան իրեն վարձ ստացան Աւետարանի այն աստուածագործորդինը, որ է՝ արեամբ վախճանուելը՝ առհաւատշեայ տալով իրենց անձերը [Սուրբ] Հոգուն¹³: Եւ այն պատճառով էր լինում նրանց աստուածափրութիւնը, որովհետեւ աստուածապաշտութիւնը մեծ շահ է, եւ այն էլ, գրուած է՝ լիովիլ¹⁴:

Իսկ դու քո սուրբ ու պարկեցտ կեանքով կենդանի-կենդանի խարոյ-կուած եւ խստակիր չարչարանքով յարածնած, կենդանի մարմնով մարտիրոսուելով՝ անմարմիններին ես նմանում, մարզարեարարոց եւ առաքելաշնորհ խօսքով զինուած՝ բազում վշտերից եւ նեղութիւնից նեղ ու քոյլ կեանքի ծովածուիք կենցաղը դուրս ես քերում եւ շրջեցնում այն նոյն շաւով, որտեղ քո առաքելական ոտքերն են շրջել դէպի խաղաղութիւն¹⁵ ըստ մարզարէի, եւ աւետարանել կենաց խօսքը խաղաղութեան համար, որպէսզի նաեւ համարձակօրէն կարողանաս ասել մարզարէի խօսքը, թէ՝ «Անհաւասիկ ես եւ իմ մանուկները, որոնց Աստուած ինձ տուեց»¹⁶:

Արդ՝ ո՞վ պատուական հայր, նախ եւ առաջ սիրոյ ու կարօտի ողջոյն եմ տալիս Քրիստոսով [եւ] սիրոյ արժանի ու աստուածագարդ անձից ա-

ռողջութիւնն եմ ցանկանում [միշտ] իմանալ: Ալաշում եմ, որ նաեւ Սուրբ Հոգին, որին աւանդեցինք մեզ վարդապետութեան միջոցով¹⁷, թոյ նա լինի գերակարած ու արփիափայլ շնորհներից տարածիչն ու նորոգիչը նաեւ բարեկարգ բարեգրծութեան մէջ, որի մէջ դու էլիր եւ կաս եւ կը լինես՝ միշտ մնալով աւելի ու աւելի առաւել, որպէսզի լստ Տիրոց խօսքի¹⁸ տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաւորեն ձեր Հօրը, որ Երկնքում է:

Արդ՝ այս ամենը դարձեալ վերստին խանդակաք սիրով գրում եմ քեզ՝ սուրբ եւ բազմերջանիկ իմ տէր հօրն ու պատուելի վարդապետին, եւ առաւել՝ Երկնային լոյսի եւ սուրբ շնորհների բարձրագոյն ընդունողիդ. համարձակուում եմ ծառայի խօսքով [եւ] քո յետին ու նուսատ աշակերտոյ, կամ թէ որդիդ, եթէ հաճելի է քո մեծապատութեանը կամ թէ ինձ համար համարձակելի է՝ Ուխտանէս անուանեալս, որ հրաման առանք նաեւ ողջոյն տալ աշակերտաբար, ինչպէս վայել է հրաշափառագոյն վարդապետին: Ծնրադիր ու տենչալից կարօտով խոնարհաբար Երկրապագում եմ սուրբ ու պարկեցտ անձիդ (եւ [դա] անսուն հեծեծանքի մէջ երգելի է) եւ նամակի միջոցով հարցնում եմ հրեշտականման անձիդ ողջութեան մասին, նաեւ աղաչում եմ կեանք պարզեւողին, որ մշտապէս Երկարածզես քո կեանքի ժամանակը, որքան հաճելի է Ստեղծողին, իսկ մեզ՝ ցանկալի եւ Աստծոյ Եկեղեցուն՝ լիովին պասկաւոր [ու] նորոց լինելու համար՝ մաղթելի, որի մասին ասում եմ, թէ՝ քո՛ղ լինի, քո՛ղ լինի:

Աւաղ, ես այս կարօտանքի մէջ եմ գտնուում¹⁹, եւ եթէ շաղակրատանք ու խօսքի պաճուճանք չհամարես, քող Տիրն ինձ [ինար] տայ տեսնել ու վայելի քո տեսքի փառքից, որ ես ել ասեմ մարզարէի [խօսքը]. «Ե՞րբ պիտի զամ, երեւամ քո հայեացքին»²⁰: Մի գուցէ կը կարծես, թէ մոռացել եմ զուարք ու պայծառ հայեացքի սիրոյ ընկալումը: Քայց քաւ լիցի՛, քանի որ՝ «Եթէ մոռանամ քեզ, Երուսաղէմ, քող իմ աջը մոռանայ ինձ»²¹, ասում է մարզարէն՝ այլ [խօսքերով] հանդերձ: Քանզի իմ ուրախութեան սկիզբը դու ես, որովհետեւ իմ խոհերը եւ սիրտս թերեւ մտքերով չէ, որ խորամուխ եղած խորհում են քո ճշմարտասիրութեան մասին, այլ խստ կարեւոր, կատարելագոյն ու գերագոյն: Քանզի նոյն կերպ նաեւ քո [խաները] գիտեմ իմ տկարիմաց խօսքերի հանդէա: Նաեւ խսկապէս տեսնում եմ իրական մեծարանքն իմ հանդէա, որ փոքր եմ եւ անկատար²² քո կատարեալ մեծութեան առջեն, որովհետեւ ես ոչինչ եմ, եւ եթէ ինչ էլ եմ՝ քոնն եմ: Եւ սրա համար [է, որ] առաջ անցնելով՝ նախապէս դրեցի սիրոյ եւ խո-

¹¹ Բ Կորն. Ա 22:

¹² Ա Տիր. Զ 6:

¹³ Դուկ. Ա 79:

¹⁴ Երք. Բ. 13:

¹⁵ Յովի. ԺԵ 8:

¹⁶ Սաղմ. ԽԱ 3:

¹⁷ Սաղմ. ՇԼԶ 5:

նարհութեան խորհուրդը պատմութեանս շարակարգի մէջ, որպէսզի իմ խոնարի փոքրութիւնը տեսնի քեզ սիրոյ եւ խոնարհութեան համար:

Արդ՝ քանզի այն ժամանակ, երբ եկար մեր աստուածայատի ու սուրբ Խաչիկ հայրապետի մօս, քերել էիր նրան¹⁶ որպէս հոգեւոր նուեր եւ ընծայ Հայատարմատ¹⁷ գիրքը, որ [գրուած է] լսնդյէմ երկարնակների,¹⁸ այդ առիթով քո մէջ բնակուող Սուրբ Հոգու միջոցով հայտախի խորհրդի մասին խօսելս դու ինքդ նաեւ երես առ երես ինձ հետ խօսեցիր այս պատմութեան մասին: Եւ երէ ցանկանա Վերյիշել տեղը՝ կ'ասեմ նաեւ այդ տեղին] նշանները, գուց ախորժես, եւ ես տարուայ եղանակն էլ կը յիշատակեմ: Որովհետեւ երբ միասին անցանք գնացինք ու նստեցինք այն գետի ափին, որ Ախուրեան է կոչում, եւ ընթերցում էինք զօրութիւնների Տիրոց պատարագամատոյց,¹⁹ որ Արանասի [պատարագամատոյց] են անուանում, եւ օրն ամառային էր՝ Տրէ ամսին, եւ ամսի տասնմէկն էր, օրը՝ կիրակի, ժամը իննին: Արդ՝ սա քեզ իմ կողմից նշան եւ կնիք սիրոյ եւ յանձնառութեան խոստման՝ կատարելու քո պահանջը այս պատմութեան վերաբերեալ: Իսկ քո կողմից ինձ [թող լինի այն], որ յիշես մեր ուխտը²⁰ եւ պայմանաւորուածութիւնը, նոյն կերպ նաեւ սիրոյ կնիքը, որպէսզի այն սուրբ տեղերում, որոնց [անունը] կրում են [իրերէ] հովուապետական նականուն²¹, սիրոյ յիշատակութեամբ մշտնչենաւորես՝ քո աղօրքներուտ յիշելով, որպէսզի բոլոր սրբերի բարեխսուութեամբ Սուրբ Հոգու բոլոր շնորհները պարգևնունք քեզ եւ մեզ՝ սատար լինելու մեզ այն գործերում, որոնց մէջ կանք եւ [որոնցով] պարծենում ենք Աստծոյ յոյսով:

Արդ՝ հասկանում եմ, թէ [որքան] մեծ է այս յիշատակութեան օգուտը ըստ սիրոյ սովորութեան, որ Աստծոյ օրէնքներով սովորել ենք նրանից՝ Քրիստոսի մարդասիրութեանը նմանութիւններ եւ նրա աշակերտը լինել, որ խոնարիւնց մեզ համար մինչեւ ծառայի կերպարանքի [հասնելը] եւ օտարացածներին իր մօս հաւաքեց: Արդ՝ Աստծոյ այսպիսի մարդասիրութիւնը եւ նրա կողմից մեր հոգիների շահի եւ օգուտի համար աւանդուած պատուիրաններն ենք իրերէ կենդանի պատկեր մշտապէս տպաւորում մեր սրտի տախտակներում՝ [այն է] խնամք տանել միմեանց [նկատմամբ] եւ ամուր պահել ու պահպանել այլոց հետ [Սուրբ] Հոգու միարանութիւնը:

Արդ՝ քանզի մենք լսել էինք քո պատմութեան մասին, որ ստեղծելու էիր²² ոչ մեծ հատուածով՝ [Հայոց] նախնին²³ թագաւորների սկզբից մինչեւ մեր [ժամանակը], եւ քո բանիքուն քերպողական դաստակի վարժ շարժուելու մասին, [որ բազմաթիւ] ստաղինների²⁴ ասպարեզ [է] քո խաղաղութեան համար, եւ լեզուիդ սրբնթացութեան մասին [էինք լսել], որ հոգու

քնարն է, եւ [ինզիդ] ինչպէս կամենում՝ շարժում է այն, եւ [լսել էինք], որ Հայոց պատմութեան ուրախարար գիրքը ոչ մեծ կտորներով [է], ինչպէս վերեւում ասացինք, որ ստեղծելու էիր²⁵ ընթերցողներին միսիքարեկու եւ լսողներին լրաւարուելու համար, [այդ բոլորի պատճառով] սուրբ եկեղեցու պայծառութեան համար²⁶ այս պատմութիւնը եւս²⁷ փոքրիշատէ խնդրեցի²⁸ յիշատակել²⁹ իմ [այն] նամակով, որը մի փոքր բանաւոր] բացատրութեամբ քեզ մօս բերուեց Փիլիպոս քահանայի միջոցով, ինչպէս այս ճառի [գլխի] սկզբում ասացինք: Որովհետեւ ամենեւին էլ այս բանը չի ակնկալում, թէ քո կողմից ինձ է կստահուելու [այդ] պատմութիւնը [գրելու] բախտը:

Արդ, ուրեմն՝ պէտք է ինձ սատար կանզնես՝ անելով քո աղօրքները, որպէսզի գուց կարողանամ իմ խօսքի մակոյկն ուղղել եւ լնթանալ դէալի խաղաղ նաւահանգիստ՝ իմ ողջ եւրեամբ բափանցելով պատմութեան խանենայինքը ծերապէրը: Որպէսզի արդիւնքի հասնի քո փուրածան ցանկութիւնը եւ քո հրամաններին իմ հնագանդութիւնը, քանզի քո պահանջների ներքոյ [ինարափոր է] առաքինի մնալ ոչ թէ միայն կատարելով քո կողմից հրամայուածը, այլ՝ [կատարելով] ծերմ փափազով: Ժէկուզի ինչոր այլ բան պահանջէիր, [որը] ծեռնամուխ լինէի դրան եւ ամբողջն աւարտէի, կը հնագանդուի քո հրամանին: Քանզի վստահ եմ քո մեծապատութեան վրայ, որ դու իմ անհար խօսքները լաւն ես համարելու քո ճշմարտիմաց իմաստուն մտքով: Որովհետեւ յոյս ունեմ, երէ կ'ուզես՝ քո մտքերի բարեյօժարութեան վրայ:

Զանզի սուրբ հայրերից մէկն այսպէս է ասում, թէ այն ժամանակ են աշակերտները քաջայոյ դառնում, երբ ուսուցիչը յօժարակամ է, այն ժամանակ է ուսուցիչը օգտակար պտուղ տալիս, երբ աշակերտը փուրածանութիւն է ցուցաբերում, [եւ] այն ժամանակ է աշակերտը ուսուցչի գիտութեանը աչք դնում, երբ իբրևն բարեկամի՝ նրա պրատումները խրախուսում է: Քանզի ուսուցիչը այլ կերպ չի կարող փայլել, երէ աշակերտի լապտերները վառած չգտնի ուսման սիրոյ ձերով: Եւ դարձեալ [ասում է], թէ աշակերտը այլ կերպ չի կարող աճել, երէ ուսուցիչը իմաստափրութեան առուն շիելի նրա առջեւ: Քանզի երկու կողմերն էլ պէտք ունեն առաջընթացի ու փուրածանութեան՝ իւրաքանչիւրի վեհ կառոյցի համար, որը նրանք երկուսով միասին պիտի ներդնեն լստ [իրենց] կարողութեան. մէկը լսէւոք է] լեզուն սրբ, իսկ միաւո՞ւ լսելիքը պատրաստ պահի: Եւ հենց այս է իմ կողմից ասում եւ քո կողմից հաստատում, որ մեզ օրինակ տուեց, ինչպէս ասացինք՝ սուրբ հայրերից մէկը: Եւ արդ՝ այնքան միմեանցից անքածան³⁰ [կը մնանք], մինչեւ դժուարութիւնը ճանաչեն եւ իմ խօսքերը ճշտեմ

ու յարմարեցնեմ ըստ անհրաժեշտութեան պատշաճի՝ անշափը բերելով չափարորութեան, և չափարոր զարգացնեմ, աւելորդ համեմ, պակասութիւնը ըստ կարողութեան լրացնեմ և ամրուջը մի ըստ միոջէ դասաւորեմ իրաքանչիւրն [իր] բովանդակութեան համաձայն:

Նախ՝ [պէտք է դասաւորեմ] մեր թագաւորների ու հայրապետների թիւլ, եւ ապա Վրաց բաժանումը Հայոց միաբանութիւնից, եւ դրանից յետոյ՝ [այն] ազգի մկրտութիւնը, որ կոչում է Ծաղ³¹, նաեւ՝ այն երկրում գտնուող գաւառները, գիւնաւոր գիւղերն ու քաղաքները եւ բերդերը իրաքանչիւր գաւառում. ինչպէս որ քո կամքը հրամայեց, նաեւ՝ վանքերը վանականներով հանդերձ իրաքանչիւրի անունով, եւ մենակյացների անապատները, նաեւ՝ քէ ովքեր էին բազմակեցութեամբ եւ ովքեր՝ միայնակեցութեամբ բնակում մենաստաններում ու անապատներում: Նաեւ ցոյց եմ տալու Աստծոյ օգործեան օրինակ[ներ]ը, որ ծածուկ կամ յայտնի ներգործում էր մկրտուածների վրայ [իրաշալի] նշանների ու սրանցնիքների երեսունով, տեսիլքով ու յայտնութեամբ, միաժամանակ նաեւ՝ երանելի եպիսկոպոսների՝ Գրիգորի եւ նրա պաշտօնի [միւս] սպասաւորների հոգեւոր գործերը՝ խօսքը, ջանքը, վատակն ու վիրագործութիւնը, Տրդատ³² թագաւորի գործակցութիւնն ու հրամանը, նախարարների նախանձախնդրութիւնը հոգեւոր գործի հանդէպ, եւ [տալու եմ նաեւ] իշխանների ցուցակը՝ ըստ իրաքանչիւր իշխանութեան, նաեւ միւս պատուաւորներինը՝ ըստ իրաքանչիւր պատուի, որոնք գործակցում էին մեզ հոգեւոր խօսքի ու գործի մէջ: Նաեւ լավագութեամբ այն գագանամիտ, բոլորահատ, ճիւաղաբարոյ մարդկանց ահն ու երկինդը եւ սպառնալիքը մեր վրայ, որովհետեւ քո կողմից այս հրամայուածներն այս պատմութեանը ճշտութիւն են թերում: Թէաւետեւ խօսքի ընդարձակութիւնը մեզ չաշշարանք է պատճառում, բայց քանի որ միայն այս չարութեամբ չէին գոհանում, այլ նաեւ պայքարի ու կոռի մէջ էին մտնում եւ տեսակ-տեսակ խորանանկ հնարներով, իրացիք մերենայութիւններով եւ նաեւ բազում ու պէսպէս ուրիշ չարութեամբ, մինչեւ իսկ՝ դաւաճանութեամբ, թակարդն էին զցում, արդ՝ պահանջեցիր, որ սրանք [եւս] ուշադրութեան առնեմ:

Դարձեալ նաեւ սկիզբը եւ ծագումն ու պատճառները կը պատմեմ, քէ որտեղի՞ց, կամ ի՞նչ, եւ կամ ինչպէ՞ս, եւ կամ ինչի՞ համար, եւ կամ որպէ՞ս, եւ կամ ի՞նչ օրինակով: Որովհետեւ յիշում եմ, որ խոստացայ կարգով ճառախօսել եւ գրաւոր առջեւող դնել [դա] այս պատմութեան մէջ, ո՞վ հոգեւոր հեղինակ եւ հոչակաւոր հոեսոո՞ր: Որովհետեւ ըստ իմ ամենասկզբի գրածների՝ թագում մաղրանքներով եւ աղաշանքներով քեզնից [իէնց] այս էր խնդրում կատարել [նաեւ] իմ ցանկութիւնը [այս] նոյն խնդրի բո-

վանդակութեան վերաբերեալ, որը [սակայն] քեզնից մեզ եղաւ, ինչպէս նախապէս ասացինք այս ճառի [գլխի] սկզբում:

Այժմ եւ քո կամքը կը կատարուի ի վառս Աստծոյ: Եւ սա՝ մեզնից քեզ իրեւ փոխադարձութիւն եւ նամակների պատասխան, որ իր մէջ պարունակում է շարադրուած պատմութեանս բովանդակութիւնը:

Ողջ եղի՞ր Տիրոջովք»:

ԳԼՈՒԽ Բ

ԹԱԳԱԻՈՐՆԵՐԻ ՍԱՍԻՆ ՍԿՍԱԾ ԱԴԱՍԻՑ

Այստեղ կը սկսենք պատմել թագաւորների մասին՝ սկսած Ադամից, որ մեր նախահայրն է եւ երկրի վրայ եղել է առաջին թագաւորը ամենասկզբում³³: Արարիշը բոլոր արարածներին ստեղծելուց հուսկ յետոյ նրան թագաւոր նշանակեց երկնքի տակ զտնուող բոլոր արարածների վրայ: Որովհետեւ, ինչպէս [Սուրբ] Գիրքն է ասում, պարտ ու պատշաճ էր, որ [նախ] թագաւորութիւնը գոյանար, եւ ապա ենթակայ դասնար թագաւորին, [եւ նա] լիներ թագաւոր [նրանց համար], ովքեր երկրի վրայ են [եւ] Վերին թագաւորութեան ներքոյ: Եւ ապա դրախտից արտաքսուելուց յետոյ ածեցին նրա սերունդները, բազմացան ու լցրին երկիրը՝ ըստ Արարի կի հրամանի:

Նախաստեղծ Ադամը ապրելով երկու հարիւր երեսուն տարի՝ սերեց Սէրին. եւ Ազամի ամբողջ ժամանակը, որ [նա] ապրեց, եղաւ ինը հարիւր երեսուն տարի, եւ [յետոյ] մեռաւ: Սէրը ապրելով երկու հարիւր իինց տարի՝ սերում է Ենովսին, եւ Սէրի ամբողջ ժամանակը եղաւ ինը հարիւր տասներկու տարի, եւ [յետոյ] մեռաւ: Ենովսը ապրելով հարիւր իինսուն տարի՝ սերում է Կայսանին. եւ Ենովսի ամբողջ ժամանակը եղաւ ինը հարիւր իինց տարի, եւ [յետոյ] մեռաւ: Սա առաջինը յուսաց Աստուած անոնն ասել: Կայսանը ապրելով հարիւր եօթանատուն տարի՝ սերեց Սաղողիէլին³⁴: Եւ Կայսանի բոլոր տարիները կազմեցին ինը հարիւր տասը տարի, եւ [յետոյ] մեռաւ: Մաղաղիէլը ապրելով հարիւր վարսունիինց տարի՝ սերում է Արէրին, եւ Մաղաղիէլի ողջ տարիքը կազմեց ուր հարիւր իինսուն տարի: Արէրը ապրելով հարիւր վարսունիերկու տարի՝ սերում է Ենովսին, եւ Արէրի բոլոր տարիները կազմեցին ինը հարիւր վարսունիերկու, եւ [յետոյ] մեռաւ: Ենովսը ապրելով հարիւր վարսունիինց տարի՝ սերում է Մաքուսաղային: Եւ Ենովսը դուր եկաւ Աստծուն՝ Մաքուսաղային

սերելուց յետոյ երկու հարիւր տարի: Եւ Ենովքի բոլոր տարիները կազմում են երեք հարիւր վարչունիշներ: Եւ արժանի ու հաճելի վարք ունենալով՝ ոչ մի տեղ չգտնուեց, որովհետեւ Աստուած նրան աշխարհից փոխեց հրեշտակների դասը: Մարտուաղան ապրելով հարիւր վարչունիշներ տարի՝ սերում է Ղամերին: Եւ Մարտուաղայի բոլոր տարիները կազմեցին ինը հարիւր վարչունիշներ [տարի], եւ յետոյ] մեռաւ: Ղամերը ապրելով հարիւր ութունուր տարի՝ սերեց մի որդի եւ նրա անունը դրեց Նոյ: Սա Աղամից յետոյ տասներորդ եղան նախահայրերի շարքի, իսկ տարիների [քանակը] կազմում է երկու հազար:

ԳԼՈՒԽ Գ ՆՈՅԻ ՍԱՍԻՆ

Ղամերը՝ Նոյի հայրը, մարգարեացաւ՝ նրա անունը Նոյ դնելով: Ասաց. «Սա մեզ կը հանգստացնի մեր գործերից եւ մեր ձեռքերի նեղութիւնից ու [այն] երկրից, որը Տէր Աստուածն անիծեց»¹: Մովսէս Ստուգագիրը² զեղեցիկ կերպով է շարադրում խօսքը: Ասում է՝ «Ոչ թէ հանգստ եղաւ, այլ բնաջնջումն [ամենի], ինչ որ մի անգամ եղաւ երկրի վրայ»: Եւ առաջ զնալով՝ ասում է. «Հանգստացնելմ, ինձ բուռմ է՝ [նշանակում է] ամօրինութիւնները եւ շարիքները պղծագործ մարդկանց ոչնչացումով դադարեցնել»: Եւ դարձեալ մեկնարաբում է խօսքը, թէ՝ «Գեղեցկօրէն ասուեց, թէ՝ մեր գործերից, այսինքն՝ անօրէնութիւններից եւ ձեռքերի նեղութիւնից, որոնցով կատարում ենք պղծութիւնները»: Բայց ըստ այս մարգարեութեան՝ հանգստանում են ոչ բոլորը, այլ կատարեալ ոգլներն առաքինութեան մէջ, որում շարիքները ջրհեղեղով ջնջուելով մաքրում են, ինչպէս որ Նոյի ժամանակ շարիքների մէջ մոլորուածները:

Արդ՝ երբ Ղամերի, որը Նոյի ժամանակ էր, մարգարեութեան ժամանակը հասաւ, քանի որ եկել, հասել էր մարդկանց անօրէնութեան եւ անիրաւութեան հատուցումը, ուստի մեղքերը շատացան երկրի վրայ, մարդկային ողջ ցեղի մէջ, որոնք բնակուած էին ամրող երկրի երեսին: Եւ Նոյն արդար ու կատարեալ մարդ էր իր ազգի մէջ, [ուստի] եւ Տէր Աստծու առջեւ շնորհի արժանացաւ: Ինըը իինց հարիւր տարեկան էր, երբ սերեց Սէմին, Քամին եւ Յարերին³: Եւ վեցհարիւրերորդ տարում եկաւ ջրհեղեղը, իսկ Նոյը հարիւր տարի առաջ [արդէն] պատրաստել էր տապանը իր տաճանը իր տաճ վրկութեան համար: Դարտարապես ու Արարիշ Աստուած հրամա-

¹ Ողջ՛ ըստ Մովսէս Խորենացու (տես էջ 16):

յել էր նրան տապանի մէջ բոլոր հրաշքներն ու սքանչելիքները գործել «Որովհետեւ, ասում է, երկիրը լցուեց անիրաւութեամբ, ուստի ես ջրինդեղ բերեցի երկրի վրայ՝ ոչնչացնելու իր մէջ շունչ ունեցող ամեն մարմին»: Եւ Նոյը Տիրոջից պատուէր ստանալով՝ մտաւ տապանի մէջ բոլոր նրանց հետ, որ նրան հրամայեց Աստուած: Եւ ապա արարչական հրամանը կատարելուց յետոյ Նոյը դրս ելաւ այն նախց եւ օրինեց Սէմին ու Յարերին, բայց ոչ Քամին՝ այն պատճառով, որ նա քամահրեց հօր մերկութիւնը: Եւ ասաց. «Տէր Աստուած կ'օրինի Սէմին, Յարերին Տէր Աստուած կ'ընդարձակի, իսկ Քամանը ծառայ կը լինի նրանց:

Եւ ապա ծնուեցին Նոյի որդիների որդիները, եւ նրանց սերունդներն աճեցին ըստ առանձին ազգերի: Եւ Սէմի սերունդներից տասներեքըրդ Փաղեկն է, որի օրօք երկիրը բաժանուեց եւ դարձաւ նրանց բնակավայր եւ բազաւորութիւն՝ Մասիքից մինչեւ արեւելեան Սովերիա⁴ լեռը հասնելը: Իսկ Քամի սերունդներից Ներբովիի ժամանակներում եղաւ նրանց բազաւորութեան սկիզբը՝ Բարեկոնից մինչեւ Նինուն: Իսկ Յարերի որդիները եւ նրանց սերունդները, որ ծնուեցին ու աճեցին եւ լցրին երկիրը, սրանցից Հայաստանում սկսուեց բազաւորութիւնը, երբ եկաւ Հայկը եւ [երկրը] իր անունով կոչեց եւ դրանից յետոյ տիրեց մնացեալ ամրող աշխարհին, [նրա] արեւմուտքին եւ հիսյսին:

Եւ Նոյը տապանից դրս գալով՝ երկրի վրայ բազաւոր դարձաւ՝ Աղամից յետոյ երկրորդ բազաւորը: Քանզի Աստուած հրամայեց նրան, ինչպէս սկզբուն Աղամին, որ նա տիրի այն ամենին, ինչ նրա ձեռքի տակ երկրի վրայ կար: Եւ Աստուած օրինեց Նոյին ու նրա որդիներին եւ ասաց. «Աճեցէք ու բազմացէք եւ լցրէք երկիրը, եւ ծեր ահն ու երկիրը բոլ լինի բոլորի վրայ»⁵: Եւ աճեցին, եղան ազգեր, եւ անուանուեցին լեզուներ, եւ կոչուեցին տոհմեր, ըստ երկրների ու գաւառների, աճեցին, բազմացան ու լցրին երկրը: Եւ ջրհեղեղից յետոյ Նոյն ապրեց երեք հարիւր յիսուն տարի: Եւ Նոյի ողջ ժամանակը կազմեց ինը հարիւր յիսուն տարի, եւ մեռաւ:

ԳԼՈՒԽ Դ ՍԷՄԻ ՍԱՍԻՆ

Սէմը՝ [Նոյի] որդին, հարիւրամեայ էր, երբ սերեց Արփակսաղին⁶ ջրհեղեղից յետոյ երկրորդ տարում: Եւ Արփակսաղին սերելուց յետոյ Սէմն Շննդ. Թ 1-7:

¹ Իմա՞ս Արփաքասադ:

ապրեց հինգ հարիւր տարի եւ սերեց ուստրեր ու դրստրեր եւ [յետոյ] մեռաւ: Եւ Արփակսաղն ապրեց հարիւր երեսունինգ տարի [եւ] սերեց Կայնանին: Եւ Արփակսաղն ապրելով [եւս] երեք հարիւր երեսուն տարի՝ մեռաւ: Եւ Կայնան ապրելով հարիւր քան տարի՝ սերեց Սաղդային, իսկ ինըն ապրելով էլի տարիներ՝ մեռաւ: Սաղդան հարիւր երեսուն տարեկանում սերեց Երերին. եւ Երերին սերելուց յետոյ ապրեց Երկու հարիւր եօթանասուն տարի եւ մեռաւ: Եւ Փաղեկն ապրելով հարիւր երեսունչորս տարի՝ սերեց Ռազարին. եւ Ռազարին սերելուց յետոյ Փաղեկն ապրեց Երկու հարիւր ինը տարի [եւ] մեռաւ: Եւ Ռազարին ապրելով հարիւր երեսուներկու տարի՝ սերեց Սերութին. եւ Սերութին սերելուց յետոյ Ռազարին ապրեց Երկու հարիւր եօթ տարի, սերեց ուստրեր ու դրստրեր եւ մեռաւ: Եւ Սերութն ապրելով հարիւր երեսուն տարի՝ սերեց Նաքովին. եւ Նաքովին սերելուց յետոյ Սերութն ապրեց Երկու հարիւր տարի եւ մեռաւ: Եւ Նաքովին ապրեց Եօթանասունինը տարի [եւ] սերեց Թարային. եւ Թարային սերելուց յետոյ Նաքովին ապրեց հարիւր քաներկու տարի, սերեց ուստրեր ու դրստրեր եւ մեռաւ: Եւ Թարան ապրեց Եօթանասուն տարի եւ սերեց Արբահամին:

ԳԼՈՒԽ Ե ԱԲՐԱՀԱՄԻ ՍԱՍԻՆ

Սա նախահայրերի շարքում Աղամից յետոյ քանմէկերորդն է եղել, իսկ տարիները կազմում են երեք հազար: Սրանք բոլորն էլ նահապետներ էին, Աղամից սկսած, սերելով ուստրեր ու դրստրեր, եկան հասան մինչեւ Արքան, եւ իրաքանչիւն ապրեց իր ժամանակը եւ մեռաւ: Իսկ Արքանը որդիներ չունեցաւ, որովհետեւ նրա Սարա կինը չըեր էր եւ չէր ծննդարերում, մինչեւ որ Տիրոջից նրան հասաւ աւետման հրամանը: Եւ Աստուած խօսեց նրա հետ եւ ասաց. «Ահա իմ ուխտը քեզ հետ. դու կր լինես քազում ազգերի հայր եւ սրանից յետոյ քո անունը չի լինի Արքան¹ այլ քո անունը կը լինի Արքահամ, որովհետեւ քազմարի ազգերի հայր նշանակեցի քեզ: Եւ քեզ մեծ ազգ կը դարձնեմ եւ կ'օրինեմ քեզ, եւ քեզնից քազաւրներ կը

¹ Արքան նշանակում է հայր քազմար, իսկ Արքահամ հայրը քազմույթան:

ծնուեն»: Եւ ոխտ դնելուց յետոյ Աստուած Արքահամին ասաց. «Եւ քո կնոջ Սարայի [անունը] այլենս Սարա չի կրչուի, այլ Սառա² կը լինի նրա անունը: Եւ կ'օրինեմ նրան, քեզ նրանից որդի կը տամ, եւ կը դառնայ, մեծ ազգ, եւ նրանից ազգերի քազաւրներ կը լինեն»: Եւ Արքահամը երկրպացեց Աստծուն, եւ յետոյ նրանցից ծնուեց աւետման [խոստման] որդի հասհակը:

Եւ նրանից [Արքահամից] ազգերի քազաւրներ քազմացան: Եւ Արքահամը եղաւ քազաւրը եւ քազաւրների հայր: Եւ Թարայի սերունդները սրանք են՝ Արքահամ, Նաքովը եւ Առան: Եւ [Արքահամը] սրանց հետ գնաց քանանացիների երկիրը. եկան մինչեւ Խառան եւ բնակուեցին այնտեղ: Եւ Թարայի ողջ ժամանակը Խառանում եղաւ երկու հարիւր հինգ տարի, եւ Թարան մեռաւ Խառանում:

ԳԼՈՒԽ Զ ԶԱՍԻ ՍԱՍԻՆ

Քամը սերում է Քուշին, Քուշը՝ Մեստրիմին³, Մեստրիմը սերում է Ներբովիին: Սրա ժամանակ Բարեկենում սկիզբ դրուեց նրանց քազաւրութեանը: Եւ Ներբովիը քազաւրեց Բարեկենում ու այլ քաղաքների վրայ, որ հետեւեալիներն են՝ Որիդ, Աքար, Չաղնանէ, [որոնք] Սենայար⁴ երկրում են: Այս երկրից եղաւ Ասուրը եւ շինեց Նիմուէն եւ Ռատովք քաղաքը, նաև՝ Չաղանը եւ Դասեմանը՝ Նիմուէի եւ Չաղանի միջեւ, այսինքն՝ մեծ քաղաքը: Այս Ներբովիը առաջինը սկսեց երկրի վրայ հսկայ լինել. եւ Տը Աստծու առջեւ նա որսորդ էր:

Ներբովիը սերում է Բարին, Բարը սերում է Աներիսին, Աներիսը սերում է Արքէին, Արքէլը սերում է Չաղանին, Չաղանը սերում է միւս Արքէին, Արքէլը սերում է Նիմուսին, Նիմուսը սերում է Նիմուասին: Իսկ Մեստրիմի⁵ սերունդներից շատ ազգեր ծիղաւրուեցին՝ ողոյիմացիները, սենիմացիները, սաղրիմացիները եւ նեփաղիմացիները, պարոսնիմացիները, որոնցից ծագեցին փոշտացիներն ու կապրորիմացիները:

¹ Սարա նշանակում է առատուրիւն, իսկ Սառա՝ իշխանութիւն:

² Իման՝ Մեստրայիմ:

³ Զեռազրում այստեղ՝ Մեստեսայ (տպագրում վրիպակով՝ Մեստրասայ):

ԳԼՈՒԽ Է

ՅԱԲԵԹԻ ՍԱՍԻՆ

Յարեքը սերում է Գոմերին, Գոմերը սերում է Թիրասին, Թիրասը սերում է Թորգոնին, Թորգոնը սերում է Հայկին, Հայկը սերում է Արամենակին¹, Արամենակը սերում է Արմայիսին², Արմայիսը սերում է Ամասիային, Ամասիան սերում է Գեղամին, Գեղամը սերում է Հարմային, Հարման սերում է Արամին, Արամը սերում է Արայ Գեղեցիկին: Արդ՝ այսպիսի ազգաբանութիւնը ստուգուած է, մեր պատմագիր Սովուխի կողմից, ինչպէս որ ինքն է վկայում, թէ՝ «Յիշեալ, ասում է, ազգաբանութիւնն է հաւաստի. երեք ցեղերն էլ տասնմէկական [սերունդ] ունեցան մինչեւ Արքահամը, մինչեւ Նինուասը, մինչեւ մեր Արամը, որովհետեւ Արան տասներկուերորդն է՝ Նինոսից յետոյ երիտասարդ հասակում վախճանուած. եւ դա ճշմարիտ է, ասում է, թող ոչ ոք չկասկածի»³.

Եւ Յարեքից բաժանուեցին⁴ ու մեկնեցին շատ ազգեր՝ կետացիները, ոռղացիները եւ սրանցից [բացի] ուրիշ շատերը, եւ մեկնեցին ազգերի կղիները՝ իրենց երկրները. իրաքանչիրն լաս իր լեզուի իրենց ազգերի ու տոհմերի մէջ աճեցին ու բազմացան եւ լցրեցին երկիրը:

ԳԼՈՒԽ Ը

ՆՈՅԻ ԵՐԵՔ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱՆՍԱՆ ՍԱՍԻՆ

Սէմի սահմանները Պարսքից ու Գաղիբովնից⁵ հասնում են մինչեւ Հնդկաստան եւ ձգում են մինչեւ Ռինիկորուրովնից⁶: Եւ Սէմի երկրների անոններն են՝ Պարսք, Տապրիկը, Վրկանիկը, Բաքելովնից⁷, Արաքիա Առաջին եւ Երկրորդ, նաև ուրիշներ մինչեւ Փինիկէ: Սրանք տիրում են [իետեւալ] կղզիներին՝ Սառունիա, Կրետէ, Կիպրոս, Գաղոս, Մեղլիտէ, Սարդովնիա, Մենիդա, Գաղատիա, Գորսոնիա, Մարտիրոս, Մարտիրոսի գլուխացիներին են՝ Երիա, Կիպրոս, Ղեմնոս, Ղեմլիոս, Սամորլակէ. իսկ բեկութացիներին են՝ Երիա, Կիպրոս, Ղեմնոս, Ղեմլիոս, Սամորլակէ, Միտիւղոնէ, Փովկէ, Պրիենէ⁸, Երիքրէ, Մամուտէնոս, Կողովկոնքլիոս, Եփեսոս, Զմիոնիա, Պերինքոս, Բիւզանտիոն, Քաղկեդոն, Պոնտոս: Արդ՝ կղզիները սրանք են: Եւ բազում ուրիշներ, որոնք նոյի երեք որդիների բաժնում են: Նաև՝ լեռներ ու բլուրներ եւ ծովեր ու գետեր:

ԳԼՈՒԽ Ժ

ՔԱՍԻ ԱՅԼ ՍԱՀՍԱՆՆԵՐԸ

Ովհնիկորուրովնից մինչեւ Գաղիբովն հարաւային կողմն է, եւ Զամի երկրների անունները [իետեւեալներն] են՝ Եզիպտոս, Երովպիէ, որն ուղղուած է դէպի Հնդկաստան, եւ միս Երովպիէ, որտեղից սկիզբ է առնում քոշացիների գետը, Երիքրայ, որ Կարմիր ծովն է եւ ուղրուած է դէպի արեւելք, նաև այլ ազգեր մինչեւ Փոխգիա եւ Եզիպտոսից մինչեւ Ովկիանոս: Եւ նրանց մէջ կղզիներն են, որ սրանք են՝ Այլակարսովդա, Ղերեբիրա, Սարեաքոս, Ջիոս, Ղեսրոս, Մենիլուս, Իմրոս, Յարկոս, Կինիրոս, Կիպրոս մեծ կղզին եւ այլը:

ԳԼՈՒԽ Ժ

ՅԱԲԵԹԻ ՍԱՀՍԱՆՆԵՐԸ

Տարաստանից⁹ մինչեւ Գաղիբովն իխսխային կողմն [է], եւ երկրների անուններն են՝ Ատրպատական, Ալուանք, Ամազոնիա, Մեծ Հայր եւ Փոքր [Հայր], Վիքք, Կապադովկիա, Պամփագովնիա, Գաղատիա, Գաղիա, Կողիս, Մեծ Սպանիա եւ ուրիշներն են՝ Բրենտինա, Սլիկենիա, Երիա, Ռոռիոքիս¹⁰, Ղուրոս. նաև տասներկու այլ մեծամեծ կղզիներ (որոնց մէջ բազմաթիւ քաղաքներ են բնակեցուած, որ [մէկ] անունով կոչում է Սարդարէն՝ այսինքն ցիր ու ցան) Հոռմեացիների նահանգում, որոնցում պանդխտութեամբ յոյներ բնակուեցին, եւ [իպա] սրանք են՝ Երիա, Կրետէ, Սլիկիլիա, Կիպրոս, Կովաս, Սամոս, Ռոռոս¹¹, Ջիոս, Թէաքոս, Ղեմնոս, Ղեմլիոս, Սամորլակէ. իսկ բեկութացիներին են՝ Երիա, Կիպրոս, Ղեմնոս, Ղեմլիոս, Սամորլակէ, Փովկէ, Պրիենէ¹², Երիքրէ, Մամուտէնոս, Կողովկոնքլիոս, Եփեսոս, Զմիոնիա, Պերինքոս, Բիւզանտիոն, Քաղկեդոն, Պոնտոս: Արդ՝ կղզիները սրանք են: Եւ բազում ուրիշներ, որոնք նոյի երեք որդիների բաժնում են: Նաև՝ լեռներ ու բլուրներ եւ ծովեր ու գետեր:

ԳԼՈՒԽ ԺԱ

ԼԵՌՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Եւ սրանք են տասներկու անուանի լեռների անունները. Լիքանան, Կալկաս, Տորոս¹³, Ատղաս¹⁴, Պառնասոս, Կիթերոն, Եղլովն, Պարբենի-

¹ Իմա՝ Արամանեակ. Խորենացու որոշ ձեռագրերում եւս Արամենակ է:

² Տես Խորենացի, էջ 20:

³ Այստեղից պատմիչն սկսում է քաղել Փիլոն Տիրակացու «Ժամանակագրութեան» տեղեկութիւնները:

⁴ Բնագրում՝ Բաքելովնից:

ու⁹, Մասիք, Ղիգարանդոս, Պենիլոս, Ղանպօս¹¹:

ԳԼՈՒԽ ԺԲ ԾՈՎԵՐԻ ՍԱՍԻՆ

Ովկիանոսը, որ համաշխարհային ծով է կոչում, եւ Հնդկական ծովը, եւ Կարմիր ծովը, եւ Կասպից ծովը, նաև՝ այլ ծովեր ու ծովակներ եւ լեռներ ու ծովաժայռեր:

ԳԼՈՒԽ ԺԳ ԳԵՏԵՐԻ ՍԱՍԻՆ

Մեծամեծ ու անուանի գետերը քառասունն են՝ Ինդոս, որ Եփրատ¹⁰ է, Նեղոս, որ Գելովն [գետն] է, Դեկիաք, Եփրատ, որ Արածանին¹¹ է, Յորդանան, Կեփիսոս, Տանիս¹², Մենոս, Եղիմանքոս, Աղյոս, Ասորպիս, Թեսոն¹³, Երասխ, Կուր գետ, Բորիսթեմէս, Աղրես, Տորոս, Երոտաս, Մեանտրաս, Երմոս, Արսիոս, Պիրամոս, Բես, Երրովն, Սենդարիս¹⁴, Ջեղկոս, Պտենէոս, Եպարջիոս, Կախիստրոս, Սիմոս, Սկամանտրոս, Ստիւմոն, Պարթենիոս, Խատրոս, Ռենոս, Բետէս, Ռողանոս, Թիրլոս, որ այժմ կոչում է Տիրեռոս:

ԳԼՈՒԽ ԺԴ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ ԿԱՏԱՐՈՒՄԾ ԱՅԼ ԲԱՆԵՐԻ ՍԱՍԻՆ]

Հաւաստին քազում քաներից, որշափ կարողանանք, համառօտ կը պատմենք քեզ, ո՞վ դրս ուստմնասէր ու խոհեմ: Այն ժամանակ, երբ քաֆանուեցին Նոյի որդիները՝ Զրուանք, Տիտանն ու Յապետոսը, այս-

¹⁰ Իմաս՝ Ողիմպոս, ինչպէս որ նաև Փիլոն Տիրակացուի մատ է:

¹¹ Իմա Տանայիս, որն այսօրուայ Դոնն է:

¹² Իմա Թերմոդրն, որ ամազոնիկների գետն է:

¹³ Իմա Մանգարիս, ինչպէս Փիլոն Տիրակացու մատ է:

ինքն Սէմր, Քամր, Յարեթը, ողջ աշխարհն իրենց իշխանութեան ներքոյ հաստատելով՝ կամնենում էին տիրել բոլոր երկրներին եւ լինել աշխարհի իշխաններ: Իսկ Զրուանք տիրում է երկուսի վրայ էլ: Ապա Տիտանն ու Յապետոսը բնդիմանում են սրան պատերազմով, որովհետեւ Զրուանք խորհում էր իր որդիներին քազաւորեցնել բոլորի վրայ: Եւ այսպիսի խոնումի ու խոռվորթեան մէջ Տիտանը յափշտակեց Զրուանի սահմաների ժառանգութիւնից մի ինչ-որ մաս: Հենց այս միջոցին միջամտում է նրանց քոյր Աստղիկը, ասում է՝ Պատմագիրը¹⁵, համոզում է դադարեցնել այս խոռվորթիւնը: Ապա յանձն են առնում քազաւորեցնել Զրուանին: Եւ սրանից յետոյ իրաքանչիւր որ իր բաժնում քազաւորեց, եւ մեր երկիրն իբրև քամին վիճակուեց Նոյի կրտսեր որդի Յարեթին:

Յարեթը սերում է Գոմերին, Գոմերը սերում է Թիրասին, Թիրասը սերում է Թորգոմին, Թորգոմը սերում է Հայկին: Արդ՝ Սէմի եւ Քամր սերունդները ազգեր եղան, եւ քազմանալով՝ տարածուեցին իրաքանչիւրն իր երկրներն ու զաւաները: Իսկ մեր Յարեթի սերունդներից, որ տիրեցին մեր երկրին, նրանց կողմից կատարուած պատերազմական սխրագործութիւնների մասին որեւէ տեղ չգտանք [պատմուած], բացի քաջ Հայկից, Արամից եւ Տիգրանից: Իսկ միւսների մասին՝ Հայկից մինչեւ Արայ Գեղեցիկը, չգտանք, թէ որեւէ պատերազմում քաջագործութիւն ցուցաբերած լինեն, այլ [զոտանք] միայն իրաքանչիւրի անունները, ոլոնք նահապետներից անցել են նաև երկրներին, գաւառներին, գետերին ու լեռներին:

ԳԼՈՒԽ ԺԵ ՀԱՅԿԻ ՍԱՍԻՆ

Այս Հայկը գեղապատշաճ, թիկնեղ, գեղեցկագանգուր էր, քաղցրահայց ու հաստարազուկ: Սա ապստամբելով Բեկի դէմ՝ զնաց Արարադի երկիրը՝ հիսխսային կողմը, իր սերունդներով համդերձ՝ քանակով մօսաւորապէս երեք հարիւր հոգի: Եւ այնտեղ մնալով որոշ ժամանակ՝ այդ տեղը տալիս է իր Կաղմոս բոռանը եւ ինքը գնում է այն գաւառը, որն իր անունով կոչում է Հարք: [Այստեղ] կառուցում է մի գլու ու իր անունով կոչում Հայկաշէն:

Սրանից յետոյ Բեկը ելնում եւ զալս է Հայկի [վրայ] պատերազմի: Քաջ Հայկին այս բանը իր Կաղմոս բոռան [ուղարկած] լորից տեղեկանա-

¹⁴ Իմա Մովսէս Խորենացին (տես էջ 24):

լով՝ իրայիններով հանդերձ ելնում է Բելի դեմ ճակատամարտի: Ինքն առաջ է ընթանում ու մօտ հասնում արքային, եւ գրկաշափ ծգելով լայնալիք աղեղը՝ եռաբեւ սուր նետապաքը լիպացնում նրա կրծքավանդակին⁵⁴, եւ նետը մէջտեղից շեշտակի ճեղքելով թիկունքը՝ դուրս է գալիս միս կողմից ու խրում հողի մէջ: Եւ Բելլ Հայկի ոտքերի տակ կործանում է գետին ու շունչը փշում: Իսկ Բելի [զօրքի] բազմութիւնը տեսնելով Հայկի քաջ արարքը՝ բոլորը յետ են շրջում [ու] փախուստի դիմում:

Իսկ Հայկը ճակատամարտի տեղում շինում է դաստակերտ եւ անունը դնում Հայք, դրա համար էլ գաւառն այժմ կոչում է Հայոց ծոր⁵⁵: Իսկ Բելի դիակը [Հայկը] պատում է դեղերով եւ հրամայում տանել Հարք⁵⁶ ու քաղել մի բարձր տեղում՝ ի տես իր կանաց ու որդիների: Եւ դրանից յետոյ մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչում է Հայք:

ԳԼՈՒԽ ԺԶ

ՀԱՅԿԻ ՑԵՂԵՐԻ ՈՒ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՍԱՍԻՆ ԵՒ [ԹԷ] ԻՆՉ ԳՈՐԾԵՐ ԵՆ ԱՐԵԼ ՆՐԱՆՔ

Արդ՝ այժմ կ'անցնեմ քուելու մեր այրերին, որոնք Հայկի սերունդներից են: Հայկի որդի Արամենակը, որը ծնուեց Բարելոնում, բնակութիւն է հաստատում Հարքում՝ իր հայր Հայկի մահուանից յետոյ, եւ նրա խոռ եւ Մանաւազ եղբայրներն իրենց գերդաստաններով՝ նրա հետ միասին: Իսկ Մանաւազի Բազ որդին շինում է իր գաւառը, եւ նախարարութիւնն ու գաւառը կոչում են Մանաւազեան եւ Բզնունեաց: Իսկ խոռն իր անունով է անուանակոչում Խորխոռունիների տոհմը: Իսկ Արամենակը շինում է [երկրայնական] մէկը եւ իր անունով անուանակոչում է Արազած լեռը: Իսկ Արամի որդի Արմայիսն իր տունը [աւանը] շինում է գետեզրին եւ իր անունով կոչում Արմայիր⁵⁷, եւ գետի անունն էլ իր բռու Երաստի անունով [անուանում է] Երաստ: Իսկ նրա որդի Շարան շինում է իր գաւառը եւ իր անունով կոչում Շիրակ:

Իսկ Արմայիսը սերում է չորս գաւակ՝ Ամասիային, Գեղամին, Փարուխին եւ Ցողակին: Ինքը շինում է երկու տուն [աւան] եւ տալիս իր երկու որդիներին: Եւ [մէկը] Փարուխի անունով կոչում է Փարուխոտ⁵⁸, եւ [միւսը] Ցողակի անունով՝ Ցողակերտ: Իսկ Ամասիան իր անունով անուանակոչում է

⁵⁴ Բնագրում եւ Խորենացու մօս՝ կրծից տախտակ, որ կարող է նաև գրահ նշանակել:
⁵⁵ Իմա՞ Փառախոտ:

Մասիս լեռը: Իսկ Գեղամն Արմատիրում սերում է Հարմային եւ ինքը գնում է մի ծովակի ափը⁵⁹: Եւ ծովի շորջը կառուցապատում է եւ անուանում Գեղաքունի: նոյն անունով է [կոչում] նաև ծովը, իսկ լեռն անուանում է Գեղայ լեռ⁶⁰: Եւ սերում է իր որդի Սիսակին: Սա գնում է Սիսիլիքի⁶¹ սահմանները, շինում է գաւառը եւ իր անունով կոչում Սիսինիք: Իսկ Գեղամը շինում է մի ճեռակերտ եւ իր անունով կոչում Գեղամի, որ այժմ անուանում է Գառնի⁶² իր Գառնիկ բոռան անունով: Եւ Հայոց Արտաշէս արքայի օրօք սրա [Գառնիկի] սերունդներից Վարած անունով մի պատաճի բնակում է այն գետի ափին, որ կոչում է Հուրազդան⁶³, եւ այն գաւառը նրա անունով կոչում է Վարածնունի⁶⁴ տուն:

Արդ՝ յիշատակունցին Հայկի սերունդները եւ նրանց կողմից կատարուած՝ գործերը միշտ Արամ: Սա Հայկն [եր] հայերի նախնին՝ Յարերի որդի Գոմերի, [սրա] որդի Թիրասի, [սրա] որդի Թորգոնի որդին, եւ [սրանը էին] նրա ցեղերն ու սերունդները եւ բնակութեան երկիրը: Սրանից յետոյ սկսեցին բազմանալ եւ լցնել երկիրը: Իսկ Հարման, ապելով տարիներ՝ սերեց Արամին, եւ Արամի բազում քաջագործութիւնների մասին [արդէն] պատմում է:

ԳԼՈՒԽ ԺԷ

ԱՐԱՄԻ ՊԱՏԵՐԱԶՈՒ ՍՍԱԻՆ՝ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՃԱԿԱՍԱՍԱՐՏԵՐՈՎ

Սա պատերազմող եւ ջանասէր տղամարդ էր, որը սիրելով իր հայրենիքը՝ լաւ էր համարում մեռնել [հայրենիքի] համար, քան թէ օտար թշնամիները ոտնակոխ անէին իր սահմանները: Սա բազմաթիւ քաջ այրերով պատերազմի ելենելով՝ զնում է արեւելքի կողմերը եւ հանդիպում մեդացիների⁶⁵ զօրքերին: Նրանց զիսաւորը, որի անունը Մաղէս էր՝ [մի] գոռող ու պատերազմող այր, զալով Հայոց սահմանները եւ սմբակակոխ անելով [երկիրը] որոշ տարիներ ստրկացրել էր [այն]: Ապա Արամն իր զօրքերով յանկարծակի վրայ է հասնում եւ օրուայ լուսանալու պահին կրտսորում է զօրքի բազմութիւնը, իսկ նրանց զիսաւորին ձերբականելով՝ բերում է Արմայիր եւ այստեղ երկար ցից է հանում նրան. Եւ հրամայում է ճակատից մեխել պարապին՝ ի տես անցորդների:

⁵⁹ Իմա՞ Սեւանայ լիճը:

⁶⁰ Իմա՞ Հրազդան:

Իսկ ինքը գորքերով շարժում է Ասորեստանի կողմերը եւ այնտեղ գտնում ինը բիով¹ հեծեալների ու հետեակների, որոնք վնասներ էին պատճառում իր երկրին: Եթ [Արամը] ճակատամարտ տարով՝ իսպառ կոտրում է այդ գորքերը, նրանց հետ նաեւ իրենց գորապետ Բարչամին, իսկ մնացածներին հալածում է Կորդուաց² սահմաններով մինչեւ Ասորեստանի երկիրը: Ասում են, թէ երկար ժամանակ ասորիները պաշտել են սրան [Բարչամին]: իբրեւ աստծու:

Եթ ապա [Արամը] արեւմուտք է արշաւում վեց բիորով³, զալիս [հասնում] է բիզանդացիների կողմերը, որ այժմ կոչում է Կեսարիա⁴, եւ հանդիպում է Պայապիս Քաղեային⁵, որ բոնի տիրացել էր երկու ծովերի՝ Պոնտոսի եւ Ովկիանոսի⁶ միջակայքին: Եթ յարձակուելով՝ ճակատամարտ է տալիս նրան, յաղում բռնակալին, իսկ գորքերին փախուստի մատնելով՝ կոտրում, ցիրուցան [և անում] հեռաւոր վայրեր: Եթ այսպէս իր քաջորթեամբ ընդարձակում է Հայոց սահմաններն [այնքան], մինչեւ որ բոլոր ազգերը [մեզ] Սեծ Հայը են կոչում. բայց յոյներն Արամի անունով նաեւ Արմեն են կոչում, իսկ ասորիներն ու պարսիկները՝ Արմենիք:

ԳԼՈՒԽ ԺԷ ԱՐԱՅԻ⁷ ՍԱՍԻՆ

Այս Արայ Գեղեցիկը՝ Արամի որդին, տիրում է Հայաստուանին իր հօրից յնոյ: Սա իր անունով է անուանակոչում Արարատեան դաշտը: Ապա այն կրցու ու ցանկամոլ Շամիրամը Երկար տարիներ լսելով նրա գեղեցկորթեան մասին՝ տենչում էր տիրանալ նրան, բայց քացարձակ չէր յանդգնում, մինչեւ որ մեռաւ [իր ամուսին] Նինոսը, որը Նինուելում⁸ էր:

Եթ ապա այդ վաւաշոտ Շամիրամը փարատելով իր ցանկամոլութիւնը՝ քազմարի ընծաններով պատզամարեներ է ուղարկում Արայ Գեղեցիկի մօտ եւ աղաջում նրան, որ իր կամքը կատարի՝ կամ իրեն կին առնելով, կամ իր ցանկութիւնը կատարելով, որին Արան չի համաձայնում: Իսկ այն վաւաշոտը սաստիկ ցամամբ լցուելով՝ առնում է իր գորքերը եւ զալիս հասնում Հայոց սահմանները՝ Արայի դաշտը⁹: Եթ պատերազմում է նրա դէմ, եթ Արան մեռնում է պատերազմում: Նրա մասին մնացեալ քաները համառօտուում են. թող այսքանը քաւական լինի յիշատակուելու¹⁰:

¹ Այսինքն՝ իննուն հազար:

² Ինաւ Միջերկրական ծովի:

Սա տարիներ ապրելով՝ սերեց Կարուսին: Իսկ Շամիրամը այդ յաջողութիւնից յետոյ գրաւելով Հայաստանը՝ իր համար քաղաք է շնում Տնսապ¹¹ կոչուած գաւառում: Նաեւ արքայական պալատ է կառուցում սրանչելի կերտուածքով եւ գետից վիմայատակ ամբարտակով [ջրանցք] հանում¹²: Եթ նախքան այս պատերազմելով Հնդկաստանում՝ մեռնում է [Շամիրամը] Հայաստանում՝ իր Նինուաս որդու կողմից սպանուելով:

ԳԼՈՒԽ ԺԹ

ԱՅՆ ՍԱՍԻՆ, [ԹԵ] ԱՐԱՅԻ ՍԱՀԻՑ ՅԵՏՈՅ ԻՆՉԵՐ ԵՆ ՊԱՏՄՈՒՄ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹԵԱՍՐ

[Ահա] պատմեցինք այն, ինչ որ Հայկի սերունդների գործերի մասին [եր] մինչեւ Պարոյլը¹³, որը Վարքակէսի կողմից մեզ համար առաջին թագաւոր քաջադրուեց, [եւ] որի մասին որոշ չափով յիշատակում է Պատմագիրը¹⁴: Նմանապէս [նա յիշում է] նաեւ Հրաշեայի մասին՝ մինչեւ Տիգրանը: Իսկ Տիգրանին [արդէն] յոյժ գրվարանում է ճշմարտապատում Մովսէսին իր Պատմութեան մէջ՝ [ցոյց տալով], թէ որքան նա ամեն քանով գովելու [արժանի] է: Եթ ասում է այսպէս. «Ո՞վ նրա արժանայիշատակ [գործերով] չի ուրախանայ եւ [չի] ոգեշնչուի այդպիսի այր լինելու, [որն] այրերի գումու կանգնելով եւ արիութիւն ցուցաբերելով՝ մեր ազգը քարձրացրեց եւ լծի տակ գտնուածներիս շատերի վրայ լծադիր ու հարկապահանց դարձրեց: [Աս] խաղաղութիւն ու շենութիւն բերող եւ ամեն տեսակի քարեկարգութիւն բաշխող [եղաւ] Հայոց աշխարհի համար: Իսկ հապանը գոյնը, գեղեցկութիւնը, հասակը, տեսքը, բնաւորութեան բարի քարը»: Բայց մենք նրա քազաւորելը կը թողնենք իր տեղում շարադրելու:

ԳԼՈՒԽ Ի

ԱՅՆ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ՈՒ ԴԱՏԱՌՈՒՆԵՐԻ ՍԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԻՄՐԱՅԷԼԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ ԵՂԱՆ

Երբ եկաւ հասաւ խոստման լրումը, Աքրահամը¹⁵ սերեց Իսահակին. եւ Աքրահամի կեանքի տարիները կազմում են հարիւր եօթանատնինք: Իսահակը վարսուն տարեկանում սերեց Յակոբին. եւ ընդամենը Իսահակի¹⁶ Այսինքն՝ Խորենացին:

Կեանքի տարիները հարիւր ութուն [են]: Յակորը ութուներեք տարեկանում սերեց Ղելիխն. Եւ ընդամենը Յակորի կեանքի տարիները հարիւր քառասունինգ [են]: Բայց թէպէտ Յակորի որդիների սկիզբը այստեղ եղաւ Ղելիխն, սակայն նախ սերեց Ռովբենին, որ համարում է Եզիսոսու մտնելու սկիզբը. ըստ այդ կարգի էլ քահանայութեան սկիզբը եղաւ Յակորի՝ թուով երրորդ գաւակից, իսկ քագաւորութիւնը՝ չորրորդից:

Ղելիխն քառասունինգ տարեկանում սերեց Կահարիխն. Եւ ընդամենը Ղելիխն կեանքի տարիները հարիւր երեսունեօր [են]: Կահարը ապրելով տարիներ՝⁷² վարսունմէկ տարեկանում սերեց Ամրամիխն. Եւ ընդամենը Կահարի կեանքի տարիները հարիւր երեսուներեք [են]: Ամրամը եօրանասուներեք տարեկանում սերեց Մովսէսին, որը եղաւ նախամարգարէ, առաջին քահանայ եւ Խարայէլի ժողովրդի առաջնորդ: Եւ ընդամենը Ամրամի կեանքի տարիները հարիւր երեսունեօր [են], իսկ Մովսէսի կեանքի տարիները՝ հարիւր քսան:

Մովսէսից յետոյ զիխաւոր ու առաջնորդ դարձաւ Յեսու Նաւեան երեսունմէկ տարի: Ծերեն [իշխեցին] երեսուն տարի, դատաւորները՝ Գեղէոնը, Բարակը, Սամփանը, Յեփրաան եւ նրանք, որ սրանցից առաջ եւ յետոյ են եղել: Բոլորի տարիներն ընդամենը [կազմում են] չորս հարիւր եւ հինգ: Եւ Հեղին, որ Խարայէլի դատաւոր եղաւ քսան տարի, եւ եկան հասան հերքականութեամբ, մի առ մի իրար յաջորդելով՝ սկսած Մովսէսից մինչեւ Սամուել, որն էլ իշխեց յիսունութ տարի:

ԳԼՈՒԽ ԻՎ ԽՄՐԱՅԷԼԻ ԹԱԳԱԽՈՐՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Դատաւորներից յետոյ Սամուել մարգարէի օրերում Խարայէլի վրայ քագաւորեց Սատուրը. քանզի իրենց համար քագաւոր խնդրեցին, եւ [Տէրը] նրանց տուեց Կիսի որդի Սատուրին: Բենիամենի ցեղից, եւ [նա] քագաւորեց քառասուն տարի: Եւ այլ քագաւոր խնդրեցին, եւ Տէրը նրանց տուեց Յեսուի որդի Դատիքն, որի մասին հէնց ինքը վկայեց, թէ՝ «Գտայ Յեսուի որդի Դատիքն՝ իմ սրտին մօտ մարդուն, որը կը կատարի իմ բոլոր ցանկութիւնները»: Եւ [Դատիքը] մարգարէ էր եւ եղաւ քագաւոր եւ Խարայէլում քագաւորեց քառասուն տարի:

Թագաւորեց Դատիք որդի Սողոմոննը, [որ] իմաստուն ու հանճարեղ մարդ էր, Աստծու մտքի քննող. [նա] քագաւորեց քառասուն տարի: Սողո-

մնի որդի Ռոբովամը⁷³ քագաւորեց տասնինգ տարի: Սրա օրօք Խարայէլի քագաւորութիւնը քաժանուեց երկուսի: Եւ Սամարիայում քագաւորեց Նաբատի որդի Ռոբովամը, որն Խարայէլին յանցանք գործել տուեց⁷⁴: Ռոբովամից յետոյ [քագաւորեց] Արիան՝ երեք տարի, [ապա] Ասարը՝ քառասունմէկ տարի, Ոզիան՝ մէկ տարի, Գոլորիան՝ հինգ տարի, Յովսափատը՝ քառասունինգ տարի, Յովլամը՝ ութ տարի, Յովասը՝ քառասուն տարի, Ամասիան՝ քսանինը տարի, Ոզիան՝ յիսուներկու տարի: Սա յանդզնեց խոնկ զցել տաճարում եւ Տիրոջ կողմից յանդիմանուեց: Յովարամը [քագաւորեց] տասնվեց տարի, Արազը՝ յիսունվեց տարի, Եղեկիան՝ քսանինը տարի: Սրա օրօք Ասորեստանի Սենեքերիմ արքան պաշարեց Երուսաղէմը եւ Աստծոյ հրեշտակի կողմից սպանուեց: Մանաւէն [քագաւորեց] յիսունվեց տարի, Ամովսը՝ երկու տարի, Յովիան՝ երեսունմէկ տարի, Յովաքազը՝ երեք ամիս, Յովակիմը՝ տասնմէկ տարի, Յորնիան՝ երեք ամիս, Սեղեկիան՝ տասնմէկ տարի: Սրան բռնեց քարելունացիների Նաբուգուրոնուոր արքան, աշքերը խարեց եւ խաւարեցը մինչեւ] յախտենական կեանքի [ժամանակը]: Բարելոնեան գերութեան ժամանակ Նաբուգուրոնուորը [քագաւորեց] քսանինգ տարի, Ելմարով դադը՝ մէկ տարի, Բաղրամարը՝ երեք տարի:

Աղամից, որ երկրային առաջին մարդն էր եւ քագաւորը երկրի վրայ, մինչեւ երկրորդ Աղամը, որ երկնի Տէրն էր ու քագաւորը երկնի ու երկրի, տարիները կազմում են հինգ հազար հինգ հարիւր, իսկ Քրիստոսից մինչեւ Հայոց քուականը՝ հինգ հարիւր⁷⁵:

ԳԼՈՒԽ ԻՎ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱԽՈՐՆԵՐԸ ԻՍԱՀԱԿԻ ՑԵՂԻՑ⁷⁶

Կիւրոսը քագաւորեց երեսուն տարի. սրա օրօք Յովսէղէկը դարձաւ Խարայէլի ժողովրդի զիխաւորն ու առաջնորդը: Կարբտէսը⁷⁷ քագաւորեց ինը տարի, մոզերը [քագաւորեցին] եօր տարի, Դարեկ Վշտասպեանը⁷⁸ երեսունվեց տարի: Սրա ժամանակ եբրայեցիների վերակացու եղաւ Զօրարարէլը քահանայապետ Յեսուի հետ միասին, որն աւարտեց տաճարի կառուցումը: Եւ [այդ ժամանակ] մարգարէներն էին Անգէան ու Զաքարիասը: Ըսերքսէս Դարեկեանը [քագաւորեց] քսան տարի, Արտավանը՝ եօր ամիս: Սրանց օրերում ծերերը դարձան Խարայէլի ժողովրդի զիխա-

⁷² Բնագրում այստեղ երեք անգամ՝ Թորովամ. հմնտ. ստորեւ՝ գլ. ՀԵ:

⁷³ Ինա՞ Կամբիսէս:

տրները: Արտաշէս Երկայնածեռնլ [թագաւորեց] քառասունմէկ տարի: Սրա ժամանակ Եզրասը Եկաւ Երուսաղէմ եւ սովորեցնում էր Օրէնքը: Եւ սրա թագաւորութեան քաներորդ [տարում] Եման տակառապետը նրանից խնդրեց եւ նրա հրամանով Եկաւ Երուսաղէմ եւ շինեց պարիսաը եւ նորոգեց քաղաքի հրապարակները: Այդ ժամանակներում Խորայէլի ժողովրդի զիսաւորները դարձան դատաւորները՝ [ընդամենը] չորս հարիր հինգ տարի:

Քսերսես Երկրորդը [թագաւորեց] եօր ամիս, Սորդիանուր եւս՝ եօր ամիս, Դարեկի Խորքը՝ յիսունինը տարի, Արտաշէս Ուշիմը՝ քառասուն տարի, Արտաշէս Երրորդը, որը [կոչուեց] եւ Զու⁷⁷ քաներեք տարի, Դարեկի Արտեմեսանը⁷⁸ վեց տարի: Սրան սպանեց Աղեքսանդրն իր թագաւորութեան վեցերորդ տարում եւ վերացրեց Պարսից թագաւորութիւնը, որը տեսեց մինչեւ Երկու հարիր վեց տարի եւ Երկու ամիս: Եւ Աղեքսանդրը Քարելոնը գրաւելուց յետոյ թագաւորեց վեց տարի եւ եօր ամիս: Եւ ընդամենը Աղեքսանդրը թագաւորեց տասներկու տարի եւ եօր ամիս:

Աղեքսանդրից յետոյ Եզիպտոսում թագաւորեց Պատղոմէոս Ռողբոսը⁷⁹ քառասուն տարի: [Ապա] Պատղոմէոս Ելրայրասէրը. նրա ժամանակ Երրայեցի իմաստունները թարգմանեցին Օրէնքը: Պատղոմէոս Բարերարը [թագաւորեց] քաներեք տարի. սրա օրօք էր Սերութի [որդի] Յնսուն, որը կարգաւորեց իմաստութեան ողջ արևեստը⁸⁰: Այս Պատղոմէոսը Երրորդն էր, որ թագաւորեց Եզիպտոսում. եւ ուր այլ Պատղոմէոսներ Եզիպտոսում թագաւորեցին միմեանց հետեւից: Բայց մենք այստեղից կը վերադառնանք Հայոց թագաւորների շարքին:

ԳԼՈՒԽ ԻԳ

ՀԱՅՈՑ ՀԱՅԿԱԶՈՒՏԻ ԹԱԳԱԽՈՐՆԵՐԸ

Առաջինը մեզ թագաւորում է Պարոյր թագաւորը՝ թագալրուած նարերի առաջին թագաւոր Վարբակէսի կողմից, որը մեր Պարոյրին իրեն զինակից⁸¹ էր դարձել: Զանզի Վարբակէսը [ծննդեան] զաւառով մեղացի էր, ճշտելով ասում է մեզ պատմազիր Մովսէսը, իր խորամանելութեամբ տիրում է Ասորեստանին ու Նիմուէին, եւ մեր քաջ նախարար Պարոյրին իր կողմը դարձնելով՝ թագաւորեցնում նրան:

⁷⁷ Բնագրում՝ Արտեմեայ: Իմա՞ Արսամայ, ինչպէս յայտնի առիրներում է:

⁷⁸ Իմա՞ Պատղոմէոս Պագոս, ինչպէս այլ առիրներում է:

⁷⁹ Ուխտանեսի բառով՝ թագկակից:

Հաւաքում է [Վարբակէսը] տեղ-նիզակի, աղեղի եւ սուսերի գործածութեան մէջ ամեն ինչով հմուտ արի այթելի գօրախումբը եւ պատերազմով գրաւում, ինչպէս ասացինք, Ասորեստան ու Նիմուէն: Եւ թագաւորութիւնը տեղափոխում է իր մօտ՝ Մարաստան, որտեղից Աշխահակն⁷⁹ էր: Բայց մեր բնիկ պաշտօնեաները մարերի թագաւորութեան ժամանակ մնացին մեր Երկրում, ինչպէս որ ճշգրտարանելով իր պատմութեան մէջ ասում է Մովսէսը եւ գեղեցկապէս իր համար վկայաբերում Երեմիա մարգարէին⁸⁰, որն իր խօսքի մէջ լսնդիմ Բարելոնի պատերազմի է հրափրում [եւ]: «Հրաման տո՞ւր, ասում է, Արարատեան թագաւորութեան ու Ասքանազեան գօրքին»⁸¹: Եւ դարձեալ ինքն էլ [Խորենացին] հաստատում է [այդ] խօսքերը. «Սա, ասում է, հաւատում է, [որ] մեզանում այն ժամանակ թագաւորութիւնը գրյուրիխն է ունեցել»:

Իսկ սրանից յետոյ լաջորդում են] Հրաշեան, Փառնաւազը, Պաճոնը, Կոռվնակը⁸², Փաւոսը⁸³, միւս Հայկակը, Երուանդ Սակաւակեազը, Տիգրանը: Արդ՝ Տիգրանի մասին ինչ գովարանութիւն ու քաջագործութիւն պատմում են, սույզ կը շարադրենք նրանցից յետոյ: Բայց ուրիշների անունները, որոնց վերեւում յիշատակեցինք, որեւէ անուն կամ գործ չգտանք այն Պատղութեան մէջ, ինչպէս որ հենց ինքն է ասում. «Ճէ սրանցից վերջինը Երուանդն է եւ Տիգրանը, ասում է՝ յոյսը վկայակոչելով եմ ասում»⁸⁴: Եւ դարձեալ, թէ «Գուցէ Ժամանակը ոչ շատ հեռու լինելով՝ կը յիշենք»⁸⁵ այս անունները: Բայց ինքը սրանից յետոյ [միայն] Հրաշեայի մասին է որոշ բաներ պատմում:

ԳԼՈՒԽ ԻԳ ՀՐԱՉԵԱՅԻ ԹԱԳԱԽՈՐՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրաշեան հայերի վրայ թագաւորեց Պարոյրից յետոյ: Սա Հրաշեայ է կոչում առաել պայծառատեսք եւ բոցավառ աշքեր ունեցող լինելու համար: Սրա օրօք, ասում են, բարելոնացիների արքան էր Նաբրուգորնուսորը, որը գերեզարեց Երեաներին, եւ սա [Հրաշեան], ասում են, խնդրեց Նաբրուգորնուսորից Երրայեցիների գերուած զիսաւորներից մէկին, որի անունը Շամբատ էր, [եւ նրան] բերեց բնակեցրեց մեր Երկրում մեծ պատուվ: Եւ սրանից, ասում է Պատղոմազիրը, ծագում է Բագրատունիների տոհմը⁸⁶, եւ [սա] հաւաստի է:

⁸⁰ Երեմ. ԾԱ 27:

⁸¹ Տես Խորենացի, էջ 68:

Արդ՝ Հրեաստանից մեծ աւարով ու գերիներով Նաբուզրումոսորի վերադառնախի՝ Հրաշեան սրան ընդառաջ է ուղարկում պատուիրակներ պատուական զանձերով եւ չքնաղ նուերներով, որովհետեւ դաշնակիցներ էին միմեանց, եւ մաս է խնդրում նրանից այն աւարից: Եւ նա նրան տալիս է գերուածների զլյաւարներից Շամբատ անունով մէկին, ինչպէս վերեւում ասուեց Մովսէսի կողմից: Եւ [Հրաշեան] նրան պատուով տեղաւորում է մինչեւ Հայոց քաջարու առաջին Վաղարշակի ժամանակները: Իսկ նա [Վաղարշակը] նրան նշանակում է իրեն քաջարիք եւ ասպետ եւ նրա տոհմին խոստանում է տաճուտէրութեան իշխանութիւն, որի մասին յետոյ կը պատմեմ մի այլ տեղում: Իսկ միևն քաջարները նրանց ստիպում էին կուրքերին պաշտելու, որը կը թողմեմ ասելու իրաքանչիւրն իր կարգով:

ԳԼՈՒԽ ԻԵ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՍԻՆ

Տիգրան Առաջինը քաջարուում է հայերի վրայ Հրաշեայից [յետոյ] եօթերորդը: [Նրա մասին] գովարանութեան խօսքը նախապէս ասուեց տասնիներորդ գլխում: Սա մարերի [արքայ] Աշդահակի հետ դաշնակցելով նրան կնուրեան է տալիս իր քոյր Տիգրանուիուն, որին տենչանքով խնդրում էր Աժդահակը: Բայց սրանից յետոյ Աշդահակը դաւաճանաբար դաւեր էր լարում Տիգրանի դէմ շարիք մտմտալով նրա համար: Այս բանը իմանալով՝ օրիորդ¹ Տիգրանուին յայտնում է իր երրորդ՝ Տիգրանին Աշդահակի նենգամտութեան մասին: Իսկ մեր գովարժան վայելահասակը եւ նիզակաւորը՝ Հայոց արքան, սրանից յետոյ իր սահմաններից մեծարի գօրը է ժողովում՝ Հայոց աշխարիի ողջ ընտրանին, եւ զնում է մեղացիների կողմերն [ու] հանդիպում Աշդահակի գօրքերին: Եւ ինքը [Տիգրանը] ճակատամարտի ժամանակ հարուածում է Աշդահակին եւ իր նիզակով ճեղքում նրա երկաք զրահը, եւ իր ճեղքը յետ քաշելիս դուրս է բերում թորի կէս մասը: Եւ Աշդահակի ճահով աւարտուում է պատերազմը: Իսկ ինքը [Տիգրանն] առնելով իր քոյր Տիգրանուիուն՝ ուղարկում է Տիգրանակերտ անուանուած [քաղաքը] եւ ինքն էլ վերադառնում է իր երկիրը՝ մեծաքանակ առ ու աւար եւ գերիներ իր հետ բերելով:

Սա [Տիգրանը] աջակցելով Կիրոսին՝ ոչնչացնում է մարերի քաջարութիւնը, ասում է Պատմագիրը: Բայց սրա սերունդներից ոչ ոք պատե-

րազմի մէջ քաջութիւն չցուցաբերեց, այլ միայն իրաքանչիւրն իր անունով գաւառների² կոչեց, ինչպէս սրա կրտսեր որդուոց՝ Առանից³ [անուանակոչուած] Առաւեննանքը⁴ եւ Զարեհից՝ Զարեհաւանը⁵:

Իսկ սրա [Տիգրանի] աւագ որդին Բաաւ Տիգրանն էր⁶, որի քաջութեան գովքը երգիշները երգում էին պարերգերի մէջ: Ասում են նաեւ, [թէ] սրան աստուածացքել են Վրաց երկրում, եւ նրա հասակի չափով արձան կանգնեցնելով՝ պաշտում էին զոհեր [մատուցելով], ասում է մեզ Պատմագիրը ստոյց կերպով: Իսկ Տիգրանն, ասում է [նա], ապստամբուելով՝ սպանում է Աղերսանդը Սակեղոնացու կողմից⁷: Եւ զարձեալ ասում է, թէ մինչեւ Հայաստանում Վաղարշակի քաջարութիւնը ճշմարիտ պատմուած ոչինչ չգտանք:

ԳԼՈՒԽ ԻԶ ՊԱՐՍԻՑ ԵՒ ՀԱՅՈՑ ՎՐԱՅ ԱՐԾԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՄԱՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Սկսենք թեզ պատմել, ո՞վ հոգեւոր հայր, Պարսից եւ Հայոց քաջարութեան մասին, որ Արքահամից է սերում: Արքահամը նահապետ [էր] ու նահապետների գլխաւորը եւ ըստ պատգամների՝ Աղամից ու Նոյից յետոյ երրորդը կոչուած մեր նախահայրը, իսկ Աղամից յետոյ քաննմէկերրորդն [էր], եւ Նոյից յետոյ՝ ըստ [այն] սերունդների թոփի, որոնք Աւմից էին՝ տասնմէկերրորդը՝ ծնուած Թարայից [նրա] եօթանասուներորդ տարում. կոչուեց Արքամ⁸ եւ [ապա] երկրորդ յորօքը ունումունով Արքահամ անուանուեց: Ասում են, որ սրանից է ծագել պարթեների ազգը: Քանզի, ասում է, Սառայի մեռնելուց յետոյ Արքահամը կին է առնում Քետուրային, որից ծնուած են Եմրանը եւ նրա եղբայրները, որոնց իր կենդանութեան ժամանակ Արքահամը քաժանեց Իսահակից⁹ եւ [նրանց] ուղարկեց արեւելեան երկիրը:

Սառայի [Իսահակից] սերուեց պարթեների ազգը, եւ նրանցից է Արշակ Քաջը, որն ապստամբուեց մակեղբնացիներից ու քաջարուեց քուշանների երկրում երեսունմէկ տարի: Եւ նրանից յետոյ [քաջարուեց] նրա որդի Արտաշէսը՝ քաննկեց տարի: Ապա [քաջարուեց] սրա որդի Արշակը՝ Արշակ Քաջի թոռը, որը կոչուեց Մեծ, [եւ] որը սպանեց Անտիոքոսին եւ իր

¹ «Աշխարհացոյց» ունի միայն Առուենից ձոր գաւառ Սոկաց աշխարհում, իսկ Խորենացն, որից քաղել է Ուխտանեսը, գրում է ոչ թէ գաւառի, այլ իշխանական տոհմի մասին:

² Ինձ՝ ազնուադրուստ:

Եղբօրը՝ Վաղարշակին, Հայոց թագաւոր դրեց՝ դարձնելով իրենից [յետոյ] Երկրորդը: Ինքը [Արշակ Մեծը] տեղափոխուելով՝ իր թագաւորութիւնը հաստատեց Բահղում²², որի պատճառով նրա սերունդները Բահղարք²³ կոչուեցին, ինչպէս որ նրա Եղբօր՝ Վաղարշակի [սերունդները] նախնու անոնվ Արշակունիք [անուանուեցին]:

Սրանից յետոյ նաև մնացեալն է պատմում Սովուսի կողմից: Ասում է, [որ] Փիլիպպոսի եւ Ողոմպիադայի որդի Աղեքսանդր Մակեդոնացին, որը քաննչորսերորդն էր Աքիլիէսից²⁴ [հաշուած], ամբողջ տիեզերքին տիրելուց յետոյ պետորիւնը կտակով յանձնեց շատերին, «[բայց], ասում է Պատմագիրը, իրաման [տուեց, որպէսզի]²⁵ իշխանութիւնը մակեդոնական անուանուի», եւ դրանից յետոյ ինքը մեռաւ:

Որից յետոյ յաջորդը Բարեկոնում թագաւորեց Սեղենկ[ի]ոսը, որը խելով շատերի իշխանութիւնը՝ նաև մեծ պատերազմով պարթեներին հնագանդեցրեց: Սա տիեզերվ երեսուն տարի՝ թագաւորութիւնը քողեց իր որդուն՝ տասնինը տարի: Եւ տասնմէկերրդ տարում²⁶ պարթեները մակեդոնացիների դէմ ապստամբեցին, որի շնորհիւ էլ թագաւորեց Քաջ Արշակը, որն Արքահամի զաւակից էր, Քետուրայի սերունդներից՝ հաստատելով Արքահամի Վերաբերեալ Տիրոջ խօսքը²⁷, թէ՝ «Քեզնից ազգերի թագաւորներ են լուրս գալու»:

ԳԼՈՒԽ ԻՒ

ՀԱՅՈՑ [ԱՅՆ] ԹԱԳԱՌՈՐՆԵՐԸ, ՈՐ ՊԱՐԹԵՒՆԵՐԻՑ [ԷՒՆ]

Վաղարշակն [էր] առաջին թագաւորը, որ հայերի վրայ թագաւորեց իր Եղբօր՝ Պարսից արքայ Արշակ Մեծի հրամանով: Սա իր թագաւորութեան ժամանակ քազմաքի քաջագրութիւններ ցուցաբերեց հայոց քաջերի գործերով: Չանգի ամրի քազմութեամբ շարժուեց գնաց Խալստիքի սահմանները²⁸ մակեդոնական գորքի վրայ, եւ այլ թագում սխրագործութիւններ անելով՝ ուղղ կարգեր հաստատեց Հայոց աշխարհի համար:

Քանզի Հայոց մեծ արքայ Վաղարշակը խորհուրդ էր արել, [ապա] իր Արշակ Մեծ Եղբօրը հրովարտակ²⁹ է ուղարկում Մարեքայ Կատինեայի³⁰

²⁸ Պահապահ:

²⁹ Աստուածաշնչում ասուած է. «Եւ ոչ կոչեսից այսուհետեւ անուն քո Արքամ, այլ Եղիշի՝ անուն քո Արքահամ, զի հայր ազգաց բազմա եղի գրեց» (Ծննդ. Ժէ 4-5):

³⁰ Տուեալ դէպրու հրովարտակ եղրոյրը նշանակում է՝ նամակ-խնդրագիր:

միջոցով, որպէսզի [սա] որոնի արքունի դիւանում եւ տայ Հայոց նախարարների գահնամակը³¹: Եւ Արշակ Մեծը, ստանալով իր Եղբօր նամակը՝ արքունի դիւանը տրամադրում է նրան [Մարեքային], իսկ նա գտնելով գահնամակը՝ բերում է Հայոց Վաղարշակ արքային: Եւ նա վեցցնելով օրինակը³² նախարարութիւններ է նշանակում, նախարարներից խրացնչիրին բարձ եւ պատի է յանձնում՝ ամեն մէկին ըստ իր թարձի իշխանութիւն տալով, մի առ մի՝ ըստ իրենց վայել արժանիքների: Տալիս է եւ մեր նախնում³³ Բազարատին, որը իրեաներից էր՝ թագարդութեան³⁴ իշխանութիւնը՝ թագը թագաւորի գլուխը դնելու եւ անուանուելու թագադիր: Նաեւ ասպետի եւ տանուտերական պատի³⁵ է տալիս նրա տոհմին եւ իրամայում իր թագարդիմ³⁶՝ առանց ոսկու եւ ակների երեք տակ մարգարտեայ վարսակալ կրել, եւ այն էլ՝ երբ արքունիքում ու թագաւորի տանը կը շրջի:

Եւ այլ բաներն էլ մի առ մի կարգաւորում է եւ անուանակոչում: Նախ առաջինը կարգաւորում է իրեն ու իր տունը՝ սկսելով իր զիմից ու թագից: Եւ կանչելով Բազարատին, որ իրեաներից էր, նշանակում է նրան [իր] ազգով Արշակունիների թագավիրը լինելու, եւ նրա տոհմն անուանում է Բազարատունիները: Նաեւ ուրիշներին է մի առ մի նշանակում եւ անուանակոչում: Առաջին՝ Սիսնեաց տէր, երկրորդ՝ Բազարատունի ասպետ, երրորդ՝ Ազրունի, չորրորդ՝ Մայոլիսագունի, իինգերորդ՝ Մամիկոնեան. նաև ուրիշներին նշանակում է ու հաստատում իւրաքանչիւր իշխանութեան մէջ: Իսկ ինքը այսքան քաջութիւններից, առարինութիւններից եւ թագում թարեկագութիւններից յետոյ մեռնում է Մծրինում՝ թագաւորելով քաններկու տարի [եւ] տէրութիւնը քողնելով իր երկրորդ որդում³⁷ Արշակին:

Եւ նրանից յետոյ թագաւորում է Արշակ Առաջինը՝ Վաղարշակի որդին: Սա նախանձախննիք եղաւ հայրական առաքինութիւնների նկատմամբ, [ուստի] ինքը եւս թագմաքի թարեկագութիւններ իւրագործեց: Եւ պատերազմներով պանտացիների դէմ՝ [նա] իր նիզակը նշանածող քողեց, որն, ասում են, զեռունների արեան մէջ էր ջրմիսել [եւ] նետեց թագուց երկանաքար արձանի մէջ: Եւ երկար ժամանակ պանտացիները պաշտեցին այլ արձանը, որպէս թէ աստծունն է այլ գործը: Սրա կողմից երկու մարդ Բազարատունիներից՝ Բազարատի որդիները, սրահարուելով նահաստակութիւնն կուրքերին չպաշտելու համար: Բայց յետոյ ուրիշները յանձն առան որսի եւ պատերազմի ժամանակ շաբաթ օրը ծի հեծնել եւ իրենց երեխաներին չըլպատել: Սա [Արշակը] թագաւորեց տասներեք տարի եւ մեռաւ:

³¹ Օրինակ եգրոյրը բնագրին է:

ԳԼՈՒԽ ԻՇ

ՅՈՅՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Յոյների թագաւորութիւնը Եսաից էր [սերում]: Քանզի Աղեքսանդր Մակեդոնացու թագաւորութիւնից յետոյ հաստատուեց յոյների թագաւորութիւնը, որովհետեւ Աղեքսանդրը իր տիեզերակալութեան ժամանակ տասներկու տարի թագաւորում էր նաև յոյների վրայ: Արդ՝ քանզի որդին հօրից չէր ստանձնում նրանց թագաւորութիւնը, ուստի ժամանակ առ ժամանակ գլխաւոր նախարարները հաւաքում եւ իրենց համար թագաւոր էին ընտրում: Եւ նրան ընտրում էին ըստ իրենց ցանկութեան, որը յիշատակում են Մակարայեցոց գրքերը¹⁴: Ապա դարձեալ այս բանը յիշատակում է Սգօնը, թէ՝ «Ժագաւորութիւնը Եսաի կողմից թագաւորում էր ոչ թէ այնպէս, ինչպէս ինքն էր կամենում, որպէսզի, օրինակ, թագաւորի որդին բարձրանար առաջնորդելու թագաւորութիւնը, այլ երբ Եսաի որդիները հաւաքուեցին մի ամուր քաղաքում եւ խորհրդակցութեան տուն ստեղծեցին, եւ այնտեղից էին նշանակում քաղաքի թագաւորիմ՝ մի նորեւել իմաստուն մարդու, որպէսզի թագաւորութիւնը առաջնորդի»:

Արդ՝ այս ձեւով, այս տեղում եղաւ թագաւորների սկիզբը: Եւ Կայսերաց գրքում¹⁵ շարադրուած են նաև անունները, իրաքանչիւրի յաջորդականութիւնը եւ գործերը, որը՝ ընդարձակ եւ որը՝ համառօտ: [Ժագաւորներից] ոմանք շարագործութեամբ ապրելով՝ շար յիշատակ բոլեցին աշխարհում, իսկ ոմանք բարեգործութեամբ հաստատելով իրենց թագաւորութիւնը՝ բարի անուն ժառանգեցին այս կեանքում եւ [այն կեանքում], որ գալու է: Արդ՝ ինչպէս այս ճառի [գլխի] սկզբում ասացինք, որ Եսաի որդիներից էր սերում թագաւորութիւնը, այդ պատճառով դեռ տակաւին զինենուներ ու որկրամուներ էին, ինչպէս այն Եսալը հնում¹⁶, որը մի կերակրի փոխարէն իր անդրանիկութիւնը վաճառեց: Բայց մենք դառնանք մեր խնդրի կարգին:

Գայիս առաջին կայսրը, որ կոչուեց Յուլիոս¹⁷, թագաւորեց երեք տարի եւ չորս ամիս: Սա առաջինը իմբրակալ կայսր դարձաւ Հռոմում՝ երեք տարի Եզիպտոսում եւ Աղեքսանդրիայում Կղեռպատրիայի [ինը] թագաւորելոց [յետոյ]: Սա որիշ գործեր շարեց, բացի այն, որ Կիլտորս¹⁸ ամիսը Յուլիս առուանեց՝ այդ ամսին ծնուած լինելու պատճառով:

¹⁴ Ովուտանը եւ որիշ պատմչներ «Գիրք կայսերաց» են կոչում 686 թ. դեպքերով աւարտուու այս «Ժամանակագրութիւնը», որի հետինակն էր Փիլոն Տիրակացին:

¹⁵ Ինաւ Յուլիոս Կեսար:

¹⁶ Փիլոն Տիրակացու մօտ ամսանունը Կիլտորս է [տարբերակ՝ Կորտողիոս - խմբ.]:

ԳԼՈՒԽ ԻՇ

ԱՐՏԱՇԵՍ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԱՍԻՆ

Արշակի որդի Արտաշէսը թագաւորում է Պարսից արքայ Արշականի քաններեթերորդ տարում: Սա առաջադիմելով՝ յաւակնում էր միասնարար Հայաստանի ու Պարսկաստանի նկատմամբ աւագութեան: Որովհետեւ հապատ եւ պատերազմակա մարդ էր, որն իր արքունիքը շինեց Պարսկաստանում եւ առանձին դրամ կտրեց՝ իր պատկերը վրան, ասուն է Պատմութիւնը¹⁹: Եւ բազմաքանակ օքրքով շարժում է արեւմուտք ու ձերքակալում լիւացիների Կիլրոս²⁰ թագաւորին: Եւ Արտեմիսի²¹ պատկերաբանդակն այնտեղ գտնելով՝ բերել է տալիս Հայաստան եւ կանգնեցնում Արմափրում, իսկ ինքը նուաճում է երկու ծովերի՝ Ովկիանոսի եւ Պոնտոսի²² միջակայքը՝ իրեն ենթարկելով ողջ արեւմուտքը: Իսկ Կիլրոսին [Արտաշէսը] բռնեց, կապեց եւ նրա օքրքը կոտորեց, բայց ինքն էլ սպանուեց իր օքրերի կողմից՝ թագաւորելով քանինանց տարի:

Եւ նրանից յետոյ թագաւորում է Տիգրան Երկրորդը՝ նրա որդին, Պարսից թագաւոր Արշականի իշխանութեան քառասունիններորդ²³ տարում: Եւ բազմաքանակ օքրք ժողովելով՝ հալածում է Յունաց զօքերը, որ Հայոց երկիր էին եկել Արտաշէսի մահից յետոյ՝ յարմար պահ գտնելով: Եւ ապա կառուցում է մեհեաններ, եւ բազիններ կանգնեցնելով՝ բռնոր նախարարներին իրամայում է զոհեր մատուցել: Երբ այս բանը Բագրատունի այրերը յանձն չառան, [Տիգրանը] պատկերներն անարգելու համար կտրեց [նրանցից] մէկի լեզուն, որից յետոյ խոշտանգուածները յանձն առան ուտել զոհերի միսն ու խոզի միսը, բայց իրենք զոհ չմատուցեցին եւ շերկայագեցին:

Սրանից յետոյ [Տիգրանը] Հրէաստան է գնում անքի ու անհամար զօքերով, առնում է առք ու աւար եւ բազմաքի զերիներ: Սրանց բռնում է իր օքրի փոքր մասին, իսկ ինքը մնացեալ օքրի թագմութեամբ շարժում է հոոմէացիների օքրի վրայ, իսպառ փախուստի է մատնում, եւ ինքը գերիներով վերադառնում իր երկիրը: Նաև Եփրատ գետի ափին սպանում է ոսն Կրասոսի, որը Երուսաղէմից էր զալիս առք ու աւարով եւ մեծ զանձերով, որոնք առնելով [Տիգրանը] վերադառնում է Սծրին: Եւ շատ ուրիշ պատերազմներ մնելով՝ ինքը մեռնում է՝ թագաւորելով երեսուններեք տարի:

Յոյների երկրորդ՝ Օգոստոս թագաւորը թագաւորեց յիսուն տարի եւ վեց ամիս: Սրա օրօք ամբողջ աշխարհում մարդահամար եղաւ, որի [ժամանակը] վերստին Պատմահօր երկի մասին է:

մանակ] էլ Յովսէփի Մարիամի հետ մարդահամարից փախչելով, [Մարիամի] Շերղեհեմում ծնեց մեր Փրկչին: Այս Օգոստոս Սեւրաստոսը Հռկտաւիսոս¹ յորջորջուեց, եւ Սենտոս ամիսն իր ամունվ Օգոստոս ամուանեց՝ իր ծնունդն այլ ամսին եղած լինելու պատճառով: Սա ամքողջութեամբ տիրեց բայր հոռմէացիներին ու յոյներին:

Սրա քանաներեքերորդ տարում ծնուում է Յիսուս Քրիստոսը՝ Հրեաստանի Շերղեհեմում: Եւ Աղամից մինչեւ Քրիստոսի ծնունդը կազմում է իին հազար իին հազար տարի, իսկ լստ իրեաների՝ մինչեւ Քրիստոսի ծնունդը շորս հազար տարի [է], եւ լստ շամբտացիների՝ [նոյնայէս] շորս հազար, իսկ լստ յոյն Եպիփան Կիպրացու պատմութեան՝ իին հազար իին հազար տարի, եւ լստ Քննիկոնի¹¹⁰ բազմավեպ պատմութեան՝ իին հազար հազար հարիր իննսուներկու [տարի]:

ԳԼՈՒԽ Լ ԱՐՏԱՒԱՉԴԻ ԹԱԳԱՒՈՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Տիգրանի որդի Արտաւազըն է քաջաւորում հայերի վրայ: Սա որեւէ սխրագործութիւն ու քաջագործութիւն շարեց, այլ միայն ուտել-խմելով էր զրադաւած [են] ցիոնի ու վարագմերի որսով իմաստութիւնն ու քաջութիւնը անտես արած: Սա հայերուում ու քամբասուում էր իր զօրքերի կողմից իր սաստիկ որկրամոլութեան պատճառով: Ապա երբ դա եղաւ նրա զօրքերի կողմից, Անտոնինոսը¹¹¹ նրանից խեց Միջագետքը: Արտաւազըն զայրացած հրամայեց զօրքեր ժողովել Ատրապատականից, նաեւ Կովկաս լեռան բնակիչներին, Աղուանքի, Վլիրքի, Խաղտիքի¹¹² զօրքերը, եւ սրանցով իշնելով Միջագետք՝ հալածեց ու փախուստի մատմեց հոռմէացիների զօրքերին: Դրանից յետոյ Անտոնինոսը առհւաքար մոնչալով՝ առաւ իր բազմաքանակ զօրքը եւ դիմեց Արտաւազդի վրայ, եւ անցնելով Միջագետք՝ կոտորեց Հայոց զօրքերը: Եւ Արտաւազդին¹¹³ բռնելով՝ պարզեւ տուեց Կոհոպատրային, բայց չգիտեմ, թէ ինչ ձեւով տեղի ունեցաւ նրա մահը:

Եւ սրանից յետոյ Պարսից արքայ Արշէզի հրամանով քաջաւորում է Արտաշէսի որդի Արշամը: Սրա ժամանակ սկսուեց հայերի մասնակի հարկատութիւնը հոռմէացիներին: Սրա բարկութիւնը Գնքունիների Զուրայ¹¹⁴ նահապետը բերեց Բագրատունի նախարար Ենանոսի վրայ եւ զայրացած Ալշամը հրամայեց Ենանոսին տանջահար ամել: Գործն

աւարտուեց նրանով, որ Ենանոսը կամ [պէտք է] բողնէր իրէական կրոնը ու երկրագգէր կուռքերին, կամ նրան [պէտք է] կախէին փայտից եւ բնաջնջէին նրա տոնիմը: Եւ նրա ազգականներից Սարի ամունվ մէկին նրա առջեւ սպանեցին, իսկ նրա որդիներ Սարատիային եւ Ազարիային բերեցին սպանելու վայրը, որից յետոյ երկխոյց կատարեց արքայի կամքը: [իր] ազգատունի հետ միասին: Եւ Ենան[ոս]ը հաստատուեց իր նախկին պատուի մէջ: Իսկ Արշամը քան տարի ապրելով՝ մեռաւ:

Տիրերիուր քաջաւորեց քանաներեք տարի: Սրա տասնիններորդ տարում Յիսուս Քրիստոսը Յովիաննէս [Սկրտչի] մօտ մկրտութեան եկա Յորդանան [գետը]: Իսկ [Տիրերիոսի] տասնվեցերորդ տարում [Յովիաննէս] Սկրտչիը զիսատուեց: Իսկ տասնութերորդ տարում Քրիստոսը հրեաների [կողմից] խաչուեց, իսկ տասնիններորդ տարում քարկոծուեց Ստեփանոսը: Նոյն տարում Պողոսը կանչուեց առաքելութեան, եւ Երուսաղմում եալիսկոպոսը Տիրոց եղբայր Յակոբոս էր: Եւ Տիրերիոսը տեղեկանալով Քրիստոսի սրանչելագործ իրաշքների մասին՝ իր մօտ կանչեց Պիտառոսին¹¹⁵: Իսկ նա տանջանքներից երկիրելով՝ մինչեւ Ովկիանոսում [Միջերկրական ծովում] նաւարկում էին, իր անձի ներքին պայրաբի մէջ լինելով՝ իրեն նետեց ծովը:

Սրա [Տիրերիոսի] ժամանակ էր Հայոց Արքար քաջաւորը Ուռիայում, որը եւ նամակ գրեց Փրկչին խաչելութեան ժամանակ եւ ստացաւ պատասխան նամակ, [որտեղ նա] օրինում էր քաղաքը, նրան ցոյց էր տալիս իր վախճանը Երուսաղմում եւ խոստանում էր նրա մօտ ուղարկել աշակերտներից մէկին՝ բժշկելու նրա հիւանդութիւնը, որպիետեւ նա ուորերից պատագրու ուներ:

ԳԼՈՒԽ ԼԱ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱԲԳԱՐԻ ԹԱԳԱՒՈՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Թագաւորում է Արշամի որդի Աբգարը՝ Պարսից արքայ Արշաւրի քաներորդ տարում: Սրա քաջաւորութեան երրորդ տարում հայեր հարկատու են դառնում հոռմէացիներին: Քանզի Օգոստոս կայսեր կողմից հրամայուեց, ինչպէս ասում է Դուկասի Աւետարանում¹¹⁶, մարդահամար ամել ամրող աշխարհում: Որի համար հոռմէացիների գործակալները Հայաստան ուղարկուելով՝ բերեցին Օգոստոս կայսեր պատկերը [են] կանգնեցին բոլոր մեհեաններում:

¹¹¹ Նուկ. Բ 1:

ԳԼՈՒԽ ԼԲ

ԱԲԳԱՐԻ ԻՇԽԱՆԵՐԻ ԱՌԱՋՈՒՄԸ ՄԱՌԻՆՈՍԻ ՄՈՏ, ՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿ ՏԵՍԱՆ ՄԵՐ ՓՐԿՉԻՆ, ՈՐՏԵՂԻՑ՝ ԱԲԳԱՐԻ
ՀԱՏԱՏՔԻ ՍԿԻԶԲԸ

Այն ժամանակներում փինիկեցիների, պաղեստինացիների, ասորիների եւ Միջազգետքի վրայ կայսեր հազարամասնութեան գործին նշանակուեց Գոտորգիոսի¹¹⁶ որդի Մատին[ոս]ը, որի մօտ Արքարն ուղարկեց իր զինաւոր [նախարարներից] երկուսին՝ Աղճիքի բդէշխ Մար Իհարին եւ Ապահումեաց նահապետ Շամշագրատիմ¹¹⁷, իսկ իր հաւատարիմ Ենան[ոս]ին [ուղարկեց] Բեր Ջուրբեն¹¹⁸ քաղաք՝ տեղեկացնելով նրան իր արեւելք մեկնելու պատճառը: Իսկ նրանք այնտեղից վերադարձան, եկան Երուսաղեմ, տեսան մեր Փրկիչ Քրիստոսին, եւ ականատես լինելով՝ պատմեցին Արքարին: Իսկ նա զարմանալով՝ հաւատաց իսկութեամբ: Եւ ասաց. «Դա մարդու գօրութիւն չէ, այլ Աստծու, որովհետեւ մարդը չի կարող մեռելին յարութիւն տալ, այլ Աստծու, որովհետեւ մարդը չի կարող մեռելին յարութիւն տալ, այլ Աստծու, որովհետեւ մարդը չի կարող մեռելին յարութիւն տալ»: Եւ քանի որ ինքը մարմնով տանջուած էր ծանր ցաւերից, նամակ գրեց Փրկչին, որպէսզի նա զայ իրեն բժշկի ցաւերից՝ այսպիսի օրինակով.

ԳԼՈՒԽ ԼԳ

ԱԲԳԱՐԻ ՆԱՍԱԿԻ ՊԱՍԱՍԽԱՆԸԸ, ՈՐ ԳՐԵՑ ԹՈՎՍԱՍ
ԱՌԱՋԵԱԼԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՄԱՆՈՎ

«Արքար Շամացիմ¹¹⁹ [այս] երկրի իշխանը, Յիսուս Փրկչին եւ քարերիդ, որ յայտնուեցիր երուսաղեմացիների երկրում, ողջոյն [և յոյս]:

Ես լսել եմ քո մասին եւ քո բժշկութեան մասին, որ կատարում ես հիւանդների վրայ առանց դեղերի ու դեղարմտիքների: Քանզի, ինչպէս ասում է, դու կոյրերին հնարաւորութիւն ես տալսու տեսնել, կաղերին՝ քայլել, բրատներին՝ մաքրուել, պիղծ այսահարութիւնն ես մարդկանցից հանում, եւ ով որ ամբողջովին հիւծուած է երկարատե հիւանդութեամբ՝ բժշկում ես: Դու նաեւ մեռելներին ես յարութիւն տալսու: Եւ երբ քո մասին այս ամենը լսեցի, մտքովս անցկացրեցի [այս] երկուսից մէկը՝ կամ դու երկնքից իշած Աստուած ես, որ դա անում ես, կամ թէ Աստծոյ Որդի ես դու, եւ անում ես դա: Արդ՝ դրա համար ես գրեցի քեզ՝ աղաչելու քեզ, որ նեղութիւն կրես եւ զաս ինձ մօտ եւ բժշկես [այս] իհանդութիւնը, որ ես ունեմ: Նաեւ լսեցի, որ հրէաները դժգոհում են քեզնից եւ կամենում են տանջել քեզ:

Իսկ ես ունեմ մի փոքրիկ ու գեղեցիկ քաղաք, եւ [այն] մեզ երկուսիս կը բաւականի. եկ միասին բնակուենք»:

Նամակը տանողները նրան [Քրիստոսին] հանդիպեցին Երուսաղեմում: Այս վկայում է նաեւ [այն] աւետարանական խօսքը, թէ՝ «Հերանուներից կային ոմանք, որ եկել էին նրա մօտ»¹¹: Այդ պատճառով ովքեր լսեցին, չհամարձակուեցին Յիսուսին ասել, այլ ասում էին Փիլիպոսին եւ Անդրէասին, Անդրէասն ու Փիլիպպոսն [էլ] ասացին Յիսուսին: Իսկ ինքը՝ մեր Փրկչը, այն ժամանակ, երբ նրան կանչեց [Արգարը], յանձն շառաւ, քայց հրամայեց նամակ գրել այսպիսի օրինակով.

ԳԼՈՒԽ ԼԴ

ԱԲԳԱՐԻ ՆԱՍԱԿԻ ՊԱՍԱՍԽԱՆԸԸ, ՈՐ ԳՐԵՑ ԹՈՎՍԱՍ
ԱՌԱՋԵԱԼԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՄԱՆՈՎ

«Երանի է նրան, ով կը հաւատայ ինձ, երբ չի տեսել ինձ: Որովհետեւ իմ մասին այսպէս է գրուած, թէ ովքեր ինձ տեսնեն, չեն հաւատալու ինձ, իսկ ովքեր չեն տեսնի ինձ, նրանք կը հաւատան եւ կ'ապրեն:

Իսկ այն մասին, որ դու ինձ գրեցիր, որպէսզի ես զամ քեզ մօտ, [ապա] ինձ անհրաժեշտ է այստեղ կատարել այն ամենը, ինչի համար ես ուղարկուեցի: Եւ երբ կատարեմ դա, ապա կը համբառնամ Նրա մօտ, ով ինձ ուղարկեց, եւ երբ համբառնամ, կ'ուղարկեմ քեզ իմ աշակերտներից մէկին, որպէսզի քո ցաւերը բժշկի եւ կեանք շնորհի քեզ եւ նրանց, ովքեր քեզ հետ են»:

Արքարի սուրհանդակները բերեցին այս նամակը, սրա հետ [եւ] Փրկչի գեղանկար պատկերը, որը գտնուում է Եղեսիա քաղաքում մինչեւ այսօրուայ ժամանակը¹²:

ԳԼՈՒԽ ԼԵ

ԹԱԴԵՈՍԻ ԳՆԱԼԸ ԱԲԳԱՐԻ ՍՈՏ ԵՎ ՈՒՌԱՅ
ԶԱՂԱՋՈՒՄ ՔԱՐՈՉԵԼԸ

Թովմաս առաքեալը [այն] տասներկուսից մէկին՝ Թադէոսին ուղարկեց Եղեսիա քաղաքը Արքարին բժշկելու՝ ըստ Տիրոջ խօսքի: Սա եկաւ

¹¹ Յովի., ԺԲ 20:

¹² Ամբողջ հատուածի առքիւրը Խորենացին է (տես էջ 149):

Տուրայ¹²⁰ իշխանի տունը, որ Բագրատունիների տոհմից էր, և նրա համբար տարածուեց ամբողջ քաղաքում: Իսկ երբ Արգար թագաւորը լսեց, կանչեց նրան իր մօտ, և գահոյրից վեր կենալով՝ երկրպագեց նրան: Երբ դա տեսան [այն] իշխանները, որ նրա մօտ էին, զարմացան:

Եւ Արգարն ասաց նրան, թէ՝ «Դո՞ւ ես արդեօք օրինեալ Յիսուսի այն աշակերտը, որի մասին ինձ ասաց, թէ կ'ուղարկի այստեղ, և կարողանալի՞ ես ինձ թժկեր»: Սուրբ առաքեալն ասաց. «Երբ հաւատաս Յիսուս Քրիստոսին՝ Աստծոյ Որդուն, [ապա] թեզ համար կը լինի [այնպէս], ինչպէս որ դու ես կամենում»: Թագաւորն ասաց. «Ես հաւատացի նրան և նրա Հօրը, դրա համար կամեցայ առնել իմ օրքերը եւ գալ կոտորել իրեաներին, որոնք նրան խաչեցին, երբ ինձ շարգելուէր հոռմեացիների թագաւորութեան պատճառով»:

Ապա սուրբ առաքեալն սկսեց աւետարանել նրան և նրա քաղաքին: Եւ ծեռքը դնելով Արգարի վրայ՝ թժկեց նրան: Եւ պատագրոսով [իիւանդ] Արդիուին եւ քաղաքի բոլոր հիւանդներին բուժեց: Եւ բոլոր հաւատացին, և մկրտուեցին թագաւորն ու ողջ քաղաքը: Եւ կուտները փակեցին ու ծածկեցին: Եւ Թաղէոս առաքեալը մի ոմն մետաքսագործ զիշարկագործի մկրտեց, և նրան Արդէ անունը տալով՝ ծեռնադրեց Եղեսչայի համար՝ իր փոխարէն բողնելով քաղաքում: Եւ ինքը եւս Արգարի քեռորդի Սանատորուկին մօտ, որին [Արգարը] Հայոց օրքերի վրայ [աշետ] էր նշանակել, [եւ] որը Արտազ կոչուող գաւառի Շաւարշամ¹²¹ քաղաքում էր:

ԳԼՈՒԽ ԼԶ

ԱԲԳԱՐԻ ՆԱՍԱԿԸ ՀՈՂՈՍԵԱՑԻՆԵՐԻ ՏԻՔԵՐԻՈՍ ԿԱՅՍԵՐ

«Հայոց Արգար արքան իր տիրոջը՝ հոռմեացիների կայսր Տիքերին, խնդրուին [և մաղթում]:¹²²

Իմանալով, որ ոչինչ գաղտնի չի մնում քո թագաւորութիւնից, ես՝ իրեն քո մտերիմ մէկը, աւելին եմ տեղեկացնում թեզ նամակի միջոցով: [Իմացի՛ր], որ պաղեստինցիների գաւառներում բնակուող իրեաները հաւաքուելով՝ խաչեցին Քրիստոսին առանց որեւէ յանցանքի [եւ] փոխանակ այն իրաշըների ու սքանչելիքների մեծամեծ երախտիքի, որ արեց նրանց մօտ՝ մինչեւ իսկ մեռելներին կենդանացնելով: [Իսկ] ես հասկացայ, որ այս օրութիւնները սուսկ մարդու չեն, այլ Աստծու: Որովհետեւ այն ժամանակ, երբ նրան խաչեցին, արեգակը խաւարեց, իսկ երկիրը շարժուելով տարութերուեց, եւ ինքը երեք օրից յետոյ յարութիւն առաւ մեռելներից եւ երեւաց շատերին: Իսկ այժմ նրա անունը իր աշակերտների մի-

ջոցով ամենուրեք մեծ իրաշըներ է կատարում, որը եւ ինձ մօտ յայտնապես երեւաց: Եւ արդ՝ այսուինետեւ Զերը տէրութիւնը գիտէ, թէ իմ է արժանի իրամայել իրեայ ժողովրդի համար, որոնք այդ բանը կատարեցին, նաեւ՝ գրել ողջ աշխարհին, որպէսզի երկրպագեն Քրիստոսին իրեւ ճշմարիտ Աստծոյ»:

ԳԼՈՒԽ ԼԸ

ԱԲԳԱՐԻ ՆԱՍԱԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱԾԸ

«Հոռմեացիների Տիքերիոս կայսրը Հայոց Արգար թագաւորին խնդրութիւն [և մաղթում]: Քո մտերմական նամակը կարդացին իմ առջեւ, որի համար մեր կողմից թող թեզ շնորհակալութիւն հասնի: Մենակետեւ մենք շատերից էինք լսել դա, նախապէս նաեւ Պիղատոսը ստուգապէս յայտնեց նրա իրաշըների մասին, թէ յարութիւնից յետոյ շատերը հաւատացին, որ նա Աստծուած է: Դրա համար նաեւ ես կամեցայ այդ անել, ինչ որ դու մտածեցիր: Բայց քանի որ հոռմեացիները սովորութիւն ունեն, թէ միայն թագաւորի իրամանով Աստծուած չի հաստատուի, մինչեւ որ սկսկիտոսի կողմից փորձուելով չըննուի, դրա համար ես այս խօսքերը յայտնեցի սինկոհտոսում: [Սակայն] ծերակոյտն արհամարհեց, քանզի աւելի առաջ եղած քաները նրա կողմից չըննուեցին:

Բայց մենք իրաման տուեցինք բոլորին՝ ում որ ցանկալի լինի Յիսուսը, թող նրան ընդունի [իրեւն] Աստծուած, եւ մահով սպառնացի նրանց, որոնք կը շարախուսեն քրիստոնեաներին: Իսկ երեայ ժողովրդի համար, որ յանդգնեցին [նրան] խաչել [եւ լսում եմ, թէ նա ոչնչով արժանի չէր խաչի եւ մահուան, այլ՝ պատուի ու երկրպագութեան], [ապա] երբ ինձանից ապստամբուած սպանիացիների պատերազմից դադար առնեմ, քննելով նրանց արժանին կը հատուցեմ: Ողջ եղի՛ր»:

ԳԼՈՒԽ ԼԸ

ԱԲԳԱՐԻ ՆԱՍԱԿԸ

Դարձեալ Արգարը Տիքերիոսին գրով պատասխան խօսք է ուղարկում [որում] արժանիորեն անարգում է ծերակոյտին եւ մեղադրում Պիղատոսին Քրիստոսի նկատմամբ յանդգնութիւն ցուցաբերելու [գործում] երեա-

ներին լծակից լինելու [սատարելու] համար, նաև այն բանի համար, որ առանց կայսեր հրամանի արեց այդ գործը հրէաների մատնութեամբ: Նաև ասում է. «Տեսայ, որ քո գրած նամակն արժանի է Զերդ տէրութեամբ, եւ քո հրամանի բովանդակութեան համար ուրախացայ: Իսկ Սինկոյիտոսի¹ արարքը խիստ անարգելի է եւ պարաւելի: Բայց թեզ՝ ին տիրաջլ, բող հաճելի բուայ՝ Պիղատոսի փոխարէն [ուրիշ մարդ] ուղարկել Երաւաղէմ, որպէսզի [Պիղատոսը] անարգանքով զցուի այն իշխանութիւնից, որ յանձնեցիր նրան: Չանզի հրէաների կամքը կատարեց, Քրիստոսին տարապարտ կերպով խաչ հանեց առանց քո հրամանի: Ողջ եղի՛ր»:

Եւ ապա Տիրերիոսը Պիղատոսին իր մօտ կանչեց, իսկ նա Երկիրդով տաճաքներից, [նաև] խորի խայր ունենալով իր մէջ՝ իրեն նետեց ծովը:

ԳԼՈՒԽ ԼԹ [ԴԱՐՁԵԱԼ] ԱԲԳԱՐԻ ՆԱՍԱԿԸ

Յիսուսի մասին [Արգարը] գրում է նաև Պարսից արքայ Արտաշէսին: «Հայոց Արգար արքան մեր եղբայր Արտաշէսին՝ արքայից արքային, խնդրութիւն [և մաղրում]:

Գիտեմ, որ դու լսել ես Աստուածորդի Յիսուս Քրիստոսի մասին, որին հրէաները խաչեցին եւ որը յարութիւն առաւ մեռելներից եւ ուղարկեց իր աշակերտներին ամբողջ աշխարհին քարոզելու և ուսուցանելու կենաց խօսքը: Եւ որ նրա զիլսաւոր աշակերտներից մէկը՝ Սիմէոն անունով, եկել է քո Երկրի կողմէրը: Այժմ որոնելով կը գտնես նրան, իսկ նա կը թժէկի այն բոլոր հիւանդութիւնները, որ ծեզանում կան, եւ կեանքի ճանապարհը ցոյց կը տայ: Եւ դու կը հաւատաս նրա խօսքին, դու, քո Եղբայրները եւ ամենքը, որ թեզ կամաւոր հնազանդում են: Որովհետեւ ինձ հաճելի է, որ դուք մարմնապէս իմ ազգականները եւ ինձ մտերիմ [լինելով] հաւասարապէս միմեանց հարազատ լինենք նաև հոգով:

Ողջ եղի՛ր:

Եւ այսպէս Երանելի Արգար քագաւորը հրովարտակների միջոցով Քրիստոսի քարոզն էր անում արեւելքում եւ արեւմուտքում, կայսեր եւ արքայի մօտ: Եւ դեռևս այս նամակի պատասխանը [Արտաշէսից] շտացած՝ [Արգարը] վախճանում է՝ քագաւորելով երեսուն տարի:

¹ Սինկոյիտոս իմա՞ ծերակոյու:

ԿԱՅՍՐԵՐԸ

Թագաւորում է Երկրորդ Գայիոսը, որը թուով չորրորդն է Յունաց թագաւորների [մէջ] երեր տարի եւ չորս ամիս: Սրա առաջին տարում Սարկոս անտարանիչը քարոզեց Աւետարանը Աղեքսանդրիայում ու Եգիպտոսում. եւ ապրեց [ոյքանից յետոյ] քաներկու տարի եւ մարտիրոսունց բոկողոտքիների¹² [կողմից]: Նրանից յետոյ Աղեքսանդրիայում¹² եպիսկոպոս նստեց Անտիանոսը՝ քան տարի:

Թագաւորում է Կղաւիոսը, որը հոռմէացիների կայսրերի շարքի հինգերորդն է՝ տասներեք տարի եւ ինն ամիս: Սրա ժամանակ համաշխարհային սով եղաւ, եւ նոյն ժամանակ Արքեռոսի¹³ եղբայրը սպանեց Յովհաննես Սկրտիչը: Եւ նոյն ժամանակ Պետրոս առաքեալը Անտիոքացոց եկեղեցին հաստատեց, եւ գնալով Հռոմ՝ քարոզեց Աւետարանը եւ այստեղ մնաց եկեղեցու առաջնորդ քան տարի:

Այն ժամանակներում Երուսաղէմ եկաւ Պատրոնիկէն՝ Կղաւիոս կայսեր տիկինը, որը բարեպաշտ եւ Տիրոջ Երկիւղով կին էր: Եւ իր իշխանութեամբ հրէաներից առնելով տերունական խաչը՝ յանձնեց Տիրոջ Եղբայր Յակովոսին, իսկ ինքը [Պատրոնիկէն] ստանալով իր դատեր թժկութիւնը՝ ուրախութեամբ վերադարձաւ Հռոմ:

ԳԼՈՒԽ Խ

ԱԲԳԱՐԻ ՈՐԴՈՒ ԵՎ ՍԱՆԱՏՐՈՒԿԻ ՄԻԱԺԱՍՍԱՆԱԿ
ԹԱԳԱՒՈՐԵԼՈՒ ԵՎ ՍԵՐ ԱՌԱՋԵԱԼՆԵՐ ԹԱԴԵՈՍԻ ՈՒ
ԲԱՐԴՈՒՂՄԵՇՈՍԻ ՍԱՍԻՆ

Արգարի մահից յետոյ Հայոց թագաւորութիւնը բաժանուեց երկու մասի, որովհետեւ մի մասը գրաւեց Արգարի Անանուն որդին եւ քաջ կապելով քագաւորեց Եղեսիայում, իսկ միւս մասի վրայ թագաւորեց Արգարի թոռորդի Սանատրուկը: Այդ ժամանակ Սանատրուկը Շատարշան քաղաքում թաղէոսի քարոզութեամբ հաւատքի եկաւ, քանի որ նախ Արգարը հաւատաց [Աստծուն], իսկ յետոյ Սանատրուկն [իր] հիրայիններով:

Բայց ասում են, [որ] Սանատրուկը նախարարների Երկիւղից կրկին թողեց հաւատքը: Սա սպանեց սուրբ առաքեալ թաղէոսին եւ իր դուստր Սանրուխտին, նաև ուրիշների՝ այրերից ու կամանցից, որոնց անուններն են՝ Արքեղայոսի:

եմ՝ Զեմէնորս, Զաքարէ, Զարմանդուխտ, եւ շատ ուրիշներ, որոնք հաւատացին Աստծոն եւ մարտիրոս դարձան: Իսկ առաքեալի վախճանի ժամանակ, ինչպէս պատմութիւնն է ասում, վեմլ ճեղքուեց եւ ընդունեց սուրբ մարմինը, եւ, ասում են, կրկին փակուեց: Եւ ապա երկուսի՝ առաքեալի եւ Սանդուխտի նշխարներն եւ յայտնուեցին:

Նոյնպէս նաև Աղրէի սպանութեան մասին է պատմում, որ Եղան Արգարի որդու ծեռովկ, որովհետեւ իր հօր մահից յետոյ [նա] կոապաշտութեան վերադարձաւ եւ Աղրէից խոյր պահանջեց: Եւ ապա Աղրէն նրան պատասխան է տալիս. «Ըն ծեռքերն, ասում է, խոյր չեն պատրաստի քո անարժան գլխի համար, որը Քրիստոս Աստծուն չի երկրպագում»: Եւ այդ խօսքից յետոյ [Արգարի որդին] հրամայեց կտրել նրա ոտքերը: Եւ այդ անօրէն հրամանը կատարեցին, [եւ] հոգին աւանդեց [Աղրէն]:

Եւ վիճակուեց հայերին Բարդույիմեռս առաքեալը, որը նոյնպէս սպանուեց Արեւսրոնոս¹²⁵ քաղաքում: Իսկ Սիմէնի մասին, որ վիճակուեց պարսկաներին, [եւ] որի վերաբերեալ Արգարը զրեց Պարսից արքայ Արտաշէսին, Պատմագիրը¹²⁶ հայաստի տեղեկութիւն չի տալիս, թէ ինչ գործեր արեց, այլ միայն ասում է, որ սպանուեց Վերիոսփորայում: Եւ այս բաները մենք [եւ] կարծկարճ վերցնելով՝ համառոտակի պատմեցինք քեզ, ո՞վ դու ուսումնասէք:

Իսկ Սանատրուկն իր բազաւորելուց յետոյ գօրքով դուրս է գալիս Արգարի որդու դէմ, որպէսզի ամբողջութեամբ ինքը տիրի Հայաստանին: Եւ ապա Աստուած պատերազմեց Արգարի որդու դէմ՝ առնելով Աղրէի վրէժը: Քանզի [մի անգամ նա] իր ապարանքում սիւն էր կառուցել տալիս եւ ինքը ճոտիկ կանգնած հրամաններ էր տալիս, թէ ինչպէս [անեն], եւ բռնողների ծեռքերից [սիւնը] դուրս պրծաւ, ընկաւ նրա վրայ ու փշրեց նրա ոտքերը, եւ [նա] մեռաւ:

Սանատրուկը Արգարի տուիմից վերացրեց նրա բոլոր ժառանգներին: Իսկ Արգարի կանանց զիխաւորը՝ Հեղինէտ անունով, Կղաւիսոս կայսեր օրոք զնաց Երուասիէն եւ Եզիպտոսում իր բոլոր գանձերը տուեց, շատ ցորեն զնեց ու բաժանեց կարօտեալներին: Սա բարեպաշտ ու Աստծոյ Երկիւով կին էր, ինչպէս եւ իր ամուսին Արգարը: Իսկ Սանատրուկը յիշատկութեան արժանի գործեր չունի, բացի Մծրին՝ քաղաքը շինելուց: Սա բազաւորեց Պարսից արքայ Արտաշէսի տասներուորդ տարում եւ մեռաւ որպի ժամանակ նետով խոցուելով՝ բազաւորելով Երեսուն տարի:

¹²⁵ Ինա՛ Խորենացին (տես էջ 158):

¹²⁶ Ըստ Փատոս Բուզանդի՝ Սանատրուկը կառուցել է ոչ թէ Մծրին, այլ Մծուրմ քաղաքը Արածանի հովտում:

ԿԱՅԱՐԵՐ

Թագաւորում է Ներոնը, որը հոռոմոց կայսրերից քուով վեցերորդն է՝ տասներեք տարի եւ ինն ամիս: Սրա Եօթերորդ տարում Տիրոց Եղբայր Յակոբը կրտսեր կրտսերի կողմից քարկոծուեց այն բանի համար, [որ քարոզում էր], թէ Յիսուսն Աստծոյ Որդին է: Եւ նրանից յետոյ Երուասիէմում եավիսկոպոս նստեց Շմատոնը: Իր տասներեքերորդ տարում Ներոնը Հոռոմում սպանեց Պետրոսին ու Պողոսին: Քիչ ժամանակ անց քաղաքն ապատամքուեց նրա դէմ, եւ նա փախսաւ: Տիրոջից պատուհասուելով՝ անօրէնը կենդանի-կենդանի բաղուեց:

Թագաւորում է Վեսպիանոսը¹²⁷՝ տասը տարի, որը հոռմէական կայսրերի շարքի եօթերորդն է: Սրա Եօթերորդ տարում Տիրոսը՝ նրա որդին¹²⁸, պաշարեց Երուասիէմը եւ գրաւեց այն Զատկի տօնին: Եւ իիմնահատակ քանդեց քաղաքը եւ բիրաւոր մարդկանց կրտորեց: Յովսէպոսը պատմում է եւ այն, որ [կայսրը] սովոր ու սրով հարիր քան հազար¹²⁹ մարդու կրտորեց, եւ այլ յիսուն հազարի գերեց ու վաճառեց օտար ազգերի մէջ: Եւ այլ բաներ էլ է պատմում:

ԳԼՈՒԽ ԽԱԱ ԵՐՈՒԱՆԴԻ¹²⁸ ՍԱՍԻՆ

Սանատրուկի մահից յետոյ Պարսից արքայ Դարեհի Վերջինի եօթերորդ տարում բազաւորում է Երուանդը, որը Հայոց բազաւորների շարքի եօթերորդն էր:

Սա ծնուել էր մի Արշակունի կնոջից, որը խոշորադէմ էր, տգեղ ու հաստամարմին: Սա Երուանդին ծնեց ինչ-որ ապօրիմի խառնակութեամբ, ասում է Պատմագիրը¹²⁹: Եւ Երուանդը բազաւորում է հայերի վրայ կրտորում Սանատրուկի բոլոր զաւակներին, ինչպէս նա [կրտորել էր] Արգարի որդիներին ([եւ] դա, ասես, Տիրոջից Եղան), բացի Արտաշէս անունով մի տղայից, որին Բիրաւ Բազրատունու որդի Մմբատը առաւ ու զնաց Պարսից արքայ Դարեհի արքունիքը եւ ընդունուեց նրա կողմից մեծ պատուով: Եւ այնտեղ մնաց մի բանի տարի, մինչեւ մանուկ Արտաշէսը հաստնացաւ:

Ապա Դարեհի օգնութեամբ քաջ Սմբատը Արտաշէսին թերում է Հա-

¹²⁷ Ինա՛ Վեսպիանոս: Վեսպիանոս է նաև Փիլոն Տիրակացու մօս:

¹²⁸ Ինա՛ Խորենացին (տես էջ 161-162):

յատան, եւ մտնելով Երուանդի պալատը՝ սպանում է Երուանդին, առնում նրա թագը, դնում է Արտաշէսի զիշին եւ թագաւորեցնում նրան:

Երուանդն իրեն թիկունք դարձնելով Վեսպիանոս եւ Տիտոս հռոմէական կայսրերին՝ նրանց բողեք Միջագետքը, եւ դրանից յետոյ Հայոց իշխանութիւնը Միջագետքից վերացաւ: Իսկ որեւէ քաջագործութեան մասին Երուանդից չի պատմում, բացի միայն Երասխի [ափին նրա] կառուցած ամրոցից, որն այժմ նրա անունով կոչում է Երուանդարար, իսկ դատավերտը՝ Երուանդակերտ:

Բայց Երուանդի մասին կ'ասեմ ինչ-ոք ծաղրական բաներ, որ առասպելաբանելով ասում են զրյացների շարքում: Նա [իրը] չար աչքեր ուներ, եւ ոչ չեր յանդգնում մտնել նրա մօտ օրը լուսանալիս, այլ միայն նրա սպասարկները, [որոնք] լուսանալիս մի որձաքար վէմ առնելով՝ պահում էին նրա առջեւ, եւ երբ Երուանդը նայում էր, որձաքար վէմը ճեղքում էր: Իսկ եթէ այն շլներ, ով կամենար մօտենալ՝ վնասում էր: Եւ այսպիսի դիւական գորոքինը պահպանելով՝ վախճանում է՝ թագաւորելով քսան տարի:

ԿԱՅՍՐԵՐ

Թագաւորում է Տիտոսը՝ երկու տարի, որը Յունաց թագաւորելու շարքում ութերորդն է: Սրա ժամանակ Բեսխոս լեռը ճեղքուեց, և ուր դուրս ժայթեց եւ գաւառներն ու քաղաքներն այրեց:

Դումետիանոսը¹, որը կայսրերի շարքի իններորդն է, սա թագաւորում է Հռոմում տասը տարի: Սրա չորրորդ տարում Յովիաննէսին տրուեց Պատմոս կղզին՝ լսու Աստծոյ խօսքի²: Նրա [Դումետիանոսի] ժամանակ կային շատ հերձուածողներ՝ Մենանդրոսը եւ Սանին, որոնք կախարդ Սիմոնի աշակերտներն էին, նաեւ՝ Արտոնը, Կերինքոսը եւ ոմն Նիկոլիսը, որոնց նզովում են կաքուիլիկ առաքելական եկեղեցիները:

ԳԼՈՒԽ Խթ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ ԱՐՏԱՇԷՍԻ ԹԱԳԱԽՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երուանդի մահից յետոյ թագաւորում է Սանատրուկի որդի Արտաշէսը, որ Արշակունիների տոկոսից Հայոց թագաւորելու շարքի իններորդն է: Թագաւորում եւ պարզեներ է տալիս Պարսից ու Մարաց գօրքերին, ո-

¹ Ինաւ Դումետիանոս:

² Հմտ. Ես՝ Յովիաննէս, եղայ այն կղզում, որ կոչում է Պատմոս (Յայտ. Ա 9):

րոնք օգնութեան էին եկել իրեն Պարսից արքայ Դարեհի հրամանով, [եւ] նրանց ուղարկում է իրենց երկիրը: Բարձ ու պատի է տալիս նաեւ իր նախարարներին. [ամենից] առաջ քաջ Արգամին տալիս է երկրորդական զարդ եւ բանկազին քարերով կապուած պսակ, երկու ականջներին ոսկէ զիներ, մի ոստին կարմիր զգեստամաս եւ ոսկէ գդալ ու պատառաքաղ գործածելու իրաւունք]: Իր դայեակ Սմբատին տալիս է թագակապ ասպետութիւնը եւ ամբողջ իշխանութիւնը Հայոց զօրքի վրայ: Եւ հրամայում է զիշին կրել մանր մարգարտագարդ վարսակալ եւ [այդպէս] թագաւորի տանը շրջել: Դարեհին էլ ուղարկում է թագմաքի լնծաներ ու նույրներ իրեւ հօր եւ երախտաւորի:

Այդ ժամանակ պատերազմ է տեղի ունենում Արտաշէսի եւ ալանների արքայի միջեւ: Արտաշէսը հնազանդեցնում է նրան եւ արքայի դրստր Սարենիկին կին առնում: Վերադառնում է [պատերազմից] եւ շինում է [այն] քաղաքը, որ իր անունով կոչում է Արտաշատ: Նրա կողմից արուած այլ գործերի մասին եւս պատմում է Մովկէսի³ կողմից: Այս ժամանակներում, երբ Սարենիկի հետ եկել էին սուրբ Սուրբիասը եւ իր ընկերները, երբ կենաց խօսքը լսեցին Ուսկեաններից, որոնք եղել էին սուրբ Թաղէս առաքեալի աշակերտները եւ նրա ճեռքով մկրտուել ու սովորել էին կենաց խօսքը, եւ նոյնը ուսուցանում էին սուրանց [ալանների] թագաւորի ու Սարենիկի առջեւ, եւ հաւատալով՝ մկրտուեցին նրանց [Ուսկեանների] կողմից ու զնացին Սուրբաւետ լեռը⁴, այնտեղ բնակուեցին քառասունշորս տարի: Եւ նահատակուեցին [Սուրբիասեանները] նոյն լեռան վրայ Ալանցից եկած Բառակայ բռնաւորի կողմից: Իսկ սուրբ Ուսկեանները բնակուած էին Ծաղկեուն կոչուած սուրբ լեռան վրայ:

Իսկ ապա մեր Արտաշէսը իրեն համանուն Արտաշէսին թագաւորեցնում է Պարսից վրայ եւ ինքը մեռնում թագաւորելով քառասունմէկ տարի:

ԿԱՅՍՐԵՐ

Ներուասը թագաւորում է [մէկ] տարի¹⁰, որը Յունաց թագաւորելու շարքի տասներորդն է: Անօրէն Տրայիանոսը թագաւորում է որպէս կայսրի շարքի տասնմէկերորդը՝ տիբելով տասնինը տարի: Սա սպանեց երանելի հզնատիոսին եւ հաւատացեալներից ուրիշ շատերին:

Թագաւորում է Ալյոհաննոսը¹¹ քսանմէկ տարի, որ տասներկուերորդն [էր] Յունաց թագաւորելու շարքում: Սա եկաւ Արենացոց գաւառը եւ հարցնում էր արենացի Սեկենտոս փիլիսոփայի մասին, որ իրեն ենթա-

¹ Ինաւ Խորենացու:

կել էր ժումկալ կենցաղավարութեան՝ նախանձելով՝ “Պեթագորին”, եւ իր ամբողջ կեանքի լնթացքում իրեն դատապարտել էր լուստեան: Աղրիանու¹³² կայսրը մարդ ուղարկեց եւ կանչեց նրան, եւ շատ քանի խօսելով նրա հետ պէս-պէս հնարներով՝ չկարողացաւ մի որեւէ բան լսել նրանից, բացի միայն գրելու միջոցով առակների որոշ խօսքերից:

Թագաւորում է Անտոնինոս Բարեպաշտը, որը տասներեքերորդն է հռոմէական կայսրերի շարքում: Սա ապրեց մեծ բարեպաշտութեամբ [եւ] մեռաւ՝ թագաւորելով քաներկու տարի:

ԳԼՈՒԽ ԽԳ

ԱՐՏԱՒԱԶԴԻ ԹԱԳԱՒՈՐԵԼԸ ԵՎ ԻՆՉ-ՈՐ ԶԱՐՍԱՆԱԼԻ ՍԱՀՈՎ ՄԵՌՈՆԵԼԸ

Թեպէտել իմ այս պատմաճներից յետոյ Արտաւազդի մասին է պատմում այլատեսակ ու այլաբանօրէն, բայց ես [եւս] կը շարադրեմ, չէ՞ որ հերթանուների ու անհաւատների մկատմամբ էլ է լինում Աստծու խնայելը և շխնայելը: Որովհետեւ այսպիսի հրաշքներ քոյլ տուեց վերազրել նրան [Արտաւազդին] եւ հանդուրժում է տալ նաեւ նրա նմաններին, ինչը որ մարդկանց խաղերում, երգերում, առասպեկներում, գրոյցներում, վիպասանութիւններում տարիներով ու ժամանակներով յետ է գնում՝ զարմացնելու լսողներին, թէ ինչպիսին էր Արտաւազդն իր թագաւորելու ընթացքում: Բայց մենք ոչ թէ որեւէ մէկի օգտագործելու համար գրեցինք, թէ պէտեւ ուրիշները գրել էին իրենց պատմութիւններում, այլ լսողների ապշելու համար նաեւ մենք գրեցինք մեր [պատմութեան] մէջ:

Արդ՝ թագաւորում է Արտաշէսի որդի Արտաւազդը, որը Հայոց քաղաքութերի շարքում տասներորդն է: Սա իր թագաւորելուց յետոյ Արտաշատ քաղաքի կամուրջն անցաւ՝ վարազներ ու վայրի էշեր որսալու, եւ [որսի] աղմուկ համելիս ինչ-որ ցնորժներից խելագար [ձայներ] լսեց, [եւ] երիքարի հետ շուռ զարով՝ ընկաւ ինչ-որ մի մեծ խոր տեղ, եւ խորասոյ լինելով՝ անհետացաւ:

Սրա մասին Գողքան երգիշները առասպեկարանում են այսպէս, թէ Արտաշէսի մահուան ժամանակ հերթանոսական սովորութեամբ թագմարի զոհարերութիւններ էին լինում: Ասում են, թէ Արտաւազդը զայրանում է [եւ] հօրն ասում: «Մինչ դու գնացիր, ամբողջ երկիրն էլ քեզ հետ տարար,

[†] Այսպէս ընագրում, իմա՞ Պիտրագրաս:

ես այս աւերակների վրայ ո՞ւմ թագաւորեմ»: Դրա համար Արտաշէսը նրան անիծեց [եւ] ասաց այսպէս: «Եթէ դու հեծնես, դէպի վեր Ազատ Մասնիք որսի [գնաս], քեզ բող քաջքերը բռնեն, տանեն դէպի վեր Ազատ Մասնիք, այնտեղ մնաս եւ լոյս չտեսնես»: Պառաւները նոյնպէս սրա մասին գրոյցներ են պատմում, թէ բանտարկուած է մի քարայրում երկարէ շղթաներով կապուած, անընդիմատ կրծելով շղթաները՝ ջանում է դուրս գալ եւ աշխարհին վերջ բերել: Բայց դարբինների կուանահարութեան ձայնից, ասում են, կապանըներն ամրանում են: Դրա համար մեր ժամանակ ես դարբիններից շատերը, առասպեկին հետեւելով, կիրակի օրը երեք կամ շոր անգամ [դարբնոցի] սալերը ծեծում են, որպէսզի, ասում են, Արտաշագի շղթաներն ամրանան: Բայց ճշմարտութիւնն այն է, ինչ վերեւում ասուեց:

Սակայն ուրիշներն էլ ասում են, թէ ծնունդի ժամանակ ինչ-որ պատահար տեղի ունեցաւ, որը համարեցին, թէ նրան կախարդել են Աշղահակի տոհմի կանայք, այդ պատճառով Արտաշէսը նրանցից շատերին շարշարանքի ենթարկեց: Եւ այս բանը նոյն երգիշները առասպեկներում այսպէս են երգում, թէ Վիշապազունները գողացան մանուկ Արտաւազդին եւ նրա փոխարէն դեւ դրեցին: Բայց ինձ արդարացի է բում այն լուրը, թէ ինց ծնունդից նա խելագար է եղել, մինչեւ որ նոյն [ախտից] էլ վախճանուեց՝ քողմերով թագաւորութիւնը իր երգայր Տիրանին:

ԿԱՅՍՐԵՐ

Սարկոս Անտոնինուը Յունաց թագաւորների շարքում տասնշորսնորդն է: Նա թագաւորեց տասնինը տարի եւ մի ամիս: Սա պատերազմի ելա Կուաղքում¹³³ գերմանիկների եւ սարմատների դէմ: Եւ զոր շինելու պատճառով զօրքը նեղուեց ծարաից, եւ զօրքից մի գուն քրիստոնեաներ, որ Մելիխտինից էին, սկսեցին աղօթել Աստծուն, եւ երկիցս ծունը իշջան գետնին: Եւ մինչ քշնամինները զարմացած [նայում] էին, յանկարծակի մեծ շարժում եղաւ, եւ կայծակներ թափուեցին քշնամինների վրայ, եւ [նրանք] կոտորուեցին, իսկ անձրեւազերը թափուեցին եւ զօրքը խմեց: Սրա ժամանակ շատ աղանդաւորներ եղան, [որ] հակառակ [էին] Աստծոյ պատուիրաններին, [եւ] որոնց նզուկում են կաքուղիկ եկեղեցիները:

Թագաւորում է Կոմիդոսը տասն[երեք]¹³⁴ տարի, որը հոռոմէական կայսրերի շարքում տասնինզերորդն է: Սրա ժամանակ հերձուածողներ էին Թէրմիտոնը, Ապեղէսը, Փոխագացինները¹³⁵ եւ ուրիշ շատեր, որոնց ուրդափառների եկեղեցիները նզուկում են:

Թագաւորում է Եղիսոլ¹³⁶ մէկ տարի, որը Յունաց թագաւորների շարքում տասնվեցերորդն է: Սրա ժամանակ սաստիկ հրդեհ եղաւ, և Հռոմում պալատը եւ կոյսերի տունն այրուեցին:

ԳԼՈՒԽ ԽԴ ՏԻՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայերի վրայ Պերոզի երրորդ տարում թագաւորում է Արտաշէսի որդի Տիրանը, որը Հայոց թագաւորների շարքում տասնմէկերորդն է: Սրա որեւէ պատերազմի կամ քաջազրութեան մասին ոչինչ չի պատմում, այլ միայն [ասում է, որ] մտերիմ մնաց հռոմէացիների հետ, ապրեց խաղաղութեամբ, զրօսանքներով ու որսով հանգիստ անցկացրեց իր թագաւորութիւնը, եւ ինչ-որ ճանապարհի ծեան հոսքի տակ մնալով՝ մեռաւ՝ ապրելով քսանմէկ տարի¹:

ԿԱՅՄՐԵՐ

Անօրէն Սեւերիոսը, որը հռոմէական կայսրերի շարքում տասնեօրերորդն էր, թագաւորեց տասնինգ տարի: Սա սաստիկ հալածանքներ սկսեց Եկեղեցիների դէմ, որի լնրացրում շատերը մարտիրոսութեցին ի Քրիստոս: Մարտիրոսուածներից մէկն էր Ղեղինիէսը²: Ուրոգինէսի հայրը: Եւ սրա օրերում Երիքովում գտնուեց [Աստուածաշնչի] թարգմանութիւնը, որ թաքցուած էր կարասում: Եւ սրա օրերում եղան շատ քնահած մարդիկ, որոնք կամեցան Աստուածաշունչ գրքում ուղղումներ մտցնել, քայլ նրանց մտադրութիւնները Սուրբ Հոգին խափանեց:

Թագաւորում է Երկրորդ Անտոնինոսը եօթ տարի, որը եւ Սեւերիոս [կոչուում]³, որը Յունաց թագաւորների շարքում տասնութերորդն է: Սրա ժամանակ Երուաղէմում էր Նարկիսոս Եպիսկոպոսը՝ սքանչելի ու հրաշագործ մարդ, որովհետեւ երբ մի անգամ Զատկի մեծ տօնի հսկումն էր եւ ճրագների ձերը պակասեց, երանելի Նարկիսոսը սպասաւորներին հրամայեց ջուր բերել, եւ ջորի վրայ աղօթելով՝ հաստատ վստահութեամբ հրամայեց լցնել ճրագների մէջ: Եւ ջուրը ձերի յատկութիւն ստացաւ: Այս մասին վկայում է Եսթերիոս «Եկեղեցական պատմութեան» մէջ⁴: Նարկիսոսն ապրեց հարիւր տասնինը տարի:

¹ Հմտ. Խորենացի, էջ 193-194:

² Բնագրում Վրիպակով՝ Երեմիէս:

³ Այս վերջին պնդումն Ուխտանեսին է, աղբիրը՝ Փիլոն Տիրակացին չունի այն:

ԳԼՈՒԽ ԽԵ ՏԻՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայերի վրայ Պարսից արքայ Պերոզի քսանչորսերորդ տարում թագաւորում է Տիրանի Երայր Տիրան Վերջինը, որը Հայոց թագաւորների շարքում տասներկուերորդն է: Որեւէ տեղում սրա ոչ մի քաջազրութեան մասին չի պատմում: Հռոմէացիների ութերորդ թագաւոր Տիտոսի վախճանուելուց յետոյ սա օգնութեան դիմեց Պերոզ արքային եւ մինչեւ հռոմէական իշխանութեան [սահմաններն] արշաւեց: Եթի Պերոզն ասպատակում էր Ասորիքը Պաղեստինի կողմերում, իսկ մեր Տիրանը նրա հրամանով՝ Միջերկրայքը, [սա] այս կողմերում իշխող մի աղջկայ կողմից քննուեց, ասում է Պատմագիրը⁵: Բայց Դուկիանոս անունով մի ոմն կեսար մեծ զօրուկ անցնելով Միջերկրայք՝ Պերոզի մեռնելուց յետոյ նուանում է Հայաստանը, Տիրանին ազատում է եւ նրան [կնութեան] տալիս [իր] Ռոփի անունով աղջկան: Սա գալիս է Հայաստան եւ նրանից ծնուած պատանիներից իրենց մօր Ռոփի անունով սերում է Ռոփսեան տոհմը: Եւ ինքը [Տիրանը], ապրելով քառասուներկու տարի՝ մեռնում է:

ԿԱՅՄՐԵՐ

Թագաւորում է Մակրիանոսը⁶ քսան տարի, որը հռոմէական կայսրերի շարքում տասնիններորդն է: Սրա ժամանակ Հռոմէացիների տեղերը հանդիսատեսների շուրջն այրուեցին:

Թագաւորում է Երրորդ Անտոնինոսը՝ չորս տարի, որը Յունաց թագաւորների թում քսաներորդն է: Սրա ժամանակ հին Եմաւուսը նորոգուեց եւ Նիկոպոլիս կոչուեց Ափրիկանոսի կողմից:

Թագաւորում է Մամի որդի Աղեքսանդրոսը, որ քսանմէկերորդն է հռոմէական կայսրերի շարքում տասներեք տարի: Սրա օրօք Հեպիրիքոս Բոսպորացին⁷ ատեղծում է իր քազմարի գրուածքները՝ Զատկի մասին եւ տասնմէկ կամոնները եւ ծննդեան վեցօրենայի եւ Օրինութիւնների օրինութեան մասին, նաև ոչ մեծ [գրուածքը] Եղեկիլի մասին: Եւ նոյն օրինը Որոգինէսն Աղեքսանդրիայում էր եւ իրեն ներքինի դարձեց⁸:

¹ Իման Խորենացի (տես էջ 196-197):

² Տապարում Վրիպակով Մարկիանոս է:

³ Բոլորը Փիլոն Տիրակացու է [տես ԱՀ, Խո. Ե, էջ 941-942 - խմբ.]:

ԳԼՈՒԽ ԽԶ

ՎԱՂԱՐԾԻ ԹԱԳԱԽՈՐԵԼՈՒ, ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՈՒԱԾ
ԳՈՐԾԵՐԻ ԵՒ ԽԱԶԻՐՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՈՒ ՆՐԱ
ՄԱՀՈՒԱՆ ՄԱՍԻՆ

Հայերի վրայ Պարսից արքայ Վաղարշի երեսուներկուերրդ տարում իր հօր փոխարէն թագաւորում է Տիգրանի որդի Վաղարշը, որը Հայոց թագաւորմերի շարքում տասներեքերրդն է: Սա մի մեծ աւան է շինում իր ծննդավայր Բասեն գաւառում եւ պարսպապատում է միւս աւանը (որը Վարդէսինն [էր])¹³⁹, որ Ըստադ գետի վրայ է:

Սրա օրով Մուշկանը¹⁴⁰ միաւորուելով խազիրների ու բասիդների գորախմբերի հետ՝ ճորայ դռից¹⁴¹ այն կողմում, իրենց թագաւոր ունենալով մի ուն Վնասիպի¹⁴² անցան Կուր գետից այս կողմ: Նրան մեծ զօրքով հանդիպեց Վաղարշը, ցիլտցան արեց, դիարաւալ դարձրեց խազիրների զօրքը, եւ հետապնդելով՝ անց կացրեց ճորայ կապանից [այն կողմ]: Բայց թշնամիները երկրորդ անգամ ճակատ կազմեցին, որոնց թէպէտն Հայոց քաջերը փախստական անելով՝ յետ շարտեցին, սակայն Վաղարշը նրանց ծեռովկ սպանուեց՝ թագաւորելով քան տարի:

Եւ թագաւորութիւնը ստացաւ նրա որդի Խոսրովը՝ Պարսից արքայ Արտավանի երրորդ տարում: Եւ անմիջապէս հանախմբելով Հայոց զօրքերը, Խոսրովն անցաւ մեծ լեռ [Կովկասը] վրէժխնդիր լինելով իր հօր մահուան համար: Եւ իրով ու սրով նուածելով այն երկիրը, պատանդներ առաւ ու վերադարձաւ: Նաեւ իրեն իր անտուրեան խորիրդանիշ արձան կանգնեցրեց հելլենական գրով, որպէսզի [երեւայ] հայերին հնազանդ լինելը:

ԿԱՅՍՐԵՐ

Անօրէն ու չարահաւատ Մաքսիմիանոսը, որը Յունաց թագաւորների շարքում քամաներկուերրդն է, [թագաւորում է] չորս տարի: Սա հայածանքներ սկսեց Եկեղեցիների դէմ եւ շատերին հրամայեց կոտորել, որոնցից մէկը սուրբ Թէոդորոս էր: Այս երանելին ծնուել էր Սաքորէ անոնով մի գիտում, որը Վենիս քաղաքից հեռու է վեց մղոնով. եւ այդ գաւառն Արմենեան է, որ կոչում է Երկրորդ Հայք: Եւ աւանդութիւնից այս է պատմում, թէ սա [իր] մօր մահից յետոյ հօր կողմից հատիկաջրով է պահուել, եւ արքունքի [տարիքին] հասնելով՝ մարտիրոսուել է անօրէն Մաքսիմիանոսի կողմից:

Իսկ նախքան այդ այնպէս եղաւ, որ սա անցնում էր Պոասմինով¹⁴³, պատահեց Եւսեբիա այրի կնօջը, որին Ակոտա էին կոչում: Գալիս է գիւղի մօտ, նստում է մի ծաղի հովանու տակ կեսօրուայ շոգ պահին, ձին կապում ստուերում: Եւ կամենում էր մի քիչ հանգստանալ ու զնալ: Ապա դուրս է գալիս այն կինը, որի մասին ասացինք, տեսնում է սուրբ Թէոդորոսին նստած, իսկ ձին նույն կապած: Այդ ժամանակ կինը ձայն տարվա սրբին՝ ասում է. «ԱՇ հեծեալ, աՇ հեծեալ, մի՛ նստիր այդտեղ, ուրվինտեն այդ տեղերին մօտիկ մի չար վիշապ կայ եւ շատ մեծ, կը վնասի թեզ ու ծիույց»: Եւ ապա կնօջ խօսքից յետոյ ահաւոր շարժումով ու ֆշշոցով գալիս է վիշապը: Այդ ժամանակ սուրբը աճապարելով հեծնում է ձին, եւ գաւազանն առնելով ձեռքը՝ զարկում է վիշապին ու գաւազանով շեշտակի ձեռքում հսկայական չար վիշապի գլուխը եւ հրում է նրան իր մօտից հոսող զետի ջուրը իբրև մի ահագին գերան, ինչպէս որ հնում Փրկիչը աներեւոյք վիշապի գլուխը ջախչախնեց Յորդանանի ջրերում: Եւ ապա, ինչպէս ասացինք, մարտիրոսութեամբ սպանում է Ամասիա¹⁴⁴ քաղաքում: Բարեպաշտ կինը սրբի ամինը թերում է իր Եւրախտա գիւղը եւ մեծ պատուվ գերեզման դնում. իսկ Եւրախտան գտնուում է Ամասիա քաղաքին մօտ: Սուրբ նահատակը վախճանուեց մարերի ամսի քսանչորսին ի փառ Աստծոյ:

Թագաւորում է Գորգիանոսը, որը հոռմէական կայսրերի շարքի քամաներերորդն է՝ վեց տարի: Սա Զատկի տօնի օրը կամեցա եկեղեցու ժողովրդի հետ աղօք անել, եւ Փլարիանոս եպիսկոպուար նրան քոյլ շտուեց, մինչեւ որ շխստովանուի, եւ նա յանձն առաւ [իս] իր ամրող հոգով: Սրա ժամանակներում Արաբացոց կողմերում էր Բոսրուայի¹⁴⁵ եպիսկոպուր Քերիբելուսն¹⁴⁶ էր: Սա յանդնեց մեր Փրկչի մասին ասել, թէ նա [իր] անձով սկզբում գրութիւն չի ունեցել, մինչեւ աշխարհում երեւալը եւ մարմնանալը: Ասում է, թէ նա իր անձի մէջ աստուածութիւն չունի, այլ իր Հօր աստուածութիւնն է բնակուած իր մէջ: Իսկ նոյն կողմերից ուրիշներն էլ այլ խօսքեր էին ասում պատուիրաններից դուրս: Որոգինեւսին աղաչեցին [օգնել], եւ նա նրանց վերադարձրեց դէպի ծշմարտութիւնը: Եւ նա ապրեց վարսուն տարի:

Եօր տարի Հոռոմում թագաւորում է Փիլիպպոսը, որը հոռմէական կայսրերի շարքի քամաներուրորդն էր: Սրա թագաւորութեան սկզբում լրացաւ Հռոմ քաղաքի իմբնադրման հազար տարին:

Սրա ժամանակ Հայաստանում թագաւորում էր Խոսրով Մեծը, եւ
† Տպագրուս վրիպակով Պրաամին է:
‡ Իմա՞ Բոստրա քաղաքը Միջագետքի հարաւում:

սուսն [Փիլիպոսաթին] զիմանցից է բարձնում ու բազմարին գործեր առաջ ուղարկում է Ստուերտուցի Մասսանի որդին՝ Արտաշիրի վրայ՝ Վրէժիսնքի լինելով իր առգաւական Արտաւանի համար. հակածում է Պարսից արքայ Արտաշիրին վիճակն Ենանաց¹⁴ սահմանները. Են առաւ են, որ Ենանաց արքան բարձր առնգում միջնորդելով՝ չի կարողանում հաշտեցնել:

ԳԼՈՒԽ ԽԵ ԽՈՍՐՈՎԻ ԹԱԳԱՌՈՒԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Հայերի վրայ Պարսից արքայ Արտաւանի երրորդ տարրամ բազալում է Վաղարշի օրդի Խոսրով Մեծը, որը Հայոց բազալորդների շարքում տասնչորսերորդն էր: Այդ ժամանակ [նա] իր հօր մահուան համար վրէժիսնքիր է լինում խոզիրների արքայից, և նրան ենազանդեցնելով՝ պատանու է վերցնում ու վերադառնում: Սրանից յետոյ Խոսրովին գոյժ է հասում Արտաւանի սպանուելու մասին, որը պարբեների [ցեղից] Պարսից վերջին բազալորն էր, որից յետոյ վերացա լայրեների բազալորդինք:

ԳԼՈՒԽ ԽԸ ԿԱՐՉԵԱԼ ԽՈՍՐՈՎԻ ՍԱՍԻՆ

Մեծ Հայրի արքայ Խոսրովի բազալորդեան ժամանակներում վերացա լայրեների [ցեղից] Պարսից բազալորդինը՝ հոռմացիների Փիլիպառ կայսեր տիրակալորդեան տարիներին: Են առաւ են, թէ սրանք [պարբեները] սերուած էին Աբրահամի [այն] զաւակից, որը Քետորայից էր [ծնուած]: Իր կենանութեան օրօք Աբրահամը Խսահակից¹⁵ բաժանեց Քետորայի ծնունդ Եմրանին ու սրա եղբայրներին եւ ուղարկեց արեւելքի երկիրը: [Եւ] սրանցից սերուած ցեղը պարբեներ անուանուեց, եւ սկսուեց նրանց բազալորդինը ըստ Տիրոց այն խօսքի՝ հաստատման, որ Աբրահամին էր ուղղուած, թէ՝ «Քեզօնից ազգերի բազալորներ կը ծագեն եւ կը բազալորն պարսիկների ու հայերի վրայ»:

Արդ Պարսից վրայ բազալորդ է Արշակ Քաջը: Սա ապստամբուելով մակերդնացիներից՝ բազալորդ է քոչանների երկիր այն քաղաքում, որը

Բահդա¹⁶ է կոչում: Աղեքսանդր Մակեդոնացու մահից վարսուն տարի յետոյ [սա] բազալորդ է երեսունմեկ տարի: Են սրանից յետոյ [բազալորդ է] նրա որդի Արտաշէսը՝ բանավեց տարի, ապա՝ Արտաշէսի որդի Արշակը, որը կոչուեց Մեծ [եւ] որը սպանեց Սեղենկիսի որդի Անտիոքիոսին: Եւ իր եղբայր Վաղարշակին բազալորդոց հայերի վրայ՝ դարձնելով իրենից [յետոյ] երկրորդը: Այս բանը մի անգամ ասուեց մեր ձեռնարկած գործի սկզբում:

Արդ պարբեները Պարսից բազալորդութեանը տիրեցին՝ հերթականութեամբ որդին հօրից առնելով՝ չորս հարիւր յիսունինգ տարի, մինչեւ որ վերացա նրանց բազալորդինը:

ԳԼՈՒԽ ԽԸ ՊԱՐՍԻՑ ՊԱՐԹԵՒ ԹԱԳԱՌՈՒԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՄԻՆՉԵՒ [ՆՐԱՆՑ] ՎԱԽԱԾԱՆԸ

Արդ՝ անցնենք պարբեների [ցեղից] Պարսից բազալորդների քանակին՝ սկսելով Արշակ Մեծից մինչեւ Արտաւան, որից [յետոյ] վերացա [այդ] բազալորդինը: Արշակ Մեծը [բազալորդը] յիսուներկու տարի, Արշականը երեսուներկու¹⁷ տարի, ապա Արշէզը՝ քան տարի, Արշակիրը՝ բառասունվեց տարի, սրանից յետոյ՝ Արտաշէսը՝ երեսունչորս տարի, ապա Դարեհը՝ երեսուն տարի, սրանից յետոյ՝ Արշակը՝ յիսունեօր տարի, ապա Արտաշէսը՝ քան տարի, Պերոզը՝ երեսունչորս տարի, իսկ սրանից յետոյ Վաղարշը՝ յիսուն տարի, ապա սրանց բոլորից յետոյ՝ Վաղարշի որդի Արտաւանը՝ երեսունվեց տարի: Սրան սպանեց Ստահրացի Սասանի որդի Արտաշիրը եւ հոռմական կայսր Փիլիպառի երկրորդ տարուն վերացրեց պահպանիկների բազալորդինը:

Այստեղ դադարաւմ է պարբեն պահպանիկների¹⁸ ցեղից Պարսից բազալորդինը, որը սկսուել էր Պոտրումէնու Փիլարեկիոսի երեսուներորդ տարուանից¹⁹ տեւելով ընդամենը չորս հարիւր յիսունինգ²⁰ տարի, մինչեւ վերացա նրանց տիրակալութիւնը՝ սկսուած Արշակ Մեծից [եւ տեսած] մինչեւ Արտաւան, որին սպանեց Ստահրացի Սասանի որդի Արտաշիրը, եւ ինքը [իշխանութեան] զալով՝ Պարսից զօրքերը միաբանեց իրեն, իսկ նրանք արհամարհելով մերժեցին Պարսից [պարբեների] տէրութիւնը եւ հաճոյքով ընդունեցին Ստահրացուն:

¹⁴ Ձեռագրում այստեղ վրիպակով է՝ Պահողովկաց:

Իսկ երբ Արտաւանի մահուան բոքը հասաւ մեր Խոսրով թագաւորին, [սա] մեծ սզի մէջ ընկաւ նրա համար, քանզի սրա ազգականն էր: Եւ ելք էր մտածում կատարուածի համար, բայց չնայած [աւելի] վաղ էր լսել Արտաւանի մահուան գոյժը, սակայն չկարողացաւ այն [նոյն] տարում ազատ ժամանակ գտնել այլ հոգսերից ու պատերազմներից:

ԳԼՈՒԽԾ

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԾԱԿԱՆ ՋՔ ՊԱՐՄԻՑ ՎՐԱՅ ԵՒ ԱՐՏԱԿԱՆԻ ՍԱՀՈՒԱՆ ՀԱՍԱՐ ՎՐԵԺԽՆՆԴԻՐ ԼԻՆԵԼԸ

Իսկ Արտաւանին սպանելուց եւ Սասանի որդի Արտաշիրի թագաւորելուց յետոյ միւս տարի Հայոց արքայ Խոսրովը սկսեց զօրաժողով անել եւ հայաքեց Աղուանից, Վրաց, Լիֆնաց, Ծղրաց, Կասրից զօրքերը, մեծ քանակութեամբ հանեց նաեւ Հոռաց զօրքերը եւ ուրիշ շատ զօրքեր այլ ազգերից: Յայտնեց նաեւ հոռմէացիների կայսր Փիլիպոսին, որպէսզի նա էլ օգնի՝ իրեն զօրք տալով, իսկ նա փութապէս զօրքեր տուեց Եզիզոսոսից ու անապատից մինչեւ Պոնտոսի¹⁵¹ ծովեզրը: Ապա [Խոսրովը] զօրքերի այդքան քազմութեամբ շարժուեց զնաց Արտաշիրի դէմ, եւ ճակատամարտ տալով՝ փախուստի մատնեց նրան: Եւ իսպառ կոտորեց նրա զօրքերը, եւ անշափ կոտորածով առհասարակ վերացնելով բոլորին՝ նրանից գրաւեց Ասորեստանը եւ Պարսից մնացեալ արքայանիստ երկիրը: Եւ մեծ յաղթութեամբ վերադարձաւ իր երկիրը:

ԿԱՅՄԱՐԵՐ

Չարահաւատ ու անօրէն Դեկոսը թագաւորում է մի տարի: Եւ [սա] հոռմէական կայսրերի շարքում քսանիինգերորդն էր: Սա Եկեղեցիների դէմ հալածանքներ սկսեց, եւ մարտիրոսներ դարձան եպիսկոպոսներ՝ Հոռոմում՝ Փլաքիանոսը, Անտիոքում՝ Բաբեղասը, Երուսաղէմում՝ Աղեքսանդրոսը: Չարչարանքներ կրեց նաեւ Որոշինեսը, [բայց] մարտիրոսութեան փախանի շհասաւ: Սա շատ գրուածքներ գրեց, եւ նրանց մէջ կայն խօսքեր, որ ընդունելի չէին, այլ հակառակ [էին] ճշմարտութեանը: Սա ապրելով փարսունինը տարի՝ մեռնում է Կիսլոսում:

Եւ նոյն ժամանակ Եփեսոսում Որդոս¹⁵² լեռան այրում եօթ մանուկներ բնեցին եւ հարիր քառասուն տարի յետոյ զարբնեցին՝ իրեն յանդիմա-

նութիւն նրանց, որոնք մեռելների յարութեանը չէին հաւատում: Մանուկների անունները սրանք էին՝ Մաքսիմիանոս, Մարտիանոս, Թոնիսիանոս, Յոհաննէս, Անտոնինոս, Ամդիքոս [...]¹⁴:

Գաղինու եւ Վաղենատիանոս կայսրերը¹⁵³, որ կայսրերի շարքի քանվեցերորդն էին, թագաւորեցին Երկու տարի եօթ ամիս: Սրանց ժամանակ Հոռոմի Եկեղեցու Նաւատիստ երեցը եղաւ առաջնորդը կաթարուների աղանդի, այսինքն [նրանց], ովքեր իրենց անձերը սուրբ էին համարում եւ ապաշխարութիւնը չէին ընդունում: Որովհետեւ Նաւատիստուն ասում էր, որ ով մկրտութիւնից յետոյ մոլորում է, այնպիսին առանց բժշկութեան է մնում: Դրա համար Աստուածաբանը¹⁵⁴ հեզնական խօսքերով ծաղրում է դրան եւ ասում. «Նաւատիստի մարդատեացութիւնն այն էր», որ մեղք գործածներին դասութեան դատապարտում էր իրեն անմիս ու անմարմինների», եւ դարձեալ, թէ՝ «Զէր լսութեան նրանց, որ հալածանքների մէջ էին ընկնում»: Ապա քազմաքի եպիսկոպոսներ, քահանաներ ու սարկաւագներ հայաքութեցին եւ նզովելով մերժեցին նրան ու նրան հետեւողներին: Եւ եպիսկոպոսներն էին. Ստեփաննոսը՝ Հոռմից, Դիոնէսիոսը՝ Աղեքսանդրէից, Փղարիանոսը՝ Անտիոքում, որ Նաւատիստից յետոյ մոլորուեց, իսկ Դիոնէսիոս Աղեքսանդրացին նրան հայատքի մէջ վերահստատեց:

ԳԼՈՒԽԾԱ

ԴԱՐՁԱԼ ԽՈՍՐՈՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԱՐՏԱՇԻՐԻ ՎՐԱՅ ԱՌԱՎԱՅ ՈՐԵՒԷ ՄԵԿԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ

Հոռմէացիների կայսր Փիլիպոսի մահուանից յետոյ թագաւորում է Դեկոսը: Իսկ հոռմէացիների կայսրեր Վաղերիանոսը եւ Գաղիոսը մեր արքայ Խոսրովին չօգնեցին՝ միմեանց դէմ ունեցած հակամարտութեան պատճառով: Սակայն նա իր զօրքերով զնաց ու դարձեալ յաղին Արտաշիրին եւ նրան հալածեց մինչեւ Հնդկաց ու Ճենաց երկիրը: Իսկ ինքը Պարսից կողմէրը եւ Ասորիի սահմանները մինչեւ Տիգրենի դարպաններ, քաղաքները, գիլեները, եւ ազարակները եւ ընդիհանրապէս ամրող երկիրը սրով մաշեց, [եւ] առնելով առք ու աւար եւ գերիներ՝ խաղաղութեամբ ու մեծ յաղթութեամբ վերադարձաւ իր երկիրը եւ քազմաքի պարզեներ տուեց իր զօրքերին:

¹⁵¹ Տպագրում էլ քազմակետ է դրուած, քանի որ պակասում է եօթերորդ ամունը:

¹⁵² Իմա՞ Գրիգոր Աստուածաբան Նազիանզացին:

ԳԼՈՒԽ ԾԲ

ՊԱՐՍԻՑ ԱՐՏԱՇԻՐ ԱՐՔԱՅԻ ԽՈՍՔՆ ՈՒ ԽՈՍՏՈՒՄ ԻՐ ԶՈՐՔԻՆ

Այսքան աւերտմներից ու հալածանքներից յետոյ Արտաշիրը իր մօտ է կանչում իր բոլոր նախարարներին ու երեւելիներին եւ նրանց հետ խօսում տեղի ունեցած բոլոր իրադարձութիւնների մասին: [Եւ] խոստանում է բազմարի պարգևներ տալ, եթէ որեւէ մէկն իրեն ազատի Խոսրվի հալածանքներից՝ կա՞մ խորամանկարար բունաւորելով, կա՞մ գաղտնաբար սրով խողիստելով: Իսկ Անակը, որը նախարարների զիսաւորներից մէկն էր, մէջտեղ գալով՝ խոստանում է կատարել [արքայից] արքայի կամքը:

Եւ ենում է իր կնոջով ու ընտանիքի հետ միասին՝ [պարսիկներից] անջատուելու պատրուակով (եւ դա՝ կեղծաւորութեամբ) զայիս հասնում է Ատրապատականի սահմանները՝ [այդ երկրի եւ] Կորդորի միջեւ, եւ կանգ առնում Արտազ գաւառում¹⁴: Եւ ապա լսելով այդ մասին՝ Խոսրվն ուրախանում է եւ նրան ընդառաջ զօրք ուղարկում: Իսկ նա [Անակը] զնարկ հասնում է սուրբ առաքեալ Թաղէոսի գերեզմանի մօտ, եւ այնտեղ է եղել, ասում է Պատմագիրը¹⁵, սուրբ Գրիգորի մօր յηկութիւնը, եւ նա [Գրիգորն] ընդունեց առաքելական շնորհները¹⁶ եւ իր կեանքում կրեց նրա չարչարների պակասութիւնը, ինչպէս ուսուցանում է քեզ Պատմագիրը¹⁵:

ԳԼՈՒԽ ԾԳ

ԱՆԱԿԻ ԳԱԼՆ ԱՐՏԱԶ ԳԱՒԱՌԻՑ ԽՈՍՐՈՎՀ ՄՕՏ

Իսկ երբ Անակը եկաւ Խոսրովի մօտ, [Վերջինս] խիստ ուրախացաւ, եւ ընդառաջ դուրս գալով նրան՝ մեծ ուրախութեամբ ընդունեց նրան: Իսկ նա [Անակը] քիչ օրեր անց դաւադրաբար սկսեց կեղծաւորութեամբ խօսել բազաւորի հետ՝ իրեն իրեւել նրան հաւատարիմ ցոյց տալու համար: Եւ ասում էր. «Ես եկայ այս բանի համար, որպէսզի միասին մտածենք եւ մեր ազգականի վրեժն առնենք»: Եւ սրանով համոզելով բազաւորիմ՝ մեծ սրբ ու պարզեւել էր փայելում նրա կողմից: Նաեւ Անակին նստեցնում էր [Խոսրովը] իր բազաւորութեան երկրորդ աքոռին:

¹⁴ Իմաց Սովոր Խորենացին (հմտ. II, ՀԴ, էջ 212):

¹⁵ Իմաց Թաղէոս առաքեալի շնորհները:

Եւ սա ձմեռ ժամանակ էր. իսկ զարնան օրերին բազաւորը Ուտի զաւորից եկաւ Այրարատ գաւառը: Եւ ըստ իր սովորութեան՝ մտածեց զօրք Ժողովել Արտաշիրի վրայ 〔յարձակուելով〕: Իսկ Անակը յիշելով Պարսից արքայի պայմանադրած ուխտը եւ խոստումը՝ առաջ բազաւորին, մեկուսացաւ՝ իբրեւ թէ ճանապարհի մասին ինչ-որ բան խորիդրակցելու համար, [ու] սպանեց բազաւորին: Եւ ինքն [էլ] սպանուեց իրայինների հետ միասին:

ԳԼՈՒԽ ԾԴ

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԾԱՐՁԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԾ ՎԱՂԱՐՉԱԿԻՑ ՄԻՆՉԵՒ ԽՈՍՐՈՎԸ, ՈՐԻՆ ՍՊԱՍԵՑ ԱՆԱԿԸ

Վաղարշակը [բազաւորեց] քսաններկու տարի: Նրանից յետոյ Արշակը զահակալեց քսաններեք տարի, Արտաշէսը՝ տասնինգ տարի, Տիգրանը՝ երեսուններեք տարի: Նրանից յետոյ Արշամը [բազաւորեց] քսան տարի, ապա Արգարը՝ երեսունութ տարի, իսկ Սանատրուկը՝ երեսուն տարի: Նրանից յետոյ [բազաւորեց] Երուանդը՝ քսաննեկ տարի, ապա Արշակը՝ քառասուննեկ տարի, Տիգրանը՝ քսաննեկ, եւ նրանից յետոյ Տիգրանը՝ քսանսուններկու տարի, Վաղարշը՝ քառասուն տարի, իսկ Վաղարշի որդի Խոսրովը՝ քսանութ տարի: Սրան սպանեց իր ազգական Անակը, եւ ինքն էլ մեռաւ [իր] բոլոր իրայիններով: Եւ սրանից յետոյ կը պատմեմ, թէ ինչպէս եղաւ որպիսութիւնը:

Իսկ Խոսրովի մահից յետոյ Հայաստանը քսանեօք տարի մնաց առանց [բազաւորի] իշխանութեան, քանի որ Արտաշիր Ստահրացին նուածելով Պարսից երկրի արիններին ու անարիններին՝ իրեն հնազանդեցրեց եւ խաղաղութեան պատերազմից:

ԳԼՈՒԽ ԾԵ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ [ԱՅՆ ՍԱՍԻՆ], ԻՆՉ ՈՐ [ԵՂԱՄ] ԽՈՍՐՈՎԸ ՍԱՀԻՑ ՅԵՏՈՅ

Արդ՝ երբ Անակը կատարեց իր նենց մտադրութիւնը՝ իր մոլեզմութեան աւարտին սուսերահար անելով խոսրով բազաւորին, հայերի համար

խաւար արեց, [բայց] նաև խաւարեցին ինքն ու իրայինները՝ ըստ այն խօսքի, թէ՝ «Ով որ փորեց գուրը եւ խորացրեց, ինքը կ'ընկնի խայլը խորխորատը»¹: Եւ դարձեալ, թէ՝ «Ով տուր հանի՝ սրով կ'ընկնի»²:

Իսկ երբ նախարարները լսեցին իրենց բազարորի մահուան [մասին], եետապնդեցին Անակին եւ այստեղ-այնտեղ փակեցին ճանապարհը: Եւ անցնելով Սեծամօրի վրայ գտնուող Արտաշատի կամքջից եւ հասնելով կամքջախելին՝ շրջապատելով արգելեցին նրան: Իսկ նրանք իրենց [փախուստի] համար ճանապարհ չունենալով՝ ջրահեղձ եղան սատկեցին, ինչպէս այն փարաւոնը Կարմիր ծովում, եւ կամ ինչպէս լեզենները խոցերից խեղորուեցին Գերգեսացիների ծովում, եւ այսպէս իրենք իրենց համար դատաստան ընտրելով՝ եօթնապատիկ պատժուեցին: Քանզի սրահարելով անխնայ կոտորեցին նրանց կանանց ու մանկանց՝ ողջ ընտանիքով հանդերձ: Եւ այսպէս փոխարենը ճահուան դատավճրո ստացան, որն ընտրեցին [եւ] առան՝ իրենք իրենց դատապարտուելով:

ԿԱՅՄՐԵՐ

Վաղերիանոսը եւ Գաղիոսը, որ Յունաց բազարուների շարքի քանաքերորդն³ էին, [բազարուեցին] տասնինգա տարի: Սա [Վաղերիանոսը] իր բազարութեան սկզբում խոստացաւ խաղաղութիւն շնորհել եկեղեցուն, բայց եգիպտացի մի կախարդ մարդ նրան փոխեց իր [այլ] ճախկին մտադրութիւնից: Եւ նոյնի [ժամանակ էր] մի ուրիշ եգիպտացի հերձուածող եալիսկոպու՝ Եփետ անունով, որն ասում էր, թէ հազար տարի յետոյ մարմնական պատիժ պիտի լինի Երկրի վրայ: Եւ տեսակ-տեսակ բազմաքի պղծագործութիւններ էին կատարում այն ժամանակ՝ հայրերը որդիներին էին զոհաբերում եւ մանուկներ հերձում: Սրանց հետ էր նաև Անտիոքի Պոլոս Սամոստացի⁴ եալիսկոպոսը, որին նզովում է կարուղիկ առաքելական եկեղեցին:

Թագաւորում է Կղաղիոսը՝ մի տարի եւ ինն ամիս: Սա Խոռնեական կայսրերի շարքի քանութերորդն էր: Սրա ժամանակ է Պոլոս Սամոստացին, որին վերեւում այլ շարահաւատների հետ նզովեցին: Սա ճշմարիտ կանոնը վերացրեց եւ Արտեմոնի հերձուածը կրկին վերականգնեց, քանի որ մեր Փրկչի մասին ասում էր, թէ նա սուկ մարդ էր, ինչպէս բոլոր մարդիկ, եւ Աստծոյ խօսքի բնակարանը՝ խկութեամբ մարդ լինելով: Եւ

¹ Սամ. է. 16:

² Սատր. Ի. 2. 52:

³ Իմաս Սամոստացի:

զանազան տեղերից եալիսկոպոսներ են հաւաքուում Անտիոքում Պոլոս Սամոստացուն նզովելու համար. Դիտնեսիոսը՝ Հռոմից, Պարմեղիանոսը՝ Կեսարիայից, Պոնտացիների եկեղեցիների եալիսկոպոսն եղայրներ Գրիգորիոսն ու Արենադորոսը¹⁵⁷, Տարսոնացիների եկեղեցու [եալիսկոպոս] Հեղիանոսը, Խորնացուց¹⁵⁸ քաղաքի [եալիսկոպոս] Նիկոմիան, Երուսաղեմի եկեղեցու [եալիսկոպոս] Հիմենոսը, Պաղեստինի Կեսարիայի [եալիսկոպոս] Թեւստիկնոսը¹⁵⁹, Բոսոր¹⁶⁰ քաղաքի [եալիսկոպոս] Մաքսիմիսը: Իսկ Դիտնեսիոսն աղածեցին, որ նա եւս գայ ժողովի, բայց նա չկարողացաւ գալ ծերութեան պատճառով. սակայն նամակ ուղարկեց նրանց խնդրի մասին: Եւ նզովեցին Պոլոս Սամոստացուն, կարգարոյծ անելով՝ հեռացրին եկեղեցուց:

ԳԼՈՒԽ ԾԶ ԱՐՏԱՇԻՐԻ ԱՐԾԱԲԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՈՍՔՈՎԻ ՍԱՀԻՑ ՅԵՏՈՅՑ

Արդ՝ երբ Պարսից արքայ Արտաշիրը լսեց Խոռորդվի մահուան մասին, չափազանց ուրախացաւ, զորաժողով արեց եւ համարձակաբար արշաւեց Հայաստանի վրայ: Եւ այն յունական զօրքին, որ Փոխգիհայում էր եւ եկել էր հայ նախարարների խնդրանքով՝ օգնելու պարսիկների դէմ, փախուստի մատնեցին, Հայաստանի մեծ մասը գերեցին ու աւեր դարձրին:

Իսկ Վաղերիանոս կայսրը իր [Երկրում եղած] խառնաշփորչուեան պատճառով չիասցրեց օգնութեան գալ մեր Երկրին, այլև չուտով կեանքից հեռացաւ: Եւ բազարութիւնն ստանձնեց Կղաղիոսը, ապա՝ Ուրեղիանոսը¹⁶¹, որոնք իրար փոխանորդեցին կարճ ժամանակում: Յետոյ բազարուեցին Կենդրու¹⁶², Տակիտոս եւ Փողեստիանու¹⁶² եղայրները՝ [մի քանի] ամիսներով [եւ] օրերով: Եւ այդ պատճառով Արտաշիրը համարձակորեն արշաւեց մեզ վրայ եւ [մեր] աշխարհը միացրեց¹⁶³ Պարսից Երկրին¹⁶⁴:

Իսկ երբ Խոռորդվը մեռաւ, սրա մտերիմներից մէկը՝ Արտավազը Մանդակունին առա Տրդատին, որը վոքքիկ երեխայ էր, եւ ազատեց գերի ընկնելուց: Եւ տարա Տակիտոս կայսեր պալատը, եւ այստեղ [Տրդատը] Լիկիան ամունով մի ոմն կրնակ մօտ դաստիարակուեց եւ ուսում առա: Ապա կայսր Տակիտոսը տեսնելով Տրդատի՝ իր մօտ գալը եւ Արտաշիրի կողմից

¹ Իմաս Արեղիանոս:

² Ամբողջն ըստ Խորենացու (տես էջ 214-215):

մեր երկրի աւերտումը, ստիպուած եղաւ այնուհետեւ պատերազմով ընդդիմանալ Արտաշիրին, [սակայն] մեռաւ:

Տակիտոսից յետոյ թագաւորում է Պոռբոսը¹⁴: Պոռբոսն ու Արտաշիրը միմեանց միջեւ քաժանում են մեր երկիրը, [եւ] սահմաններ դնելով՝ իրար հետ հաշտութիւն են հաստատում: Նրանից [Արտաշիրից] յետոյ իր որդի Շապուհն [է իշխուու Հայաստանում] մէկ տարի՝ Տրդատի թագաւորելուց առաջ, երբ մեր երկրում քաննեօք տարի անիշխանութիւն եղաւ¹⁵:

ԿԱՅՍՐԵՐ

Թագաւորում է անօրէն ու ամրարիշտ Ուրեղիանոսը, որը Յունաց թագաւորների շարքում քաննիններորդն էր՝ եօք տարի եւ վեց ամիս: Սա սպանեց երանելի հայրապետ Մամասին, որին յիշատակում է Աստուածաբանը [իր] Նաւակատիքի ճանի մէջ [եւ] զովարանում է՝ ասելով. «Մամասը հոչակուած հովի էր, ասում է, եւ նահատակ, որ մէկը միւսից առաջ վազող եղնիկներ¹⁶ էր կրում, որպէսզի օտար կաթով կերակրուի արդարը»:

[Ուրեղիանոսը] դարձեալ մտադրուեց եկեղեցու դէմ հալածանցներ սկսել, քայց Աստծու քարկութեամբ զարկուեց, մեռաւ [Հռոմի] նոր քանտում: Նա ըստ արժանույն հաստուցում ստացաւ իր մտածածի համար: Սրանից յետոյ [թագաւորեց] Տակիտոսը՝ վեց ամիս, եւ սրանից յետոյ՝ Փողեստիանոսը՝ ուրսունուր օր: Կայսրերի շարքում սրանը չեն համարակալուել. նաև գործերը չեն յիշատակուել՝ նրանց ժամանակների փոքրութեան պատճառով:

Պոռբոսը¹⁷ թագաւորում է վեց տարի եւ չորս ամիս, եւ [սա] հոռմէական կայսրերի շարքի երեսուններորդն է: Սրա ժամանակ մոլի մանինեցիների¹⁸ սպանիչ կործանումը մուտք գործեց մարդկանց քարքերի մէջ, քանի Մամին [ամրածան] զոյց համարեց երկու եղորինը՝ նիւթ եւ խաւար, իբրեւ թէ՝ չար կամ քարի: Եւ տոշորութելով կատաղում էր այն դիւային աղանդով, որովհետեւ ասում էր. «Ես էի, որ լեռան վրայ Մովսէսին երեւացի իրով», եւ դարձեալ, թէ՝ «Ես քարեխու հոգի եմ»: Եւ նրան նզովում է Սուրբ Երրորդութիւնը¹⁹:

¹⁴ Ամրողց՝ ըստ Խորենացու (տես էջ 215-216):

¹⁵ Տպագրում վրիպակով է՝ եղին (ձեռագրում եղին):

¹⁶ Իմաս մանիրեացիների:

¹⁷ Ամրող ենքագուխմ՝ ըստ Փիլոն Տիրակացու:

ԳԼՈՒԽ ԾԷ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՉՊԵՍ
ՏԱՐՈՒԵՑ ՅՈՒՆԱՑ ԵՐԿԻՐԸ

Արդ, երբ կրում էին իրար դէմ այն երկու թագաւորները՝ Հայոց արքայ Խոսրովը եւ Պարսից թագաւոր Արտաշիրը՝ Խոսրովի ազգական Արտաւանի մահուան վրէժն առնելու համար, Խոսրովի կողմից անելի ու աւելի էր սաստկանում պատերազմը Պարսից դէմ: Եւ անվերջ խոռվութիւններով քանդում, սպառում էր երկիրը սրով ու գերութեամբ տասը տարի, ինչպէս վերեւում ասացինք: Եւ թէպէտեւ շատ անգամ պատուիրակներ էր ուղարկում շրեղ նուելներով՝ հաշտութիւն խնդրելու, [քայց] հնար չեղաւ: Նաեւ թագմարի անգամ Շենաց արքան միջնորդեց, [քայց դա էլ] չօգնեց նրան [Արտաշիրին]: Իսկ ապա այն Անակը, որի մասին վերեւում ասացինք, Պարսից արքայի խորիրով զալիս հասմում է Խոսրով արքայի մօտ՝ [պարսիկներից] անջատուելու պատրուակով: Եւ երկու տարի յետոյ սպանում է Խոսրովին, իսկ ինքը փախուստի դիմելով՝ ջրահեծ է լինում: Իսկ Պարսից թագաւորը Խոսրովի մահուան օրը տօն է հաստատում իր [ողջ] կեանքի ընթացքում եւ խոստացած պարզեւը տալիս է նրա [Անակի] մնացեալ տոհմին:

Եւ նրա [Անակի] հետ մի պարսիկ մարդ էր [Հայաստան] եկել՝ Բուրդաք¹⁶ անունով: Եւ սա Արտազ զաւառից զնաց Կապուտկացոց¹⁷ կողմերը՝ Կեսարիա քաղաքը, եւ իրեն կին առաւ [քրիստոնեայ] հաւատացեալներից Եփրադիոսի քրոջը, որի անունը Սովի էր: Եւ այնտեղ մնալով մէկ տարի եւ առնելով իր կնոջը՝ կամեցաւ գնալ Պարսկաստան: Բայց Եփրադիոսը հետապնդեց նրան, հասաւ նրան Այրարատեան զաւառում եւ կանգնեցրեց Արտաշատ քաղաքում:

Արդ, երբ Բուրդաքն իմացաւ Խոսրովի մահուան եւ այն իրամանի մասին, որ տրուեց Անակի տոհմն առհասարակ բնաջնջելու [Վերաբերեալ], շուտափոյք մտաւ Անակի կնոջ մօտ, որի անունը Ոգուի էր, եւ նրա գրկից առնելով մանուկ Գրիգորին՝ տուեց նրան իր կին Սովիին, որը դայեակութիւն առնելով՝ դաստիարակում էր մեր Լուսաւորչին:

Իսկ նրա [Գրիգորի] միւս եղբօրը, որի անունը Սուրէն էր, դայեակն առաւ տարաւ Պարսից արքայի պալատը: Եւ նա [արքան] նրան տուեց հօրը [Անակին] խոստացած պարզեւելերը, ինչպէս վերեւում ասացինք: Եւ նա դաստիարակուեց իր հօրաքրոջ մօտ, որը հեփրադների թագաւոր

¹⁴ Իմաս Կապուտկացիա, կամ Գամիրը, ինչպէս ունի Մովսէս Խորենացին (էջ 219):

Զաւանշերի՝ որբու կինն էր: Արդ՝ այս մանկան մասին, որ սուրբ Գրիգորի եղբայրն էր, դա ստոյգ ասում է Զենոր Ասորին¹³՝ իր Պատմութեան մէջ: Իսկ մանուկը մեծանալով եւ արքունքի հասնելով՝ մեծ զօրքով ապստամքած զնաց ճենաց եւ Դարդանիաց¹⁴ երկիրը եւ ինչ-որ դաւադրութեամբ խարեց իշխաններին: Եւ քաջարելով երկու երկրների վրայ՝ միասուց իր [իշխանութեան] ներքոյ քաջարութեամբ տիրելով ինը տարի:

Արդ՝ ոմանք Ասորիի կողմերում համբաւ են [տարածում] Յակոբ կոչուած Զօօնի մասին, թէ սա է Գրիգորի եղբայրը. բայց [այդ] ճիշտ չէ, որովհետեւ այս Յակոբը սուրբ Գրիգորի եօրաքրոջ որդին էր, եւ նրա մօր անոնք իսուրովուիի էր: Իսկ երբ նրա մայրը մեռաւ, քաջն ու քաջարութիւնը խլեցին նրա հայր Տիրանից, որին սպանեց Լիփնառիդէս¹⁵ արքան: Այս Յակոբն իր բոյր Սակոննիի եւ սրա որդի Հրաշէի հետ միասին զնաց Գրաց¹⁶ երկիրը, եւ այնտեղ որոշ տարիներ մնալուց յետոյ այդ երկրի մարդիկ քաջադրեցին Հրաշէին եւ քաջարը դարձրին իրենց վրայ: Սա էր, որ եկաւ Յունաց արքայի վրայ, որին բռնեց Տրդատը: Այսպիսի տեղեկութիւն են տալիս մտերիմ մարդիկ, որոնք իր ազգականներն ու գաւառակիցներն էին: Եւ այս է, որ դուք էլ շափազանց լաւ գիտէք մեր հայրենի գրուցադրութիւնների տեղեկութիւնների:

Դարձեալ էլի ուրիշ քան է հաւատացնում. «Իսկ երէ ստոյգ ուզում էք տեղեկանալ, ասում է, կարդացէք Քարդածան Ուոհայեցու¹⁷ Վերջին զույնը. նա շատ գեղեցիկ է տալիս այն խօսքը, որ միմեանց հետ խօսեցին Տրդատն ու Հրաշէ¹⁸ արքան»: «Բայց թէ Հրաշէին յետոյ ինչ արին՝ զգիտեմ», ասում է Պատմագիրը¹⁹:

ԿԱՅՍՐԵՐ

Թագաւորում է Կարոսը իր Կարինոս եւ Նոմերիանոս²⁰ որդիների հետ՝ երկու տարի, որոնց բուահամարը հոռմէական կայսրերի շարքի երեսունմէկերորդն է: Արանց օրօք Անատոլիոս Աղեքսանդրացին դարձաւ Ղետնդիսեցու²¹ եպիսկոպոս, որը փիլիսոփայական ուսմունքով փայլելով՝ յայտնի դարձաւ եւ հաստատեց շափի եւ հաշուի բուերը:

Դիոկղետիանոս կոռապաշտ ու անօրէն թագաւորը [տիրակալեց] քան տարի: Սա Յունաց քաջարութեամբ շարքում երեսուներկուերորդն էր: Սա թագաւորեցրեց Մեծ Հայքի Տրդատ արքային եւ եկեղեցիների դէմ սաս-²² Զենոր Գևակի մօտ այս անոնք Զուանշէր ծնուվ է:

²² Այստեղ բազրում՝ Հրաշեաց:

²³ Բնագրում՝ Կարենոս եւ Ոմերիանոս, բայց հմատ. գլ. ՀԶ եւ Փիլոն Տիրակացու մօտ:

տիկ հալածանք սանձազերծեց, որովհետեւ աղօթքի տաճարները կործանուեցին, կտակարանները հրապարակներում այրուեցին, տղամարդու կին նահատակներն անքի եղան եւ բազմաթի հայրապետներ մարտիրոսացան Աղեքսանդրէի եպիսկոպոս Պետրոսը, Թէոմացիս քաղաքի Փելիսա²⁴ [եպիսկոպոսը], Անքիմոս Նիկողիյանցին, Տէրկանոսը Փինիկէի ծարուացուց եկեղեցու²⁵, Մեծացուց [եկեղեցուց] Նուկիանոսը, Գազացուց [եկեղեցուց] Սուլիանոսը²⁶, Եզիապտացուց [եկեղեցուց] Պեղոսը²⁷, Սիլոսը եւ շատ ուրիշներ: Եւ սուրբ Հոդիսիմեանները հենց նոյն անօրէն Դիոկղետիանոսից փախուստի ղիմած եկան Հայաստան եւ Քրիստոսի համար մարտիրոսացան: Եւ նոյն ժամանակ Վիրապից դուրս եկաւ Քրիստոսի մեծ խոստովանող սուրբ Գրիգորը, որը դարձաւ Հայոց քարոզիչն ու լուսաւորող սուրբ աւագանի մկրտութեամբ եւ դրանից յետոյ ապրեց երեսուն տարի եւ հանգչեց ի Քրիստոս:

ԳԼՈՒԽ ԾՂ ՏՐԴԱՏԻ ՔԱԶԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԹԱԳԱՌՈՐԵԼՈՒՅՑ ԱՌԱՋ

Արդ՝ երբ հասաւ Տրդատի կողմից իր հայրենի թագաւորութեան գահը ժառանգելու ժամանակը, Գրաց թագաւորը զօրք համեց ընդէմ Յունաց թագաւոր Պոռորսի²⁸: Եւ [լուր] ուղարկեց Յունաց կայսր Պոռորսի մօտ, որպէսզի իրար հետ մենամարտեն, իսկ իրենց զօրքելով հանգիստ մնան: Իսկ Պոռորս արքան մեծ սարափով տազնապի մէջ ընկաւ, ինչպէս այն Սատուր Գողիարից²⁹, քանզի մենամարտի մէջ անզօր էր, եւ Գրաց թագաւորի ասածը պատմեց իր զօրքին: Իսկ այն Լիկիանէսը, որի մօտ էր Տրդատը, սիրտ տուեց թագաւորին եւ ասաց. «Այստեղ Հայոց թագաւորների ցեղից մի մարդ կայ, որի անոնք Տրդատ է, եւ այդ գործը նրա միջոցով գլուխ կը գայ»:

Եւ ինչպէս այնտեղ Դաւիթի մասին Սատուրի մօտ ասացին, թէ կը յաղրի Գողիարին³⁰, եւ կամ ինչպէս ինքը՝ [Դաւիթն] իր մասին [ասաց] առխւծներին ու արջերին սատկացնելու առիթով, եւ Սատուրն [այդ] խօսքերի վրայ սիրտ առաւ՝ Դաւիթն պարգևեներ խոստանալով, ու իրամայեց վառապաններ³¹ հազգնել նրան եւ այլ զինահանդերձ [ու] սաղաւարտներ, այդպէս էլ արեց կայսրը Տրդատի համար: [Եւ] ինչպէս այնտեղ Աստծոյ խօսքը պահուած էր Դաւիթի ողորկ քարի մէջ, նոյնպէս էլ այստեղ՝ Տրդատի մօտ: Թէպէտեն դեռ Աստծոյ] Բանին [Քրիստոսին] չէր հաւատացել

[Տրդատը] եւ չեր բնիքնել, սակայն պատրաստուած նշանակուած էր, որ ապագայում լինելու էր [եւ որ] յաղթելու [էր] անձարմին Գողյարին:

Ապա մեծազօր Տրդատին հազցրին կայսեր կերպարանքով. իսկ Լիկիանէսը կայսրին պատմեց Տրդատի բոլոր քաջագործութիւնների մասին գործի ողջ բազմութեան առջեւ: Եւ նախ ասաց փակուած դրսերի բացման եւ գործերին յաղթելու, եւ ծիերին [տուած] դարմանի մասին, որ բարբարոց պարսպից բարձր զցում էր այս կողմը. [այդպէս] եւ էշերին, եւ այլ բաներ: [Պատմեց] նաեւ այլ գործերի մասին, որ ըմբշամարտերում էին եղել. ձիավարութիւնների եւ այլ տեղերում նրա կողմից կատարուած գործերի: Դրանից յետոյ, երբ կայսրն այս լսեց, իրամայեց քերել Տրդատին: Երբ եկա, նրան ամենը պատմեց, ապա այնուհետեւ մենամարտի ժամ նշանակեց: Իսկ երբ ժամը հասաւ, կայսրը իրամայեց, որ Տրդատին զարդարեն կայսեր տեսրով: Եւ նա վերցնելով բազատրի գործը փողի հնչինների տակ առաջ ընթացաւ ընդդմ թշնամու: Եւ երբ Տրդատն ու Գրաց բազատրը հանդիպեցին, մտրակելով ձիերը եւ ուժգին գոչումով յարձակուեցին իրար վրայ: Քաջ Տրդատը յաղթեց ու փախուստի մատնեց բազատրին, եւ հասնելով [յետեւից]՝ կապեց ձեռքերը եւ քերեց կանգնեցրեց կայսեր առջեւ: Այնժամ կայսրը մեծարեց Տրդատին անշափ պարգևներով, եւ բագ դնելով նրա զիկիմ՝ զարդարեց արքայական ծիրանիու: Եւ շատ գործեր յանձնելով նրան [Տրդատին] ուղարկեց իր երկիրը: Սա եր Հրաշէ¹ բազատրը, որի մասին ասացինք:

Արդ երբ Տրդատը մեծ ցնծութեամբ եկա, այստեղ Պարսից բազմաքի գործեր տեսաւ. որից յետոյ քաջաբար հարուածելով՝ խսպատ փախուստի մատնեց մինչեւ Պարսից երկիրը: Եւ այդ արեց երկար ժամանակ՝ վրեժխնդիր լինելով նրանց կողմից արուածների համար: Եւ նա իր բազատրութիւնը ամբողջապէս իրեն ենթարկեց՝ բոլորի վրայ տիրանալով:

ԳԼՈՒԽ ԾԹ

ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ ՄԵԾԻ ՄԱՍԻՆ

Թագատրում է Կոստանդիանոսը, որը կայսրերի շարքում երեսուներեքրդին էր՝ երեսունչորս տարի: Սա իր ծնողներից անուանուել էր Կոստանդիանոս, իսկ իր գործերից կոչուեց Մերաստոս: Եւ հաւատաց Աստծուն եւ նրա Բանին Միածին Որդուն, եւ կենդանարար Ամենասուրբ Հո-

¹ Այստեղ ես բնագրում Հրաշեայ:

գուն: Եւ պատերազմելով անօրէն թագաւորների դէմ՝ սպանեց նրանց՝ Մարսիմիանոսին, Մարսինդէսին¹⁸² եւ Լիկիանէսին: Պատմում է եւ այն, ինչ որ [եղաւ] սրանից յետոյ, մինչեւ պատերազմ տալն ընդդմ Կոստանդիանոսի թշնամիների: Որից յետոյ իրամայում է իր գործերին Քրիստոսի խաչի նշանը դրոշմել պատառանի վրայ, որպէսզի [մշտապէս] խաչը բռնի իր աջ ձեռում: Եւ մտնելով Հոռո՞ իրամայեց աշքի լնկնող բոլոր տեղերում կանգնեցնել Քրիստոսի խաչի յաղթութեան նշանը, ինչպէս որ յայտնում է Պատմագիրը²:

Սա հալածեց հերձուածողներին, որ նրա ժամանակ այնտեղ գլուխ բարձրացրին՝ Արիոսին եւ նրա այլ համախոհներին, Նաւատիանոսին, Արտերտոսին եւ Նոմերիոսին: Սրա ժամանակ եղաւ Բիրանացւոց մայրաքաղաք Նիկիայի ժողովը¹⁸³, եւ Արիոսը նորուեց երեք հարիւր տասնութ Շեպիսկոպոսներից: Սա [կայսրը] Հոռո՞ իրամայութիւնը տեղափոխեց Բիրանաղլուն, որն այժմ կոչում է Կոստանդինուպոլիս:

ԳԼՈՒԽ Կ

ԱՆԱԿԻ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ
ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ, ՈՒԽՍԱՆ ՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՒ ԱՅՆ ԱՂԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՍՍԻ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՈՒ
ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻՆ ԽՈՍՐՈՎՔ ԶՈՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Երբ նրանց անխնայ սպանեցին ըստ արժանույն այս գործի, որ Անակը կատարեց Խոսրովի նկատմամբ եւ հայերի համար խաւար արեց, որով նաեւ իմքը խաւարեց, արդ՝ ազգատոհմի եւ լուստանիքի ոչնչացումից յետոյ դայեակներն առան մանուկ Գրիգորին [եւ] փախսան Յունաց երկիրը: Եւ [Գրիգորը] զնաց, բնակուեց Կեսարացւոց երկրում, որ մի անգամ ասացինք: Եւ այնտեղ դաստիարակուեց եւ ուսում առաւ Քրիստոսի երկիրածների քրիստոնեաներին] ձեռորվ: Եւ դա մեր փրկութեան համար անհասնելի խորհուրդ էր, որով այդպիսին եղաւ նրա ճանապարհը եւ դէպի մեզ մեր կեանքի լոյսի մուտքի դուռը պատրաստելը, որ նրան դաստիարակին եւ հաւատով ընծայէին Քրիստոսին:

Իսկ նա Գրիգորը արքունիքի հասնելով՝ ամուսնանում է եւ որդիներ սերում: Երեք տարի յետոյ, [երբ] երկու որդի էին ծնուել, [ամուսինների] երկուստեր կամքով [Գրիգորը] կնոջից բաժանում, զնում է Տրդատի մօտ,

¹ Այս դեպում Ռիխտանէսը նկատի ունի Փիլոն Տիրակացուն [իմմտ. ԱՀ, հու. Ե, էջ 976]:

որը դեռ հռոմէացիների երկրում էր: Եւ [արդէն] տեղեակ ու հմուտ էր Աստծոյ պատուիրանին եւ յոյժ վերահասու քրիստոնէական զրականութեանը (եւ իր [ողջ] կեանքում [նա] լնքացաւ Տիրոց պատուիրաններով, ուղղ վարքով եւ ճշմարիտ առաքինութեամբ): Իսկ երբ իր դայեակներից ստոյգ կերպով լսեց եւ տեղեկացաւ իր հայրերի [չար] գործի մասին, թէ ինչո՞ւ, կամ ինչպէ՞ս, եւ կամ ո՞ր կերպ էր դա եղել, ելաւ, զնաց Տրդատի մօտ, ինչպէս ասացինք: Բայց իրեն քարցնելով՝ չէր բացայայտում, թէ ով է կամ որ տեղից է [ինքը] մինչեւ իր շարչարանքների ժամանակը: Եւ [միայն յետոյ] Տաճատ անունով մի նախարար այդ բանը իմացրեց [քագաւորին], թէ՝ «Սա որդին է մահապարտ Անակի, որն սպանեց քո հայր Խոսրովին»: Իսկ նա իրեն քարուն էր պահում, ինչպէս վերեւում ասացինք, միայն իրեն տալիս էր Տրդատին ծառայելուն, եւ նրա հետ եկաւ Հայոց երկիրը:

Ապա Տրդատն իր քագաւորութեան առաջին տարում գնաց Եկեղեց գաւառի Երիզայ¹⁴ գլուղը՝ Անահիտի [կուորին] զոհ մատուցելու: Իսկ երբ զոհերի [մատուցեցին], ինքը եւ խրայինները, որ նրա հետ էին, եկան դադար առան Գայլ գետի ափին: Եւ նախարարների խրախճանքի ժամանակ Տրդատը իրամայեց Գրիգորին Անահիտին զոհ մատուցել: Եւ նա յանձն շառաւ դա, այլ ասաց. «Իմ Տիրոջը զոհեր եւ օրինութեան նույները կը մատուցեմ երկրագործեամբ հանդերձ, որովհետեւ նա է միայն Աստուած, եւ ուրիշը չկայ: Եւ նա է Արարիչը բոլոր արարածների, երկնքի ու երկրի, իրեշտակների եւ մարդկանց, եւ բոլոր նրանց, ովքեր երեւում են կամ չեն երեւում: Եւ [նա] է Տէրն ամենայնի, նրան է պէտք մատուցել պատի եւ երկրագործին եւ փառը՝ յախտեանս յախտենից. ամէ՞ն»:

Եւ երբ քագաւորն այս լսեց, այնուհետեւ հարց ու փորձ արեց, եւ շատ քաների մասին սկսեցին խօսել միմեանց հետ: Բայց երբ չկարողացաւ աղաչական խօսքերով կամ սպանալիքներով յետ կանգնեցնել [նրան], ապա այնուհետեւ իրամայեց շարչարել [նև] տաճչն սուրբ Գրիգորիոսին քազմարի ու տեսակ-տեսակ տաճանքներով ու կտուանքներով. եւ մարդկանցից կամ սրբերից ոչ ոք այդքան շարչարանք չէր կրել, ինչպէս նա, որի մասին փորբիշատէ կը պատմեմ մի այլ տեղում:

ԳԼՈՒԽ ԿԱ ԶԱՌԱԾՈՒՆԻ ՍԱՍԻՆ

Սենք մոռացանք յիշտակել քառասուն սրբերի նահատակութիւնը, որ կատարուեց անօրէն Լիկիանէսի¹⁵ կողմից, որի [Վրէժը] պահանջեց ե-

րանեկի սուրբ քազաւոր Կոստանդիանոսը Մաքսիմիլյանոսից, Մաքսիմիլյանոսից, Մաքսիմոսից եւ անօրէն Լիկիանէսից: Սա հալածանքներ հարուցեց Եկեղեցիների դէմ եւ հրամայեց հրովարտակ ուղարկել իր իշխանութեան բալոր գաւառները: Եւ մի ոմն հարիւրապետ իր գնդի հետ դրս եկաւ այն գաւառը, որ կոչում է Կապուտակէր¹⁶, եւ ժեւլախունէր թեմը, եւ Անատավիկէր, Խարտանայր, Արմենիլիակը եւ Դագիմոն [քեմերը], որպէսզի քրիստոնեաններից ում գտնեն՝ կամ նրանք կուռքերին պաշտամունք մատուցեն, եւ կամ տաճանքով սպանուեն: Հայատացեալները իրազեկ լինելով այդ անարժան հրամաններիմ իրաքանչիրն [իր] գաւառից դրս եկաւ, դիմեց օտար տեղեր՝ քարնուելու որեւէ քարստեան վայրում: Եւ եկան հասան Սեբաստիայի¹⁷ սահմաններն ու գնացին ըստ իրաքանչիրի յարմարութեան՝ ոմանք Սելէսիտն, որն ամրոց է եւ լեռնակողմ, իսկ ուրիշները՝ Տախալասուն, որ նոյնպէս լեռ է եւ իշնում է Տեկնոցի¹⁸ կողմնը. սրանք անվտանգ ու առաւել հեռու տեղեր են եւ ամրոցներ:

Իսկ այն հարիւրապետը, որի մասին ասացինք, իր գնդով հետապնդելով՝ գալիս հասնում է նրանց իրաքանչիրի ամլացում: Եւ զինուրներին բաժանելով [խմբերի]՝ հրամայում է նրանց [քրիստոնեաններին] ընտրելու այս երկուսից մէկը, որը կամենում են՝ կամ համաձայնել Լիկիանէսի հրամանին եւ խաղաղութեամբ վերադանալ իրաքանչիրն [իր] տեղը, եւ կամ տաճանքներով մեռնել: Ապա երբ չինազանդրուեցին անօրէն հրամաններին, շատերին սրահարելով կոտորեցին, իսկ միւսները փախուստի դիմելով՝ ազատուեցին նրանց ձեռքից: Իսկ հալածանքներից յետոյ շատ Եկեղեցիներ շինեցին սպանուածների տեղում, որն այժմ կոչում է Եկեղեցածոր: Եւ այս պատճառով նրանց նահատակութեան վայրերը յարգում ու փառաւորում են երկրի բնակինների կողմից:

Իսկ սուրբ քառասունքը [զինուրներից] չկատարեցին Լիկիանէսի անօրէն հրամանը հայատացեալների սպանութեան վերաբերեալ եւ ոչ էլ հաղորդակցուեցին անարժան սպանողների հետ, այլ հրաժարուելով նրանցից՝ գնացին, բնակուեցին մի քարայրում, [այն] գետի ափին, որ կոչում է Ալիս¹⁹, մի ամրոցի տեղում (որովհետեւ այն ժամանակ այդ վայրն ամայի էր, իսկ այժմ չէն է), որ կոչում է Քաջ-Վահան: [Եւ] դեռեւս սրբերի կացարանների տեղերը տակավին կան [այնտեղ], եւ իրաքանչիրի անոնք գրուած է սալաքարերի վրայ, եւ խաչի յաղթական նշանը դրոշմուած է նոյն քարարձանների վրայ: Եւ այժմ էլ նրանց բնակութեան տեղերը պատուի են արժանանում Եկեղեցիների ու կրոնաւորների կողմից:

¹⁴ Տապարում Տիրկոնց է, բայց ձեռագրում Տեկմոց:

¹⁵ Իմաց Կապաղովկիան կամ մի թեմ այլ երկրում:

Բայց հարիրապետը շգտաւ նրանց բնակութեան վայրն ու զնաց, Լիկիանէսին պատմեց արածն ու եղածը, միաժամանակ նաև քառասունի դարձը եւ հարիրապետի հրամանին չենթարկուելը: Բայց յետոյ զնացին, պատմեցին Լիկիանէսին սրբերի մասին եւ նկարագրեցին նրանց բնակութեան տեղը: Եւ նա հրամայեց դրսին ու դատաւորին, որ Սերաստիա քաղաքում էին, որ որոնեն քառասունին, գտնեն ու տանջանքների ենթարկեն, որպէսզի կա՞ն ենթարկուեն կուրքերին պաշտելու նրա անարժան հրամաններին, եւ կա՞ն մեռնեն տանջանքով: Պատուիրակները զնացին գտան նրանց այն տեղում, որի մասին վերեւում ասացինք, եւ առան զնացին Սերաստիա քաղաքը: Եւ այն օրը, երբ նրանց հանեցին իրենց բնակատեղից, Արեգ ամսի¹ տասնինքն էր, որը մենք ոչ թէ բերեւորէն, այլ ստոյգ բննարկեցինք ուսմոնքի գիտակներից ումանց հետ, որոնք մարդասէր ու աստուածատրներ էին: Եւ [լոկ] այդ պատճառով մենք այդ օրը նշանակեցինք Քառասուն սրբերի տօն եւ կարգադրեցինք մեր թեմականներին¹⁸⁸: Տարեցտարի անխափան տօնելու ի փառս Աստծոյ:

Արդ՝ ինչպէս ասացինք, ստոյգ քննելով՝ մենք գտանք նրանց շարչարանքների սկիզբը՝ այն օրը, որ տօն նշանակեցինք: Իսկ նրանց նահատակութեան աւարտը եղաւ Սարտի իննին, [որը] նշանակուել էր սուրբ հայրերի կողմից, որը տօնել ենք եւ տօնում ենք մշտապէս բոլոր ուղղափառ եկեղեցների հետ միասին: Արդ՝ նրանց գովարանում է նաև երանելի Բարսեղն իր Պատմութեան մէջ, եւ ասուն է. «Ո՞վ վերահասու կը լինի սրանց պատուին, որը ոչ միայն մի լեզու, այլեւ քառասուն լեզու բաւական չի լինի այդ մարդկանց այշափ առաքինութինը օրինելու եւ գովարանելու համար: Որովհետեւ մենք ոչ թէ մի նահատակի վրայ ենք սրանչանում, եւ ոչ էլ երկուսի, եւ ոչ էլ տասնեակի չափ նահատակի, այլ քառասուն մարդու, որոնք մի հոգու պէս միաբանուելով իրար հետ՝ նահատակութեցին Քրիստոսի փառքի համար, որին՝ յալիտեանս փառք. ամէ՞ն»:

Բայց մենք վերադառնանք մեր շարադրանքին եւ առժամանակ [կիսատ] քողած տեղին, որ խոստացանք պատմել:

ԳԼՈՒԽ ԿԲ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ենձ Հայքի արքայ Տրդատի առաջին տարում եղաւ սուրբ Գրիգորի շարչարանքների սկիզբը Եկեղեաց գաւառի Երիգայ գիտում Անահատ-

[†] Հայոց շարժական տոմարի ութերորդ ամիսը:

կան մեհեաններում: Եւ թագաւորը Գրիգորին հրամայեց պսակներ ու ծառերի ծիստեր նուիրաբերել [Անահիտի] բազինին: Եթր նա յանձն չառա, այնժամ թագաւորը շատ բաների մասին սկսեց խօսել Գրիգորի հետ՝ եւ իր մօտ նրա զալու, եւ նրա նկատմամբ իր երախտիքի մասին: Սակայն չկարողացաւ համոզել նրան, ապա այնուհետեւ հրամայեց տանջել: Եւ նախ սկսեցին ձեռքերը կապել յետեւում ու ծեծել բերնակապը բերանում: Իսկ թագաւորի հրամանը խստանում էր, բայց նա աւելի ու աւելի էր զօրանում եւ ուրախութեամբ էր ընդունում շարչարանքները:

Ապա նրա ողի վրայ կախսեցին աղակոչու² եւ ճնշամերենայ կապեցին նրա կրծքին ու պարաների կրծքի ճնշամերենայից, եւ պատի ճախարակներով բարձրացրին ապարանքի բարձր տանիքը²: Դրանից յետոյ գլխիվայր մի ոտքից կախսեցին եւ մխախառ ծովս [դրին] նրա տակ, դալար ճիպուտերով տասը մարդու միջոցով սաստիկ ծեծեցին: Այդ տեւեց եօթ օր: Ապա կոճեր սարքեցին, ամեն ոտքին մի հատ կապեցին ու ոտքի խտուցների ոլորներին եւ ոտքերի ներբաններին երկարեայ մեխսեր վարսեցին: Ճեռքից բռնած այստեղ-այնտեղ, այս կողմ, այն կողմ էին քայլեցնում, մինչեւ որ արիսնը հոսում, իջնում եւ ոռոգում էր գետինը: Կոռովիով գլխին անասելի հարուած հասցնելուց յետոյ նրա գլուխը դրին հիսնին մածլիչի մէջ, եղեգի խողովակ հազցրին նրա քքանցքներին եւ աղ, բորակ ու քացախ լցրեցին ներսը: Դրանից յետոյ մոխիրը լցրեցին ոչխարենու պարկի մէջ ու կապեցին նրա վզից: Այդպէս մնաց վեց օր: Դրանից յետոյ ակափոկերով ամրակապեցին նրա ոտքերն ու գլխիվայր կախսեցին եւ նատաւեղում ծագար անցկացրին, տիկով ջուր լցրեցին նրա որովայնը: Ապա երկարէ թերիշներով թերեցին կողերը, մինչեւ որ սրբի արինով ոռոգեցին [այս] փայրերը: Տատակափուշը տարածում էին գետնին, սուրբ Գրիգորիխում մերկացնում, զցում էին տատակի վրայ եւ քարշ տալիս մինչեւ երանելու ամբողջ մարմինը ծակուտում էր. եւ հենց այլուել քաղեցին [տատակի] տակ եւ դարձեալ քարշ տուեցին այնքան, մինչեւ որ ողջ տեղ չմնաց: Ապա սրանից յետոյ երկարեայ պնակներ հազցրին նրա ծնկներին, մնծ կոաններով ծեծեցին եւ բարձրացրին կախաղան, մինչեւ որ նրա ծնկները կախաղանի վրայ մասնատուեն. եւ այդ տեւեց երեք օր: Ապա երկարեայ պրտուկով կապար հալեցին եւ լցրին նրա մարմնի վրայ, մինչեւ որ այրուի, խորովուի երանելու մարմինը: Իսկ երանելին շարչարանքների մէջ միջոց առ միջոց Աստծուն աղօքք էր մատուցում:

[†] Տապագում՝ շառակի, փոխանակ՝ շառաշիք, այսինքն՝ աղակոչ:

[‡] Ուխտանշը մեծ մասամբ բայերն անորոշով է ողձ՝ նկատել տալով, որ պատիմներն արքայի հրամաններով էին կիրառում: Մենք դիմաւոր բայեր ենք օգտագործում:

Այս այս բոլոր անտանելի տաճանքներից յետոյ, մօտեցաւ նախարարներից Տաճառ անունով մէկը, որի մասին վերևում ասացինք, [որը] Յուղայի Նման մատնիչ եղաւ եւ ասաց արքային, թէ՝ «Դա չպէտք է ապրի, որովհետեւ դա Վիթապարտի որդի է՝ որդին [է] Անակի, որն սպանեց քո հայր Խոսրովին»: Իսկ երբ քաջարուն այս լսեց եւ ստոյց տեղեկացաւ, ապա հրամայեց կապանքների մէջ տեղափոխիսլ¹⁸⁹ Այրարատեան գաւառ¹⁹⁰ եւ տանել նրան Դնեակ թերող ու իշեցնել Վիրապը, որը խորութեամբ անասելի էր, խաւար ու խոնաւ, բունաւոր օձերի մէջ, որ շեղ-շեղ կուտակում էին նրա մարմնի վրայ: Եւ դրանց ներգործութիւնից, շոգից ու գոլորշիներից թիսացել էր նրա մարմնը եւ սեւացել ածխի նման: Եւ այս տեեց տաճնինգ տարի: Բայց Գրիգորին կերակրում էր՝ [Երազում] հրեշտակից սպաննալիք [ստանալով] մի կին, որ բնակում էր Վիրապին մօտիկ, որովհետեւ, ասում է, օրական մի փոքրիկ նկանակ հաց էր պատրաստում եւ տանում զցում էր Վիրապը: Իսկ երանելին չէր դադարում օձերի մէջ աղօթել: Արդ՝ ինչպէս ասուեց, այդքան անտանելին եւ շատ շարշարանքներ կրեց երանելի Գրիգորը, բայց մէկ-մէկ էլ քաջարորը հանգիստ էր բողնում հարցաքննութիւնից, որպէսզի գուցէ զոջայ ու դարձի զայ: Իսկ նա աւելի ու աւելի էր ամրապնդում հաւատքի մէջ եւ շարշարանքների միջեւ բազում աղօթքներ էր անում՝ իր խօսքը մեկնարաններով: Իսկ ատենադպիրներն ամեն բան արձանագրում էին նշանագրերով:

Արդ՝ նկանակի մասին մի փոքր ասուեց, իսկ զրի մասին մենք լսել ենք աւանդութիւնից, թէ Վիրապի խորքից յատակին կարելով թիշ-թիշ զոյր էր հաւարում որոշ օրերի ընթացքում, եւ դրանից կարօտանքով հովանում էր: Թէպէտե այս կինը նկանակից յետոյ զոյր էլ էր տալիս: Այդպէս օձերի հետ ապրեց ու կերակրուեց եւ կաթիլից ըմպեց: Մարդու համար անհնար է անգամ հայեացքով մօտենալ օձին, բայց նա քաղուած էր օձերի այնքան բազմութեան մէջ, ինչպէս որ հենց ինըն է վկայում: Եւ այդպէս Վիրապում այնքան տարի ու ժամանակ մնաց ու համբերեց Ջրիստոսի կենդանի նահատակ սուրբ Գրիգորը, մինչեւ որ հրաման եկաւ նրան Տիրոջից ելնել եւ լուսաւորել մեր երկիրը [մկրտման] ջրով եւ [Սուրբ] Հոգով:

ԳԼՈՒԽ ԿՊ ՏՐԴԱՏԻ ՍԱՍԻՆ

Իր հօր սպանութիւնից եւ Հայաստան անիշխանութեան մէջ քասեօք տարի մնալուց յետոյ հայերի վրայ քաջարում է Խոսրովի որդի Տր-

դատը: Սա Հայոց թագաւորների թում տաճնինգերորդն էր: Արա առաջին տարում սկսուեցին սուրբ Գրիգորի չարչարանքները: Եւ տաճնիրսերորդ տարում Ջրիստոսի սուրբ նահատակներ Հոփիսիմեանները եկան Հայաստան, եւ տաճնինգերորդ տարում [եղաւ] նրանց մարտիրոսաննալը: Եւ նոյն տարում սուրբ Գրիգորը դրւուս եկաւ Վիրապից ու դարձաւ հայերի լուսաւորիչը: Եւ Աղամից մինչեւ Տրդատի տաճնինգերորդ տարին բոլոր տարիների գումարը կազմում է իննա հազար ութ հարիր տարի:

ԳԼՈՒԽ ԿՊ

ՍՈՒՐԲ ՀՈՒՓՍԻՄԵԱՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Հոռմէացիների կայար Դիոկետիանոսի թագաւորելուց յետոյ երանելի Հոփիսիմեանները Հոռմէացոց երկրից դրւուս եկան եւ հալածանքների պատճառով ճանապարի ընկան, եկան Հայոց երկիրը. եւ երբ գալիս էին, սրբերը հասան [նաեւ] Նիկոլայի¹⁹¹ քաղաքը, որտեղ քաջ Տրդատը խոտի բարդոցներով բարձած էշերին ներսից պարապի վրայով դրւուս էր շարտեր:

Իսկ երանելի Հոփիսիմեն թագաւորազն կամ թէ [իշենց] թագաւորի դուստրի լինելով եւ լսելով սուրբ Պետրոս եւ Պօղոս առաքեալների քարոզութիւնը եւ [ընկալերով] հաւատքն ի Ջրիստոս՝ զնացել բնակուել էր Հոռմ քաղաքի մօտ մի մենանցում իր դայեակ Գայիանէի եւ քազմաքի ուրիշ ընկերների հետ, որոնց հետ միասին [էլ] եկան Հայոց երկիրը: Իսկ երբ անօրէն Դիոկետիանոսի հալածանքը հասաւ նրանց, Հոռմից գալունի դրւուս եկան, հասան Հայոց երկիրը՝ Այրարատեան գաւառը եւ բնակուեցին Դուինի մօտ, որ հայոց քաղաք է: Եւ պատմազիրն ասում է, թէ նրանք եղել են աւելի քան եօրանասուն հոգի: Եւ այդ եւս Ջրիստոսի սիրուց եղաւ, [որ] այդքան հեռու երկրներ կտրելով անցնելով՝ Հոռմից եկան Հայաստան. [իսկ] Հոռմից մինչեւ Դուին իինգ հազար եւ հարիր մղոն է, իսկ մղոնը եօր ասպարեց¹⁹² է:

Ապա անօրէն Դիոկետիանոսը տեղեկութիւն է տալիս մեր երկիրը նրանց գալու մասին [եւ] Հայոց թագաւոր Տրդատին հրովարտակ է ուղարկում, որն ուներ հետեւեալ բովանդակութիւնը. «Ձեզ մօտ են եկել, ասում էր, մեր երկրից ինչ-որ կանայք, որոնց զիսաւորներից մէկին՝ Հոփիսիմ անունով, կամենում էր ի ինձ կին առնել: Արդ՝ կը տեսնես, եղքայր, երբ կը գտնես քո երկրում, ինձ մօտ կ'ուղարկես: Իսկ երէ քո աշքին

¹⁹¹ Մէկ ասպարեզը 125 քայլ է:

համելի քուայ, ապա կարող են նրան քեզ կին առնել»:

Իսկ երբ Տրդատ թագաւորը փնտրեց եւ գտա, չկարողացաւ իր կամքին բերել երանելի սուրբ օրիորդ Հոփախմէին, քանզի Ծրիատոսով էր զօրացած: Եւ նա թագաւորական տոհմից էր, ինչպէս այս զիսի սկզբում ասացինք, եւ կամենում էր երկնային թագաւոր Ծրիատոսին հարսնանալ եւ ընտանի ու արինակից լինել: [Նա] պահեց իր ճշմարիտ կուսութիւնը, որտեղին ծշմարիտ կուսութիւնը ազգակցութիւն ունի հրեշտակների հետ, այդ պատճառով չինազննուեց երկրային թագաւոր Տրդատին: Այդ պատճառով չարչարուեց ու դարձաւ Ծրիատոսի նահատակ եւ սուրբ Գրիգորից յետոյ Հայոց աշխարհի լուսաւորութեան պատճառ եղաւ իր երեսուներեք այլ ընկերներով: Իսկ նրանցից միաները ճանապարհին թագաւորութեան գնացին Վարագ լեռը, որոնք էին [...]՝ Տոսպ¹⁹² գաւառում:

Արդ՝ չարչարուեց այն չքնաղագեղը եւ մեր փրկութեան պատճառը՝ իր բոլոր ընկերներով հանդերձ, եւ մեռաւ Ծրիատոսի համար: Եւ դրանից յետոյ հենց սուրբ Գրիգորը եղաւ Լուսաւորիչ իր կենդանի նահատակութեամբ՝ Վիրապից դուրս գալով նրանց նահատակութիւնից քիչ օրեր անց: Որովհետեւ նա [Գրիգորը] նրանց մահուան արդիւնքն էր, իսկ նրանք նրա աղօքների պտուղներն էին, որ նա անում էր Խոր Վիրապում թունաւոր օճերի մէջ:

ԳԼՈՒԽ ԿԵ

ԱՅՆ ՀԱՐՈՒԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏՐԴԱՏԻՆ ՀԱՍԱՆ ՏԻՐՈՂԻՑ

Արդ՝ երբ քաջ Տրդատը թագ առաւ Հոռմէացոց երկուում եւ եկաւ Հայոց երկրի վրայ թագաւորեց իր հօր սպանութիւնից ու Հայաստանում քանեօթ տարիի¹⁹³ անիշխանութիւն լինելուց յետոյ, [նա] Հայոց թագաւորների շարքի տասնինգերորդն էր՝ սկսած Վաղարշակից մինչեւ ինքը: Սա իր թագաւորութեան առաջին տարում չարչարեց սուրբ Գրիգորին. [նրա] տասնչորսերորդ տարում Ծրիատոսի սուրբ նահատակ Հոփախմէանները Հոռմից Հայաստան եկան: Տասնինգերորդ տարում [նա] չարչարանքներով սպանեց նրանց. եւ նոյն տարին սուրբ Գրիգորը դուրս եղաւ Վիրապից ու դարձաւ հայերի Լուսաւորիչը: Եւ Աղամից մինչեւ Տրդատի տասնինգերորդ տարին կազմում է ինձ հազար ուր հարիւտ տարի:

¹⁹¹ Այստեղ բնագրում պակաս (կամ աղաւաղում) կայ, որը նշել ենք թագմակէտով (որ էին արս [...] Տոսպ գաւառի):

Եւ ապա սուրբ Հոփախմէանների չարչարանքներից յետոյ Տրդատը նստում է իր կառքը՝ կամենալով քաղաքարբնից լուրս գալ: Եւ անմիջապէս Տիրոջ պատիժը նրան հասնելով՝ կառքից վայր գցեց, եւ նա սկսեց մոլեզնել եւ ուտել իր մարմինը. Եւ ուրիշ շատ հարուածներ [հասան], ինչպէս ասում է Պատմագիրը¹⁹⁴: Նաեւ նախարարների մասին է ասում, որ նոյն հարուածներով մոլեզնեցին դեւերի կողմից, եւ առհասարակ տղամարդիկ ու կանայք եւ լըդիանքապէս ամեն տարիքի [մարդիկ] սարսափի մէջ ընկան: Ապա Խոսրովիլուստը՝ թագաւորի քոյրը, երազ է տեսնում, եւ [տեսիլըն] ասում է, թէ Տրդատ թագաւորին [ու] նրա նախարարներին հասած հարուածներից շկայ [այլ] թժկութիւն:

ԳԼՈՒԽ ԿԶ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԵԼՆԵԼԸ ՎԻՐԱՊԻՑ

Եւ ուղարկեցին Օտայ անունով մի նախարարի, եւ նա գնաց, հանեց [Գրիգորին Վիրապից], եւ առա բերեց թագաւորի մօտ մեծ ուրախութեամբ: Եւ թագաւորը նախարարների հետ միասին ընդառաջ եղաւ, եւ նա իին օր պահեց ամբողջ թագմութեանը առանց կերակուրի՝ միայն ունկնդրելով նրա վարդապետութեանը: Եւ [ապա] սրափուելով ճանաչեցին նրան և իրենք իրենց: Եւ դրանից յետոյ սահմանեցին՝ ամեն [տարի] կատարել Առաջաւոր պահը¹⁹⁵, որը նաեւ Հոռմում Սեղբեստրոսը Կոստանդիանոս թագաւորի հետ միասին համաձայնեց պահել, նաեւ՝ ամբողջ Եգիպտոսը: Եւ սա հիմա էլ Առաջաւորը ենք կոչում: Եւ երբ լրացան նաեւ միւս պահը վարսունինգ օրերը, վայրենիական մորթին թափուեց թագաւորի վրայից, եւ նրա դիւարնակ միտքն [ու հոգին] բուժուեցին: Բայց մենք վերադառնանք նոյն շարադրանքիմ:

Ապա [Գրիգորը] մօտենալով գտաւ սուրբ Հոփախմէանների նշխարները, եւ հաւաքելով դրանք՝ խրաքանչիւրն իր գերեզմանը տեղափոխեց: Իսկ ինքը մարդկանց ամբողջ թագմութեանը վարդապետեց վարսունինգ օր, ինչպէս ասում է [Պատմագիրը]¹⁹⁶: Նրանց ուսուցանեց՝ սկսելով աստուածութեան անսկիզբ եւրինից եւ երկնքի ու արարչագործութիւնից¹⁹⁷, եւ Աղամից սկսելով՝ մինչեւ Աստծոյ Բանի [Ծրիատոսի] նարմին առնելը՝ օրինակ ու համեմատութիւն բերելով նախահայրերից, նահա-

¹⁹³ Այս Պատմագիրն Ագարանգեղոսն է (տես էջ 113-114):

¹⁹⁴ Այսինքն՝ Լուսաւորիչ հաստատած առաջին, սկզբնական պահը:

¹⁹⁵ Իմա՞ Ագարանգեղոսը:

պետներից ու մարգարեներից, մինչեւ Քրիստոսի ծնունդը [սուրբ] Կոյսից, թշպատուելը, եւ տաճարին լոնջայուելը, եւ մկրտուելը, եւ աստուածապէս օրինադրուելը, եւ աստուածային մարմնով քարկոծուելը, եւ մատնուելը, եւ խաչի վրայ բենուելը, եւ մեռնելը, եւ քաղուելը, եւ Յարութիւնը, եւ համբառնալը, եւ միւս անզամ մարմնատրուած Գալուստը, եւ դատաստանը, եւ հատուցումը:

Սրանից յետոյ [Գրիգորը] ձեռնադրուեց եւ ընդունեց հայրապետութեան աստիճանը՝ նրան երեւացած երազի շնորհի իրեշտակի երեւալոց յետոյ. եւ դա եղաւ արքային մի փոքր ընդդիմանալու պատճառով: Եւ ապա այնուեւտեւ ձեռնարկեց իրեն աշակերտ դարձածների մկրտութեանը եւ լուսաւորեց [նրանց սուրբ] աւազանի լուսցման միջոցով: Նաեւ կործանեց բոլոր կոտրերի քաջինները, որտեղ որ նրանց հասնում էր, [եւ] ամեն- ուրեք՝ քազարի հետ միասին:

ԳԼՈՒԽ ԿԷ ՏՐԴԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼԸ

Իսկ ապա երբ Տրդատը Հայաստան եկաւ, իր քազարութեան սկզբում, երբ քազարեց հոռմեացիների կայսր Դիոկղետիանոսի երարդ տարում, իրեն կին առաւ Աշխինդարի¹⁹⁵ դուստր Աշխւենին, որից սերուեց Խոսրովը՝ ծնուած իր [ծնունների] հասակին ոչ համեմատ¹⁹⁶: Եւ այդ օրերին տեղի ունեցաւ Կոստանդիանոսի հարսանիքը, որն իրեն կին առաւ Դիոկղետիանոսի դուստր Մաքսիմիանէին: Այդ ժամանակ էլ նա հաւատաց՝ աստղանշան խաչի երազի շնորհի, որը նրան երեւաց: Եւ հրապութեաց իր կնոջ կողմից, որի ինչպէս լինելը յետոյ կը պատմեմ մի այլ տեղում:

ԳԼՈՒԽ ԿԸ ՏՐԴԱՏԻ ՔԱԶԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆԱԽՔԱՆ ՀԱՐԱՑՔԻ ԳԱԼԸ¹⁹⁷

Իսկ Տրդատ քազարը բոլոր քաջութիւններից ու առաքինութիւններից յետոյ, որ ճակատամարտերում գործեց Յունաստանում, Հայաստանում, եւ Պարսկաստանում, հայկական քազմարի գորերով իշաւ Գարգա-

րացոց դաշտը Աղուանքի սահմաններում, որտեղ եւ միջակոտոր արեց Բատրաց¹⁹⁸ քազարութիւն. եւ այժմ սա այեւս չի կոչում Բատրաց աշխարհ, քանի որ, կարծում եմ փոխել է անունը, չի յիշում, ինչպէս որ [այլեւս] Ծորան չի յիշատակում Դարբանդում, այլ [միայն] Ուտիք աշխարհում Արուրին կոչուած լեռան ստորոտին մօտիկ կայ մի բլոր, որ դեռևս կոչում է Բարսղարերի¹⁹⁹: Եւ սրանից յետոյ [Տրդատը] գորերի այնքան քազմութեանը արշաւում է Արտաշիրի որդի Շապուհի վրայ՝ իր հօր վկրծի մնացեալ մասը հասուցելու համար: [Եւ] առ ու աւարի մատնելով՝ զերիներով հաներձ վերադառնում է իր երկիրը մեծ յաղթութեամբ:

Այժմ վերադառնամ իմ խօսքի շարունակութեանը: Այնուհետեւ սուրբ Գրիգորն առաւ Տրդատ քազարութիւն եւ իշխանների համաձայնութիւնն ու խորհութը՝ կործանելու բոլոր կուռքերը, եւ օգրքի քազմութեան հետ զնաց կուռքերի տեղերը, ուր որ կային: Եւ հասան Երիզայ [աւանը], Երազանցնը²⁰⁰ անուանուած տեղը, քանի որ նախ այն հանդիպեց ճանապարհին, եւ գործի անցնելով՝ քանդեցին այն: Եւ ապա նա զնաց Անահիտի մեհեանը, որ Արտաշատ քաղաքում էր, եւ այն հիմքից տապալելով՝ աւերեցին: Եւ ապա զնացին Դարանաղեաց գաւառի²⁰¹ Թորդան գիւղը եւ այնտեղ Բարշամին սպիտակափառ դիցի մեհեանը քանդեցին ու պատկերացնակը փշրեցին: Եւ ապա հասան Անի ամրոցը²⁰², այնտեղ կործանեցին Արամազդի պատկերաքանդակը, որ բոլոր չաստուածների հայր էր կոչում: Եւ այնտեղից զնացին Եկեղեց գաւառը, փշրեցին Անահիտ դիցուհու ոսկէ արձանը, եւ յետոյ անցնելով Գայլ գետը՝ Թիլ²⁰³ աւանում քանդեցին Արամազդի դստեր Հոնիական մեհեանը: Եւ այնտեղից եկան, հասան Բակառիձ²⁰⁴ կոչուած գիւղը, եւ այստեղ աւերեցին²⁰⁵ Արամազդի որդու Սիրիական մեհեանը:

Եւ դրանից յետոյ ամենուրեք Տերունական խաչի նշանը կանգնեցնելով՝ սուրբ Գրիգորը հայածնեց դեմքերի քազմութեանը, որ բուն էին դրեւ կուռքերի մեհեաններում: Եւ դրանց մի կեսը հալածական ընկան Կովկասի [լեռների] կողմերը, իսկ միւսները՝ Խաղոտիքի սահմանները՝ իրենք իրենց զիսիմ վայ՝ ասերով: Եւ մեհեաններից հաւաքած բոլոր զանձերը բաշխեցին արքատներին, իսկ մնացած զանձերը դաստակերտների հետ միասին նույիքարերեցին ի ծառայութիւն եկեղեցու:

Բայց ոչ մի տեղ քացայաց եկեղեցու հիմք չէր գցում եւ ոչ էլ սեղան էր կանգնեցնում, որովհետեւ դեռևս քահանայութեան աստիճան չուներ, ինչպէս ասում է Պատմութիւնը²⁰⁶: Բայց իրաշքների ու սրանչելքների շնորհի, որ տեղի էին ունենում, քազարը եւ օգրքի քազմութիւնը տեսնելու վեցութիւնն Ազարանեղոսի երկն է (տես էջ 407):

լով հաստատում էին հաւատքի մէջ: Եւ ապա թագաւորը խորհրդակցեց [իր] կնոջ, քրոջ և ամբողջ զօրքի բազմութեան հետ, որպէսզի Լուսաւորչին քահանայութեան աստիճանի հասցնեն, որպէսզի մկրտութեան է արժանի լինեն: Իսկ նա դէմ խօսելով՝ յանձն չէր առնում, մինչեւ որ սքանչելի երազ երեւաց թագաւորին՝ հաստատելով իր միտքը: Երազ երեւաց նաեւ երանելի Գրիգորին, ինչպէս որ ինքն իսկ պատմեց հրեշտակի երեւալու մասին, [որից] յետոյ համաձայնուելով՝ ասաց. «Աստծոյ կամքը քո՞յ կատարուի»:

Ապա թագաւորն անմիջակէն հրամայեց բազմարի իշխանների զօրագունդ կազմել իրաքանչիրի զօրքերով, եւ պատրաստեցին սուրբ Գրիգորին իշխանների հետ միասին եւ ուղարկեցին Կապուտկացոց Կեսարիա [քաղաքը]¹ Կեսարիայի Ղետնա արքեպիսկոպոսի մօտ մի հրովարտակով², որպէսզի [նա] սուրբ Գրիգորին ձեռնադրի Հայոց հայրապետ: Որը նա մեծ ուրախութեամբ ընդունեց՝ մէկ՝ [Գրիգորի] խոստովանողի անուն [ձեռք բերելու պատճառով], եւ միւսը՝ Հայոց երկրի լուսաւորութեան համար, [ուստի] ձեռնադրեց [նրան] եւ ճանապարհ դրեց՝ երովարտակի պատասխանով հանդերձ:

ԳԼՈՒԽ ԿԹ

ԴԱՐՁԵԱԼ ՆՈՅՆ ԽՆԴՐԻ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՄԵԿՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արդ՝ երբ Տիրոջից Սուրբ Գրիգորին հրաման հասաւ՝ ստանձնելու հովուապետական իշխանութիւնը, այնժամ Աստծուց սքանչելի տեսիլք երեւաց թագաւորին, քանզի հրեշտակը խօսեց նրա հետ եւ ասաց. «Դու պարտաւոր ես Գրիգորին բարձրացնել հայրապետութեան, որպէսզի նա ձեզ լուսաւորի»: Նաեւ Գրիգորին երեւաց Աստծոյ հրեշտակը, որպէսզի շընդիմանայ թագաւորի ասածին³, քանի որ Աստծուց է հրամանը:

Ապա այնուհետեւ թագաւորը զօրագունդ գումարեց զիւարու նախարարներից՝ իրաքանչիրի զօրքով: Առաջինն [էր] Անգեղտամ⁴ իշխանը, երկրորդ՝ Աղճնիքի⁵ իշխանը, որ բդէշխ էր, երրորդ՝ Մարդպետութեան իշխանը⁶, նաեւ՝ թագակապ իշխանը, որ Ասպետ է կոչում, եւ Ասպարապետ իշխանը⁷, եւ Կորդուքի⁸ իշխանը, եւ Գարգարացոց⁹ իշխանը, սա եւս բդէշխ էր կոչում, եւ Աշտունիքի¹⁰ իշխանը, եւ Սոլքի¹¹ իշխանը, եւ Սիւնիքի իշխանը, եւ Ծալեաց¹² աշխարհի իշխանը, եւ Ուտիքի¹³ իշխանը:

¹ Տուեալ դէպուում երովարտակ եզրոյերը նշանակում է խնդրագիր:

նը, եւ Ծահապ իշխանը¹⁴ Զարաւանդ¹⁵ եւ Հեր¹⁶ գաւառների, եւ Արծրունեաց¹⁷ իշխանը: Եւ Գրիգորին բազմեցրին արքունական ոսպեպատ կառը եւ զնացին հասան Կեսարացոց քաղաքը:

Եւ հանդիպելով սուրբ կաքողիկոս Ղետնդիմին՝ մատուցեցին Տրդատ թագաւորի նամակը եւ ողջունեցին բոլորին: Ասպա բազմարին եպիսկոպոսների ժողով գումարուեց, սուրբ Գրիգորին Մեծ Հայրի հայրապետ ձեռնադրեցին, եւ եպիսկոպոսների զիսաւորը մեծն Ղետնդիմոս էր: Եւ նամակի պատասխանն առնելով՝ մեծ ուրախութեամբ վերադարձան եւ եկան հասան Սեբաստիա քաղաքը: Եւ այնուեղ ոչ քիչ օրեր մնալով՝ նաեւ [այդ] քաղաքում եկեղեցի հիմնադրեցին, որը հենց սուրբ Գրիգորի հրամանով կառուցեցին վստահելի մարդիկ, եւ անուանակոչեցին սուրբ Գրիգորի անունով, որը [իիմա էլ] դեռեւս կանգուն է քաղաքի եզրին:

Իսկ ապա Տրդատ արքան լսելով սուրբ Գրիգորի գալու մասին՝ լնդառաջ դրւու եկաւ նրան բազմարի զօրքով Նպատ լեռան ստորոտի մօտ, հանդիպեց Եփրատ գետի ափին, եւ երբ միմնանց պատահեցին՝ լցուեցին ցնծութեամբ: Եւ պատասխան նամակի օրինակը տալով՝ սուրբ Գրիգորը նստեց Մեծ Հայրի կաքողիկոսական աթոռին: Եւ այն եպիսկոպոսները, որ ձեռնադրուեցին նրա կողմից, աւելի քան չորս հարիւր այեւայլ վայրերի եպիսկոպոս-վերակացուներ [էին]:

ԳԼՈՒԽ Հ

ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՍԱՍԻՆ, ՈՐ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵՐՈՒՄ ԱԹՈՌ ՍԱՍԱՑԱՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՑ՝ ԻՒՐԱՋԱՆՉԻՒՐ ԳԱՀՈՎ

Արդ՝ այսուհեղ կը բուարկեմ աթոռակալներին եւ կը նշեմ իրաքանչիրի գահը, ինչպէս որ մէր Լուսաւորիչ սուրբ Գրիգորի կողմից նշանակուեց ու սահմանուեց աթոռակալ եպիսկոպոսների խկազոյն կարգը. առաջինն [է] Հարքի եպիսկոպոսը, երկրորդ՝ Ոստանի¹⁷ եպիսկոպոսը, երրորդ՝ Տայրի¹⁸ եպիսկոպոսը, չորրորդ՝ Մարդաղոյ¹⁹ [եպիսկոպոսը], հինգերուորդ՝ Արշամունիքի²⁰, Վեցերորդ՝ Արծրունեաց, երեքրորդ՝ Սիւնիքի, ութերորդ՝ Աշտունիքի, իններորդ՝ Մոլքի, տասներորդ՝ Ամատունեաց²¹, տասներեքրորդ՝ Բասենի²², տասներկուերորդ՝ Մամիկոնեաց²³, տասներեքրորդ՝ Բագրեանի²⁴, տասնչորրորդ՝ Խորխոսունեաց²⁵, տասներեքրորդ՝ Վանանդի²⁶, տասներեքրորդ՝ Ապահունիքի²⁷, տասներեքրորդ՝ Վանանդի²⁸, տասնվեցերորդ՝ Ապահունիքի²⁹, տասնեօքե-

բորդը՝ Արշարունիքի³², տասնութերորդը՝ Գնունեաց³³, տասնիններորդը՝ Գողրած³⁴, բաներորդը՝ Գարդմանի³⁵, քսանմէկերորդը՝ Ակէի³⁶, բաներկուերորդը՝ Բաժունիքի³⁷, բաներեր[երորդ]ը՝ Երուտակի³⁸, բանչորս[երորդ]ը՝ Ասորեաց³⁹, բանինինգ[երորդ]ը՝ Անձեւացիքի⁴⁰. քսանվեց[երորդ]ը՝ Պալունիքի⁴¹, բանենօր[երորդ]ը՝ Մեհնունեաց, բանութերորդը՝ Ելիք⁴², բանին[երորդ]ը՝ Զարեեաւանի⁴³, երեսուն[երորդ]ը՝ Սիրս Ասորեաց⁴⁴ [Եպիսկոպոսը]:

Այս երեսուն եպիսկոպոսներն են, որ սուրբ Գրիգորից առօսակալութեամբ ծեռնադրութիւն ընդունեցին: Նաեւ երեք հարիւր եօթանասուն այլ եպիսկոպոսներ զանազան տեղերում նշանակուեցին իբրև վերակացուներ ու առաջնորդներ՝ իրաքանչյուրն [իր] գաւառում՝ ի փառս Աստծոյ:

ԳԼՈՒԽ ՀԱ

ՏՐԴԱՏ ԹԱԳԱՌՈՐԻ ԵՒ ԻՐ ՀԱՐԱՉԱՏԵՐԻ ՈՒ ԱՄՔՈՂՋ ԶՈՐՔԻ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

Արդ՝ երբ սուրբ Գրիգորը եկաւ Հայաստան աշխարհը, եւ Տրդատ քաղաքը լսեց, լցուեց ուրախութեամբ, եւ իր հետ վերցնելով իր կնոջ՝ Աշխենին, [եւ] քրոջ՝ Խոսրովիլուստին՝ զօրքերի հետ միասին զնաց հանդիպեց սուրբ հայրապետին Նպատ⁴⁵ լեռան ստորոտում, ինչպէս վերեւում ասացինք: Եկան հասան Եփրատ գետի ափը, մեծ ցնծութեամբ ողջունեցին միմեանց, եւ սուրբ Գրիգորը նատուցեց պատասխան նամակը, [եւ] դարձեալ ուրախացան:

Եւ սուրբ Գրիգորը Եփրատ գետում մկրտեց քաղաւորին իր հարազատների եւ զօրքի մնացեալ բազմութեան հետ միասին՝ յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հօգու: Եւ ապա սրանչելի հրաշքներ երեւացին, որպեստեւ գետը տեղում կանգ առաւ, իսկ իրենց վրայ Տէրունական խաչի նաման լրսաւոր սին [իջաւ]: Եւ ովեր որ այն ժամանակ մկրտուեցին՝ այր, կին ու մանուկ ընդամենը աւելի քան չորս հարիւր հազար⁴⁶ մարդիկ [էին]: Եւ կատարելով խորհուրդը՝ [Գրիգորը] նրանց բոլորին քաժանեց մեր Փրկչի սուրբ մարմինն ու արիւնը եւ իր լրսաւոր Վարդապետութեամբ լցուեց ու լրսաւորեց նրանց բոլորին: Իսկ նրանք օրինում էին Աստծուն եւ փառաւորում, որ նրանց զգաստ միտք տուեց եւ խաւարից հանեց [դէպի] լոյս եւ անզիտութիւնից [դէպի] ճշմարիտ գիտութիւն եւ անհաւատութիւնից [դէպի] հաւատը: Եւ այդ պատճառով օրինում էին Աստծուն՝ այդպի-

սի պարզեներ տուողին:

Բայց մենք վերադառնանք այն խօսքին, որ խոստացանք Կոստանդնուպոլիսի հաւատորի գալու մասին, թէ ինչպէս հաւատաց Կոստանդնուպոլիսը կամ ինչ ծետվ: Յոյն պատմագիրները պատմում են իւտեւեալը. Հոոմի քաղաւոր Կոստանդնուպոլ կուապաշտ էր. եւ դա՝ դրդուած իր կնոջ՝ Մարսիմիանտի կողմից, որը Դիոկղետիանու կայսեր թոռն էր: Սա հայածում էր քրիստոնեաներին եւ սպանեց շատ հաւատացեալների, ովքեր զոհ չին մատուցում կուորերին: Իսկ երանելի Սելյեստրոսն առնելով [իր] աշակերտներին՝ փախաւ մի լոռ եւ այնտեղ քաքնուած էր:

Եւ Կոստանդնուպոլ բորսութեամբ իխանդացաւ, որ նման էր եռի, եւ թիջկներն ամենենին չկարողացան բուժել: Այդ շարահաւատներն ասացին, թէ՝ «Քո բուժումն անհնարին է [այլ ծետվ] քացի միայն, եթէ դու անարատ մանուկներ հաւաքես, եւ նրանց արինով լցնեն աւազանը, եւ մինչեղու արինոր տաք է, մերկ մտնես աւազանը եւ արեամբ լողանաս. Եւ այդ ժամանակ կը բուժուես»: Նա հրամայեց, եւ փութապէս հաւաքեցին քազում եւ յոյժ անքի մանուկների: Իսկ քաղաւորը ծին հեծներով՝ զնաց կուորերի Կապետողի տաճարը, եւ երեխաները գրկներին կանայք ծանր հառաջանքներով, հերածակ, ստիճները երեխաների բերանները [դրած] եկան ընկան քաղաւորի ոտքերը կսկծալի ողբերով: Իսկ նա տեսնելով մայրերի կոծն ու տուայտանքը եւ երեխաների լացը՝ խորապէս խոճահարուեց ու զրաց նրանց, նաեւ արտասուրը քափուեց աչքերից: Եւ [նա] լաւ համարեց նրանց փրկութիւնը, քան իր անձի առողջութիւնը, [եւ] նրանց ուրախացած յետ ուղարկեց իրենց կացարանները՝ տալով նրանց հաց ու օրառոճիկ:

Եւ այն զիշեր [կայսերը երազում] երեւացին Ծրիստոսի Պօղոս ու Պետրոս առաքեալները եւ ասացին. «Քանի որ դու խոճացիր երեխաներին ատելի, քան քո անձին, [մենք] եկել ենք քեզ օգնութեան: [Մարդ] ուղարկիր այսինչ լոռը եւ քեզ մօտ քըր Սելյեստրոս եպիսկոպոսապետին, նա քեզ համար աւազան կը պատրաստի ջրով, դու նրանով կը լողանաս եւ բորսութիւնից կը բուժուես»: Եւ առաւօտեան [նարդ] ուղարկեց լեռը, եւ սուրբ Սելյեստրոսին [նար մօտ] տարան: Իսկ սա կարծում էր, թէ իրեն նահատակելու են տանում, [եւ] ուրախութեամբ գնում էր:

Եւ մտնելով քաղաւորի մօտ՝ [Սելյեստրոսը] ողջոյն տուեց, եւ [կայսրն] ասաց նրան. «Ունե՞ս դու աստուածներ, որոնց անուններն են Պետրոս եւ Պօղոս»: Պատասխան տուեց Սելյեստրոսը եւ ասաց. «Նրանք աստուածներ չեն, այլ Աստծու ծառաներ են եւ առաքեալներ»: Թագաւոր հարցրեց. «Ի՞նչ կերպարանքով են [նրանք] եւ ի՞նչ հասակի»:

Եւ հանելով իր ծոցից սուրբ առաքեալների մի փոքրիկ նկար [Սեղբեստրոսը], ցոյց տուեց թագաւորին: Իսկ նա տեսնելով [նկարը] ճանաչեց եւ ասաց. «Իբօր սրանը են, որ երազում տեսայ»: Եւ անմիջապէս աւազանը ջրով լցրեցին: Եւ Սեղբեստրոսը գնաց այնտեղ, օրինեց ջրով, եւ թագաւորին մերկացնելով՝ իշեցրեց ջուրը: Եւ ի վերուստ լոյս փայլեց նրա մարմնի վրայ, եւ ճարճատում եղաւ, ինչպէս [լինում է] տապակելիս: Եւ կեղեների պէս [վերքերը] թափուեցին մարմնից ու լցուեցին ջուրը: Եւ թագաւորը դուրս եկաւ [ջրից] նաքուր մարմնով եւ պայծառ հոգով:

Եւ այդ օրը Սեղբեստրոսի ձեռքով գետում մկրտուեցին տասներկու հազար հոգի, որոնց թագաւորը սպիտակ հանդերձներ հազցրեց եւ ծածկոցներ ու կոչիկներ, եւ ամեն մէկին մի մոմաճրազ [տուեց]: Եւ թագաւորը հրամաններ գրեց, թէ՝ «Ով Քրիստոսին հայեցի, իր ունեցուածքի կեզ արքունիքին պիտի տայ: Եւ ով կամենում է՝ անխափան ու առանց արգելքի թո՛ղ մկրտուի, նաեւ աներկիւդ կործանի կորքերի զոհասնդանները»:

Եւ թագաւորը Սուրբ Փրկիչ անոնով եկեղեցի շինեց. Եւ ինքն էր փորում, հողը հանում ու դնում քարերը: Եւ հրամայեց իր զօրքերին հրապարակում քառասուն անգամ աղաղակել, թէ՝ «Քրիստոնեաների Աստուածը ճշմարիտ Աստուած է», եւ դարձեալ տասն անգամ, թէ՝ «Քրիստոսի եկեղեցները թո՛ղ քացուեն, եւ ովքեր Քրիստոսին շնն պաշտի՝ մեր թագաւորութեան թշնամիներն են»: Տասն անգամ աղաղակեցին այս քանը, եւ՝ «Աստուած էր, որ թագաւորին ապրեցրեց»:

Իսկ Կոստանդիանոսի մայր Հեղինեն Բեթանիայում էր, եւ նրա հետ էին երկու բոռներլ՝ Կոստանդիանոսը եւ Կոստոլ¹: Նրա մօտ հաւաքուեցին հրեաները եւ ասացին. «Քո որդին՝ մեր թագաւորը, քարիք գործեց, որ թողեց² կուրքերին եւ ընտրեց հաւատը. բայց [նա էլի] ճշմարիտ հաւատ չստացաւ: Արդ՝ զրի՞ր նրան, որպէսզի թպատուի եւ մեզ նման հրեայ դառնայ»: Բայց նա [Հեղինեն] անարգէց նրանց ու թշնամանքով յետ դարձրեց: Եւ իր որդուն գրեց, թէ՝ «Հաստատ է քրիստոնեութեան հաւատը», նաեւ՝ «Սեծարի՛ Սեղբեստրոսին»:

Եւ հայրապետն այնպէս փայլեց եկեղեցում, ինչպէս լոյսը: Եւ իր ազօքներով իհանեներ էր բուժում եւ մարդկանց միջից դեւերին հալածում³: Եւ շատ հրեաների ու հեթանոսների դարձի բերեց, նաեւ եղաւ զիսամքը ե-

րեք հարիւր տասնութ հայրապետների, որոնք Նիկիայի առաջին Սիսնիութում⁴ էին: Եւ հասնելով երջանիկ ծերութեան՝ [Սեղբեստրոսը] հանգեց ի քրիստոս:

ԳԼՈՒԽ ՀՅ

ԵՐԱՆԵԼԻ ՀԵՂԻՆԵԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ ԳՆԱԼԸ ՍՈՒՐԲ ԽԱԶԸ ՓՆՏՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Սրանից յետոյ սուրբ Կոստանդիանոսը իր մայր Հեղինեին ուղարկում է Երուսաղեմ՝ սուրբ խաչը որոնելու: Եւ նա գնում, հաւաքում է քահանաներին ու հրեաների ծերակոյտին եւ սկսում սուրբ խաչի վերաբերեալ հարց ու փորձ անել: Իսկ սրանք իրածարուելով՝ «Զգիտենք» էին ասում, եւ հետագայում կոտանքների ենթարկեցին երանելի Կիրեղին, քանի որ [ի վերջոյ] նրա միջոցով գտնուեց մեր Վրկական նշանը: Եւ [խաչն] առնելով՝ որախութեամբ տարան քաղաք, եւ դնելով մի պատահի մեռածի վլայ, որին վերցրած տանում էին քաղելու՝ նա անմիջապէս կենախացաւ: Որը տեսնելով՝ երանելի թագուիին խնդրութեամբ լցուեց, եւ Աստծոն փառ տալով՝ զոհութիւն յայտնեց եւ օրինեց Աստծոն: Նաեւ ցնծացին բոլոր հաւատացեալները, իսկ հրեաները խոր ամորով լցուեցին:

Իսկ երանելի Հեղինեն առ Աստուած հաւատը եւ մեծ փափազով՝ կրկին Կիրեղից խնդրեց Փրկչի բեւուագամերը: Իսկ երանելի Կիրեղը այլ հաւատացեալ եղբայրների հետ միասին գնաց Կառավիման [Վայրը] եւ խոր հառաջանքով աղօքքներ մատուցեց, եւ յանկարձ գետնին փայլեցին [մեխերը], որոնք առաւ բերեց, մատուցեց աստուածաւը դշխուհուն: Իսկ նա խնդրութեամբ տարաւ, իր մօտ կանչեց մի կատահենի ու զիսուն մարդու եւ ասաց նրան. «Ան ինձնից այս բեւոները եւ սրանցից կոճակներ պատրաստի՛ր թագաւորի միջուկը դիմու սանձի համար, որպէսզի դառնայ բոլոր հակառակորդների դէմ թագաւորի յաղթութեան անվքար գէնքը: Որպէսզի կատարուի մարզարէի կողմից ասուածը. «Եւ թող լինի այն օրը, երբ ձիմու սանձերի վրայ Սուրբ Տիրոջը ոգեկոչեն»:

Եւ այսպէս առաքինութեամբ զարդարուած՝ երանելի սուրբ թագուիի տիկինը մեծ փափազով որոնեց ու գտաւ Վրկական սուրբ նշանը եւ կատարեց աւանդուածը՝ երանելի սուրբ Կիրեղի ծերութ: Եւ երբ բեւոներն առած եկաւ Կոստանդիանոս թագաւորի մօտ եւ պատմեց նրան բոլոր ե-

¹ Այստեղ իմաստի տիեզերաժողովում:

² Իմաստի հետագայում Կոստանդին Բ և Կոստանյ Կոստանդ Ա կայսրերը:

³ Թնագիրն այստեղ խառնակ է. «որ երող գիտաւոն եւ ընտրեաց (Հնագուառը՝ տպագրուած) զիսուն»: Հաւատուն որեւէ գրի է շփորդ բառերի հերթականութիւնը. իսկ միշտը պէտք է իմներ՝ «որ երող զիսուն եւ ընտրեաց գիտաւոն»:

⁴ Այսինքն՝ դիտահարներին բուժում եր:

ղելութիւնները, ուրախացան միասին, փառք տուեցին Աստծուն:

ԳԼՈՒԽ ՀՊ

ՀԱՅՈՅ ՏՐԴԱԾ ԹԱԳԱՌՈՐԾ՝ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ ՄԵԾ ԿԱՅՍԵՐ ՄՈՏ ՀՈՌՄ ԳՆԱԼԸ ՀԱԽԱՏԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Այդ ժամանակներում թագաւորեց Կոստանդինի որդի Կոստանդիանոսը եւ հաճոյ Եղայ Աստծուն իր ճշմարիտ խոստովանութեան շնորհի: Եւ այնքան յաղրող դրս եկաւ եւ Աստծուն համելի, որ մինչեւ իսկ իր կեանքի ամբողջ լնթացքում իրեշտակը երկնքից երեւալով՝ սպասաւորում էր նրան, առաօտունները Քրիստոսի քաջի նշանը դնում նրա զիսին, իսկ ինքը՝ [կայսրն] իրեն համարում էր իրեշտակին սպասաւորութիւն [մատուցուլ]:

Ապա երբ այս մասին լսեց մեծ արքայ Տրդատը, մտադրուեց գնալ սուրբ Կոստանդիանոսի մօտ: Հանդերձեց պատրաստեց մեծ արքեակիսկոպոս Գրիգորին եւ նրա որդի Ռոստակէս Եպիսկոպոսին եւ Եպիսկոպոս Աղքանոսին: Նաև նախարարներից շորսին՝ իր պալատի գահերէցներին, որոնք բդեշին էին կոչում. եւ առաջինն [է] իր սահմանակալը Նոշիրականի²⁴⁷ կողմից, եւ երկրորդը՝ Ասորեստանի կողմից, եւ երրորդը՝ Արուստականի²⁴⁸ կողմից, եւ չորրորդը՝ Մասքրաց կողմից: Նաև այն իշխաններին [հաւաքեց], որ սուրբ Գրիգորի հետ գնացին Կեսարիա, եւ այլ քաջմարիս մեծամեծների՝ եօթանատուն հազար ընտիր-ընտիր զօրքով, եւ շարժուեց գնաց նրանց հետ Այրարատեան զաւարի Արտաշատ քաղաքից, անցաւ Յունաց կողմերը: Գնաց անցաւ իտալացիների եւ դալմատացների երկրի կողմերը՝ [մինչեւ] թագաւորանիստ Հռոմ քաղաքը:

Եւ իսկոյն իմացրին աստուածաէր թագաւոր Կոստանդիանոսին եւ մեծ հայրապետ Եւսեբիոսին, եւ նրանք շափազանց ուրախացան, եւ մեծ պատուով ընդառաջ դրս գալով՝ խնդրութեամբ ընդունեցին: Եւ հարցնելով միմեանց նախկինում եղած աղետի մասին, որ նրանց հասել էր Տիրոջից, եւ ապա՝ Աստծոյ իրաշքների մասին, որը գքաց նրանց, եւ թէ՝ ինչպէս Վերցնելով նրանց՝ ձգեց խաւարից դէպի լոյս, եւ երկու երկների հաւատրի գալն էին պատմում միմեանց: Նաև իրադարձութիւններն ու կատարուածները եւ նմանութիւններն ու օրինակները, ինչ որ պատահել էր Տրդատին ու Կոստանդիանոսին, պատմում էին թագմութեան առջեւ: Եւ ամենքը զար-

մացած՝ Աստծուն փառք էին տալիս: Եւ դարձեալ երանելի սուրբ Գրիգորի տառապայնքն ու հրաշագործութիւններն էր պատմում Տրդատ թագաւորը, որի փայ զարմացած՝ երանելի Կոստանդիանոսը եւ [նրա] բոլոր իրայինները նրան [Գրիգորին] ընդունում էին իբրեւ Զրիստոսի կենդանի մարտիրոս, որն իրօք էլ այլպէս էր:

Իսկ ապա այնուհետեւ հայրապետներն ու թագաւորները իրար միջեւ հաստատեցին ուղղափառութեան հաւատամքը, իսկ ըստ մարմնոյ յորոշեցին միմեանց հանդէպ սէրն [ու] միաբանութիւնը հաստատուն պահել իրար մէջ: Եւ կայսր Կոստանդիանոսն ու Տրդատ արքան յանձն առան երկուստեր հաստատուն ու անխախտ պահել դաշնադրութեան պայմանագիրը: Նաև հայրապետները ուխտ ու դաշինք կնքեցին միմեանց հետ, որպէսզի հոգեւոր սէրը եւ հաւատի միաբանութիւնը հաստատուն պահեն իրենց միջեւ՝ իրենք եւ ովքեր իրենցից յետոյ կը յաջորդն Հայոց եւ Հռոմի հայրապետական արքուներին:

Եւ այլպէս մեծ սիրով ընդունելութիւն գտան նրանց կողմից: Եւ իրածելու տալով Կոստանդիանոս կայսերը եւ Եւսեբիոս հայրապետին՝ մեծաքանակ ընծաներով ու պայծառ նուէրներով խաղաղութեամբ եկան հասան Հայոց երկիրը՝ թագաւորանիստ Վաղարշապատ քաղաքը: Եւ ողջոյն տալով սուրբ Հոփիսիմեանների հանգստարանին՝ փառաւորեցին Աստծուն:

ԳԼՈՒԽ ՀՊ

ԴԱՐՁԵԱԼ ՆՈՅՆ ԽՆԴՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԱՌԱՋԵԱԼՆԵՐ ՊԵՏՏՐՈՍԻ, ՊՕՂՈՍԻ ԵՎ ԱՆԴՐԵԵՎԻ ՆՇԽԱՐՄՆԵՐԻ ՍԱՍԻՆ ԱՅԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ²⁴⁹

Այս ժամանակ լուր հասաւ Տրդատ արքային, թէ Կոստանդիանոս արքան հաւատաց Աստծուն, եւ քաջութեամբ տիրելով թագաւորութեանը՝ դադարեցրեց եկեղեցների հալածանքը: Ապա Տրդատը մտադրուեց իշխանների ու քաղմարին նախարարների հետ գնալ կայսեր նստավայրը եւ իր հետ տանել սուրբ Գրիգորին՝ իրենց միջեւ խաղաղութեան դաշինք հաստատելու համար: Շատ օքենաններով²⁴⁹ շարժեց գնաց, մինչեւ որ հասաւ ծիրանափառ Օգոստոսնեանի արքունիքը եւ ընդունուեց մեծաշուր

²⁴⁷ Ի՞նմա՞ քաղման վայրին, գերեզմանին:

²⁴⁸ Ուխտանես դարձեալ նկատի ունի Զենոր Գլավի երկը:

պատուով: Ել առաւել փառաւորապէս ընդունեցին Քրիստոսի խոստվաճութ սուրբ Գրիգորիմ՝ խոստվաճողի եւ կենդանի տառապեալի անուան համար: Տեղեկացան սրանցի Աստծոյ բոլոր հրաշքների մասին, որոնք գործուեցին Հայաստանում նրանց օրօք: Իսկ ինքը կայսրը պատմեց նրանց, ինչ որ հենց իր հետ եղաւ՝ սրանչելի տեսիլքը խաչանման աստիլի շնորհիր:

Եւ այնտեղ մնացին շատ օրեր, եւ սուրբ Գրիգորը որոշ մասունքներ խնդրեց սուրբ առաքեալներ Պետրոսի եւ Պողոսի նշխարմերից: Եւ քաջայրի հրամանով՝ Հռոմի սուրբ հայրապետը տուեց նրանց, որն ստանալով՝ չափազանց որախացան: [Նա] տուեց [նաեւ] սուրբ Անդրէ առաքեալի ծախս՝ ել աւելի մեծարելով նրանց այնքան օրեր: Ապա մեծ որախառեամբ աստուածային գանձերն առնելով եւ դուրս գալով քաղաքից՝ քազում օրեր անց եկան հասան Հայաստան:

Եւ հասնելով Եկեղեցաց գաւառի Թիլ աւանը եւ այնտեղ մի քանի օր հանգստանալուց յետոյ՝ Տրիատլ շարժուեց զնաց Այրարատեան գաւառ՝ բուն արքունի աւան Վաղարշապատ քաղաքը: Իսկ սուրբ Գրիգորը այնտեղից [յետոյ] մի որոշ ժամանակ մնաց Տարօն գաւառում՝ իր հետ ունենալով առաքելական ոսկորների աստուածային գանձերը, որպէսզի կործանի Գիսանեի կոտոքերը, որ [գտնուում էին] Իննակնեան²⁵⁰ [կոչուած] տեղում: Եւ տեղի առունը փոխելով՝ կոչեց Գլականք²⁵¹՝ իբրեւ սուրբ Կարապետի²⁵² նշխարմերի կայան:

ԳԼՈՒԽ ՀԵ

**ԵՐԱՆԵԼԻ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍԻ ԹԱՎԻ ՄԱՍԻՆ, ԹԵ
ՈՐՏԵՄԻՑ ԿԱՄԻՆՉՊԵ՞Ս ՅԱԶՈՂՈՒԵՑ ՆՐԱՆ [ՍՏԱՆԱ]
ՏԻՐՈՎԻՑ ԱՍՈՒԱԾ ԱՊԱՀԻ ՊԱՏՐԻԿ ԱՇՈՏԻ ՈՐԴԻ²⁵³
ԾԱՊՈՒՀԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՏՈՒԹԵԱՆ ՄԵԶ**

Կոստանդիանոսը թագաւորում է երեսուներեք տարի: Սա լինելով Բիշանացւց կողմերում՝ շինեց քաղաք եւ անուանեց այն Կոստանդնուպոլիս: Սա իր թագաւորանիստ քաղաքի [իիմքերը] հաստատուն [դարձնելով] համար իր հետ Հռոմից բերեց Պետրոսի ու Պողոսի նշխարմերից որոշ մասունքներ, որոնք գտնուում են Սուրբ առաքեալներ կոչուած մեծ Եկեղեցում:

²⁴⁹ Այսպէս բնագրում Գլականք. իմա՝ Գլակավանք:

²⁵⁰ Իմա՝ Յովիաննես Սկրտչի:

Այս մասին վկայում է Գրիգոր Աստուածաբանը, քանզի Եպիսկոպոսների գալր մասին [իր] ճարի մէջ, նրա աւարտական խօսքերում ասում է, թէ՝ «Ուրախ եղէք, ո՞վ դուք, առաքեալներ, գեղեցիկ փոխադրութիւն [է սա]:»

Արդ՝ նախրան [սա] պատմուում է, թէ այն ժամանակ, երբ Յովաբը²⁵² վերացրեց Անովնի որդիների թագաւորութիւնը, այս քազը նրանց զանձատնից ուղարկելով՝ դրեց Դաւիթ արքայի գլուխը, եւ սրանից [անցաւ] Սոլոմոնին, եւ Սոլոմոնից՝ Ռոբրովամին, եւ ապա Արիային եւ Ասարին²⁵³ եւ Յովսափարին: Եւ սրանցից յետոյ [կրեցին] Յովսայի բոլոր թագաւորները, եւ ամենից յետոյ՝ Սեղեկիան ու Յորոնիան, որին գերեց բարելոնացիների Նաբուգորոնոսոր արքան եւ նոյն [թագով] թագաւորեց Բարելոնում. նրանով պսակադրութիւն ինքը եւ իր բոլոր յաջորդները՝ մինչեւ Պարսից արքայ Կիրոսի օրերը: Սրանից հասաւ մինչեւ Պարսից արքայ Դարեհը, որին սպանեց Աղեքսանդր Մակեդոնացին եւ նրանից յափշտակեց այս քազը, [որը] մնաց մինչեւ Անտիոքոսը: Եւ սրան քշելով՝ քաջ Արշակ Մեծ Պահլաւան²⁵⁴ առաւ քազը: Եւ այս [այսպէս] եղաւ մինչեւ Շապուհը, որն անուանուեց արքայից արքայ [եւ] որը սկրտվ հնազանդուեց մեծն Կոստանդիանոսին:

Արդ՝ Կոստանդիանոսը ցանկանում էր, որ իր աստուածահանոյ թագաւորութիւնը լինի նախնական եւ մարզաքանական պսակով: Այս ժամանակ Շապուհ արքայից արքան [մարդ] է ուղարկում Կոստանդիանոս Մեծի մօտ [եւ] աղաջում խնդրում դաշինք ու սէր հաստատել միմեանց միջեւ: Իսկ նա ըստ քրիստոնէական սովորութեան համաձայնեց կատարել խնդրանքը: Բայց եւ ինքը խնդրեց Շապուհից թագավասակը, որպէսզի ըստ նոյն օրինակի պատրաստել տայ իր անուանով, իսկ նրանը նորից վերադաբնի իրեն: Եւ դա անդրանիկ թագաւոր եւ մարզաքէ Դաւիթ նկատմամբ փափազի պատճառով էր: Եւ նա [Շապուհը] թագն ուղարկեց վստահեմի մարդկանց հետ, որը երբ տեսաւ մեծն Կոստանդիանոսը, հաւաքեց այն արուեստի վարպետներին եւ իրամայեց [թագ] ծովել նոյն ձեւերով: Իսկ երբ գործն աւարտին հասաւ, [Կոստանդիանոսը] իրամայեց դնել ուսկէ սեղամի վրայ²⁵⁵ եւ աղաջուց Արարչին, որպէսզի իր մօտ մնայ նախօրինակ պսակը: Եւ կանչելով իր մօտ Շապուհի հաւատարիմներին՝ իրամայեց յետ վերցնել իրենց թագաւորից բերուած քազը: Իսկ նրանց մտքերն ու աշքերը կարծես կուրացած ինչ-որ մի աստուածային կարգադրութիւնից՝ յոյների կողմից ծովածը վերցրին իրենց [ու] զնացին՝ այն տեղ բոլնելով մեծ թագաւոր Կոստանդիանոսի փափազածը:

²⁵² Բանագրում այստեղ՝ Ասափ. հնմտ. վերեւում գլ. ԻԱ:

²⁵³ Հեղինակն ուզու է ասել, որ կայսրը երկու թագերս էլ դմել տուեց նոյն սեղանի վրայ:

Եւ նա [թագը] վերցրեց դիեց իր պատուական զիշին: Եւ դրան սպասաւորում էին իրեշտակթերը, եւ այդ բանը վկայում է Նիկիայի կանոնների գիրքը, թէ՝ «Առաւոտից առաւօտ սպասաւորում են իրեշտակները»²⁴: Եւ [թագը] մինչեւ այսօր գտնուում է արքայական պալատում: Եւ հոռեացիների թագաւորները այդ [թագով] են պսակուում Սեծ երկուշարքի օրը Պատերի Սեծ կիրակից յետոյ, երբ վերադառնում են [այն] հրաշալի եկեղեցուց, որտեղ նոյն տուք Կոստանդիանոսի տապանն է եւ այլ ուղղափառ թագաւորների [տապանները]: Նաեւ թեմի յատակի տակ գտնուում է մեծ հայրապետ Յովհաննես Ուսկերեանի գերեզմանը: Նոյնպէս եւ երկրորդ կիրակիի [օրը], որը կոչուում է Նաւակատիքի [կիրակի], նոյն թագով են պսակուում վերադառնարով [այն] մեծ եկեղեցուց, որ կոչուում է Սուրբ Սոզը: Արդ՝ պատմեցինք թագի որպիսութիւնը՝ առներով Շապուի պատմութիւնից:

ԳԼՈՒԽ ՀԶ

ՀԱԽԱՍՏԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ ՏՐԴԱՏԻ ԹԱԳԱԽՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սեր պատմութեան մէջ մէկ անգամ եւ երկից գրեցինք Տրդատի թագաւորելու մասին, թէ ե՞րբ եւ ո՞ւմ ժամանակներում եղաւ: Բայց Չենորը եւ Սովուսը նրա վերաբերեալ տարածայնուում են: Չենորն ասում է, թէ Տրդատը թագաւոր է դարձել Պոռորոսի²⁵ կողմից: Եւ [որ] թագաւորել է՝ երբ ծերակալել է Գրաց թագաւորին, իսկ նա [Պոռորոսը] երախտահատոյց լինելով Տրդատին, թագարելով նրան՝ թագաւոր է դարձրել եւ իր գօրքերով ուղարկել Հայաստան: Իսկ Սովուսն ասում է, թէ Դիոկղետիանոսի կողմից է թագաւոր դարձուել: Այս է վկայում նաեւ Կայսերաց զիրքը¹:

Բայց Սովուսը ճշգրտելով է այսպէս ասում: «Քանիզի վկայութիւնը²⁶ ճշմարիտ չէ, ասում է, առանց ժամանակագրութեան, այդ պատճառով մանրախոյզ քննելով՝ գտանք, որ Տրդատը Դիոկղետիանոս կայսեր երրորդ տարում է թագաւորել եւ այստեղ [Հայաստան] եկել մեծ զօրքով հանդերձ»²⁷: Դարձեալ այլ ծեռով էլ են ճշգրտուում [դէպքերը] նախքան այս՝ սկսած Պոռորոսի ժամանակից մինչեւ Դիոկղետիանոսի թագաւորելը: «Յոյների վրայ, ասում է, թագաւորում է Պոռորոս, եւ Արտաշիրի հետ խաղաղութիւն հաստատելով՝ թաժանում է մեր երկիրը՝ փոսեր փորելով սահման դնելով»: Ու նաեւ մահուան մասին յայտնուում է, թէ երբ Պոռորոս գու-

¹ Իսա Փիլոն Տիրակացին:

² Տես Խորենացի, II, ԶԲ, էջ 224:

թերի դէմ էր պատերազմում, նրա վրայ յարձակուեցին իր գօրքերը եւ սպանեցին նրան: Եւ նրանից յետոյ թագաւորեց Կարոսը՝ «Կարինոսի» եւ Նոմերիանոսի հետ միասին: Եւ պատերազմելով Պարսից արքայի դէմ Եփրատի ափին՝ Կարոսը մեռաւ, իսկ Կարինոսը Կոռնակի²⁸ կողմից սպանուեց անապատում: Նոյն օրերում նաեւ Նոմերիանոսը սպանուեց Թրակիայում, եւ թագաւորութիւնը ստանձնեց Դիոկղետիանոսը: Եւ այսպէս մինեանցից կարծ-կարծ [միջոց] անց [էր] նրանց մահը:

Եւ այս գրոյցների միջև, նրանցից առաջ եւ յետոյ պատմում է [Մովսէսը] նաեւ Տրդատի թագութեան մասին: Սա, ասում է, մի ծեռովք երկու վայրի ցուլերի եղջիւրներից բռնելով՝ գետին տապալեց՝ միաժամանակ վզները կոտրելով: Զիակառքերի մրցութեան ժամանակ վարել կամենալով՝ հակառակորդը հմտութեամբ ցատկեց ընկա գետին, եւ Տրդատը բռուցքով հարուածելով արշաու կառքին՝ կանգնեցրեց [այն], որի վրայ բոլորը զարմացան: Եւ դարձեալ Կարինոսի դէմ Կոռնակի պատերազմելու ժամանակ Տրդատի երիվարը վիրաւորուեց, եւ [նա] առնելով իր գէնքերն ու ձիու սարուածքը՝ ուղղակի խորայատակով անցաւ լայնատարած Եփրատը դէպի իր գօրքը, ուր Լիկիանեւան էր:

Փա՛ռք բոլոր արարածների կողմից փառաբանուողի փառքին. ամէ՛ն:

¹ Բնագրում այստեղ երկու անգամ Կարինոս: Գլ. ԾԷ-ի բնագրում Կարենոս էր: Փիլոն Տիրակացու մօտ՝ Կարինոս, իսկ Խորենացու տարրեր ծեռագրերում՝ Կարինոս կամ Կառինոս:

ՀԱՏՈՒԱԾ Բ

ՀԱՅԵՐԻՑ ՎՐԱՅԻՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

Հռոմայեցիների վրայ Մուրիկի²⁵⁸ թագաւորութեան և Պարսից քոնակալութեան ժամանակներում՝ Ապրուել խոսրով արքայից արքայի տասներերորդ տարում և Մեծ Հայրում Վրկանի մարզպան տէր Սմբատի տէրութեան²⁵⁹ օրօք Հայոց հայրապետական արոտին թարձրացաւ Արքահամը Ռշտունեաց զաւառից, որը քանավեցերորդն էր սուրբ Գրիգորից յետոյ։ Սա արռոակալեց քաններեր տարի²⁶⁰։ Միա ժամանակ տեղի ունեցաւ Վրաց թաժանումը Հայոց միաբանութիւնից Վրաց առաջնորդ Կիրոնի ձեռքով։ Եւ [Վրացիները] հաճեցին կցորդակից դառնալ Քաղկեդոնի չար աղանդին՝ փոխներով սուրբ հայրերի օրէնքները և մոռանալով աստուածային ուխտը։

Իսկ Կիրոնը ձեռնադրութիւն էր ստացել Հայոց կաթողիկոս Մովսէսից, որի մահից յետոյ արոտը գրաւեց Արքահամը, որ վերեւում ասացինը։ Իսկ Կիրոնի մասին, թէ որտեղից²⁶¹ էր, կամ ո՞ր զաւառից ու զիւտից, եւ կամ ի՞նչ ծեւով եկաւ Հայաստան՝ մի փոքր կը պատմեմ պատճառը։ Սա աշխարհով ու ազգութեամբ վրացի էր՝ Զաւախը զաւառի Սկուտրի կոչուած զիւտից, եւ ուներ վրացերէն ու հայերէն կրութիւն։ Եւ զնալով հոռմեացիների²⁶² երկիրը՝ այնտեղ տասնինց տարի բնակուեց Կողոնիա կոչուած զաւառում։

Եւ այնտեղ ապրեց մի մեծ զիւդաքաղաքում, որ կոչուում է Նիկոպոլիս Գայլ²⁶³ կոչուող գետի ափին։ Եւ սովորեց ու վարժուեց նրանց գրուածքներին եւ մնացեալ շարարուեստ զիտորեանը, որով [Էլ] մեզնից թաժանուեց։ Եւ այնտեղից վերադառնալով՝ եկաւ Հայաստան Հայոց Մովսէս կաթողիկոսի մօտ։ Եւ բնակուեց նրա մօտ՝ Սուրբ կաթողիկուում, որը Դուին քաղաքում էր, քանի որ այն ժամանակ այնտեղ էր Հայոց հայրապետութեան արքուու։ Եւ նա [Մովսէսը] նրան նշանակեց Սուրբ կաթողիկուի վաճացերեց, նաև [դարձրեց] քրիստոնեակոպոս՝ նրան վիճակարեմ տալով [ամբողջ]

Այրարատեան գաւառը։ Եւ [Կիրոնն] այնտեղ մնաց իինձ տարի։

Ապա այդ ժամանակներում վախճանուեց Վրաց կաթողիկոսը, եւ երկրի իշխաններն ու նախարարներն Մովսէս կաթողիկոսի մօտ մարդիկ ուղարկեցին՝ եպիսկոպոսներով հանդերձ՝ խնդրելու իրենց համար առաջնորդ։ Իսկ նա մտածեց, որ իր տաճից տայ նրանց առաջնորդ՝ երկու կողմերի հաւատող միաբան ու հաւատարիմ [պահպաներու] համար, միաժամանակ նաև հաստատելու համար նախորդ հայրերի ուխտը, որոնք եղել են իրենից առաջ։ [Ուստի] ձեռնադրեց Կիրոնին, ինչպէս սկզբում ասացին՝ համարելով նրան իրային, կարծելով՝ թէ նա իրը վստահելի ու աներկմիտ է եղել իր նատավայրում, անզիտանալով նրա սրտում ծածուկ [պահուածը]։ [Եւ] ուղարկեց նրան ուղեկցութեամբ Պետրոս եպիսկոպոսի, որը Վրաց երկրից էր, եւ այլ նախարարների, որոնք մեծ պատուով եկել էին նրա [Պետրոսի] հետ։

Իսկ երբ Կիրոնը հասաւ իր իշխանութեան վիճակը եւ իրենց քաղաքը, որ կոչում է Մցխեթայ, իր մօտ հաւաքեց եպիսկոպոսներին՝ երկրի լաւագոյն [հոգեւոր] այրերի հետ միասին, նաև՝ իշխաններին ու նախարարներին, եւ նրանց միջոցով ամբողջ երկիրն առհասարակ զցեց իր իշխանութեան տակ։ Ապա երբ տեսաւ, [որ] ամեն բան յաջողուեց իր կամքին համապատասխան, այնուհետեւ մտքին նենգ խնդիր դրեց եւ եպիսկոպոս ձեռնադրեց մի խուժիկ նեստորականի, որի անոնց Կիս էր, որը խստութիւն է [նշանակում]։ Զանգի խկացէս էլ խիստ էր եւ խստութեամբ ու չորութեամբ վարուեց Տիրոց կողմնակիցների նկատմամբ, ցասումով քարկացրեց Տիրոջը։ Սա [Կիսը] նրա մօտ եկաւ հոռոմների Կողոնիա զաւառից, [որտեղ] բնակուում էր Զուտարիմայ կոչուող գլուղում, Նիկոպոլիսի մերձակայքում, եւ [այս] երկուսն էլ Գայլ գետի ափին են, ինչպէս որ նախորդ տեղում ասուեց։ Եւ կարծում եմ, որ [Կիրոնը եւ Կիսը] ոչ միայն զաւառակից էին իրար կամ զիւդաքանից, այլև աղանդակից եւ ուստունակից էին չար վարդապետներից [սովորած] չար ուստունքով։

♦ Եւ [Կիրոնը] ձեռնադրեց նրան օտարատեսուչ, այսինքն՝ աղանդաւոր եպիսկոպոս։ Եւ միաբանուեցին իրար հետ²⁶⁴՝ ինչպէս Արամը Եփրեմի [հետ], եւ դառնալով Արամի որդին եւ Հռոմելի որդին՝ չար խորհուրդ խորհեցին, եւ տագնապեց նրանց անձը։ Որի մասին զօրութիւնների Տէրն ասում է՝ «Ժող այն խորհուրդը չմնայ»։ Եւ դարձեալ մի այլ չար խորհուրդ՝ նման Կիրոնի եւ այն խուժիկի [խորհրդին], որով Տէրը սպառնում է մարգարելին՝ «Ժող այն խորհուրդը հաստատուն չմնայ եւ կամ թէ՝ նրանց հաւասար»։ «Ճանաչեց, ասում է, այս Վասակը այն Վասակին, որ ննջեց սրբերին սպանելուց յետոյ՝ լցուած նենգութեամբ ու դաւաճանութեամբ,

հակառակ ճշմարտութեան իրենց սրելով»: Եւ այդպէս Կիրոնը լծակից լինելով Քաղկեդոնի ժողովի անհաւատութեանը, ինքն իր մէջ ծածոկ հաւանութեամբ պահելով նրանց դաւանանքը, վաղուց ներկուած երկար-նակների գոյնով, թէպէտ եւ խուժիկից դարձեալ նորոգուեց՝ արդ՝ այդ խուժիկին ծեռնարեց եպիսկոպոս, ինչպէս ասացինք, որից Մովսէս Հայոց կարողիկոսն անտեղեակ էր, մինչեւ որ բացայատուեց նրանց նենգ մտադրութիւնը, որը վաղուց ի վեր ծածոկ պահուած էր:

Իսկ երանելի հայրապետ Մովսէսը նմանուելով մնձ նախամարզարէ Մովսէսին՝ քաղցր [էր] ու հեզ ամենքի հանդէպ: Սա Արագածոտն գաւառի Եղիպարք²⁴ գլուխից էր: Սա իր հայրապետութեան արոռոին մնաց երեսուն տարի: Սրա արսուակալութեան տասներրդ տարում իր իսկ հրամանով սահմանուեց հայոց Թորգոնեան քուականութիւնը²⁵ եւ հայ ամիսների տոմարի պատճենը: Միա քանինինքերորդ տարում Կիրոնն արռակալուց Վրաց աշխարհի²⁶ կարողիկոսութիւնում: Եւ սաւուարաք²⁷ երկու տարի միայն ճշմարտութեանը հնազանդուեց: Ապա դրանից յետոյ սկսեց ամբարշտանալ ու ստել ճշմարտութեանը եւ իր հայրապետութեան երրորդ տարում ծեռնարեց խուժիկին:

Ապա այս բանն իմանացաւ Մովսէսը, որը Ցուրտափի եպիսկոպոսն էր (որն այժմ կոչուում է Գաջենք), որը ինքն էլ Կիրոնից էր լնդունել ծեռնարտութիւնը, քանի դեռ [Կիրոնը] ուղղափառութեան մէջ էր՝ իր հայրապետութեան առաջին տարում: Իր իսկ նամակներում հենց Կիրոնը յիշատակում է այս բանը: Արդ՝ Ցուրտափի եպիսկոպոսը բանառը եւ ապա նամակի միջոցով տեղեկացնում է Մովսէս հայրապետին Կիրոնի կողմից կատարուածներ մասին՝ խուժիկ եպիսկոպոսի վերաբերեալ եւ մնացեալ գործերի, որ նա արել էր, [եւ] որոնց [Մովսէս Ցուրտափեցին] տեսներով կամ իմանալով [ուրիշներից] ստոյգ վերահասու էր եղել: Նաև՝ թէ նա քաղկեդոնական դաւանանքն ունի՝ իրեն կեղծաւորութեամբ վարագութիւնը, ինչպէս որ հենց ինքն է պատմում իր նամակներում:

Արդ՝ այս երանելի եպիսկոպոսը, որի մասին ասացինք, թէ ճշմարտաքար եւ բարեփառ կերպով էր իրեն պահում՝ իբրև խաղաղութեան միջնորդ երկու կողմերի՝ հայերի ու վրացիների միջեւ: [Իրօք], ասես թէ՝ երկուսի միջեւ խաղաղութեան եւ հաւատի հաստատութեան միջնորդ լիներ, ինչպէս պատմում է «Գիրք բրոցում»: Քանզի [ինց] խաղաղութեան էլ միջնորդ էր եւ ուներ հայերեն ու վրացերեն կրթութիւն: Քանի որ իր մանկութեան հասակում զնացել էր Ցուրտափ գլուխարադաքը եւ այնտեղ դաստիա-

²⁴ Ուստանեսի եղոյշով տան Վրաց:

²⁵ Այսինքն՝ Սաւուի նման երեսպաշտութիւնից ինքնասպան լինելով:

բակուել էր ու սովորել եւ մեր եւ վրաց դպրութիւնները՝ աշակերտելով այն արորոր տիրակալոր երանելի եպիսկոպոսներին, որոնք նրանից առաջ էին: Ապա իրեն եւ շնորհուեց Տիրոջից՝ երեսուն տարեկանում յաջորդելու այդ արտիքին:

Արդ՝ երբ Մովսէս կարողիկոսը լսեց Կիրոնի արածների մասին, տարակուասների մէջ ընկած հոգս էր անում եւ սգում, ինչպէս Սամուելը Սաւուի վրայ՝ ասելով Աստուածաշնչի խօսքերը, թէ՝ «Զոջացի, որ Սաւուին քագաւոր դարձեցի Խրայէլի վրա»: Եւ այսպէս Կիրոնի պատճառով սգալով՝ իր մտքում ելք էր որոնում [ծանր] վիճակից: Ապա այնուհետեւ, սիրալիք նամակ է գրում Կիրոնին եւ ուղարկում Ստեփանոսն եպիսկոպոսի միջոցով, որն իր պալատում էր: [Նամակում] որոշ շափով անգիտանում էր նրա արածներին, որպէսզի գոյցէ կարողանայ գրաւել նրան եւ իմանալ նրա մեղկ մտքերը:

Արդ՝ գրում է, որ նախ զգոյշ լինի [իր] վարքում եւ արարքներում եւ հաստատուն մնայ ճշմարիտ հաւատորի մէջ, նաեւ հեռու լինի Քաղկեդոնի հայիոյական աղանդից: Միաժամանակ եւ խուժիկ նեստորականի մասին է գրում, որպէսզի նրանից իմանայ ստոյզը: Իսկ նա տակալին դեռևս քարցնում էր՝ խարենով պարզամիտներին եւ ժամանակաւորապէս փարատելով կարողիկոս Մովսէսի միտքը: Եւ այս [ամենը] հայոց անիշխանութեան ժամանակ էր, քանզի վերացած էր Արշակունեաց ազգի քաղաւորութիւնը, եւ մեր երկիրը երկու մասի էին բաժանել պարտիկներն ու հողմէացիները:

ԳԼՈՒԽ Բ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԻ ՆԱՍԱԿԸ ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒՐՈՆԻՆ

«Վրաց կարողիկոս Կիւրոնին եւ քո այլ աքոռակից եպիսկոպոսներին՝ Հայոց կարողիկոս Մովսէսից եւ իմ արռոակից այլ եպիսկոպոսներից սիրով՝ ողջո՞յն:

Նախկինում էլ քանի դեռ մեզ մօտ էիր, խօսել ենք քեզ հետ խրատի ու միխրարութեան խօսքեր: Ինչպէս սիրելի եղար ու աքոռակից, որպիսին որ [իիմա] էլ կաս, [այդպէս] էլ եղի՞ր, [որպէսզի] արժանաւոր կերպով զնաս Տիրոջ ճանապարհ եւ պահես նրա պատուիրանները մարուր սր-

²⁶ Տես Ա Թագ. Ժ 11:

տակ և ամենուն ծառուր համառույթ։ Ես գօռ շանսու վարդում և արտաքինու, բարձր հոգուն եւ եռվու տպանուն և զօրոյ լինես հօսքի [հուսնոր]. որ թե վաստակուեց։ Անեւ [պատես] Տիրոջ բալոր միս պատուի իրանները որ բավանդակում են այդ խօսքի մէջ։ Եւ կրկին եմ զօրում նոյնը [բալ] արժանաւորապէս քննա Տիրոջ ճանապարհը և երանեալ լինես բայ մարզարի խօսքի. Եւ շետաւես ամբարիշտների խորհուրդներին. և յիշես Աստուծացնի Հիմ և Նոր կտակարանների¹ բոլոր խօսքները որ պատուիրում են մեզ պատես Տիրոջ պատուի իրաններն ուղիղ մարդու ու ճշմարիտ խոսնութեամբ. և շխտուրել Տիրոջ ճանապարհից աջ կամ ձախ։ Եւ ես լուսնիկանայի նոյնը լուկ թեզնից։

Խսկ այժմ լուսն եմ. թէ թեզ մօս հերձուածներ կամ. և իմ-որ չափով հաւատացի [դրան]։ Բայց հաւատացի. որովհետեւ վաստակելի վկանեփ [կորդից] ծանուցուեց։ Եւ լսեցինք այսպէս. թէ մի խուժիկ նեստորուկան մարդ եկա թեզ մօս և թեզնից եայսկուպսի ձեռնադրութիւն ընդունեց։ Եւ շափազամց զարմացայ. քանզի այնպիսի մարդուն արժանի էր ոչ թէ այդ պատուին արժանացնել. այլ պատժել և հաւատացեալների ժորվում շրնորնել. քանի որ գայլը երթեք չի բնակում ոչխարների մէջ. խսկ երէ երթեն պատահում է. որ բնակուի. եղուուում ու ցրում է նրանց։ Նմանապէս նաև գողերը. որովհետեւ գողը չի գայ. երէ չի [զալիս]. որ գողանայ. սպանի ու կորցնի. ասաց մեզ Տէրունական խօսքը. Որովհետեւ այնպիսիները գողեր են. աւազակներ և յափշտակող գայլեր։ Եւ դարձեալ սուս առարեալներ [են] և նենգաւոր ծառաններ. բայց կերպաւորում են ոչխարների գգեստներով. խսկ ներսից յափշտակող գայլեր են։ Այնպիսիներից մեզ գգուշանալ երանայեց քաջ հովիր. որն իր անձը զոհաբերեց ոչխարների համար². եւ յետոյ վրէժի հատուցման օրն է հատուցելու նրանց դէպի ձախակրզը [նրանց] առանձնացնելով [են] ասելով. «Գնացէք. իմ կորմից անիծուածներ», եւ դրա շարանակուրեան խօսքներ։ Եւ դարձեալ. թէ «Հեռացէք իմ ինձնից. բոլոր անիրաւ ծառաններդ. քանզի չեմ ճանաշում ձեզ»³. Նաև կիսելու է նրանց և նրանց մի մասին անհաւատների հետ է գցելու և ուղարկելու այս տեղը. որը պատրաստուած է սատանայի ու նրա հրեշտակների համար։

Արդ գիտենք. որ անգիտութեամբ ես արել այդ։ Այժմ դարձիր եւ գոյշ՝ ապաշխառութեամբ հանդերձ. եւ արցունքներով ասա դու մարզարի խօսքը. «Տէ՛ր. մի յիշիր իմ մանկութեան և անգիտութեան մեղերը»։ Եւ

¹ Եթ ժք 17:

² Յոդի ժք 2:

³ Ղուկ ժք 27:

այլեւ այն խուժիկին բնակութեան տեղ չտաս հաւատացեալների մէջ։ Եւ մեծ սաստումով պատովիրին, որպէսզի նրան ոչ որ իր տանը չյանդանի ընդունել. կամ որեւէ ձեւով նրան ողջոյն կամ բնակուելու տեղ տալ քո իշխանութեան սահմաններում։ Եւ դարձեալ թող քո հաւատացեալները երբեք ողջոյն չտան նրան. քանզի աստուածային պատուիրանից իրաման ենք առել ողջոյն չտալ այդպիսիներին։ Խսկ դու [ինքով] ապաշաւիր արտասուզով եւ աղքատներին ողորմութիւն [քաֆաննելով], եւ ապաշխարիր մեծ զղումով. որովհետեւ ապաշաւելը մեղքերից դադարել է [նշանակում]։ Քանի որ. երէ մեղը գործես՝ պէտք է յետ կանգնես. ասում է. եւ երէ ուղրուես՝ պէտք է շարունակես. եւ երբ յետ դառնաս՝ պէտք է նաև հոգոց հանես և հեծեծաւ։

Արդ՝ կը վերադառնան դէպի Աստուած [նրանք], ովքեր խսնդրում են նրան. գրուած է [Աստուածաշնչում], քանզի Աստուած միայն դարձն է պահանջում։ Ասում է՝ «Դարձէք դէպի ինձ. եւ ես կը դառնամ դէպի ձեզ»։ Արդ՝ մի լինիր շարի յիշատակ. եւ չես լինի շարիքների գտնող. [ես] քանի որ քազմարի պատուիրանների յիշատակութիւն ունես՝ զանց մի արարի գործերը։

Արդ՝ սրանք Սուրբ Գրքից թեզ պատուէր. որ սիրես քո Տէ՛ր Աստծուն. քանզի այս է Աստծոյ պատուիրանը. որ սիրենք նրան մաքոր սրտով եւ անկեղծաւոր հաւատով։ Որովհետեւ գրուած է. «Սիրիր քո Տէ՛ր Աստծուն քո ամբողջ սրտով ու զօրութեամբ», եւ մնացեալը եւս։ Այս է առաջին պատուիրանը. եւ բոլոր Աստուածաշնչն զրքերը այս խօսքն են բովանդակում։ Արդ՝ պահիր սուրբ հայրերի հաւատն ու խոստվանութիւնը. որ իրենք դաւանեցին. եւ նոյնը մեզ աւանդեցին երեք հարիւր տասնուրը. ուրոնք Նիկիայում էին. եւ հարիւր յիսունը. որ Կոստանդնուպոլսում էին. եւ երկու հարիւրը. որ Եփեսոսում էին։

Իմացիր [նաև] այն. որ արքայից արքայ Կայատի ժամանակ պահանջ եղաւ հաւատքների քննութեան. եւ հոռոմները Քաղկեդոնի հաւատքն ընդունեցին. խսկ մեր եւ ձեր երկրները հրաժարուեցին ու հեռացան. եւ դեռևս զրաւոր կայ եւ պահում է մեր եւ ձեր հաւատի միաբանութիւնը։ Արդ՝ մի դժիք մեր հայրերի ուխտը. որ երկուսի միջեւ կնքուեց. եւ մի հեռացիր մեր միաբանութիւնից. մի թողնիր մանկութեան ուսմունքը եւ մի մոռանայ աստուածային ուխտը։ Եւ ձայնակից մի լինիր հոռոմներին եւ քո սրտով մի դառնայ դէպի Եղիպտոս. այլ յիշիր. [թէ] ինչու դրս ելար Նոր Եղիպտոսից եւ հոռոմների փարաւոնի [նման] թունաւոր աշխարիից [դէպի] թեզ փշոլ [ինդիմից] եւ չար վերակացուներից ու դառը ծառայութիւնից։ Մի յանդիմանուիր մարզարէց. թէ՝ «Նրանք շմնացին Տիրոջ ուխտին»

[հաւատարիմ] եւ նրա պատուիրանով չկամեցան լընթանալ»¹: Եւ մի այլ տեղում [ասում է], թէ՝ «Դարձան իրենց սրտերով դէպի Եզիպոս»²: Արդ մի՛ յենուիր եղեգնեայ կոտրուած ցուային, որովհետեւ եթէ յենուես, որ անձին քիչ վնաս չեն հասցնի:

Մի՛ քանդիր հայրենի պարիսպը, որ սուրբ հայրերը հաստատեցին հաւատի վեմերով: Որովհետեւ ով քանդրում է պարիսպը, օձը խայրում է նրան, եւ ով գրուում է վեմը՝ իր անձն է կորստի մատնում: Արդ՝ հաստատուն պահի՛ր երեք սուրբ ժողովների խոստովանուրինը, որ մեր ու ձեր հայրերը հաստատեցին իրար միջուն միաբանական գրով, որը դեռեւ գրյուրին ունի: Եւ փախի՛ր անշափ հեռու Քաղկեդոնի պիղծ ժողովից ու Լետնի անընդունելի տունարից: Եւ նզովի՛ր բոլոր հերձուածողներին՝ առաջններին, միջիններին ու վերջիններին, որոնց սուրբ հայրերը նզովեցին, եւ մենք ենք նզովում, եւ վերացրու ամենայն շարը [քրո] միջից: Քանզի գրուած է. «Վերացրե՛ք, ասում է, շարը ձեր միջից»³: Եւ դարձեալ, թէ՝ «Եւ իք նրանց միջից ու բաժանուե՛ք, եւ պիղծերին մի՛ մօտեցեք, եւ ես ծեզ կ'ընդունեմ»⁴, ասում է Տէրը: Արդ՝ այն խուժիկին հալածի՛ր քո երկրից եւ աշխարհից, [որ] դարձեալ բունաւոր արմատը վեր չքարձրանայ եւ նրանով շատերը չպիծուեն:

Յշշի՛ր, որ եկար բնակուեցիր այս Սուրբ կաքուիկէի հովանու տակ եւ քո սրտի հաւատարմութեամբ ծառայեցիր հոգեւոր ծառայութեան շնորհի, որ քեզ վստահուեց մեր կողմից: Եւ մենք վստահեցինք քո [ցուցաբրած] կեաճիմ⁵, քո սիրու դիմաց կատարեցինք քո կամքը՝ այդ երկրում քեզ առաջնորդ նշանակելով: Քանի որ թէեւ ազգով ու բնակութեամբ այդ երկրից էիր, սակայն շատ վաղուց հեռացել, օտարացել էիր՝ հոռմեացիների երկիրը գնալով: Իսկ Հոգու շնորհի, որ քեզ կոչեց այդ հոգեւոր կոշման, ասես ինչ-որ բնրոնումով ձգեց եւ հանեց քեզ երկարէ հնոցից եւ հոռոմների բնութեան հալուածքների միջից, որովհետեւ Տիրոջ փառքը ծովի կրգիներում է⁶, եւ նրա անունը քող փառաւորուի բոլոր հեռաւոր տեղերում:

Արդ՝ մի՛ եղիր քո եւ քո ժողովրդի կորստեան պատճառ, որպէսզի մի՛ արասց՝ քո պատճառով Տիրոջից նզովը հասմի քո երկրի ժողովրդի վրայ ըստ մարգարէի ասածի, թէ՝ «Նզովքները կ'ուտեն երկիրը, որովհետեւ մելք գործեցին նրա բնակիչները, եւ քերը մարդ մնացին»: Եւ դարձեալ,

¹ Ստոդ. ՀԵ 10:

² Գործ Է 39:

³ Ա Կորն. Ե 13:

⁴ Բ Կորն. Զ 17:

⁵ Ես. ԽԴ 15:

թէ՝ «Կ'առարի Տէրը քեզ անարգանքն ի պատիւ եւ փառքը կը հանի քեզնից»: Եւ դարձեալ, թէ՝ «Երբ Տէրը կը ստեղծի ամեն ինչ, կը բարձրացնի իր ձեռքը մեծամտի վրայ ու նրանց, ովքեր [իրենց] անձերն իմաստունների շարքին են դասում, եւ [նվշեր] խորհուրդ խորհեցին, բայց ո՛չ Տիրոջով»:

Արդ՝ այս բաները մեծ վշտից ու սրտի նեղութեամբ գրեցի քեզ: Չանզի Աստծոյ սէրն է ստիպում մեզ ասել ճշմարտութեան խօսքերը, որ Նրա համար են:

Ողջ եղի՛ր Տիրոջով: Եւ այս նամակին քո պատասխանը, ըստ Աստծոյ կամքի՝ քող որ մենք լսենք: Ողջ եղի՛ր Տիրոջով»:

ԳԼՈՒԽ Գ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԻ ՆԱՍԱԿԻ ՊԱՍԱՍԽԱՆԸՆԸ ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ

«Սրբասէր եւ պատուական իմ տէր, Հայոց կաքողիկոս Մովսէսի, եւ քո բոլոր արոռակից եպիսկոպոսներին Վրաց կաքողիկոս Կիւրոնից խոնարի երկրագութեամբ եւ սիրով՝ ողջո՞յն, եւ իմ բոլոր արոռակից եպիսկոպոսներից կրկնակի խոնարհությամբ եւ երկրագութեամբ ողջո՞յն եւ օրինութիւն ձեզ Սուրբ Խաչից:

Ձեր նամակները, որ գրել էիք, ստացանք եւ վերահասու եղանք, եւ այն պատգամները, որ տուել էիք, լսեցինք եպիսկոպոսից: Եւ որ նամակով ու խօսքով հոգացել էիք մեզ [համար] խրատական վարդապետական խօսքով, նաեւ յանդիմանել էիք՝ որպէս տէր, վարժապետ եւ հոգեւոր հայր, որպիսին եւ էք խկապէս, երկրագօնեցի եւ շնորհակալ եղայ ձեր հոգեւոր սիրուց: Բայց ես իմ եպիսկոպոսներով ու երկրիս երեւելի մարդկանցով խորհուրդ էի արել [եւ] օրէնք համարել՝ շարգելել յետ դառնալու բոլոր նրանց, ով զղում է եւ ապաշխարում: Իսկ երբ իմացանք նրա շարութիւնը՝ կրկին հեռացրեցինք մեզնից եւ արգելեցինք, որ մարդիկ նրան ողջոյն տան:

Իսկ որ գրել էիք, թէ հերձուածներ կան մեզանում, մենք ենս չինք հաւատացել, բայց յետոյ հաւատացինք՝ վստահելի վկաների [ասելու] պատճառով: Ահա մենք իմքներս իսկ ասացինք մեր կողմից արածները: Եւ որ գրել էիք արքայից արքայ Կաւատի ժամանակի մասին, զիտենք, որ այդպէս է եղել, ինչպէս որ շատ անզամ լսել ենք: Եւ ինչ որ մեր եւ ձեր հայրերի միաբանութեան, ովտաք եւ հաւատի հաստատութեան մասին էինք զուել, մենք անփոփոխ պահպանում ենք այն: Եւ ինչ որ մեր եւ ձեր երկրների մասին էիք գրել ու ասել միաբանութեան վերաբերեալ, որ մեր ժա-

նամակ է, մենք նոյն միարանոթիւնն էլ պահպանում ենք և չենք փոփոխում: Իսկ որ խաժիկի համար էիր հաստատել ձեր իրանանները զրայք ու բանաւոր, ինչպէս քիչ վերեւում գրեցինք, շուտ ենք ենուացրել նրան մնացնից և մերոնց իրանայել ենք շրմունել նրան:

Իսկ մենք ամեն ինչով հնագան ենք ծեղ և ձեր իրանաններին: Ուզ և դէք Տիրոջով և մեզ համար աղօքք արէք»:

ԳԼՈՒԽ Դ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՍԱԿԻ ԵՒ ԿԻՒՐՈՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՆԳԱՄԱՆՉԵՐԸ, ԹԷ ՈՐՏԵՂ ԳՏՆՈՒԵՑ ԵՒ ԻՆՉՊԻՒ

Արդ՝ Հայոց կարողիկոս Սովուսի այս նամակը և Կիւրոնի պատաժան «Գլուխ թլրոցում» զգտանք՝ արտագրելու համար, և մեծ ջանքերով հազի կարտղացանք գտնել: Որովհետեւ ես վարդապետներից ոմանցից վաղոց լսել էի, թէ Կիւրոնի կորստեան սկիզբը Սովուսի ժամանակ եղաւ: Եւ ապա սակաւ շափով սկիզբը տախս է Կիւրոնը իր պատախան նամակում, որ գրուել է Հայոց կարողիկոս Աքրահամի ժամանակ: Եւ ասուն է այսպէս: «Հայոց հայրապետ Սովուսն, ասուն է, որք քեզնից առաջ [եր] այդ արտիին, մեզ գրեց խուժիկի մասին, այլ ոչ թէ հաւատի խնդիրների վերաբերեալ» (որդ, [սակայն], յետոյ կարորում ենք իր իսկ նամակում):

Արդ՝ մենք այդ գրածից իմանալով այդպիսի նամակի մասին, և վստահելի մարդկանցից [և] լուրջ, ինչպէս ասացինք՝ սկսեցինք փնտրել և գտանք Տիֆխիս քաղաքում, որ Վրաց նահանգում է. Կովկաս լեռան ստորոտում, Կուր կոշտող գետի վրայ: Զանզի մի քահանայ, որի անոնը Կիւրակու էր, գտել էր վրաց գրեթեալ և հենց ինքը մեծ շարշարանքով²⁶ արտագրել ու բարգմանել էր մեր լեզուով: Գրաւոր տուեց մեզ, քանզի ինքը շատ լաւ²⁶ գիտեր վրաց գիրն ու լեզուն: Եւ մենք վերցնելով՝ ստոյգ քննուամք գրեցինք ծեր հարցալութեան [փարատման համար]:

ԳԼՈՒԽ Ե

ԿԻՒՐՈՆԻ ԵՐԿԻՒՂԻ ԵՒ ԿԱՍԿԱԾՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Արդ՝ քանզի Կիւրոնը շամոցնեց համարձակորեն հակառակուել Հայոց կարողիկոս Սովուսին, ինչպէս [հակառակուեց] Աքրահամին, թէպէտ

արդէն [այդպիսի] երկունքի ցաւով բռնուած էր, որովհետեւ վախենում էր, առաջին՝ որ Մովսէսի մեծ երախտիքից պարտուի ու ամորով մնայ, և երկրորդ՝ որայէսզի մնար այլ ժամանակի, երբ անօրէնութիւնը ծնունդ [կ'առնէր], ինչպէս որ [խակապէս] եղաւ: Զանզի Հայոց կարողիկոս Մովսէսը մեռուա, և վրայ հասաւ Կիւրոնի ժամանակը և խաւարի իշխանութիւնը:

Զանզի այն խուժիկը, որին մասին խօսեցինք, որ Կիւրոնի կորստեան սկզբնապատճառը եղաւ, իբրեւ իժի ծագ քաքնուած էր քարերի ծակերում ու ծերպերում, [ուստի] և [Կիւրոնն] ինըն իրեն այս կամ այն բանն էր յերիրում և մեղքերի պատճառներ առաջացնում: Զանզի պատասխանը թերի էր և թերեւակի խօսքերով ու կասկածանքներով էր արտայայտուած և վախսիւով էր անում, եւ ասում [էր] «Համարեցի, թէ օրենքով եմ այն արել՝ չարգելել²⁶ որեւէ մէկին զղջան գալ», եւ կամ թէ [ասում էր] «Մենք մեր հայրերի դրած ուխտը հաստատուն ենք պահում», եւ մնացեալ բանները: Բայց այս խօսքերը խորանանկութեամբ էին ասում, քանզի իրեն նենցութեամբ բացըրել էր: Ասում էր՝ «Այն խուժիկին հեռացրել ենք և մերոնց իրանայել ենք նրան ողջոյն շտալ», իսկ ինքը բոլորովին չէր քածանում նրանից, թէպէտեւ ծածուկ, բայց պահում էր նրան մինչեւ անօրէնութեան մէջ իր բացայայտուելու ժամանակը:

Բայց նախքան նրա շարութեան ի յայտ գալը, որ եղաւ մինչեւ Աքրահամի երբորդ նամակի պատասխանը, որ գրեց Կիւրոնը անօրէն ու բունաւոր խօսքերով, քանի որ տակալին քաքնուած էր պահում իրեն կեղծաւորութեան վարագոյրով, [սապա] նաեւ չէր մտարերում Սուրբ Գրքի խօսքերը, որ առակներով ու օրինակներով պարսաւում է կեղծաւորներին և նիստամանակ իմացնում պատիժն [ու] պատուհասը: Զանզի աստուածայիններից մէկն՝²⁶ ասում է, թէ կեղծաւորի լոյսը ծշմարտապէս խաւար է: Եւ մէկ ուրիշն [ասում է], թէ կեղծաւորներն իրենց խօսքերով ու դէմքերով որոշ բաներ հաւատալի են ցոյց տախս: Եւ դարձեալ, թէ մէկի մասին խօսքով ասում է, թէ փիլիխոփայ է, մինչդեռ փիլիխոփայ չէ, այլ այնպիսի կերպարանք է ընդունում, թէ իբր արուեստի գործի մասին է պատմում, իսկ ով որ ներքուստ փիլիխոփայ էր, արտաքինով դարբին երեւաց: Ահա վար բերուեց նրա դիմակը, որով ծածկուել էր նա, և բացուեց նրա խարթութիւնը, եւ պարզուեց, որ ներքուստ ազնուական էր, արտաքրուտ՝ ծառաւ: Եւ այսպէս կեղծաւոր տեսքը կամենում են երկու դէմքով ցոյց տա:

Եւ սրանք սատանայի գործեր [են]: «Նաեւ սատանան է լոյսի իրեշտակի կերպարանք ընդունում», ասում է աստուածային առաքեալը: Իսկ ինքը Տիրն ասում է. «Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս՝ իբրեւ կայդ՝ Այսինքն՝ առաքեալներից մէկը:

ծակը”¹: Եւ դա՝ որտվիետեն կեղծաւորութեամբ էր պահում իր բնակատելիս, որտեղից լինեաւ: Քանզի կամեցաւ, որ ինքն աւելի վեր լինի բոլորից: Այրելով փառքը՝ շհասաւ նրան, ինչին ճգոտում էր, եւ եղաւ զրկուած նրանից, ին որ ուներ ամբողջապէս: Եւ լոեց այն փառաքանութիւնից, որի մէջ կարգուած ու սահմանուած էր:

Արդ՝ Կիրոնն այսպիսի մտքով շաբժուեց՝ իրեն ծածուկ կեղծաւորելով: Նա չգիտէր [Սոլքը] Գրքի խօսքը, թէ՝ «Լոյսի դէմ յանդիման խաւարը յայտնի է դառնում»², եւ ինչ որ սրանց նման [է]: Եւ դարձեալ, թէ՝ «Այլատեսակ³ ինչ [էլ] լինի, քարուն մնալ չի կարուի»: Արդ՝ Կիրոնն այսքանզ եւ այսպիսի քաներով իհնակ տարի մնաց՝ երկու տարի Հայոց կարողիկոս Մովսէսի ժամանակ եւ երկու տարի նրա մահից յետոյ մինչեւ Աքրահամի ժամանակը, որը Մովսէսից յետոյ յաջորդեց հայրապետութեան արողին:

Իսկ Աքրահամի առաջին տարում [Կիրոնը] սկսեց անօրէնութիւն գրիծել եւ բացայայտել իր չարութիւնը: Քանզի երբ յաճախացան Աքրահամ կարողիկոսից նրան առաքուած գրութիւնները, ապա այնուհետեւ [Կիրոնը] նրա դէմ պատասխան տուեց իր երկրորդ նամակում. «Կամենում էր, թէ չէր կամենում, մեր հաւատոն, ասում է, այդ է»: Բայց թէալէտեն նախապէս նրան գրել էր Վլիրանես Ծերբողը, որը սուրբ Գրիգորի արուոի տեղապահն էր, եւ ինացել էր նրա չարութեան չափը, բայց քանի որ այդ ժամանակ հայրապետ չկար, նա չկարողացաւ ոչ մի քան հնարել, միաժամանակ եւ Հայոց երկիրը երկուաի էր բաժանուած: Եւ նա տարակուածքի մէջ լինելով՝ ոչ մի քան չկարողացաւ հնարել, ո՛չ իոգեւոր սաստումով եւ ո՛չ մարմնաւոր պատժով, քանի որ իոգեւորը տակաւին հաստատուած չէր, իսկ մարմնաւորը հեռու էր եւ օտար:

Իսկ Սմբատը, որի մասին ասացինք, թէ Հայոց մարզպան էր⁴: [մի] քարի, քարեպաշտ եւ հաւատարիմ, ուղղափառ հաւատքի մէջ հաստատուն մարդ՝ զիտէր Կիրոնի մտքերը, որ ճայնակից եղաւ իուուններին, [քայց] չկարողացաւ կայսրին իմացնել եւ ոչ էլ արքային ծանուցել Կիրոնի արածները, քանզի զիտէր, որ ոչ մի օգուտ չի լինի: Միաժամանակ նաև իմացել էր կայսեր մտադրութիւնը, որ Կիրոնի հետ միաբան է, եւ նրա հրամանով է⁵ այս քանը, քանզի [դա] մեզ կարծել է տալիս Կիրոնի խօսքը, որ իր նամակի մէջ գրում է Աքրահամին ու Սմբատին, թէ՝ «Ծոդ Աստուած պահպանի կայսրին, որի մեր աշխարհը պահպանեց»: Եւ դարձեալ, թէ՝ «Աստուած թող փառաւորի արքային, քանզի նա փառաւորուեց»:

¹ Դուկ. Ժ 18:

² Եփես. Ե 13:

³ Սմբատի՝ Հայոց մարզպան լինելու փաստը չի հաստատում որեւէ այլ աղքիւով:

Եւ արդարեն այնպէս եղաւ Կիրոնը, որ մարդկանց փառքն աւելի սիրեց քան Աստծոնը, եւ յոյսը լրեց իր բազկի զօրութեան վրայ եւ չսեց մարգարէի կոլմից [աստածը], թէ՝ «Այր յուսացէք մարդկանց որդի իշխանների վրայ, որովհետեւ նրանց մէջ փրկութիւն չկայ», եւ սրանից յետոյ ասուու խօսքը: Եւ դարձեալ միւս մարգարէի լիսօսը], թէ՝ «Անծուած է [նա], ով իր յոյսը դնում է մարդու, այլ ոչ թէ Աստծու վրայ»:

ԳԼՈՒԽ Զ

**ԹԷ ԻՆՉՊԻՍ ԿԻՒՐՈՆԸ ՑՈՒՐՏԱԽԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄՊՎԱԾՍԻՆ ՆԵՆԳՈՒԹՅԱՍՄ ԻՐ ՄՈՏ ԿԱՆՉԵՑ, ԻՍԿ ՆԱ
ՉԳՆԱՅՅ ԵՐԿԻՒՄԻ ՈՒ ԿԱՍԿԱԾԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ, ԲԱՅՑ
ՅԵՏՈՅ ԳՆԱՅՅ ՆՐԱՆ ՅԱՆԴԻՍԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԹԷՊԵՏԵՒ
ԽԱԽՏԵՑ ԻՐ ՈՒԽՏԸ**

Իսկ երբ Հայոց կարողիկոս Մովսէսը մեռաւ⁶, քանի որ Կիրոնը ներբուտ կասկած ուներ Ցուրտախի եպիսկոպոսի վերաբերեալ, թէ նա է բացայայտել իր չարիքները, [ապա] մարդ է ուղարկում նրա մօս եւ կանչում իր մօս, քանզի երկրի իշխանների հետ միասին մտադրուել էր չարիք հասցնել նրան: Իսկ երբ նա [Մովսէսը] իմացաւ Կիրոնի նենգութեան մասին, յանձն չառա զնաւ, միաժամանակ նաև՝ զստ այն խօսքի, որ իրամայում է Աստծոյ առաքեալը, թէ՝ «Անիրաւ մարդոց մէկ եւ երկու անզամ խրատուելոց յետոյ իրամարտուիր»⁷, քանի որ այնպիսին խոտորուած է եւ մեղանչում է՝ ինքն իրեն դատապարտելով: Իսկ նա ոչ թէ մէկ անզամ եւ երկիցս, այլ շատ անզամ էր ճանաչել նրա չարութեան չափը [են] չկամեցաւ զնաւ նրա մօս:

Նաև իր սրտում ուխտ էր արել [Մովսէսը] բնաւ չզնալ նրան տեսնելու, քանզի խոցուած էր նրա գաղտնաձիգ նետերից, որոնցով խաւարի մէջ էր զցում նրանց, ովքեր սրտով ուղլիլ են: Այլ միայն այս էր իր մտքում լրել, թէ երեւ նրան [Կիրոնին] իմանալի դարձնեն իր իսկ գործած չարիքները, թերեւ յետ կը կանցնի եւ կը զոջայ: Քանի որ ցաւ էր [ապրում] նրա համար այն պատճառով, որ ինքը միջնորդ ու սիրոյ շաղկապ էր երկու կողմերի՝ հայերի ու վրացիների միջեւ:

⁶ Այսինքն՝ 604 թ.:

⁷ Տրտ. Գ 10:

ԳԼՈՒԽ Ե

ՅՈՒՐՏԱԿԻ ՄՈՎՍԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՆԱՀԸ

ԿԻՒՐՈՆԻ ՄՕՏ

Բայց սպաս յետոյ գնարով խախտեց իր ուխտը՝ «Այն պատճառով, առաջ էք. որ իճճ տեսնելով զուց կ'ամայի այն ուխտից ու դաշինքից, որ իճճ հետ միասին կնքեցին Հայոց և Վրաց հայրապետները երկու կողմերի մքեն»։ Եւ գնարով Տփիսիս կօչուող քաղաքաւ հանդիպում է Կիւրոնի, որի ձասին նախապէս չօրբոր ճառում [գիտամ] յիշաւակեցինը։ Քանզի նա Սուրբ Սիոնի գարբում էք. որ արքանի ապարանքի մօտ էք. Եւ Կիւրոնի պատճառորները նրան տեսնելով յայրոնու են սրան [Կիւրոնին]։ Իսկ նա նրան ընդառաջ է ուղարկում իր սպառաւորներից մէկին և արգելուն է նրան [տեսնել] իր երեսը։ Իսկ նա [Սովումը] գնում է Յակոբ անունով մի քահանայի առան. որ մօտիկ էր [քնակում] Սուրբ Սիոնին, և այնուն իճճ օր մնալով ապա պատզամ է յուս Կիւրոնին։ Եւ նրա հետ խօսում է դատապարտելով ոչ մի բան չքարցնելով նրանից։

«Ես. ասում է, գիտեմ, թէ ինչ բերութիւն ունեմք որ ուղղափառ և սուրբ եատափ առումով, որը մեզ սովորեցրին առիք եայրերը նախօրօք քարգուած սուրբ առաքեալների կողմից եւ առիք Գրիգորի կողմից հաստատուած, և նոյնը աւանդուած մեզ երեք առիք ժողովներից Նիկիայի երեք եարիր տասնութից, եւ եարիր յիտոնից, որ Կոստանդնուպոլսում [Եին], և երկու եարիրից, որ Եփեսոսում [Եին], և մեր երկու՝ Հայոց և Վրաց երկրները նոյնն ունեն, եւ յայժմ էլ ունեն։ Արդ ի՞նչ եղաւ քեզ, ինչո՞ւ դարձար մեր անխախտ, անշարժ, հաստատուն ու սուրբ հայատի խափանից, որ սուրբ եայրերի կողմից հաստատուեց և արեաց նոյնը հաստատուն պահելու։ Քանզի նրանք մեծ հանդեսով եւ մեծ շարշարանքով, այսահայած կրոծանեցին սատանային և նզովեցին բռնը եերձուածողներին առաջիններին, միջիններին և վերջիններին, մանաւանդ Քաղկեդոնի անիծեալ ժողովն ու Լետնի պիղծ տոնմարք եւ նրանց, ովքեր նրանց հայտացին։ Եւ մինչեւ մեր ժամանակները անխախտ կերպով հասաւ նրանց կողմից աւանդուածը։

Իսկ երանելի Մովսէս հայրապետը, որից դու ծեռնադրութիւն ստացար, այդ պատճառով իր տանից ընտրեց քեզ համարելով քեզ վստահելի, որպէսզի մեր հայրերի ուխտն ու դատանութիւնը հաստատուն լինի. Եւ մենք ապրենք խաղաղութեամբ։ Եւ քեզ վստահեց հայրապետութեան այդ արոռը, որպէսզի հայտաշեալ ժողովոյի շալիղներում ոչ թէ քարեր կու-

տակես, այլ խոր ու խոչը մաքրես նրանց ճանապարհներից։ Իսկ դու այդ ամենը [իրրեւ] արգելքներ զցեցիր Նրա ճանապարհներին, որպէսզի շզնան Տիրոց ուղիղ ճանապարհներով, որով զնացին մեր հայրերը։ Նաեւ այդ պապականի խուժիկին մէջ զցեցիր, քանզի իր մէջ ծածկուած էր քունակութիւնը, որ նա ունէր ինուց Քաղկեդոնի քացախուտ շարութիւնից, որ նրան էր հասել հրեական խմորագնդից։ Արդ՝ ես անպարտ կը լինեմ եւ քափուած քո միջնորդութիւնից։»

ԳԼՈՒԽ Ը

ԹԷ ԻՆՉ Է ՊԱՏՄՈՒՄ ԿԻՒՐՈՆԻ ՄԱՍԻՆ ՍՐԱՆԻՑ ՅԵՏՈՅ

Արդ՝ այս նա ասաց Կիւրոնին պատգամազրի միջոցով՝ իրեն մահուան ու ծեծի վտանգի տակ դնելով իմբնակամօրէն եւ իմբնայօֆարութեամք, քանզի նրան քշնամի էին բոլոր՝ իշխաններն ու ժողովուրդը՝ Կիւրոնի հանդերձ։ Եւ նա [Կիւրոնը] պատասխան շտուեց նրա այդքան քազմաքիւ յանդիմանութիւններին, այլ որպէս իժ և վիշապ խցել էր իր ականչները, որպէսզի չլի ճարտար օճարովչի ծայնը¹։ Նաեւ ոչ մի չար բան չէր կարող խօսել նրա դէմ կամ անել, որովհետեւ խցուում են այնպիսինների բերանները, որոնք անիրաւ բաներ են խօսում²։ Քանզի իր մտքում [Կիւրոնը] խորհում էք, թէ՝ «Երբ Հայաստանում կարողիկոս նստի, դարձեալ իմ արածների մասին խնդիր է լինելու», [մտածում էք], որպէսզի գուցէ կարդանայ ինչո՞ր հնարքներով այլ ծեւով խօսել, քանի որ արդէն տակակին երկու ոտքով կադում էք [հայատքում]։

Իսկ երանելի եախսկոպոսը քարեյաջող վարեց մարտը՝ բազմաքիւ խօսքերով յանդիմաններով նրան, քայց ոչ մի օգուտ շարեց։ Դրանից յետոյ վերադարձաւ իր թեմը՝ մեծ ընդարմացման եւ տրտմութեան մէջ ընկնելով Կիւրոնի անդարձ լինելու, միաժամանակ նրա նենգութիւնը կանխատեսելու պատճառով։ Եւ իր թեմակիցներին յանձնելով Հոգու շնորհներին, նրանց պահապան բղոնելով նրան, ով պահպանում էր Խորայէլը՝ մեծ տրտմութեամք գնաց Արագածոտն գաւառի այն վանքը, որ կոչում է Յովհաննու [վանք]³։ Եւ այնտեղ մեծ սիրով ու պատուով ընդունուեց Քարենաս վանացերեցի կողմից։ Եւ այս Վրանես Քերողին⁴ ուղղուած իր նամակում իր խոր գոկունակութիւնը յայտնեց, եւ իր սրտու դարձեալ

¹ Սաղմ. ԾԷ 5:

² Սաղմ. ԿԲ 12:

հաստատեց Կիրոնին [շտեսնելու] մասին իր առաջին ուխտը, [քացի] միայն եթե [նա] դառնայ դէպի ծշմարտութիւնը եւ ուղղուի:

Իսկ Կիրոնը Ցուրտափ եպիսկոպոս՝ իրենից հեռանալու մասին լոր է տարածում այսպէս, [իրբե] թէ՝ «Գիշերը գաղտնի փախաւ մեզնից իր ինչ-որ շարութեան պատճառով», նաեւ՝ [իրբե] թէ՝ նրա [Կիրոնի] քազու խօսքերի [պատճառով], որ խօսուել էր նրա հետ հաւատքի մասին: Եւ դարձեալ յանդիմանութիւնների ու մեղադրանքների մասին ոչինչ չպատմեց նրանցից, թէպէտ եպիսկոպոսը բոլորին ամեն ինչ պատմել էր: Եւ նոյն Կիրոնը Աքրահամ Հայոց կարողիկոսին գրած իր այն նամակի մէջ է ասում: «Նրան, ասում է, մենք չենք հանել մեր թեմից, այլ ինքը գիշերը փախուստով զնաց իր ինչ-որ յանցանքների պատճառով»: Եւ այսպէս անբրատիթեամբ ու ստորթեամբ էր պատասխանում իրայիններին եւ օտարներին: Քանզի ամեն մէկը, որ անիրաւ է, պատասխանի մէջ պատրաստ է, քանզի անիմաստ մտքով էր վարուել ամենքի նկատմամբ: Որպես մերերում բռնուած հոգիները խելամտութիւնից էլ են ընկնում:

Արդ՝ Կիրոնը թէպէտել վաղուց եր ատել ծշմարտութիւնը, ինքն [Էլ] ասուուծ էր ծշմարտութիւնից: Քանզի սկզբից եւեր թշնամի էր Ցուրտափ եպիսկոպոսին՝ կասկածելով, որ նա է յայտնել իր շարութեան մասին: Եւ ցանկանում էր նրա մակը, քանզի նա [եպիսկոպոսը] գիտէր Կիրոնի ամեն ինչը ստոյգ կերպով՝ թէ՝ քարոնը եւ թէ՝ յայտնին, ինչպէս ինքն ասաց [իր] պատգամագրի միջոցով: Քանզի առաջ, մինչ դեռեւ հրապարակաւ չէր գուժուել, շատ անգամ ծածուկ յանդիմանուել էր նրա [եպիսկոպոսի] կողմից: Իսկ Կիրոնը ասում էր նրան իր յանդիմանական խօսքերի պատճառով՝ նրան թշնամի համարելով. «Աստեցին, ասում է, դրենքի առջեւ իրենց յանդիմանիշներին եւ սուրբ խօսքերը ալիոծ դարձրին»²⁴: Քանզի երբ խրատը չսեց, ապա յանդիմանուեց, որովհետեւ՝ «Խրատն առանց յանդիմանութեան մոլոր է շրջում», ասաց սրբերից մէկը:

Արդ՝ այս բոլոր կատարուածներից յետոյ Մովսէս եպիսկոպոսը Աքրանեսին նամակ է գրում Կիրոնի վերաբերեալ՝ քազմարի մեղադրանքներով լի: Եւ ինչ իր նամակներում պատմում է Կիրոնի մասին, եւ Վրաց ինչ-ինչ իրողութիւնների օրինակը նրանց անպտղութեան պատճառով նմանեցնում է թգենու [առակի] օրինակին: Եւ խնդրում է նամակ գրել Կիրոնին, որ թերեւս կարողանայ ինչ-որ հնար գտնել եւ ինչ-որ քանով շահել նրան: Խնդրում է նախ գրել Ցուրտափ եկեղեցուն, որ հայալեզու էին, նրանց միխթարելու համար: Իսկ նա [Վրաքանէսը] մի ինաստուն, հանձրեղ եւ աստուածային պատուիրանին նախանձախնդիր մարդ [էր] եւ

²⁴Ամովս Ե 10:

զօրավիզ ու օգնական ուղղափառ հաւատի, ճշմարտաէր եւ լի գիտութեամբ, որին իր հաւատարմութեան պատճառով տեղապահ էին նշանակել սուրբ Գրիգորի արքունին: Իսկ նա ցաւակից լինելով եպիսկոպոսին, միաժամանակ եւ գործակից ու կողմնակից աստուածային պատուիրանին՝ Կիրոնին նամակ է գրում ծանուցելով նրան ամեն ինչ մի առ մի, ինչպէս ցոյց են տալիս քեզ նրա կողմից իր նամակում գրուածները: Նաեւ շրջաբերական թուրք է գրում Ցուրտափ եկեղեցուն՝ լի միխթարութեամբ, եւ յորդում է նրանց հաստատուն մնալ ծշմարիտ հաւատքի մէջ եւ զգուշանալ նրանցից, ովքեր չեն գնում Տիրոց ծշմարիտ ճանապարհներով: Եւ այս եղան մինչեւ Աքրահամի ժամանակները, որ Հայոց հայրապետութեան արողին յաջողաբեց Հայոց կարողիկոս Մովսէսի մահից երեք տարի յնտոյ:

ԳԼՈՒԽ Թ

ՎՐԱՅ ԲԱԺԱՆՍԱՆ ՍԱՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ²⁴ ՍՈՎՍԵՍԻ ՄԱՀՈՒԱՆԻՑ ՅԵՏՈՅ

Հայոց կարողիկոս Աքրահամի ժամանակ տեղի ունեցաւ Վրաց բաժանում՝ լաւ ի յայտ գալով, ինչպէս մեզ ուսուցանում է «Գիրք բղրոցը»: Բայց մինչեւ այստեղ մեր կողմից այս գրուածները տեղի են ունեցել Հայոց կարողիկոս Մովսէսի ժամանակներում, ինչպէս որ ստոյգ ծեւով պատմեցինք մեզ: Նաեւ դրան վկայում է «Գիրք բղրոցը»: Ահա համառօտ խօսքերով ըստ մեր կարողութեան նշեցինք մեզ Վրաց բաժանան սկիզբն ու պատճառը, քանզի այս բաներն այսպէս իմացուեցին՝ մեր կողմից ստոյգ քննուելով: Իսկ նրանց նամակներից կամենում էի մեր ծեւնարկման սկզբում նրանց մասին այլ խօսքեր շարադրել, միաժամանակ եւ Կիրոնին վերաբերող կշտամբանքին աւելացնել [խօսքեր] այս պատճութեան մէջ, որ մինչեւ այստեղ [հասաւ]: Բայց [դա] կը բոլնենք՝ այլ տեղում ասելու:

Իսկ նախրան Կիրոնի եւ մեզնից նրա բաժանուելու մասին խօսքերին ու գործերին մեր կողմից ծեւնարկելը՝ կը կամենայի պատմել եւ մի այլ պատճառի [մասին], որ մենք լսել ենք շատերից բազում անգամ, շնայած գրաւոր որեւէ գրքում չենք գտնել: Թէեւ սա նաեւ կատարկարան գրույցներից չէ, այլ ծերերի աւանդութիւնից եւ լնթերցաւը վստահենի մարդկանցից է ասուած, որ կը կամենայի շարադրել այս պատճութեան գրույցների հերթականութեան մէջ: Բայց քանզի չաջողութեաց ասել, որպէսզի շնդմիջուէր միտքը ըստ [այն] հերթակարգի՝ ինչպէս որ պատճում է

«Գիրք բղբոցում», [ապա] կ'ասեմ յետոյ՝ [մի] այլ տեղում:

ԳԼՈՒԽ Ժ

ԹԵ ԻՆՉ ԶԵՒՈՎ ՅՈՒՐՏԱԻԻ ՍՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԳՐԵՑ
ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԹՈՂԻՆ, ՈՐՊԵՍԶԻ ՆԱՍԱԿ ԳՐԻ ԻՐ
ԹԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՒ ԿԻՒՐՈՆԻՆ ՈՒ ԵՐԿՐԻ
ԻՇԽԱՎՆԵՐԻՆ

Արդ՝ Մովսէս Եպիսկոպոսը նամակ է գրում Վրթանէս Քերթողին իր Յովիաննավանք գնալու առքի և նրան պատմում կատարուած ամեն բանի, այդ բայում նաեւ ծմեռային դառնաշունչ հողմերի և իր գրիունակութեան մասին վաճքի առաջնորդից, որի ամունն էր Բարեղաս: Եւ խնդրում է շրջաբերական նամակ գրել Յուրտափ Եկեղեցուն՝ հաւատքին հաստատուն մնալու վերաբերեալ, ինչպէս որ [քիչ] առաջ ասացինք, և դրանից յետոյ [գրել] Կիւրոնին ու երկրի իշխաններին:

ԳԼՈՒԽ ԺԱ

ՅՈՒՐՏԱԻԻ ՍՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՍԱԿԸ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԱԹՈՌԻ ՏԵՂԱՊԱՀ ՎՐԹԱՆԷՍ
ՔԵՐԹՈՂԻՆ

«Զրիստոսական հաւատքի փափագելի վիճակի սէրն ընդունող եւ ինձ հայրանման ու մերձաւոր երեւացող տէր Վրթանէս, անարժան Մովսէսից քեզ եւ քոյններին բազում խոնարիութեամբ երկրպագութիւն, որի հետ աւելի ողջորեան հայցում:

Ծանուցում ենք մեր տիրոջը փոքր ի շատէ մեզ հասած շարիքի մասին: Այնպէս պատահեց, որ ես պատահի հասակում հասայ Յուրտափի Եպիսկոպոսարանը, որի Եկեղեցու սովորական աշակերտ եղաւ: Այստեղ ես ուսանեցի հայերէն եւ վրացերէն դպրութիւնը, այնտեղ էլ ինձ՝ անարժանիս Տիրոջ կողմից շնորհուեց՝ հասնելու վարդապետական արոտին, իսկ դրանից յետոյ [հասնալու] բղեշխի տան դրան[†] Եպիսկոպոսը: [Բայց] ասեմ, որ [դա] ոչ թէ ըստ իմ արժանիքների [էր], այլ կարծում եմ, թէ [իրեն] յանդիմանութիւն [էր] Աստծոյ Որբուն ուրացողներին: Քանզի այսքան

[†] Այսինքն՝ պալատական:

ժամանակ անցնելուց յետոյ ես ես վերահասու եղայ, թէ ինչպէս վրացիները միայն կանաչազոյն տերեւն ունեին առանց պտոլի, [թէպէտ] իրենց ըստ օրինակի՝ սաղարթալից էին ցոյց տալիս, քանզի այն նոյնն է, որի մէջ Տէրը պտուղ զտու, այլ միայն տերեւ[‡]: Ըստ այսմ սրանք մարդկանց հանոյիլ համար ամեն մի պաշտամունք լիարժեք ու կատարեալ էին կարծեցնում: Իսկ երբ Կիւրոնի մասին իմացանք, որ մէծարանք է մատուցում Քաղկեդոնի ժողովի սահմանած իրէական հաւատամքին եւ հայինութիւն ուղղում Աստուածորդուն՝ նաեւ [հասկացանք], որ նրանց մէջ կանաչ տերեւ էլ չկար:

Այդ պատճառով ես ծայն բարձրացրեցի, թշնամի եղայ կաթողիկոս անոնք [կրտովին] և բոլոր իշխաններին ու նախարարներին և [ողջ] երկրին: Եւ վախճանն այս է, որ հալածուեցի: Եւ թէպէտ իմ մեղքերի պատճառով Հայոց երկիրն այժմ զրկուած է առաջնորդութիւնից, սակայն հարկ համարեցի գալ՝ ծեր սլրութեան տեղեկացնելու [Վրաց] երկրի կորստեան եւ իմ տառապանքների մասին: Եւ նաեւ՝ թէ ինչպէս խիստ ծմեռուայ եւ բոլոր լինելու պատճառով կանգ առայ սուրբ Յովիաննես Սլրուշի վաճքում, որ Արագածուտնում [է], եւ լնդումուեցի երանելի տէր Բարեղաս վանացերեցի կողմից: Մնացեալն [է] այդ տղայից կը լսէք:

Բայց ես առժամանյան [նամակ] գրեցի Յուրտափի Եկեղեցու հայալեզու²⁵ իշխանութեանը²⁶: Հրամայեցէք եւ դուք գլեն, որովհետեւ նախանձախնդիր են²⁷ ուղղափառ հաւատի հանդէպ, քող որ աղանդներից [էլ] առաւել զգուշանան: Գրեցէք նաեւ Կիւրոնին ու երկրի իշխաններին:

Նամակի միջոցով նաեւ խրատ տուէք, [քող ինձ] բերեն: Եւ ծեր սրբութեան ողջութեան մասին տեղեկացրէք մեզ: Եւ դուք ողջ եղէք Տիրոջով»:

ԳԼՈՒԽ ԺԲ

ՍՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՍԱԿԻ ՊԱՍԱՍԽԱՆԱԸ
ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԹՈՂԻ ԿՈՂՄԻՑ

«Զո սրբութեան ողջունագիրը ստացայ, եւ Աստծուց գոհանալով՝ ուրացացայ, որովհետեւ նախանձախնդիր էք ուղղափառ հաւատին եւ ասպազական սուրբ հայերի ծմարիտ վարդապետութեանը, որ աւանդուց մեր երկրում երանելի եւ քաջ, սուրբ ու անվախ տառապետ սուրբ տէր Գրիգորի ծեռքով: Եւ որովհետեւ հասել ենք ապստամք եւ վերջին ժամա-

[†] Մարկ. ԺԱ 13:

[‡] Այսինքն՝ թեմին:

նակներին, [ուստի] զարմանալի չէ տեսնել [այն, ինչ] որ ձեր սրբութիւնը գրել է մեզ:

Քանզի տակաւին դեռևս տեսնում ենք նուրբական առաքեալների զգուշացումը, թէ հերծուածներ են լինելու ձեր մէջ: Եւ նաեւ այն, թէ [նրանք], որ ընտիրներ են, ձեզանում կ'երեւան¹: Սա ճշմարտորէն որ սրբութիւնը կատարեց՝ համբերելով հալածանքների ու բազմապատիկ նեղութիւնների: Եւ ի լրումն դրան՝ միշտ պէտք է արիանալ եւ անպառակտելի մնալ մեր քրիստոս Աստծոյ շնորհի եւ խելամտութեամբ պարզեներ ստանալ քրիստոսի մեծակարող աջից: Իսկ որ շտապում էր շատերի օգտաշնորհեանը, ուրախալի է, եւ որ գնում էր դեպի ընկերասիրութիւն, օգուտ է ու տենչալի՝ ըստ այն խօսքի, թէ՝ «Ինձ համար չեմ օգուտ որոնում, այլ՝ շատերի, որպէսզի ապրեն»²:

Այն նամակները, որ խնդրեցիր [գրել] հայալեզուներին³, կ'անենք Աստծոյ շնորհի: Նոյնպէս նաեւ Կիրոնին եւ երկրի իշխաններին կը գրենք՝ Աստծոյ ընդառաջելով: Եւ եթէ Աստուած կամենայ, [ապս] մօտ օրերս կամենում են կարողիկոս նատեցնել: Զեր հոգսերը քրիստոս Աստծոյ շնորհի նա կը հոգայ, իսկ մենք սատար ենք մինչեւ գործի աւարտը ըստ մեր կարողութեան: Ողջ եղի՛ր Տիրոջով»:

ԳԼՈՒԽ ԺԳ

ՄՊՎԱՀՍԻ ԵՒ ՎՐԹԱԾԷՍԻ ՆԱՍԱԿԻՑ ՅԵՏՈՅ ՆԱԵՒ ՓՈՔԻԿ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Եպիսկոպոս Մովսէսը շրջաբերական նամակ է գրում Յուրտաւ քաղաքի եւ նրա նահանգի իր թեմականներին, որ զգուշանան Քաղկեդոնի աղանդից ու նրանց նմաններից՝ տալով նրանց եղած [աղանդաւորների] օրինակները եւ [նրանցը], որ լինելու են: Եւ նրանց վարդապետում է օրէնքներում ու մարզարեւութիւններում զրուածները՝ յանձնելով նրանց [Սուրբ] Հոգու շնորհներին: Ինչպէս մի անգամ ասացինք, գրում է նաեւ իր՝ եպիսկոպոսութեան զալու մասին եւ վրացիների մեղադրանքների, նաեւ բոլոր տեղերում պատահած իր դառը փորձութիւնների մասին է յիշատակում: Գրում է նաեւ Աստուածորդուն ուրացողներից զգուշանալու եւ Աստծոյ շնորհով ապրելու մասին:

¹ Ա Կորնք. ԺԱ 19:

² Ա Կորնք. Ժ 33:

³ Բնագրի արտայայտութիւնն է ի հայալեզուս:

ԳԼՈՒԽ ԺԳ

ՄՊՎԱՀՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԾՐՋԱԲԵՐԱԿԱՍ[”] ՆԱՍԱԿԸ ԻՐ ԹԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

«Երկնքի ժառանգութեան վիճակեալնե՛ր եւ սրբութեամբ Սուրբ Երրորդութեանը երկրագողնե՛ր, երից երանելի անվախ տառապահ սուրբ տէր Գրիգորի միջոցով Քրիստոսի հաւատոր լի սիրով ընդունողնե՛ր, [որ] Տուրտավի եկեղեցու հայալեզու իշխանութեան [մէջ էք], որոնց առաւել հարկ համարեցի գրել, իսկ լսողների յօժարութեամբ՝ [նաեւ] եկեղեցու առահասարակ բոլոր պաշտօնեաներին ընդիմանուր ժողովրդովի համդերձ՝ անարժան Մովսէսից ողջ՝ յն Տիրոջով, որի շնորհի առաւել պահապանուած լինե՛ք՝ Սուրբ Երրորդութեան յոյսով»:

Սիրելինե՛ր, ի սկզբանի²⁸ եւեր նրանց, ում Աստուած հածոյ համարեց եւ կանչեց իր մեծ տէրութեան մէջ սպասաւորութեան, [եւ] ում շնորհեց ժողովրդի վերակացութիւնը, եւ կամ ում մարզարէական շնորիք տրամադրեց՝ ճանաշում [ու] տեսնում ենք [իրանց] շափազանց բարեհած ընտրուած: Ումանք տեղի տուեցին եւ յօժարութեամբ անսացին կոչին, իսկ [միս] կեսը յապահեցին՝ [համաձայնելու] շնորհներին, եւ նրանցից ոչ մէկը շանարգուեց: Արդ՝ որովհետեւ դիպուածը մեզ եւս ուսուցանում էր աստիճանից՝ թէկուզ եւ [լստ մի] կարգի՝ կրածարուել եւ առաւել եւս երկշուների հետ երկշու լինել: [...]»²⁹ սակայն մեր տկարութիւնից վեր եր միջնորդ լինել Աստծու եւ մարդկանց միջեւ [...]. Բայց ըստ միւս կարգի՝ սովորեցինք հնազանդուել: [Եւ] քանզի ասես հայրենիքից՝ հաւատքի ուսումնառութեան վայրից էնքն կոչուել՝ Աստծոյ նախախնամութեան շնորիք համարելով, այդ պատճառով տեղի տալով՝ յօժարութեամբ անսացինք կամչին:

Դրա համար երբ յանկարծակի վերահասու եղանք շնորհակորոյսների՝ Աստուածորդուն ուղղուած հայկութեանը, նրանց մօտ ճանաչեցինք անսեփ վերքերը եւ շանդգնեցինք ախտը ծածկել բարեկողութեամբ: Այդպէս էլ վարուեցինք, որի պատճառով [իրանց] ամենքին թշնամի դարձանք: Եւ այնքան յանդիմանուեցինք, առաւել եւս սպասնալիքի ենքարկուեցինք քահանայապետերից եւ իշխաններից, մինչեւ որ հալածուեցինք: Բայց ինձ այնպէս է թում, թէ ինչ [աւելի վատ] ձեռով ես դատապարտութեան տակ ընկած կը լինեի, եթէ ախտն իմանայի ու ծածկելի: Նոյնպէս եւ նրանք խիստ ցաման են արժանի, որ լսում են եւ անտարբեր մնում, ինչպէս որ անտարբեր էլ գտնուեցին:

Ապա ուրեմն իրաւամբ թող լսեն Աստծու կողմից սպառնալիքի են-
քարկուածներին, որ [արտայայտում է] աստուածային Երեմիայով.
«Քահանաներն, ասում է Տէրը, չասացին՝ ո՞ւր է Տէրը, իսկ հովիներն անփ-
րաւ գտնուեցին իմ հանդեպ եւ ցրեցին իմ արօտի ոչխարներին։ Եւ ապա
ի՞նչ [է լինում] դրա դիմաց։ Տէրն այսպէս է ասում. «Ո՞վ հովիների, որ
կորցնում ու ցրում էք իմ արօտի ոչխարներին, արդ՝ ահաւասիկ ես վրէ
կ'առնեմ ձեզնից, որովհետեւ լրացան ձեր օրերը խողխողման համար»։

Արդ՝ քանզի Աստծոյ սիրելի Միածին Որորու սպառողների նման ախ-
տի մէջ ընկած¹, ակնյայտ է, որ ըստ նրանց օրինակի՝ չեն խուսափելու
նաեւ մարմնական պատժից։ Իսկ նրանք ի՞նչ պատիժ կրեցին արդեօք։
Սովի [Խամար] նրանց կանայք դեղ դարձրին իրենց սիրատն որդիներին,
խորովեցին եւ կերան [նրանց] Տիտոսի կողմից Երուսաղէմի պաշարման
ժամանակ։ Եւ [Տիտոսը] նրանց վեց բնիրին [սովով] սպանեց, հարիր
քան բնիրին սրով կոտորեց, իսկ յիսուն բիրին գերեվարեց։ Իսկ քաղա-
քում այսքան բազմութեան գտնուելու պատճառը Զատկի տօնն էր, եթի
քոլոր տոհմերը մի վայրում էին կուտակուած եւ արգելափակուեցին իրեն
քանտում։ Քանզի որ օրը որ իրենց կեանքով նենզեցին Քրիստոս Աստ-
ծուն, միեւնոյն օրն էլ ընդունեցին հատուցումը։ Իսկ այժմ ովքեր նրանց
ախտով հիւանդանում են, ակնյայտ է, որ նրանց հետ պատժուելու են այս
եւ այս [աշխարհներում]։

Արդ՝ որպէսզի նրանց հետ մեզ էլ չվիճակուի լսել Աստծու սարսափելի
սպառնալիքները եւ կրել այս անողորմ պատիժը, ես եւս հարկ համարեցի
այս գգուշացնող նամակի միջոցով խօսել ձեր աստուածաւը ականջնե-
րում [Հորդորելով] գգուշանալ Տիրոջն ուրացողների հետ հաղորդակցու-
ելուց եւ Տիրոջն սպանողներից՝ Քաղկեդոնի ժողովը մեծարողներից։
Քանզի ժողովի առաջնորդները Նեստորի աղանդակիցներն էին եւ եկեղե-
ցու կողմից հալածուածներ, որոնք սատար գտնելով Մարկիանոս քազ-
արին եւ նրա Պողքեր անունով կնոջը՝ համարեցին, որ մեր Տէր Յիսոս
Քրիստոսը երկու բնութիւն ունի, ուստի մենք չայտք է հաղորդակցուենք
նրանց հետ։

Արդ՝ այս ամենն իմանալով, սիրելիներ, արքունական [ուղիղ] ճանա-
պարհով գնանք, ոչ աջ խոտորուենք ու ո՛չ ձախ։ Եւ այս այսչափ հարկ
համարեցինք փոքրիշատէ ձեզ զրել, որպէսզի գգուշանաք այնպիսինե-
րից։ Եւ [նա], ով այս պատուիքանից յետոյ անփոյք կը գտնուի, ինքը կը
տայ Աստծու պատասխանը, իսկ մենք անպարտ կը լինենք։

Ողջ եղէք մեր Տէր Յիսոս Քրիստոսվ։

ԳԼՈՒԽ ԺԵ

ՑՈՒՐՏԱԽԻ ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՍԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՆԸ ԻՐ ԹԵՍԱԿԱՆՆԵՐԻՑ

«Չո սրբութեան խրատաւտութեան գգուշացուցիչ ողջունագիրը ստա-
նալով, ամբողջ եղբայրութիւնս Աստծուց գոհանալով՝ մեծ ցնծութեամբ
լցունեցինք, որ դու՝ [մեր] Տէրը, Սուրբ Երրորդութեան պահպանութեամբ ողջ
ես, եւ ձեզնից ոքր մնացած երկրի մասին հոգում եք, որպէս արժան իսկ է։

Ժող բոլոր ուղղափառ խոստովանողների աղօքները լսի Աստուած եւ
Սուրբ Հոգուն ուղարկի քեզ մօս իբրև տէր ու օգնական քեզ, գօրացնելով
ձեզ, որպէսզի լինեք վերակացու եւ օգնական մեր խոտորուած կողմերի, եւ
կրկին ձեր միջոցով տէրերի Տէրը Սուրբ Հոգուն քարոզի եւ հաստատի մեր
երկրում ընդիանուր կեանքի խօսքը, որ յախտենութիւնից առաջ Հօրից էր
եւ Հօր մօտ, եւ ժամանակների վերջում մեր կրկութեան համար սուրբ Կոյս
Մարիամից մարմնացած եղան՝ ըստ ամենայնի մեզ նման՝ քացի մեղքերից,
մնալով [միեւնոյն ժամանակ] Աստուած՝ այնպէս, ինչպէս որ էր առաջ՝ իր
Հօր եւ Սուրբ Հոգու հետ միասին։ Որի առիրով առաջին նախափաստակ
մարգարեները մարգարեացան այն խորհրդաւոր ծածկոյթի մասին, որ յա-
խտեան Հօր հետ [է]։ Որը եւ երանելի Պօղոսը մեկնաբանում է, թէ՝ «Այժմ
յայտնուեց Սուրբ Գրքով, եւ բոլոր ուղղափառներն ընդունեցին»։

Եւ սուրբ Գրիգորի գրով նաեւ հայաստանցներիս² վրայ հաստատու-
եցին հայատը, յոյսը եւ սէրը, որոնք աստուածային Պօղոսն աւանդեց եկե-
ղեցուն՝ հայատն ի Հայր, յոյս՝ ի Որբու եւ սէրն՝ ի Սուրբ Հոգի։ Այս երեք
պատութեար քո եւ երանելի վարդապետների շնորհիւ մեր կողմերի եկեղե-
ցիներում լի ու լեցուն թող պահի մեր Քրիստոս Աստուածը եւ [մենք] ընդու-
նենք մէկին վարսուն եւ մէկին հարիք։ Ժող Տէր Աստուած նորզիք քո տի-
րական արոռը միեւնոյն եկեղեցում³, որին վիճակուեցիր Քրիստոսին
խոտովանող ուղղափառների կողմից։ Ապա թէ ոչ՝ մենք ուրիշ հնար
կանք բողնենք ու գնանք։

Ողջ եղի՛ր, մեր տէ՛ր, եւ մեզ համար աղօքի՛ր»։

¹ Ոխտանեսի օգտագործած եզրոյրով՝ Հայաստանեայց, որը կարելի է հասկանալ նաև
ողղակի՝ հայերին։

² Այսինքն՝ Ցուրտաւում։

ԳԼՈՒԽ ԺԶ

ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ ՏԵՐ ՎՐԹԱՆՔ
ՔԵՐԹՈՂԻ ԳՐԱԾ ՆԱՍԱԿԲ ՑՈՒՐՏԱՒԻ ՀԱՅԱԼԵԶՈՒ
ԱԾԽԱՐՀԻՆ ՀԱՒԱՏՔԻ ՄԵԶ ՆՐԱՆՑ ՀԱՍՏԱՏՈՒՆ
ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Սրբատէր ուղղափառներին եւ ճշմարիտներին, քոլոր վանքերի երեցներին եւ գիւղերի քահանաներին, ազատներին եւ շինականներին, ծերերին եւ պատանիներին, հայալեզու գաւառներին եւ համայն ամբողջ ժողովով, որ Ցուրտախ եկեղեցու իշխանութեանն էք ենթարկում՝ Վրքանեսից եւ սուրբ եկեղեցու այլ պաշտօնեաներից՝ Տիրոջով ողջո՞յն:

Նեզ անախործ լուր հասաւ, թէ Նեստորի եւ նզովեալ Զաղկելին հերձուածը, որը Հայոց, Վրաց եւ Աղուանից միաբան եալիսկոպոսներից ու իշխաններից սուխալի եւ անյիշատակելի նորովներով մերժուած էր, իսկ արդ՝ կարողիկոս կոչուածի եալիսկոպոսներով եւ իշխաններով հանդերձ ընդունելութիւն ու մեծարանը են անում հերձուածողներին: Լսեցինք նաև ծեր սրբութեան մասին, որ ունեք նախանձախնդրութիւն ուղղափառ հաւատի նկատմամբ ամբողջ բարեապաշտութեամբ, որ ի սկզբան հաստատուած էր ծեր երկրում, [ուստի] եւ աղօրում ենք, որ միշտ հաստատուն մնար եւ արիանաք աներկիս համարձակութեամբ:

Իմացէ՛ր, երբայրնե՛ր, որ վերջին ժամանակներում ենք [ապրում], եւ շար գազանի հրապոյրները մօտեցել են՝ ապստամբեցնելու ուղղափառ հաւատից, որպէսզի [նա] իր մոլորութեանը ընդունարան ստեղծի: Այլ պատճառով արքուն կացէ՛ր եւ հսկեցէ՛՝ խոսափելու անզգամներից, որ պէսզի Աստծոյ պարզեներին արժանի լինենք: Եւ եթէ առաւել պէտք լինի հակառակութեան ու պատասխանի, քող մեզ զիր ծեր սրբութիւնը, եւ Ամենասուրբ Երրորդութեան շնորհիս հասնելով ծեզ մօտ՝ կը պապանձեցնենք շարախօսների հայիոյական բնրանները: Ողջ եղէ՛ Տիրոջով»:

ԳԼՈՒԽ ԺԷ

ՑՈՒՐՏԱՒԻ ՀԱՅԱԼԵԶՈՒ ԱԾԽԱՐՀԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ
ՎՐԹԱՆՔԻ ՆԱՍԱԿԻՆ

«Տեսանք ծեր ուղղափառ հաւատքի նամակը եւ լսեցինք ծեր եւ ծեր սուրբ եկեղեցու պաշտօնեաների ողջոյնը, եւ մեծ ուրախութեամբ լցուած՝

գոհացանք մեր Քրիստոս Աստծուց, ինչպէս որ երկար երաշտից պապական ծարաւ հողին բնդունելով շահեկան անձրեւը՝ ինքն իր մէջ գուարծանալով դալարութիւն է ցուցաբերում եւ անուշակու ծաղկներ ցոյց տալիս նայողներին: Քանզի դուր էլ Քրիստոսի շնորհիս անուշ բոյր էք լստ գրուածի՝ կեանքից կեանք, [եւ] ոչ միայն ծեր երկրում, այլև ողջ հիսուսային կողմերում: Եւ մենք, ըստունելով ծեր կողմից գրուածը, նաև ցոյց տունցինք մեր ողջ երբայրութեանը, որոնք ախորժելով լսեցին [եւ] գոհութիւն յայտնեցին Աստծուն:

Նաև ծեր վարդապետութիւնը, հոգալով մեր երկրի մասին՝ յիշեցնում է սուրբ եւ ուղիղ այն հաւատքը, որ Մեծ Գրիգորի սահմանել էր այս կովկասեան՝ կողմերում: Արդ՝ համարձակում եւ օրինում ենք տէր Վրքանէսին: օրինեալ լինենք ամբողջ ուխտովի հանդերձ եւ պահպանուած լինեն Սուրբ Հոգով այս ծովածուի կեանքում, որ աղօրքներով միշտ նորոգես նաև սուրբ Գրիգորի սուրբ արքուն, որպէսզի ինսամի մեր մոլորեալ ոչխարը՝ ըստ առաջին վարդապետների օրինակի: Քանզի մենք առանց այլտեղի օգնութեան ու թիկունքի այստեղ չինք կարող մնալ, որովհետեւ հայրապետ անուանուած այնպիսի գոռող բռնաւորի ոչ ոք չի հանդիպել, եւ մենք պէտք է բողնինք այս երկիրն ու զնայինք:

Ողջ եղի՛ր մեր Տիրոջով»:

ԳԼՈՒԽ ԺԸ

ՑՈՒՐՏԱՒԻ ՍԱՍԻՆ ԵՒ ԱՅՆՏԵՂ ԵՂԱԾ ԲԴԵՇՆԻ ՈՒ
ՎՐԱՑԻՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Ստաղիք եմ մի փոքր յիշատակութեամբ շարադրել նաև Ցուրտափ մասին եւ [ինչ] որ նրանից յետոյ [է]: Քանզի այս Ցուրտափ անունը, որ մշտայար յիշատակեցինք պատմութեան մէջ [եւ] այստեղ էլ ենք յիշատակում, այն ժամանակ լի եւ ընդարձակ մայրաքաղաք [էր] մեծ եւ իոշակաւոր, իսկ այժմ փոքրացած եւ շափառ դարձած քաղաքագիտ [է] այն գետի ափին, որի իր անունով կոչում է Գաջենագետ, [այն] նահանգում, որը կոչում է Վրաց դաշտ, որը երկու՝ Հայոց եւ Վրաց երկրների միջասահման է, հայում է դէպի Կաւկաս [եռք, [եւ] որը սահմանակից է երաշշէն ու երաշալի, իոշակաւոր ու ականաւոր Տիֆլիս մեծ մայրաքաղաքին:

* Եւ «Գիրք բրոցը», եւ Ռիստանէսը գրում են՝ Կակասային:

Եւ այդ Ցուրտաւը եղել է նստավայրը Գուգարացւոց մեծ քրեշխի, որը հիւսիսի կուսակալ էր նշանակուած մեր Արշակունի Վաղարշակ արքայի կողմից: Եւ այդ քրեշխը սերուած էր Դարենի նախարար Սիրիդատի զաւակից, ինչպէս որ մեզ պատմում է ճշմարտապատում Մովսէսը¹: «Ման, ասում է [նա], քերեց Աղեքսանոր Սակերմանացին և բոլեց իշխան Վերիացւոց ազգերի գերիների վրայ, որոնց Նարուգորոնոսորով քերեց լիքիացիների օքրքի ուժով, եւ [որոնց] հետապնդելով [ու] ընկճելով՝ իր ծեռքի տակ նուածեց ու նրանց մի մասին տարաւ բնակեցրեց Պոնտոսի² ծովի աջակողմում, ասում է Պատմագիրը, եւ [այն] Վերիան գտնուում է ցամաքի արեւմտեան ափին»:

Արդ՝ երբ նրանց բնակեցրեց Պոնտոսի ափին, այդ ազգն աճեց, և բազմանալով՝ սփոռուց ծովեզրում այստեղ-այնտեղ, նաեւ շրջուեց միա կողմի վրայ և ձգուեց մինչեւ Հայոց և Աղուանից սահմանները: Եւ դարձաւ ազգ՝ եւ խիստ բազմաքանակ, իսկ երկիր անունը կոչուեց Ավիսազը³: Եւ սրա շուրջ գտնուով զաւառներն անթիւ են, եւ նաեւ այլ զաւառներ կան Տփիսի քաղաքի շուրջը, որ կոչուում են Ծանարք, Զաւախը և Թոները⁴: Արդ՝ աճեցին եւ բազմացան և ազգ դարձան: Եւ որ իրենց նախկին երկրում աճուանուում էին Վերիա, այստեղ վրացիները կոչուեցին [այդպէս] ազգով, լեզուով եւ գրով, նաեւ հայրապետութեամբ ու բազաւորութեամբ հաստատուեցին: Եւ սրանց բաժանեց ու պառակտելով հեռացրեց մեզնից Կիրոն Ակուտրացին⁵ նման ու հաւասար լինելով Յուղայ Ակարովտացուն, եւ կորցրեց կործանեց այնքան բազմաքանակ ազգին՝ պատճառ լինելով նրանց կորստեան:

Բայց դու այստեղ չպէտք է կշուամբես մեզ, որ իրեն քէ աւելորդ բան ենք գրում սա, ո՞վ ուսումնասէր, քանզի կամեցանը թիշ խօսքելով Ցուրտավի շատ յիշատակների մասին ծանուցել քեզ: Քանզի պարտ ու արժան եր [նաեւ] զանց չառնել նրա՝ [ում] պատկանելու [խնդիրը], քանի որ սկզբնապէս արքունի բնակավայր լինելով՝ [Ցուրտավը] նաեւ սուրբ Շուշանիկի⁶ հանգստեան [վայրոն է]⁷: Եւ այնտեղ դեռեւս մնում են նրա նահատակութեան շարշարանքների տեղերը եւ նրա սուրբ ու պատուական նշխարների հանգստարանը⁸, եւ մենք բազմաքի անգամ զնացել ենք ու համբուրել [այդ] սրբավայրը: Իսկ նրա նահատակութեան որպիստիւնը յետոյ այլ տերում կը պատմեն:

¹ Ինա՞ Խորենացին (տես II, ԺԱ, էջ 121):

² Ինա՞ Արխագիա և Արեւմտեան Վրաստան:

³ Այսինքն՝ բաղություն վայրը:

⁴ Այսինքն՝ գերեզմանը:

ԳԼՈՒԽ ԺԹ

ՑՈՒՐՏԱԻ ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԱՍԻՆ, ԹԷ ՈՐՏԵՂԻՑ
ԿԱՍԻՆՉՊԵՍ ԵԿԱՏ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՏՈՒԻ. ՆԱԵՒ
ԳՈՎԱՍՍԱՆՆՔ ՆՐԱ ՍԱՍԻՆ ԵՒ ԿՇՏԱՄԲԱՆՔ ՈՒ
ՄԵՂԱԴՐԱՆՔ ԿԻՒՐՈՒՆԻՆ, ԵՐԿՐԻ ԻՇԽԱՆՆԵՐԻՆ
ԵՒ ԱՅԼՈՅ

Սակայն [աւելի] առաջ, քան Մովսէսի վերաբերեալ մեր պատմածին անցնելը, մենք մոռացանք նախապէս յիշատակներ նրա մասին՝ [իր] գաւառը, գիւղը եւ նրա գալը եպիսկոպոսութեան պատուի: Բայց կ'անցնենք այսուհետեւ համառօտ յիշատակնելու [դրանք] ըստ մեր կարողութեան: Սա Տաշիրը⁹ գաւառից էր, Սեհենկերտ գիւղից: Իր մանուկ հասակում գնաց Ցուրտավ գիւղարադարը, որի մասին վերենում խօսեցինք, եւ այնտեղ դաստիարակուեց ու սովորեց, ինչպէս լինքը պատմեց իր նամակում: Եւ ուսանելով երկու ազգերի՝ հայոց եւ վրաց ուսումը եւ հասնելով արքունիքի՝ ստացաւ վարդապետութեան աստիճան, իսկ դրանից յետոյ՝ քրեշխի տան եպիսկոպոսութեան արռողը: Եւ այս բանն ինքն է վկայում [այն] նամակում, որ [զրեց] Վրքանէսին: Եւ [նա] դարձաւ երկու ազգերի՝ հայերի ու վրացիների միջեւ հաւատի հաստատութեան միջնորդ մինչեւ Կիրոնի դաւանափոխութեան ժամանակները, քանզի նրանից էր ստացել ծեռնադրութիւն, մինչ նա [դեռ] ուղղափառութեան հաւատքում էր: Բայց [Մովսէսն] ինքը, [իր] իրայինները, նաեւ հայալեզու իշխանութեան առհասարակ բոլոր թեմականները Կիրոնից կրեցին վիշտ, նեղութիւն, հալածանքներ, որը եւ Վրքանէսին ուղղուած իրենց պատասխան նամակում գրեցին, թէ բողնելու են երկիրը և զնալու:

Եւ արդ՝ Մովսէս եպիսկոպոսը ճշմարտիմաց ու ազնուապաշտօն եղաւ Ցուրտավի եկեղեցին խրատելու եւ ուսուցանելու խնդրում՝ նախքան եպիսկոպոսութիւնը իրեն վարդապետ լինելով եւ ուսուցանելով, ինչպէս որ պատմեց մեզ իր այն նամակում: Սրանից յետոյ նրան Վերին նախախնամութիւնից եպիսկոպոսութիւն վիճակուեց, եւ [նա] կրկին ապրեց իրեն վարդապետ ու տեսուչ, նաեւ առաջնորդ՝ հաստատելու եւ ուսուցանելու մարդու տակալին մանկաբարոներին, եւ իրեն լաւ հովի իր անձը դնելու իր ոչխարների համար՝ զայլահալած լինելով: Նա ճանաշող էր իրայիններին եւ ճանաչուած նրանց կողմից, եւ նրանք, որ այն գաւթում չէին, բերաւ ու ներս էր առնում այնտեղ՝ ուսանելով քաջահնուտ հովուից, որն ասում էր. «Ես եմ քաջ հովիր եւ իմ անձը դնում եմ իմ ոչխարների հա-

մար»¹: Սա էլ նոյնն էր անում, եւ ովքեր չեին մտնում իր գարի դրնով, այլ արագակաբար ու դաւաճանաբար շրջում էին գարից դրւս, սրանցից զգուշանում էր եւ հոգուաբար ու ազնուաբար զգուշացնում իր ծայը լսողներին եւ կանչողի հետ գնացողներին՝ շայթաքելու [համար]: Նաև պատուիրում էր, որ չսեն օտար ծայնի, որ գողանում եւ խոտորում է ծշմարիտ ու առաջին հոգուից եւ կորուսեալներին ապրեցնողից, որն ասաց. «Մարդու Որդին. Եկաւ գտնելու եւ ապրեցնելու կորուսեալներին»², եւ դարձեալ՝ «Հայր, ում որ տուեցիր ինձ. նրանցից ոչ մէկին չեմ կորցնի», և դարձեալ. թէ՝ «Ով որ գայ ինձ մօտ չի քաղցի, իսկ ով հաւատայ ինձ՝ երեք չի ծարաւի, քանզի ես եմ կեանքը. ճշմատութիւնը եւ լոյսը»³:

Իսկ սա [Մովսէսը] աշակերտ լինելով քաջ հովին Քրիստոսին՝ նոյնն ասում ու սովորեցնում էր իր թեմականներին, նաև յանդիմանում էր նրանց, ովքեր խորհում էին հեռացնել առողջ հաւատքից, որը [հաւատն է] առ Հայրը. առ Որդին եւ առ Սուրբ Հոգին: Նաև նրանց էր յանդիմանում, ովքեր խօսում էին Աստծոյ մարմնացեալ խօսրի [Քրիստոսի] միաւրաքածորեան բաժանման մասին: Այդ պատճառով, երբ ամեն բան իմացա սատանայի եւ Կիրոնի մասին՝ ատեցին նրան եւ հեռացրին իրենց եկեղեցաց՝ թշնամի մէկը համարելով նրան. քանզի ստոյգը խօսեց: Նաև նա հով էին սպառնում նրան երկրի իշխանները, նախարարները եւ այն խաժանուժ ամբոխը. որոնք չփառեին Տիրոջ օրենքներն ու պատուիրանները եւ նրովուած էին, որովհետեւ երէական կատաղութիւն ունեին իրենց մէջ: Եւ այսպէս բազմաբի նեղութիւններով ու շարչարանքներով հալածում էին նրան, եւ ինչպէս ասացինք՝ մահով սպառնում, եւ ասում էին՝ «Եկէք սպանենք նրան, քանզի դժկամելի եղաւ մեզ [համար]:» Եւ զարմանալի չէ, որովհետեւ սատանայի որդիներն են եւ ծայնակիցը նրանց, ովքեր սպանեցին մարգարէներին եւ մարգարէների Տիրոջը:

Արդ՝ այս ամենի եւ սրանից աւելի չար բաների պատճառը Կիրոնի մէջ գտնուեց. քանզի եղաւ չար առաջնորդ եւ դարձաւ Վրաց երկրում գայթակութեան բաշխիչ՝ նեստորական խումիկի հետ միասին, քանզի սա եղաւ նրանց համար որոգայք: Երանելի Ովսէւն ասում է. «Եւ իբրև դարաւանդի գլխին ծգուած ցանց, որ որտորդները որսի համար հաստատեցին»⁴: Քանզի նա մեր լի ու անքերի ուղղափառութեան հաւատը, որն ուղիղ դաւաճութեամբ աւանդեցին մեզ մեր սուրբ հայրերը, նա այլատե-

սակ ծեռով վարդապետեց նրանց: Այլածեւ մի բան սովորեցրեց սխալ մտքով՝ [այն] հայութիւնը, որ Աստծոյ Որդին, որի մէջ մարմնացած Բանն Աստուած անբաժանելի միասնութեամբ [է], նա քաֆանում էր՝ հայութիւն ներս մուծելով, մինչեւ որ բոլորն ընդհանրապէս ներկուեցին նրա երկարնակութեան գոյնով: Եախսկոպսներն ու քահանաները, իշխանները, զօրավարները, զօրականները, միահանուու բոլոր հասակի մարդիկ միեւնոյն խորհրդով վառուեցին, ինչպէս որ հուրն անտառում վառուելով՝ բորբոքում է, եւ ամբողջ անտառն առհասարակ վառելով՝ բորբոքմամբ կիզում: Նոյն կերպ էլ նրա անկարգ խօսքերը եղան նրանց համար հուր՝ միախանն այրելով նրանց իբրեւ ինչ-որ խոխի:

Արդ՝ այս ամենը տեսնելով՝ երանելի եախսկոպս Մովսէսը Սուրբ Հոգով կառուեց եւ Կիրոնին մէկ անգամ, երկիցս եւ երիցս յանդիմաննեց առանձին եւ վկանների ներկայութեամբ եւ եկեղեցու մէջ՝ ըստ աւետարանական խօսրի: Նաև բազմաբի անգամներ խրատական խօսքերով աղազում էր՝ բանալով նրա [առջեւ] գրեթե եւ առաջարկելով իոգենոր խրատը: Իսկ նա երեք չէր լնդունում նրա խրատը, քանզի անխրատ անձն անքշէկի է. «Խրատուեց Բարելոնը, բայց չթժկուեց»՝ գրուած է: Արդ՝ երբ չկարողացաւ դիմանալ ու ծածկել նրա չարութիւնը, ապա այնուիտենի յայտնեց [ուրիշներին], քանզի [իրենք] չիմացան եւ չմտածեցին՝ ըստ մարզարէի խօսքի⁵, քանզի նրանց ճանապարհն անցնում էր խաւարի միջով: Բայց դրանից յետոյ եւ այնուիտենի թշնամի եղաւ ամենքին: Բայց Կիրոնը շատ աւելի [թշնամացաւ], քանզի նա եղաւ չարի սկիզբը: Եւ ուղրմելին չփառէր, թէ լաւ է իմաստուն թշնամին, քան անմիտ սկրելին: Եւ դարձեալ՝ «Եթէ արդարն է ծեծում քեզ, զնա՛ նրա հետ, որովհետեւ նա է, որ սիրում է քեզ»:

Արդ՝ Կիրոնի ու նրա նմանների կողմից այնքան եւ այնպիսի հալածանքների ու տառապանքների տրուեց եւ տարուեց այս երանելի եախսկոպսը, մինչեւ որ բողեց երկիրն ու իր թեմը եւ հեռացաւ օտար երկիր: Իսկ երբ ինքը գրեց իր եկեղեցու թեմին, նաև յանդուեց գրել Վրանելին, որը եւ գրեց մեծ զգուշութեամբ, ինչպէս կարդում ենք այն նատեանի⁶ նամակում:

Եւ ապա գրում է [Մովսէսը] նաև երկրորդ նամակը եւ յիշատակում այսպէս. զոհութիւն եւ շնորհակալութիւն է յայտնում նրան [Վրանելին] շրջաբերական գրութեան համար, որը գրեց Յուրտափ հայալեզու մարդկանց: «Տեսայ, ասում է, քո սրբութեան գրութիւնը՝ ողջոյնով եւ ինչ որ

¹ Յովհ. Ժ 11:

² Մատթ. Ժ 11:

³ Իմաստ. Բ 12:

⁴ Ովսէտ Ե 2:

դրանից յետոյ է։ Դրանցից յետոյ դարձեալ խնդրում է եւ կրկին հայուս գրել Կիւրոնին։ «Այս անգամ [էլ], ասում է, հրամայեցք ք մի նամակ գրել Կիւրոն անունով կաթողիկոսին, երկրի իշխաններին, Պետրոս Եպիսկոպոսին՝ պարաւելով Քաղկեդոնի ժողովը»։ Եւ ապա նա յանձն է առնում, գրում է մեծ հոգացողութեամբ՝ նրան [Սովորութիւն] ամրուցովին սատար կանգնելով։

Ահա ցոյց տուեցինք քեզ Մովսէս Եպիսկոպոսի ծննդեան ու դաստիարակութեան տեղը՝ ստոյգ քննելով, եւ նրա կրած աղետն ու ներութիւնը։

ԳԼՈՒԽ Ի

ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՍՍԱԿԸ ՎԱՐԴԱՊԵՏ ՎՐԹԱՆԷՄ ԶԵՐԹՈՂԻՆ

«Տեսայ քո սրբութեան ողջունաբեր գրութիւնը, եւ լսելով միսիքարարեան խօսքերը, որ սրա մէջ էին, գոհանալով Քրիստոս Աստծուց՝ հանգստացայ, որպիենտե ըմբռնեցի, որ ահա կրկին դիպայ կեանքին հոգալու ինձ ու աշխարհիս համար, որպէս իւնչ իսկ արժան էր եւ ես վստահութիւն ունեի [դրան]։

Ինչպէս որ սկիզբը յօժարութեամբ արեցիք, աղաջում եմ՝ սրբերի քարեխոսութեամբ ջանանք աւարտին հասցնել։ Այս անգամ երածայեցք գրել մի նամակ կաթողիկոս կոչուածին, Աստրներսէին²⁶⁶, Վահանին եւ Բզրմէին²⁶⁷ պարաւելով Քաղկեդոնի ժողովը, եւ մի յանձնարարական նամակ՝ Պետրոսին։ Եւ բոլոր օրինակները ձեր աշակերտի միջոցով ուղարկեցէք, եւ քոյ ինքն էլ զայ խաղաղութեամբ՝ Քրիստոս Աստծու շնորհին, երբ պատասխանները կ'ընդունէք։ Իսկ եթէ ոչ՝ ապա արդէն դուք պիտի գնաք, թէկույթ եւ շարշարուելու էք՝ յիշելով մարզարէի բերանով Տիրոջ յորդորանքը, թէ՝ «Իմ դրները դուք գնացէք, ովքեր կարող եք, եւ քարերը ճանապարհոց դուրս քափեցէք, որպէսզի ոչ մի քանով չսայթաքն իմ ժողովուրդները»։ Քանզի թէպէտե մենք կամք, [սակայն] մեր առաջնորդի տգիտութեան եւ միայնութեան պատճառով մի փոքր վախնցանք եւ [մեր] յոյսը ձեզ վրայ դրեցինք։ Քանզի նա եւս սուրբ առողջի աշակերտ է մեզ եւս միասին, թէպէտ ժամանակին դատարկ մեծութիւնից է որպէս ինչ-որ գետ քաղմաքի ուղիւներից²⁶⁸ քարձրացել [եւ] իբրեւ ինչ-որ գազան ճրաններով ու մագիններով սպառնալի է դարձել, որին ամաշեցնում է Տէր Աստուած սուրբ Գրիգորի աղօքքներով, եւ ձեր միջոցով կտրատելու է՝ եւ. Կը 10:

ըստ առաջին վարդապետների օրինակի, նաեւ ծայնակցելով երանելի Պողոսին՝ խորամանկ օձի այդ ցանցը, [որովհետեւ] մեզ հասաւ Աղուանքից մինչեւ Վրաց աշխարհի Քրիստոսի Աւետարանով լի դարձնելը եւ [այն] ուրախարար հրավիրական խօսքը լսելը, թէ՝ «Քարի եւ հաւատարիմ մշակ, քեզ հետ միասին վրկուած գնիովի եկ մտի՛ր քո Տիրոջ ուրախութեան մէջ»։ Թող [այնպէս] լինի, որ դուք հասնեք դրան, տէր Վրանէն՝ ձեր ամքող ուխտով հանդերձ։ Զեր միջոցով քոյ եւ մենք [հասնենք] մեր Քրիստոս Աստծոյ շնորհի։

Ողջ եղի՛ր Տիրոջով եւ մեզ համար աղօքք արա՛»։

ԳԼՈՒԽ ԻԱ

ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՍՍԱԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՎՐԹԱՆԷՄ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ

«Թոյ սրբութեան ողջունագիրը ստացանք եւ Աստծուց գրիացանք եւ ուրախ եղանք, որ Ամենաստորք Երրորդութեան պահպանութեամբ Տէրը ողջ է պահել քեզ եւ կը պահի։ Իսկ ինչ որ գրուած էր մեր նուաստութեան հասցին, բազմապատիկ շնորհակալութեամբ եւ արդինաւոր օրինութեամբ երախտագիտութիւն յայտնեցինք։

Այն նամակը, որ խնդրեցիք կաթողիկոս անուանուածին եւ երկրի այլ իշխաններին [յել], գրեցինք, ինչպէս որ արժան էր։ Բայց այն, ինչ որ [նամակատար] սպասաւորի մասին էր գրուած, [նրան] ժամանակի դժուարութեան պատճառով հնար շեղաւ ուղարկել, տէ՛ր, անմեղադիր եղի՛ր։ Թող որ քո սպասաւորը տանի եւ պատասխանները բերի, որպէսզի մենք ըստ նրա իմանալ կարողանանք։ Եւ եթէ Ամենաստորք Երրորդութեան գրութեան եւ նամակի միջոցով խաղաղութիւն լինի, ինչպէս որ յոյս ունենք, [ապա] բարի է, որ դուք կը հասնեք ձեր սուրբ Եկեղեցին վառաւորած անունով։ Ապա թէ ինչ-որ չափով երկարաւուն լինի ուրացողների յամառութիւնը, պատուէր տուէ՛ք ձեր ծանօթ ու սիրելի իշխաններին, որ գրեն մեր երկրի վառարանուած իշխանին, որպէսզի սրա իրամանով մենք էլ զնանք եւ մեր Քրիստոս Աստծոյ օգնութեամբ յանդիմանենք նրանց, որ ուղղութեան զան։ Ապա եթէ մեր բազմաքի մեղերի պատճառով վիճակուի հակառակ եւ ընդդեմ [խօսք] լսել, մեր սուրբերի փոշին նրանց վրայ կը թօքափենք, իսկ մենք Աստծու եւ մարդկանց կողմից անմեղադիր կը լինենք։ Ողջ եղի՛ր Տիրոջով։

ԳԼՈՒԽ ԻՐ

ՎՐԹԱՆԵՍ ԶԵՐԹՈՂԻ ՆԱՍԱԿԸ ՎՐԱՅ ԿԻՒՐՈՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ ԵՐԿՐԻ ԻՇԽԱՆՆԵՐԻՆ՝ ՄՈՎՍԵՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՍԱԿԻ²⁹ ԽՆԴՐԱՆՔՈՎ

«Վրաց սրբասեր կարողիկոս տէք Կիւրոնին, Աստրներսեն և Վահան և
Բզմնի իշխաններին՝ Վրթանէսից եւ սուրբ Եկեղեցու միարան պաշտօն-
աներից Տիրոջով ողջո՞յն:

Նախապէս մեր երանելի հայրապէտ Մովսէսը ծեր պատուականու-
թեանը [գրեց] խոժիկ Եպիսկոպոսի խարէութեան մասին, որպէսզի մեր
երկու Երկրների միջեւ նորոգածնեւում չլինի այն հաւատի, որն սքանչելի
հիմնադրութեամբ հաստատուեց աներկիլու եւ Տիրոջ քաջ տառապեալ
սուրբ Գրիգորի կողմից: Արդ՝ մեր հայրերից եւ ուղղափառ վարդապետնե-
րից պատուեր ունենք ոչ միայն Նեստորի խնորից հեռանալ ու նզովել
այեւ [նզովել] Եւտիքոսին, Եւնիմոսին, Սեւիրոսին, Մարկոնին, Սաբ-
լիոսին եւ այլ նմաններին, եւ առաւելագոյն եւս տիեզերակործան յիշա-
տակութեան անարժան Քաղկեդոնի ժողովը, որտեղ ճշմարիտ միաւորու-
թինից յետոյ մի քրիստոսի վրայ քածանում եւ անջատում սահմանեցին: Այժմ լսեցինք, որ դուք Քաղկեդոնի անօրէն ժողովը ու Լետոնի անիծեալ
տոմարը ուղղափառ էք համարում եւ մեծարանքի արժանի: Որովհետեւ
կրորին շունէք քննելու շար հերձուածները, քանզի [դրանք] աւելի շար
[ձեւով], քան թէ հրեական ուրացութիւնները, հեռացնում էին ճշմարիտ
հաւատից, որ կայ Յիսոս Քրիստոսի՝ մեր Տիրոջ հանդէաւ:

Արդ՝ ծեր աստուածասիրութիւնը չպէտք է դրանից աւելի վարդապե-
տութիւն ընդունի որեւէ տեղից, քացի երեք սուրբ եւ անարատ ժողովնե-
րից, որոնք ի պատի Ամենասուրբ Երրորդութեան գումարեցին երեք հա-
րիւր տասնութը՝ Նիկղայում, հարիւր յիսունը՝ Կոստանդնուպոլսում, եւ եր-
կու հարիւր՝ Եփեսոսում: Եւ աւելին, քան մեր եւ ծեր հայրերի ու վարդա-
պետների հաւատի այն սահմանն է՝ չենք ընկալել եւ ոչ էլ ընդունում ենք: Իսկ ով ընդունում է կամ նրանց հաւատի ականակիտ ու անքիծ սահման-
մանը խառնում է ինչ-որ պղտոր հրապոյրներ, քող իմանայ, որ օտար եւ
տարագիր է ուղղափառ հաւատին, քանզի հաւատով ենք սովորում հաճոյ
լինել Աստծուն: Որովհետեւ Վերջին ժամանակներում ենք [ապրում],
որեւէ մէկը չպէտք է Երկրայի: Քանզի նախ ապստամբութիւն է զալու, ու-
սուցանում է երանելի առաքեալը, եւ նրա մասին նոյն ինքն էլ պատշաճ
պատասխանում: «Եթէ որեւէ մէկը աւելին աւետարանի, քան որ մենք

աւետարանեցինք, քող նզովուած լինի»³¹: Քանզի ոոջ տվետերքում ուղղա-
փառների Եկեղեցիներում Աւետարանն ընթերցելուց յետոյ Նիկղայում
սահմանուած հաւատամբն ենք կարդում, այլ ոչ թէ Քաղկեդոնի ժողովի
հայեաութիւնները: Իսկ եթէ այդպէս է, չպէտք է մեր հաւատի ամբողջ
պարիսպը փորենք, որովհետեւ՝ ով հայրենի պարիսպը քանորում է, նրան
օճն է խայրում, Վկայում է [Սուրբք] Գիրքը, իսկ ով զորում է վեճը՝ այսինքն
ճշմարիտ հաւատի ճշմարտութիւնը, իր անձը կորստի է մատնում³²:

Արդ՝ ծեր պատուականութիւնը պէտք է նախանձախնդիրի լինի հայ-
րերի ճշմարիտ հաւատին, որ իրաշբներով ու աստուածաշնորիկ պարզե-
ներով առատացաւ մեր Երկրում: Եթէ ծեր մտքում ինչ-որ Երկրայութիւն
կա, եւ կամնանում էք այլ առքի փորձ ընդունել, գրեցէք մեր Երկրի ամբող-
ջապէս փառարանուած իշխաններին, որպէսզի գամ այդտեղ, եւ ինչպէս
հեռաստանից նամակի պատզամով [եմ անում], նոյն կերպ Սուրբ Գրքի
առերես վկայութեամբ ցոյց տամ խօսքերիս ճշմարտութիւնը: Ուզ երէք»:

ԳԼՈՒԽ ԻԳ

ՎՐԹԱՆԵՍ ԶԵՐԹՈՂԻ ՆԱՍԱԿԸ ՊԵՏՐՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝
ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ

«Աստուածաշնորիկ պատիւներով պայծառացած փառաւորեալ տէք
Պետրոսին՝ Վրթանէսից եւ միարան սուրբ Եկեղեցու պաշտօնեաններից
Տիրոջով աղջո՞յն: Երանելի առաքեալ Պողոսը գրում է գալիքում լինելիքի
մասին, թէ՝ «Ձեզանում հերձուածներ են լինելու, եւ երեւալու [թ, թէ] ովքեր
են ընտիրները»³³: Զո պատուականութեան մասին լսեցինք, թէ նախան-
ձաննդիր ես ճշմարիտ հաւատին եւ պիրող: Որովհետեւ ինչպէս նախ-
կինում մեր երանելի հայրապետ Մովսէսը գրեց քո Երկրին, [թէ պէտք է]
հեռանալ խոժիկ Եպիսկոպոսի խարէութիւններից, այսօր էլ առաւել եւս
պարտաւոր ենք փախչել Քաղկեդոնի անօրէն ժողովի հայեաութիւննե-
րից, քանի որ հրեւութիւններին է հաւասար: Իսկ այժմ մեզ վիճակունց ա-
նախորժ լուր լսել, թէ ծեր Երկրում մեծարանքներ են մատուցում այն ա-
նարժան ժողովին: Այդ պատճառով ծեր Երկրից մի Եպիսկոպոս գնացել է
փախստական [դարձած]³⁴ այդ ժողովի թունաւոր ու յիշատակութեան ա-

³¹ Գաղատ. Ա 9:

³² Առակ ԻՉ 27:

³³ Ա Կորնք. ԺԱ 19:

³⁴ Իմաս Մովսէս Ցուրտաւեցին:

Նարժան ամբարտաւանութիւնը²⁰ ճանաչելով:

Արդ՝ նամակ գրեցիմք այդ բաների մասին ձեր կաթողիկոսին ու իշխաններին, որպէսզի հաւատի նորոգածեւում չինի երկու երկրներիս միջև, այլ մնայ շարունակուի այն, ինչը սուրբ Գրիգորի միջոցով հաստատեց Տէր Աստուած բազմարի հրաշագործութիւններով։ Բայց դր առաւելագոյն խաղաղութեան պատճառ եղի՛ր, որպէսզի սուտը կորչի, խկ ծշմարտութիւնը հաստատուի, եւ եպիսկոպոսն իր տեղը վերադառնայ։ Քանզի երէ այդ այդպէս չինի, յախտենական թշնամի կը մնանք քո երկրի նկատմամբ։ Իսկ երէ գրածներիս միջոցով հակառակութիւնը չվերանայ²¹, գրեցէ՛ք մեր երկրի իշխաններին, որպէսզի մեզ այդտեղ ուղարկեն, եւ քոդ լինի այն, ինչպէս Աստուած է կամենում։ Ողջ եղի՛ր»։

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԹԵ ԻՆՉՈՒ «ԳԻՐՋ ԹՂԹՈՅՑՈՒՄ» ԳՐՈՒԱԾ ԶԳՏՆՈՒԵՑ
ԿԻՒՐՈՆԻՆ, ՎՐԱՅ ԻՇԽԱՆՆԵՐԻՆ ԵՒ ՊԵՏՐՈՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՎՐԹԱՎԱՀՍԻ ՆԱՍԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ,
ՈՐԸ ԳՐԵՑ ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ

Այս նամակներին, որ Վրբանէսի կողմից Մովսէս եպիսկոպոսի խնդրանքով գրուեցին Կիրոնին, վրաց իշխաններին եւ Պետրոս եպիսկոպոսին, «Գիրք թղթոցում» գրուած պատասխան չգտանք ոչ իր [իերքական] եւ ոչ էլ այլ տեղում։ Նաեւ ուրիշ տեղերում չկարողացանք գտնեն, բացի այլեւայլ առիթներով ու արհամարհանքով Մովսէսի կողմից մի փոքր գրուածից, որ նա գրում է Վրբանէսին իր երկրորդ նամակում, որը սրանցից յետոյ է, եւ յետոյ կը կարդաս իր տեղում։ «Այն նամակն, ասում է, որ գրեցիք կաթողիկոս կոչուածին, երկրի իշխաններին եւ Պետրոսին, որը ճեզանից խնդրեցի, իմ սպասաւոր տարաւ։ Եւ եկաւ պատմեց, թէ ոչ ոք շանդգնեց նամակը ներկայացնել։ Բայց յետոյ երբ տարան, [Կիրոնը] նորվել ու նախատել է հայերին»²²։ Եւ դարձեալ [գրում է], թէ՝ «Քերեկ տուեցի համառօտ գրուած պատասխանը. հրամայեցէ՛ք կարդալ»։ Եւ դարձեալ Վրբանէսն է մի քանի խօսքով յիշում Մովսէսին գրուած իր նամակում։ «Իմացայ, ասում է, նամակի պատճառը, երբ ինձ պատասխան ուղարկուեց, եւ այն էլ՝ ինչ-ինչ ազատների կողմից»։ Եւ դա խորհրդանիշ էր ցաւագարի ու հիւանդի, [ինչպէս] իրենց նամակներում ասում են Մով-

²⁰ Ուխտանէսի օգտագործած եգրոյքով՝ գՀայաստանեայս։

սէս ու Վրբանէսը։

Արդ՝ ինձ բրում է, թէ արժանի ու պատշաճ չի համարուել նրանց անարժան ու անընդունելի պատասխաններն արտազրել «Գիրք թղթոցի» մէջ, ուստի եւ մեր կողմից [էլ դրանք] չգտնուեցին ու չգրուեցին, նաեւ յիշատակի ու յիշուելու [անարժան] եղան նրանց եւ մեզ [իհամար]։ Բայց կարծում եմ, որ այդ բոլորը Կիրոնից է եղել, ինչպէս որ եղաւ խկապէս։ Որպինտես ոչ միայն իր եւ իշխանների պատասխանը խափանեց, այլև Պետրոսինը։ Քանզի նա [Պետրոսը] նախանձախնդիր էր աստուածային պատուիրանին, պաշտպան ուղղափառ հաւատին եւ հաւատարին մեր կողմին, թէպէտե ինքը ազգով ու երկրով նրանցից էր, ուստի եւ Վրբանէսը նրան ուղղուած իր նամակում իրեւ գովասանք գրում է նրան, թէ՝ «Նախանձախնդիր ես, ասում է, եւ ծշմարիտ հաւատը սիրող»։ Բայց նաեւ մեղաղրանք է գրում երկրի մասին, թէ՝ «Լուր հասաւ մեզ, որ ձեր երկրում մեծարանքներ են նատուցում Քաղկերունի ժողովն, բայց թող մեր եւ ձեր երկրների մէջ նորոգածեւում չինի»։

Սակայն չզիտենք ստոյգ պատճառը, թէ ինչպէս եւ կամ ինչի համար Պետրոս իրեն ուղղուած Վրբանէսի նամակին պատասխան չգրեց։ Թէպէտե կասկածանքով Կիրոնի մասին ասացինք, բայց կարծում եմ, թէ մեզ համար բնաւ որեւէ պիտանի բան չգրաւեց, քանզի իրենց ստոհակութեան եւ ըմբռստութեան պատճառով հարկադրուեցին չգրել, բացի այն անպիտան եւ անմիտ պատասխանից, որ համառօտ խօսքերով թիշ թէ շատ յիշատակում են Վրբանէսը եւ Մովսէսը իրենց նամակներում, որ գրեցինը միմեւանց։

Արդ՝ երբ Կիրոնին գրուած Վրբանէսի նամակները Մովսէսի սպասաւորի կողմից տարուեցին երկրի իշխաններին եւ Պետրոսին, Կիրոնը Մովսէսի [նախանկցութեան] պատճառով կասկածի մէջ ընկաւ, թէ գուցէ [գրուածն] իր համար միջնորդութիւն է եւ միաժամանակ հաւատի խնդրով խրատ ու մեղաղրանք, ինչպէս որ էր իսկ, [եւ] ներքին բարկութիւնից ու սրտի զայրոյթից իրեւ յարբած եւ խելակորորյս վիճակում փսխած, կամ թէ ասես ցոփացած, լուր ու մունջ, մտքի մէջ մոնուալով, մրբմրավով ու մոնչցոց սպառնում էր, ասում է, եւ, մրոտուած ու սեւացած էր դէմքով։ Եւ անդուր բերանով ու լեզուով նենգաբար խօսում էր եւ ասում. «Այս նամակը Երուսաղէմ քաղաքի հայրապետին կը տամ տանել, [որպէսզի] նա պատասխանի»։

Եւ այդպէս ձգտում, գնում էր խորը եւ խաւարի միջից էր խօսում, որովհետեւ հոգու աշքը խաւարել էր, նարմնի միտքը մքնեն, բողել էր Աստծուն եւ ապաւինել մարդկանց՝ Հոռմի բազարուին եւ Երուսաղէմի հայրապե-

տին: [Հենց] այնտեղ ասաց. թէ «Թող Աստուած փառաւորի արքային. ո-րովին եւ նա փառաւորուեց». Խոկ այստեղ էլ. թէ «Երուսաղէմ քաղաքի հայրապետին [նամակը] կը տամ տանել. [որպէսզի] նա պատասխանի»:

Եւ սա ոչ միայն Կիրոնն էր սպառնում ու ասում. այլեւ [նրա] բոլոր ժամկետները. եպիսկոպոսները. քահանաները. իշխանները. շինականները. նախարարները եւ խորհրդականները. միեւնոյն մտքով փառաւած՝ բարկությամբ բորբոքուեցին: Եւ առհասարակ ամենքը խոռվուեցին. սասանուեցին որպէս յարքածներ. Եւ նրանց ողջ ինաստորինն ընկդմուց. որի մասին նարգարէն մեղադրելով ասում էր. «Վա՝ ծեզ. որ յարքած էք եւ [այն էլ] ոչ գինուց»²²:

ԳԼՈՒԽ ԻԵ

ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՐՐՈՐԴ ՆԱՍՍԿԲ ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂԻՆ

«Սրբասէր տէր Վրքանէսին՝ անարժան Մովսէսից Տիրոջով ողջո՞յն:

Այն նամակները, որ գրեցիր կարողիկոս կոչուածին. Երկրի այլ իշխաններին եւ Պետրոսին. որ խնդրեցի ծեր սրբութիւնից, տուեցի իմ սպասարկին տանելու: Եւ այժմ [նա յետ] եկա: Բայց հոգնածութիւնից չկարողացաւ ծեզ մօտ գալ եւ պատմել, թէ ինչպէս ոչ ոք շանդգնեց ներկայացնել նամակը կարողիկոս կոչուածին: Ապա թէպէտեւ ի վերջոյ տարան, նամակն ընթերցելուց յետոյ [նա] սաստիկ բարկութիւնից գրգռուած, զայրացած սրտով եւ այլագունած՝ ցաւագարի նման նզուում ու նախատում էր, ասում է, հայերին: Եւ նամակի պատասխանը ոչ ինքը գրեց եւ ոչ էլ որեւ մէկին գրել տուեց: «Սա կը տամ տանել Երուսաղէմ քաղաքի հայրապետին, ասաց. [որպէսզի] նա պատասխանի»:

Բայց ովքեր որ մի փոքր պատասխանել են, [նամակները] բերել տուի թեզ՝ [իմ] տիրոջը: Հրամայեցէք կարդալ, եւ մեզ էլ հաղորդեցէք, թէ ինչ է գրուած: Ձեզ Երկար շարշարեցի, Աստուած քող վարձահատույց լինի, բայց, աղաշում եմ մի՛ ձանձրանաք: Եւ ինչ ծեսով [էլ լինի]²³, քող ծեզ յանձնուի այն մոլորուած Երկիրը եւ իմ տառապեալ ամձը: Եւ նամակի միջոցով վերատին քաջալերի մեզ:

Ողջ եղի՛ր Տիրոջով»:

²¹ Ես. ԾԱ 21:

ԳԼՈՒԽ ԻԶ

ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՐՐՈՐԴ ՆԱՍՍԿԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՑ ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂԻՆ ԿՈՂՄԻՑ²⁴

«Զեր սրբութեան ողջոյնը լսեցի եւ ուրախացայ: Իմացայ նաեւ նամակի պատասխանն ինձ ուղարկելու պատճառի մասին: Բայց այն, ինչ խսկապէս գրել են ինձ ազնուականներից ումանք, այնպէս է, [ասես] ումանք ինչ-որ հիւանդութեան մէջ ընկած՝ չեն հասկանում, թէ ինչ են խօսում: Ասում եմ՝ «Մենք ունենք ե՛ւ այս հաւատոր, ե՛ւ այդ օրէնքները, ե՛ւ այստեղ ենք հաղորդակցում, ե՛ւ այդունք: Եթէ Մովսէսը կամենում է, քող գայ, այս կարողիկոսին հենազանդ լինի, որպիետեւ դրանից [տարագրութիւնից] հածելի է այս, եւ իր տեղը կը գրաի»:

Արդ՝ աւելորդ եմ համարում որեւէ քան ասել: Այս ամբողջը քող պահուի Աստծոյ օգործեան համար: Բայց ինչ վերաբերում է մեր Երկիրն անիծելուն եւ պարսաւելուն, ինչպէս որ այլ կորստեան աստուածառաք բարկութեանը հիւրընկալ եղան, նմանապէս նաեւ այդ յանդգնութիւնն արեցին՝ իրենց անձերին անքութելի վերքեր հասցնելով եւ իրենց իրենց խոցուտելով: Մենք հեռու ենք այդ անձքից: Խոկ դո՛, տէ՛ր, աղօթի՛ր Եկեղեցիներում, քանզի պնդել են, որ առաջնորդ նշանակենք: Եթէ մեր Տէր Աստուածն օգնի՝ այս գործն աւարտին հասցնելու, ապա զիտենք, որ ծեր կամքն այնպէս կը կատարուի, ինչպէս Աստծոյ ողորմութեանը յարմար կը լինի:

Ողջ եղի՛ր, տէ՛ր իմ»:

ԳԼՈՒԽ ԻԷ

ԻՆՉ ՈՐ ՄՈՎՍԵՍԻ ԵՐՐՈՐԴ ՆԱՍՍԿԲ ՅԵՏՈՅ [Է], ԵՒ ՏԵՐ ԱԲՐԱՀԱՍԻ ՄՍՍԻՆ, ՈՐ ՇՈՒՏՈՎ ԳԱԼՈՒ ԵՐ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԹՈՌԻՆ [ՆՍՏԵԼՈՒ], ԵՒ ՎՐԹԱՆԵՍԻ ՅՈՐԴՈՐԸ ՄՈՎՍԵՍԻՆ՝ ՎԵՐՍՏԻՆ ՀԱՍՏԱՏ ՄՆԱԼՈՒ ՀԱԲԱՏՔԻ ՄԵԶ, ԵՒ ԻՆՉՉ ՈՐ [ԴՐԱ] ՊԱՏՃԱՌՆ ԵՐ

Եւ այս այսպէս շարադրելով՝ համառօտ աւարտին կը հասցնեմ այն, ինչ Վրքանէսը գրել է Մովսէսին: Որպիետեւ նրան գրում է նրա Երրորդ նամակի պատասխանը եւ [նրանում գրում] ինչ որ անընդունելի է պատճերի նամակում, եւ թէ՝ մօտ օրերս կարողիկոս է նստելու, եւ դարձեալ, թէ՝ պատասխանից յետոյ հաւատի հաստութեան մի այլ նամակ էլ գրիր:

[այն մասին], թէ ինչպէս էր Զենոն եւ Անաստաս ուղղափառ քազալորների ժամանակներում:

ԳԼՈՒԽ ԻՃ

ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂԻ ՆԱՍԱԿԸ ՄՈՎՍԵՍ ՑՈՒՐՏԱՒԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՈՐՆ ԱՅԺՄ ԳԱԶԵՆՔ [Է ԿՈՉԻՈՒՄ] ՀԱՒՏԻ ԵՒ ՎԵՐՍԻՆ ՀԱՍՏԱՏ ՄՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ²⁴

«Քո նամակը ստացայ, տէ՞ր իմ, եւ [հասկացայ] ընթերցասէր ուղղափառ պատուականութեանդ խնդրանքի ալատճառը՝ Քաղկեդոնի ժողովի օտարացնող, կորստական, անօրէն [քնոյթը] վերստին հաստատելու մասին, [ժողով], որը վերացրեց բարեպաշտ Զենոնը [իր] Միաւորիչ նամակով, իսկ նրանից յետոյ՝ իրեշտակներին ու մարդկանց հաճոյ Անաստառը՝ նոյն ուխտին նախանձախսնիր լինելով:

Արդ՝ այս պատմութինը դրա պատճառն այսպէս է բովանդակում: Քանզի երբ երանելի քաջանոն Անաստասը հեռացաւ այս պանդխտական [կեանքից] դէպի անարատ եւ աստուածահաճոյ կեանքը, իշխանութինը յաջորդը գրաւեց Յուստին անունով [մէկը] ժանտ ու անօրէն [մի] մարդ, որը դաստիարակուել էր Նեստորի աղանդով եւ խրուել ու հաստատուել նրա [այդ աղանդի] մէջ: Սա ըստ իր յանդգնութեան յանձնապատճառ քազաւորելով եւ նախապատրաստուած լինելով մահատարած խորիդին՝ սկսեց հերետիկոս կոչելով անարգել բարեպաշտ ու խաղաղասէր քազաւորելու Զենոնին ու Անաստասին, եւ շրջաբերական նամակներով հրաման տուեց գոռոզասատ ու անխիղ իշխաններին՝ վերստին հաստատելու նրանց [նախորդ կայսրերի] կողմից մերժուած Լեռոնի տոմարն ու Քաղկեդոնի ժողովը, իսկ եթէ որեւէ մէկը համարձակուի ընդդէմ կանգնել քազաւորի հրամաններին, սրով ու պէսպէս տաճանքներով ոչ շացնել:

Այդ ժամանակ բոլոր եկեղեցիները արեամբ շաղախուեցին, եւ մետաղեայ վանդակներն [ու] բանտերը [լցուեցին], զանազան հնարքներով տաճանքները [քազմացան]: Եւ աքսորի կողիները շղբայուածներով լցուեցին, որովհետեւ քաջ հովիներն [աւելի] լաւ էին համարում մեռնելը եւ անարատութեամբ Քրիստոսի մօտ գնալը, քան թէ Քաղկեդոնի ժողովի ամբարիշտ վարդապետութեամբ ապրելը: Իսկ անօրէն վայրենին աղանդի ձգտողներին²⁵ ու աշակերտներին եւ նրանց, ովքեր մշտնջնական

փառքի փոխարէն անցաւոր պատիւը կամեցան ընտրել, եպիսկոպոսներ նշանակեց քազմաքի քաղաքներում եւ հաստատեց [Քաղկեդոնի] ժողովի խորհուրդը: Այստեղ արժանի են յիշատակուելու որոշ քաներ (քայլ դա այլ ժամանակի բող պահուի), քանզի քազմաքի խորվութիւններ քարձրացան ժողովրդի կողմից հերձուածող եպիսկոպոսներին չընդունելու պատճառով:

Արդ՝ կարծ ժամանակ քազաւորելով՝ Յուստինը մեռաւ ծանր հիւանդութիւնների հարուածներից: Նրանից յետոյ քազաւորում է Յուստիանուսը²⁶, եւ Քաղկեդոնի ժողովի հակառակութեան խորվութիւնը սրա ժամանակ տակաւին կենդանի էր: Բայց նի օր [կայսրը] խորիրդակցում էր իր մեծամեծերից ոմանց հետ ուղղափառ եպիսկոպոսների սպանութեան եւ հալածանքների վերաբերեալ, թէ՝ «Բոլոր քազմաքների այս խորվութիւնները իզուր²⁷ չարեց՝ քազաւորը, եւ մենք այժմ չպէտք է անտես անենք իզուրը»: Եւ նրանք, ովքեր հակառակութեն էն են եւ այն աղանդի աշակերտներ, ասացին քազաւորին, թէ՝ «Մարդկանցից ոչ մէկը դա չի կարող ասել, որդիվինեւ Սիմեոնը ստորագրել է եւ հաւանել»²⁸ Քաղկեդոնի ժողովի սահմանադրութիւնը, եւ նինչեւ այսօր էլ [այն] զգուշութեամբ պահպանում է սուրբ Եփիմիայի տապանի մէջ [Քաղկեդոնում], որտեղ հենց ժողովը եղել էր: Քանզի այս Սիմեոնը Անտիոք քազարքում մենակեաց էր եղել, հրաշգրծ, հոչակաւոր եւ հարազատ Սուրբ Հոգու շնորհներին՝ որպէս մէկը [Աստծուն] տեսնողներից:

Իսկ [կայսեր] մօտիկներից մէկը նախանձախսնիր լինելով ուղղափառ հաւատին՝ ասում է քազաւորին. «Եթէ երանելի Սիմեոնը ստորագրել է եւ հաւանել Քաղկեդոնի ժողովի հաւատի սահմանումը, եւ [այն] գտնուում է սուրբ Եփիմիայի տապանում, [ապա] ես դառը չարչարանքով կ'ընդունեմ իմ կեանքի վախճանը, քանզի պատմութիւնն այսպէս է [այլ կերպ է]»: Թազաւորը լուր մնալով [օրերից] մի օր հրամայում է սակաւ մարդկանցով մակրովարնքաց ուղեւորութեամբ Քաղկեդոն գնալ, եւ մտնելով սուրբ Եփիմիայի վկայարանը՝ ստիպում է սպասաւորներին ուսկրերի պահարան-տապանը բանալ: Իսկ նա [սպասաւորն] ասում է. «Ո՞վ էք դուք, որ համարձակուում էք այդ անել, որը մարդկանցից ոչ ոք չի արել»: Եւ իմանալով ինքնակալ քազաւորի նպատակը՝ շուտափոյք քացում է: Եւ [քազաւորը] փոելով քլամիդը՝ իրամայում է սրբի նշխարներն այստեղ հանել: Եւ սպասաւորներին հարցնում է. «Ներսում էլք բան կա՞յ»: Եւ նա [սպասաւորն] ասում է. «Ել ամենեւին բան չկայ»: Եւ քազաւորը նայելով՝ ինքն էլ տեսնում է, որ ոչինչ չկայ, իոդոց հանելով՝ ծեծում է ճակատը՝ գրջալով ու ողբալով սուրբ ու երանելի հովիների համար, որոնք ուղղափա-

ոութեան ո ճշմարիտ հաւատի համար հալածուեցին եւ սպանուեցին:

Եւ խորհրդակցում է իր մեծամեծների հետ՝ վերացնել հաւատի նորոգածեւումը, որ սահմանել էին Քաղկեդոնի փաստաբրով, եւ հաստատել առաքեալների ու սուրբ հայրերի վաղնջուց քարոզածը:

Սակայն խոկոյն վլայ հասաւ դաւադրական մահը, որ շատերի կարծիքն է, [եւ] նախապէս արուածը նոյնութեամբ մնաց:

Ողջ եղի՛ր մեր Տիրոջովք:

ԳԼՈՒԽ ԻԹ

ԻՆՉ ՈՐ ԵՂԱՄ ՎՐԹՄԱՆԵՍԻ ՆԱՍԱԿԱՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ, ՈՐ
ԽՆԴՐԵԼ ԷՐ [ԳՐԵԼ] ՍՈՎԱՄԵՍԸ ՀԱԿԱԾԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՒ ԱՅԼ
ԲԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Արդ՝ Վրթանէսը նրան այս բաները պատմեց այն խնդրի մասին, որն իր երրորդ նամակում էր [արձարծուած]¹ հաւատի եւ Քաղկեդոնի անօրէն ժողովի կողմից [այն] խախտուածը կրկին հաստատելու վերաբերեալ, որը վերստին հաստատուեց բարեպաշտ քագաւորներ Զենոնի եւ Աճաստասի շնորհի, նաեւ՝ դրանից յետոյ եղածի եւ այլ բաների, որ Կիրոնի և վրացիների մասին են, որ [մեր կողմից] պատմութեան շարադրանքում նախքան սա եւ հենց սոյն [զիխում] յարմարեցուեցին:

Եւ ուրիշ բազմարի վարդապետական խօսքերով զօրացնում էր նրան: «Դու, ասում է, մի՛ զարմանար, ո՞վ իմ տէր, որովհետեւ հասել ենք վերջին ժամանակներին, ուստի պէտք է կատարուեն Պողոսի գրածները, որն աստուածագուշ ծայնով աղաղակում է ամենուրեք, բոլոր տեղերում, թէ՝ «Վերջին ժամանակներում ոմանք կը հեռանան հաւատից»: Եւ դարձեալ թէ՝ «Յայտնուելու է անօրէն մարդը [Ները], կորստեան որդին՝ հապատացած հակառակորդը»²: Եւ դարձեալ, թէ՝ «Շատ Նեռեր արդէն եկել են»: Եւ մի այլ տեղում [է ասում է], թէ՝ «Հերձուածներ են լինելու ծեզանում», եւ այլ բաները եւս:

Եւ սրանց նման այլ խօսքեր էր յիշեցնում նրան եւ շատ այլ խօսքերով միխթարում նրան ու զօրացնում: Եւ բեկազմելով նրան՝ խոստանում էր սատար կանգնել նրան մինչեւ գործի աւարտը, եւ ուրիշ այլ խօսքեր:

¹ բ. թես. թ 3:

² Ա Կորնը. ԺԱ 19:

ԳԼՈՒԽ Լ

ԱԲՐԱՀԱՍԻ ՍԱՍԻՆ, ՈՐ ՇՈՒՏՈՎ ՆԱՏԵԼՈՒ ԷՐ
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԹՈՈՒԻՆ ՎՐԿԱՆԻ ՄԱՐԶՊԱՆ
ՍՄՐԱՏԻ ԵՒ ՀԱՅՈՑ ՄԻՒՍ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀՐԱՍԱՆՈՎ

Կը սկսենք պատմել քեզ համառու խօսքով այն, ինչ որ պարտաւոր ենք [պատմել] եւ [ինչը] բաւական է քեզ տեղեկութիւն տալու համար, իսկ մնացեալլ այլ ժամանակի կը քողմենք:

Սրանից յետոյ այս պահին Վրկանի մարզպանը Հայոց երկրի նախարարների ու երեւելների հետ խորհուրդ արեց՝ եպիսկոպոսների ժողով գումարել, որպէսզի Հայոց հայրապետ հաստատեն լընտրեն: Եւ ապա նրա հրամանով հաւաքուեցին Հայոց ոստանում³, որ կոչում է Դուին: Քանզի այնտեղ էին պատրաստում [կարողիկոս] նստեցնել, որովհետեւ այն ժամանակ Հայոց հայրապետութեան արոռն այնտեղ էր, եւ արոռի տեղապահ Վրբանէս Քերթուն էր, ինչպէս վկայում է «Գիրք թլրոցը»: Եւ այդ եղան Հայոց կարողիկոս Մովսէսի մահուանից յետոյ:

Իսկ երբ եպիսկոպոսները հայաքուեցին, Սմբատը դրանից յետոյ ձեռնարկ⁴ պահանջեց նրանցից, որպէսզի շշեղուն ուղիղ ու ճշմարիտ հաւատքից եւ սուրբ հայրերի դաւանանքից, որ հաստատեցին մեզնում: Եւ իր ձեռնարկը տուեց նրանց նոյնանան ուղիղ ու ճշմարիտ խստովանութեամբ: Եւ մեծ զգուշութեամբ կնքեցին ու պահեցին [դրանք] Տիրոց տանը: Եւ այս եղան հոռոմների վրա Մովսէսի քագաւորութեան ժամանակ, Պարսից արքայից արքայ Ապրուէզ Խոսրովի տասմեօթերորդ տարում, Սարերի ամսիմ⁵:

[ԵՌ] եպիսկոպոսների անոնները հետեւեալներն էին. Բասենի Մանաւէ եպիսկոպոս, Սիւնիքի Քրիստովոր եպիսկոպոս, Ռշտունիքի Աբրահամ եպիսկոպոս, Ամատունեաց Յովհաննես եպիսկոպոս, Մեհնունեաց⁶ Անրոն եպիսկոպոս, Բգնունիքի Ներսէս եպիսկոպոս, Գուլբի Սիւն եպիսկոպոս, Թեղուս Սարդարական եպիսկոպոս, Անոյ Թաղէն եպիսկոպոս, Անձեւացիքի Գրիգոր եպիսկոպոս: Այս տասը եպիսկոպոսները, նաեւ այսքան հայրեր ու քահանաներ, վաճացերեցներ, որոնք Սմբատի հրամանով եւ այլ նախարարների սատարութեամբ հաւաքուեցին Դուին քաղաքում կարողիկոս ծեռնադրելու Ռշտունեաց եպիսկոպոս Աբրահամին, որին շարքում բուարկեցինք:

¹ Ոստան՝ այսինքն՝ մայրաքաղաք, կենտրոն, տուեալ դէպրում՝ Սաստանեան հրանի Հայրմարզպանութեան կենտրոնը:

² Զեռնարկ-ը ստորագրութեամբ հաստատուած փաստաբրուն է՝ հաւաստագիր:

Բայց այն անգամ խափանուեց: Սակայն կարծես թէ դա Աստծոյ նախախնամութիւնից եղաւ, թէ կուզ եւ [այն պատճառով], որ նրանցից կային ունանք, որ իրենց կամքով ընկել էին հարկադրանքի տակ ու շեղուել հաւատից, իսկ ունանք հոռոմների բռնութեամբ էին նրանց հետևողութեամբ խոտորուած, [եւ] այդ ժամանակ տակաւին դեռեւս լիովին չէին հաւաքրի մէջ հաստատուած, թէ պէտք է կարծեցնում էին, թէ հաստատուած են: Ապա ասես վերատին հաստատուեցին գրի եւ խոստովանութեան միջոցով, որ առաջ եւ տուեց բարեպաշտ ու ամեն [ինչով] գովելի մարզպան Սմբատը, որը թէպէտե Հայոց երկրի քագաւորը էր, բայց նա լրացնում էր քագաւորի պակասութիւնն [ու] թերութիւնը՝ ամեն ինչի մէջ իր հոգացողութեամբ [եւ] ամեն բանում Դաւթի նմանողութեամբ առաջնորդելով Խորայէլի ժորովը:

Իսկ երբ եափսուները գնացին, այդ ժամանակ միաբան խորիրդի նատեցին, թէ քանի որ առայժմ տեղի չունեցաւ [այն], ինչի համար հաւաքուել էին, անհրաժեշտ համարեցին իրենց միջեւ կանոններ հաստատելոր եւ իսկապէս կարգաւորեցին ու սահմանեցին իրենց միաբանութեան ուխտը՝ իրեւ խրատ ու խոստովանութիւն եւ հոգիների շահ ու օգուտ: Ապա իրաքանչիւրը խաղաղութեամբ վերադարձաւ իր արոռը:

ԳԼՈՒԽ ԼԱ

ՎՐԿԱՆԻ ՄԱՐԶՊԱՆ ՍՍԲԱՏԻ ՍԱՍԻՆ,
ԹԷ Ո՞Ր ՏՈՀՄԻՑ ԵՐ ԵՒ Ե՞ՐՔ ԵՂԱԻ ՄԱՐԶՊԱՆ

Այժմ գրում եմ թեզ այն, ինչ որ մեր Սմբատի մասին պատմում է [նրա բողած] յիշատակը: Որովհետեւ սրանից առաջ, Վրաց քաժանմանը վերաբերութ առաջին ճանի [գլմի] սկզբում միայն անունը յիշատակեցինք, իսկ ուրիշ ինչ որ կար չհասցրեցինք:

Արդ՝ սա պատերազմում մի քաջ մարդ էր՝ ամեն բանի մէջ արի ու առքինի, հզոր ու զօրաւոր ամենուրեք: Նա մեր ազգից էր], մեր քագաւորներից եւ տուհմով Բագրատունի, նաեւ մեզ սիրելի՝ որպէս բնիկ եւ մեր քագաւորներին արիւնակից ու հաւաստիօրէն հարազատ: Եւ Յունաց քագաւոր Մուրիկի աշխարհակալութեան ժամանակ [նա] Պարսից արքայից արքայ Ապրուեզ Խոսրովի իրանանվ եղաւ Վրկանի իշխանութեան մարզպանը: Եւ քազմաքի պատերազմուներ վարեց եւ յաղքանակներ տարա Հայաստանում, Յունաստանում եւ Պարսկաստանում, ինչպէս ուսու-

ցանում է թեզ «Հերակողի պատմութիւնը»³⁰³: Իսկ այժմ եւ ներկայ ժամանակներում [Ել] հեզ [են]³⁰⁴ ու հնազանդ հայրերի հաւատին, նաեւ հաւատ ու հպատակ սուրբ հայրերի ու վարդապետների ուղղափառ հաւատին, նաեւ խստ պիտոյ ու կարեկից բոլոր կարօտեալներին, զօրավիզ ու օգնական հայերին՝ զօրացած դէալի Աստուած եւ հզօրացած Աստծու կուլմից:

Եւ այն անգամ էլ Հայոց անիշխանութեան ժամանակ [նա] լրացրեց քազարորի քացակայութիւնը եւ հայրապետի պակասութիւնը, որովհետեւ իր խոհեմ ու խելացի մտքով խորհուրդ արեց եւ խափանեց շեղուած նախկոպուների մտքերի խարդախութիւնը եւ ուղղեց հաստատեց նրանց մեղկ մտքերը: Եւ վերատին գլորուած [տեղից] ուղրի կանգնեցրեց ծեռնարկ-գրի միջոցով, որն առաջ նրանցից ու տուեց նրանց, եւ դէալի աջակողնը շակեց արքայական [ուղիղ] ճանապարհից նրանց շեղուելը [դէալի] ծախ: Իսկ ապա ծեռնարկը շեղուած եափսուներից առնելուց յետոյ կրկին հաւաքրեց [նրանց] նոյն նապատակավ՝ հայրապետ ընտրելու:

ԳԼՈՒԽ ԼԲ

ԶԵՌՆԱՐԿԸ, ՈՐ ՎՐԿԱՆԻ ՄԱՐԶՊԱՆ ՍՍԲԱՏԸ ՊԱՀԱՆՁԵՑ
ՇԵՂՈՒԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՑ, ԵՒ ՆՐԱ ՀՐԱՍԱՆՈՎ
ԴՈՒԽՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱՐԳՈՒԵԼԸ ՍՊՎԱԵՍԻ
ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅՑ, ԵՒ ԻՐ ԶԵՌՆԱՐԿԸ, [ՈՐ] ՏՈՒԵՑ ՆՐԱՆՑ

«Ամենագովելի, փառաւորեալ եւ աստուածաշնորհ պատիւներով պայծառացած տէր Սմբատին՝ Վրկանի մարզպանին եւ Տերանց³⁰⁵ զինուորին, Գիգ Դաշտկարինին³⁰⁶ եւ Հայոց վարդապետ Շարսաղարին՝ Բասենի Մանասէ եափսունուցից, Սինիրի Քրիստովոր եափսունուցից, Ռշտունիրի Աբրահամ եափսունուցից, Ամատունեաց Յովհաննէս եափսունուցից, Անձեւացիրի Գրիգոր եափսունուցից, Գողբնի Սիոն եափսունուցից, Մեհնունեաց Անարոն եափսունուցից, Բգնունիրի Ներսէս եափսունուցից, Յովհաննիկ Ելոյ³⁰⁷ եափսունուցից, Առնոյ Թաղէոս եափսունուցից, Թէոդոս Մարդպետական եափսունուցից՝ Տիրոջով ողջը՝ յն:

Պարսից արքայից արքայ Ապրուեզ Խոսրովի տասնեօթերորդ տարուն Մարերի ամսին, ինչպէս որ ծեր փառաւորութիւնը այս ժամին Դուինի սուրբ Եկեղեցում հաւաքրուած վերոյիշեալ եափսունուներից ծեռնարկ

³⁰³ Ինա՞ Սեբէոս (կամ Սեբիոս) եափսունուցից երկը, որն այսպիսի վերնագրով է յայտնի:

պահանջեցիք ուղղափառ հաւատի մասին, որ ընդունել են մեր հայրեն ու երանելի վարդապետները եւ այժմ մնեն Աստծոյ կամքով ունենք, արդ՝ ինչպէս որ նախկինում Հայաստան աշխարիկ հայրապետները, եպիսկոպոսները, իշխանները, եւ աշխարիկ մարտիկ սոսկալի նզովքներով մերժել ու դեն են շարտել բոլոր հերձուածողներին՝ Արքանին, Մակեդոնին, անիծեալ Նեստորին. Եւտիրոսին եւ Քաղկեդոնի ժողովը եւ Լեռնի տոնարը, նոյնպէս եւ մենք նզովում ենք բոլոր հերձուածողներին, էլ առաւել՝ Քաղկեդոնի անիծեալ ժողովը եւ Լեռնի պիտօն տոնարը: Դարձեալ կրկին նզովում ենք եւ հեռանում նրանց հետ հաղորդակցուելոց:

Ծշմարիտ են [այս] խօսքերը: Խսկ եթէ մեր խօսքերը խարեւորին լինեն՝ թալ նզովուած լինենք Ամենասուրք Երրորդութեան կողմից»:

ԳԼՈՒԽ ԼԳ

ՎՐԹԱՆԵՍ ԶԵՐԹՈՂԻ ՍԱՍԻՆ

Այս Վրթանէսը Հայոց վարդապետ է եղել, դաստիարակուել եւ ուսանել է կարողիկոսարանուն: [Նա] իեզ [էր] եւ իմաստուն, հոգեւոր [էր] ու հանճարեն, երկիւղած [էր] եւ ուղղափառ հաւատի հիմքը, լի [էր] գիտութեամբ եւ ամեն շնորհներով զարդարուած, դաստիարակուած [էր] սրբութեամբ սուրբ Գրիգորի արռողի հովանու ներքոյ, որ տնկուել էր Տիրոջ տանը եւ ծաղկել Աստծոյ գաւիրներում, պտղաբերել [էր] եկեղեցու սաների պատուի ու պէտքերի համար, վարժուել [էր] հոգեւոր ու մարմնաւոր ողջ իմաստութեամբ, զարդարուած [էր] ամենայն առաջինութեամբ, իլու եւ հպատակ [էր] իր վարդապետութեան մէջ, հաճոյ էր Աստծուն եւ ընտրելի մարդկանց համար, հաւատարիմ էր սուրբ Գրիգորի երկնահաճոյ եւ առաքելական սուրբ արտօնին:

Եւ այս ամենայն գովասանքներին [արժանի լինելու] պատճառով Սովուսի մահից յետոյ նրան տեղապահ էին նշանակել մինչեւ Արքահամի ժամանակները, որն ստանձնեց նոյն արտօնը: Եւ Վրաց բաժանման ժամանակ [Վրթանէսը] մեծ ջանքով ու շարշարանքով եւ հոգեւոր հոգացութեամբ Վշտակից եղաւ իրրեն Յիսուս Քրիստոսի բարի զինուոր, զուգակից առաքելական քարոզութեան եւ սուրբ վարդապետներին հաւատար: Յուրտափ Սովուս եպիսկոպոսին ցաւակից լինելով՝ [նա] մշտապէս նամակի միջոցով միշիքարուում էր նրան եւ բազմարի խօսքերով խրատներ էր տախս, եւ ինչը որ հալածուածներին ու համբերողներին երանի էր՝ այն էր գրում նրան նամակում՝ թորերի պատասխանում, որն արեց երեք անգամ: Նաև Կիրոնին գրեց ու երկրի իշխաններին՝ նրա [Սովուսի] վերաբերեալ:

Սա եկաւ եպիսկոպոսների [այս] ժողովին, որտեղ ձեռնարկ էին տալիս Սմբատին եւ առնում. գալով [իրքեւ] Հայոց վարդապետ Շարսաղար¹՝ այս [նոյն] Վրթանէսը ուրիշների հետ միասին նաև երկու կողմերին միաւորեց ձեռնարկով եւ հաստատեց սուրբ հայրերի ու վարդապետների ուղղափառ եւ բարի խոստովանութեամբ՝ միջնորդ ու վկայ ունենալով Սուրբ Երրորդութեամբ: Եւ երկու կողմերը կողեցին, կնքեցին իրենց սրտերով ու մատանիներով ի փառս Սուրբ Երրորդութեան. ամէ²։

¹ Բնագրում՝ «Եկեալ ի ժողով ... Վրթանէս այս Վարդապետ Հայոց Շարսաղար՝ այլով համերձ...», եւ ստացում է, որ Ուխատման անսպասեիօրէն նոյնացնում է Վրթանէսին եւ է դարի այս նամակներում մի քանի անգամ եւ միշտ իշխանների շարքում յիշատակուող Վարդապետ Հայոց Շարսաղար կոչուղ անձին, որն այլուստ անծանօք է:

Եւ կնքեցինք այս ձեռնարկը եւ լրեցինք Դուինի սուրբ եկեղեցու³:

Ես՝ Բասենի եպիսկոպոս Մանասէս՝ իմ առոռակիցներով հանդերձ, որոնց անունները յիշատակուած են վերեւում, եւ Վրացնի մարզպան ու Տերանց գինուոր Սմբատն իր եղբայրներով հանդերձ, Ամենասուրք Երրորդութեան առջեւ [ենք] նախ մեր սրտերով, ապա մեր մարմիններով»:

² Այսինքն՝ Դուինի Սուրբ Գրիգոր մայր տաճարում, որը միւս դրուագներում բազմից կոչում է նաև Սուրբ Կարուղիք:

ԳԼՈՒԽ ԼԵ

ՄԻՒՍ ԱՆԳԱՄԻՐԵՆՑ ԱԱԱԶՆՈՐԴ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԺԱՍՏԴՐՈՒԱԾ ՏԵՂՈՒՄԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ
ՀԱՎԱԶՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Միահաւասար հաւանութեամբ եօթ սահմանուած զլխով եւ գեղեցկածեն դասաւորութեամբ կանոնները դնելուց յետոյ, որ հաստատեցին Սուրբ Հոգու շնորհներով, դարձեալ եւ միևս անզամ Սուրբ Հոգու կողմից հրահրուածները հաւաքուեցին, քանզի Վրկանի մարզպան Սմբատը երկրի իշխանների եւ Հայոց նախարարների հետ հրովարտակ գրեց, որպէսզի հաւաքուեն ժամադրուած տեղը՝ Մեծ Հայրի հոյակապ, ականաւոր ու հոչակատոր մեծ մայրաքաղաք Դուինում: Եւ երբ հրովարտակը զնաց, եկան հաւաքուեցին նրա մօտ լստ զաւաների եկած եպիսկոպոսները, որ առաջ էին եկել եւ ծեռնարկ տուել, եւ ովքեր չէին եկել ու տուել, եւ սրանք ել երկու կողմերից [էին], մի մասը՝ յունական քաֆճից, եւ մի մասը՝ պարսից [քաֆճից]: Որովհետեւ յունաց քաֆճից եկածների մէջ կային հաւատից շեղուածներ, ուստի յետոյ եկան խոստովանութեան եւ գրաւոր կերպով Արքահամի կողմից հաստատուեցին՝ ծեռնարկ տալով:

Արդ՝ երբ եպիսկոպոսները եւ փանացերէցները եկան հաւաքուեցին, [ասեա] իսկ եւ իսկ [երկնային] քարձունքից հայող փանմական կամքով՝ Աստծոյ հրամանով էին հրաիրուել ու հասել իոգենոր հարսանիքի, որտեղ պէտք է իրենց համար հայրապետ ընտրէին նրան, որին ընտրել էր Սուրբ Հոգին: Իսկ երբ եկան հաւաքուեցին առհասարակ քոյլոր՝ եպիսկոպոսները եւ փանացերէցները եւ գլուխական քահանաները, իշխանները եւ շինականները, եւ [այդ] հարսանիքը լցուեց արժանաւորների քազմութեամբ: Բայց Կիրոնը չկանչուեց այդ հարսանիքին, քանզի խոտան համարուեց երկակի կրտսեան համար, որ հասել էին նրան այն ցաւերից, որ նախկինում յրացել էր, որով եւ անօրէնութիւնը ծնեց: Իսկ Աղուանից կաթողիկոսը, որ այն ժամանակ Հայոց կարողիկոսի արքեպիսկոպոսն էր, ինչ-որ հակառակութեան պատճառով չեկաւ ժողովի, որի պատճառի մասին յետոյ կը պատմեմ:

Իսկ նրանք, ովքեր հաւաքուել էին, Սուրբ Հոգու ազդումով[†] ընտրեցին Արքահամին, որ Ռշտունիք զաւարից էր, Ալբարան գիտից, եւ ծեռնադրեցին սուրբ Զատկից յետոյ կիրակի օրը՝ Նաւասարդ ամսի վերջում[‡]: Եւ եպիսկոպոսները նոյնն էին, որոնց անունները յիշատակեցինք իրենց

[†] Յազրման այսինքն՝ ազդումով, յուշումով, ներշնչումով, նաև՝ ատիպումով:

վերաբերող ճառում [զլխում], նաեւ այլ եպիսկոպոսներ ու վանականներ, քահանաներ, իշխաններ ու նախարարներ՝ Վրկանի մարզպան, քարեպաշտ եւ ուղղափառ Սմբատի հրամանով [իաւարուած] Դուին քաղաքում, Սուրբ կաքուուիկում: Նրանց զլխաւորները սրանք էին. Վրբանէս վարդապետը, որ սուրբ Գրիգորի արտօի տեղապահն էր, նաեւ աւանդապահը Մովսէսի մահից [յետոյ] մինչեւ Աքրահամը, որը ստանձնեց արուը, եւ Բատենի եպիսկոպոս Մանասէն, Սինիքի եպիսկոպոս Քրիստափորը, [եւ] այլ եպիսկոպոսներ: [Սրանը] ուրիշների հետ միասին ծեռնադրեցին Արքահամին՝ մեծ քախանձանքով եւ քազում աղաշանքներով հազին հանաձայնեցնելով, թէպէտե ոչ նրա ցանկութեամբ ու յօժարութեամբ, մինչեւ որ անզամ վիճակ ձգեցին ըստ իրենց տպիրութեան: Եւ Աւետարանի վիճակը հետեւեալն էր. «Ես իջայ երկնքից ոչ թէ, [որ] իմ կամքը կատարեմ, այլ նրա կամքը, ով ինձ ուղարկեց»[¶]: Ապա համաձայնուելով եւ իր նորում համոզուելով՝ ծեռնադրուեց Սուրբ Հոգու շնորհներով:

Սա [մի] հեզ, իմաստուն եւ երկիրած, քարի եւ հաւատարիմ, ճշմարիտ հաւատի մէջ հաստատուն, ուղղափառ հաւատի նկատմամբ նախանձախնդիր եւ Տիրոջ գիտութեամբ լցուած մարդ էր: Սա ծեռնադրուեց հռոմեացիների վրայ Սուրբի քագաւորութեան ժամանակներում, արքայից արքայ Ապրուեզ Խոսրովի տասնեօթերորդ տարում եւ Մեծ Հայրում Վրկանի մարզպան Սմբատի տէրութեան օրոք, ինչպէս որ Վրաց քաժաննան վերաբերող մեր [յանձն] առած գործի^{**} առաջին ճառի [զլխի] սկզբում գոեցինք:

Եւ դարձեալ ապա [ժողովականներն] իրենց դրած ուղղափառ խոստովանութեան կանոնները վերստին հաստատեցին՝ ի փառ Աստծոյ: Եւ սրա [Աքրահամի] ժամանակ եղաւ Վրաց քաժանումը Հայոց միարանութիւնից: Եւ նզովեցին Քաղկեդոնի աղանդը, որ նզովում են բոլոր ուղղափառ եկեղեցիները:

ԳԼՈՒԽ ԼԶ

ԱԲՐԱՀԱՄԻ ԶԵՌՆԱՎԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՅԵՏՈՅՑ ԺՈՂՈՎԻ
ԽՈՎԱԶԵՐՆ ՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԵՌՆԱՐԿ-
ԹՂԹՈՎ, ՈՐ ՏՈՒԵՑԻՆ ԱԲՐԱՀԱՄԻՆ

Թողնելով խօսքերի մէջ անկարետրները՝ կը պատմենք ինչ որ անհրաժշտ է եւ այս պահին մեզ համար պիտանի:

[†] Յովի. Դ 34:

Հայոց թագաւորութեան վերանալու ժամանակ մեր երկիրը բաժանուեց հոռոմների ու պարսկների միջև։ Հոռոմների բաժնում նատեցրին Մովսէսին հակարող ուն երկարնակ Յօհանն³¹⁰, որը Հայոց հայրապետների շարքում չհամարակալուեց։ Սա յետոյ նաև Աքրահամին հակարող եղաւ։ Եւ այս եպիսկոպոսները, որոնց մասին նախորդ մի ճառում [գլխում] խօսեցինք, թէ յոյների բաժնից էին եկել³¹¹, նրանց մասին մի փոքրիկ կասկած կար, թէ մի գուցէ Կիլունի անունն ու յիշելու անարժան յիշատակը ժառանգած լինեն, [եւ] մտածեցին ձեռնարկ տալ Հայոց կարողիկոս Աքրահամին։ Եւ դա Հայոց միաբանութեան համար էր։ Քանզի այն ժամանակ այնտեղ ժողովութեցին բոլորը՝ իրաքանչյուր [իր] զաւաներից ու գիտերից, որոնց անուները յիշատակում են իրենց [ստորագրած] այն ձեռնարկում, որը եւ կը ներկայացուի յաջորդ գլխում։

ԳԼՈՒԽ ԼՀ

ՁԵՌՆԱՐԿ, ՈՐ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱԲՐԱՀԱՍԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ ՏՈՒԵՑԻՆ ՆՐԱՆՔ, ՈՎԳԵՐ ԵՆԹԱԿԱՅ ԵՒՆ ՀՈՌՈՄՈՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԾՈՒՐԻԿԻ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԺԱՍՏԱԿ ԵՒ ՊԱՐՄԻՑ ԱՐՔԱՅ ԱՐՔԱՅ ԽՈՍՐՈՎԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ Ը

«Իմ՝ Աքրահամ Հայոց կարողիկոսի, եւ իմ արոռակիցներ՝ Բասենի Սանաւ եպիսկոպոսի, Սիւնեաց Ջրիստափոր եպիսկոպոսի, Ամատունեաց Յովիհաննես եպիսկոպոսի, Գրիգոր Անձեւացեաց եպիսկոպոսի, Գողբի Սիւն եպիսկոպոսի, Ահարոն Սեհնունեաց³¹² եպիսկոպոսի, Ներսէ Բզնունեաց³¹³ եպիսկոպոսի, Յովիհաննիկ Ելոյ³¹⁴ եպիսկոպոսի, Թաղէսու Առնոյ եպիսկոպոսի, եւ մեր իշխանների՝ Վրկանի մարզպան տէր Սմբատի՛ Տերանց զինուրի, Գիգ Դաշտկարինի³¹⁵ եւ Հայոց Շարսադար Վրթանւ վարդապետի, եւ այլ իշխանների եւ ուղղափառ աշխարհականների առջև կանգնելով՝ Սեպիհական զնիլ³¹⁶ եպիսկոպոս Թէոդորոսը, Բագրենանիլ եպիսկոպոս Ստեփաննոսը, Խորխոռունիքի եպիսկոպոս Մովսէսը, Ապահունիքի եպիսկոպոս Ջրիստափորը, Վանանդիլ եպիսկոպոս Ներսէսը, Վանացերէցների հետ միասին, որոնք են հետեւեալները՝ Սուրբ կաթողիկէի վանացերէց Աքրահամը, Սուրբ Հովհաննէի վանացերէց Սամուելը, Սուրբ Յովիհաննու վանքի վանացերէց Բաքեղասը, Օշականի վանացերէց Շաքիստին և Առաքական քարոզութեան գունդը Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի է։

երէց] Խոսրովը, Եղիվարիի [վանացերէց] Յափտեանը, Երեւանի [վանացերէց] Դավիթը, Գառնու [վանացերէց] Խամայէլը, Արամոննի [վանացերէց] Զողիկը, Արտաւազիի [վանացերէց] Յոհաննիկը, Ապարանից [վանացերէց] Որյեակը եւ Աքրահամը, Փարբիի [վանացերէց] Արար, Աղօրի [վանացերէց] Սիրայէլը, Արուճի [վանացերէց] Գրիգորիանը, Ուրիլի³¹⁶ [վանացերէց] Կողմասը, Սիւս Արուճի [վանացերէց] Մայէնը, Արծափիի [վանացերէց] Յոհաննիկը, Դարոյնքի [վանացերէց] Սիմոնը, Բագայրանի [վանացերէց] Սամար, Աւանի [վանացերէց] Յուսանէը, Պատի [վանացերէց] Յուսաննէը, Պողոսնիքի [վանացերէց] Խոլը, եւ այլ վանացերէցներ՝ բահանանների հետ միասին, եկան ներկայացան մեզ, խոստվանեցին [իրենց] բարեպաշտութիւնը՝ ըստ մեր երանելի հայրերի նոյնաձև նզովելով բոլոր հերձուածողներին եւ Արխոսին եւ Սակելոնին եւ Նեստորին եւ Ետիքոսին եւ Զաղկեդրին շար ժողովը եւ Լետնի պիղծ տոմարը։

Եւ աղաշանք արեցին մեր առջեւ, որպէսզի իրենց [ես] խառնենք Ջրիստոսի ծննարիտ հօտի եկեղեցու միաբանութեանը։ Եւ բոլոր միաբանութեամբ ասացին, թէ՝ «Հաւատի այս խոստվանութիւնը եւ սահմանամը, որը մեր հայրերը հաստատեցին, անխախտ կը պահենք Աստծու եւ մեր հոգեւոր հայրերի առջեւ, եւ այս ապաշխարութիւնը, որ մեզ կը տաք, յօժարութեամբ կ'ընդունենք եւ ինքնակամ կը կատարենք, եւ նզովեալների հետ հաղորդակցուելոց բոլորվին կը հեռանամք։ Իսկ եթէ որեւէ մէկի նտրում խարէութիւն լինի՝ բոլ Ամենասուրը Երրորդութիւնից նզովովի հոգով եւ մարմնով»։ Եւ նրանք ստանձնեցին ապաշխարութեան բեռը, ինչ որ [նախատեսում է], իսկ մենք բարձեցինք նրանց՝ ըստ գրուածի։

Այս ձեռնարկը կնքուեց նրանց կողմից մեր բոլորիս ներկայութեամբ [եւ] Երրորդութեան վկայութեամբ, որին յափտեանս փա՛ռք. ամէ՛ն»։

ԳԼՈՒԽ ԼԸ

ԴԱՐՁԵԱԼ ՎՐԹԱՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱՍԻՆ

Կամենում եմ դարձեալ կրկնել Վրթանէս վարդապետի մասին, որ միասին հաւաքուած սուրբ հայրերի այսքան հոգեւոր հանդիսարիններ տեսաւ՝ իրեւ կործանում բոլոր հերձուածողների եւ իրեւ նորագում խոստվանութեան եւ սուրբ հայրերի հաւատի դաւանութեան, որը [հաստատուեց] Ներկայում, Կոստանդնուպոլիսում, Եփեսոսում, եւ նրանց աւանդները դարձեալ վերստին մեզ աւանդեցին ու հաստատեցին միաբա-

նական ծեռնարկ-գրի միջոցով, որ տաեցին միմնանց՝ սիրած եւ մատանին դաշն ու կնքը ղեկով, վկայ եւ դատախազ [Խովիչ] ունենալով Սուրբ Երրորդութեանը: Միաժամանակ [տեսաւ Վրթանէսը] նաև սուրբ Գրիգորի արտօփ նորոգումը, որի տեղապահն ու ասանդապահն էր ինքը, շափագանց ուրախացաւ եւ գրեացաւ Աստծոց, [որի կողմից] իբրեւ արդար եւ երախտաւոր [գնահատուեց], որպիսին եւ էր իսկապէս, ուրի կանգնեց, օրինեց Աստծուն այրպիսի բարիքների տուսողին, նրա եւտ [նաև] Աբրահամ հայրապետին, որը սուրբ Գրիգորի արտօփ նորոգիչը եղաւ, նոյնպէս նաև սուրբ հայրերի սուրբ ժողովին, որովհետեւ համազոյց ծայնակցեցին նրանց [նախնի տուրք հայրերին], մանաւանդ թէ՝ նրանց նման եւ հաւատար, որովհետեւ նրանց աւանդածը դարձեալ վերստին աւանդեցին հայեցի¹ եւ հաստատեցին ի փառ Աստծոյ:

Արդ նա [Վրթանէսն] օրինեց նրանց եւ օրինուեց նրանց կողմից որպէս ժողովոյի բարեկամ ու սիրելի: Ապա այնուեւտեւ բերեց այն աւանդը, որ նրան վստահուել էր Հայոց կարողիկոս Մովսէսի կողմից իր մահուան ժամին. նախ [բերեց] Աստծոյ փրկական ու կենսակիր նշանը [խաչը], ապա սուրբ առաքեալների նշխարները, որ բերել էր սուրբ Գրիգորը Հոմից, [եւ] որոնք տրուել էին նրան բարեպաշտ Կոստանդիանոսի կողմից: Եւ սրանից յետոյ [բերեց] արոռն ու զաւազանը, որ պատուվ պահել էր ու պաշտել, եւ մնացեալ բոլոր սրբութեան սպասքները՝ սկիենները, սուրբ սեղանի զգեստները, վարագոյնները, խնկամանները, բուրգառները, [բռժութագարլ] քաղցները, կարողիկոսի մետաքսեայ [եւ] ակներով, ոսկով, մարգարիտներով զարդարուած վակասը [ուսանոց], եւ քահանաների, սարկաւաների այլ հագնելիքներն ու արկանելիքները, բեկեզները, ծիրանիներ, ինչպէս որ մարգարէն է քուարկելով կարգում՝ եզրածիրանին, միջնածիրանին², եւ այն, որ սրանցից առաջ եւ յետոյ են յիշատակուում: Նաև պէսպէս զարդերից, դիմակներից, կերպասներից, ծիրանիներից գոյնազոյն, երփներանգ, երանգ-երանգ, ծաղկազարդ գոյներով զեղեցկորդն գործուած շքեղ պատմուածներ, նաև մեր բարեպաշտ Տրդատ բազաւորի պատուաւոր զգեստը, որ նա տուել էր Տիրոց տանը իբրեւ սրբութեան սպասք, որը մնմք տեսել ենք մեր աշքերով:

Եւ ապա սրանցից յետոյ բերեց բազմաթի, զանազան ու տեսակ-տեսակ, եկեղեցական ու վարդապետական զրբեր, [եւ] նաև այլ աշխարհիկ իբրեւ բերելով, ինչքան որ կար՝ գրով [ցուցակով] ներկայացրեց: Եւ օրինուեց հայրապետի կողմից, եւ բոլորի կողմից երախտիք ու շնորհակա-

¹ Ամստանէսի օգտագործած եկորոյրով Հայաստանեայց:

² Հմմտ. Ես. Գ. 22:

լորիւն շնորհունեց: Որովհետեւ այդքան տարիներ առանց առաջնորդի անցնելուց յետոյ՝ նա իր տեղապահութիւնը պակաս ու թերի չէր թողել, այլ լի ու կատարեալ դատով ու դատաստանով կիրառել էր իրաւունքը [օրենքը]: Եւ ամեն ժամանակ արդարութիւն [էր] գործել, եւ դարձեալ իրաւունք պահանջել ու փրկել զիկուածներին, որբի դատին կանգնել եւ այրուն իրաւունք տուել³՝ լստ մարգարէի: Եւ դարձեալ ընդունելու [էր] որբերին ու այրիներին եւ անօրինների ճանապարհը խափանել՝ լստ մարգարէի⁴, նաև աղքատասիրութեամբ, եղբայրակիրութեամբ եւ օտարասիրութեամբ զարդարել իրեն, եւ աստուածային շնորհով շքեղացել ու պատուով յարգուել՝ ի պատի եւ փառս իր անուան:

ԳԼՈՒԽ ԼԹ

ՍՈՒՐԲ ԻՒՂԻՄ [ՄԵՌՈՒՆԻ] ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ, ՈՐ
ԱԲՐԱՀԱՄՄԱՅՐԱՊԵՏԸ ԻՐ ՍՈՏ ՀԱՎԱՋՈՒԱԾ
ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ ՕՐՀՆԵՑ

Արդ՝ երբ աւարտուեցին արդարութեան եւ իրաւունքի կարգաւորման այն գործերը, որ արուեցին նրանց կողմից, այս եւս իրաւացի համարեցին [նրանք]՝ խնդրելու իրենց հայրապետից օրինել եւ իրենց տալ օծման իւղը, այսինքն՝ մեռոնը, որով օծում ու լուսաւորում են բոլոր ուղղափառ հաւատացեալները սուրբ աւազանի միջոցով՝ ջրի եւ Հոգու գործակցութեամբ: Որովհետեւ Մովսէսի մահուանից յետոյ այլևս օծման իւղ չէր օրինուել իսկ նրա [Մովսէսի] կողմից օրինուածը արոռի տեղապահ Վրթանէս [արդէն] բաժանել էր: Եւ այդ եւս [մեռոնի պարագաները] նախապատրաստուած ու հաւաքուած պատրաստի ունեին, որովհետեւ եպիսկոպոսների առաջին ժողովից մինչեւ երբորդ⁵ ժողովն այդքան ամիսների միջակայքում անցած օրերին Վրթանէսը եկեղեցու սպասաւորների հետ նախապատրաստել էր օծման իւղը, ինչպէս որ իւղագրծները սովորութիւն ունեն հմտութեամբ պատրաստել:

Այնուհետեւ սուրբ հայրերը հայրապետից խնդրեցին այդ հոգեւոր գործն էլ գլուխ բերել եւ միասին աւարտին հասցնել, քանի դեռ չին ցրուել: Ապա այնուհետեւ սաղմոսներով ու օրինաբանութեամբ եւ լստ օրուայ նշանակութեան հոգեւոր երգերով ու այդ խորհուրդին պատշաճ ընթեր-

³ Բ Օրենք Ժ 18:

⁴ Սաղմ. ԽԵ 9:

⁵ Այսպէս բնագրում: Սակայն բերես պէտք է լիներ՝ երկրորդ:

ցումներով սկսելով գիշերային ժամերգութիւնը՝ ողջ գիշերն անցկացրեցին Աստծոն [ուղղուած] աղօքներով, իսկ ողջ ցերեկը տքնեցին, մինչեւ որ աւարտուեց ամբողջ խորհուրդը՝ ի փառ Աստծոյ: Ապա միս օրը հայրապետն ամենքին բաժանեց օրինութեան խղը, և օրինելով նրանց ու օրինուելով նրանց կողմից՝ իրաժշտի ողջոյն տուեցին միմնանց և խնդրութեամբ ու խաղաղութեամբ ցրտեցին՝ խրաքանչիրն իր վիճակը:

ԳԼՈՒԽ Խ

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՉ Է ՊԱՏՄՈՒՄ ՄՐԱՍԻՑ ՅԵՏՈՅ

Արդ, այսպէս աւարտին հասցեցինք այս հոգեւոր հանդիսութեան մասին շարադրելը. որ վերաբերում էր մեր հայրապետ և հոգեւոր հովուապետ տէր Աբրահամին և մեր ուղղափառ հաւատի հաստատութեանն ու [Հայաստանի] երկու քաֆինների՝ յունականի ու պարսկականի, միաբանութեանը: Այսուհետեւ նորից կը վերադառնանք մեր խօսքի շարադրանքին, որ վերաբերում [է] Մովսէսին ու Կիրոնին: Որովհետեւ Մովսէսը՝ Գաղցենքի այս եախսկոպոսը, չի յիշատակում «Գիլք թրդցում», թէ նա եկել է այն ժողովին, որը Աբրահամի ձեռնադրութեան համար եղաւ: Թէալիսների տեղում քազմաքին անգամ տեղեկացանք, թէ ասում են, որ նրան հիւանդրին էր պատահել:

Բայց յետոյ [նա] Աբրահամին [նամակ] է գրում իմաց տալով նրան իր նեղութիւնների ու հալածանքների մասին, որ պատճառում էր Կիրոնը, միաժամանակ նաև Յուրտակի աշխարհի մասին, նաև աղաջանք՝ Կիրոնի վերաբերեալ, իսկ մնացեալ տեղեկութիւնն, ասում է, կարելի է Վրքանէսից լսել:

ԳԼՈՒԽ ԽԱ

ՑՈՒՐՏԱՒԻ ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՍԱԿԸ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱԲՐԱՀԱՄԻՆ

«Աբրասէր տէր Աբրահամ Հայոց կարողիկոսին՝ անարժան Մովսէսից քաղում խոնարհութիւններով երկրպագութիւն, որի հետ է՝ առաւել անք սրութեան ողջութեան հայցում:

Լսեցի քո հայրապետութեան շքեղութեամբ տէր Գրիգորի սուրբ արքոի նորոգութեան մասին, և քաղում խոնարհամբ լցուեց իմ տառապած անձը, որովհետեւ վասրուց ի վեր փափագելով սպասում էի. որ այդ լսեմ,

մանաւանդ երբ լսեցինք ծեր աստուածասէր առաքինութեան մասին, որը մանկութիւնից [էր], որի համար էլ Աստուած լնտրեց և մեր երկրին առաջնորդ եւ ուսուցիչ պարգեւեց նեղեալ ժամանակ: Չատ հրճուեցինք եւ ուրախացանք, քանզի ահա արդէն իսկ Աստուած քո առիթով օրինեց Հայոց աշխարհը, և երկրիս ամեն քարի սկզբանութիւն շքեղացաւ քազարութեամբ պատիւներով ու գորունակութեամբ: Նաեւ նորից վերադրեց երկրիս երկու բաժինների սուրբ եկեղեցու շինութեան, նորոգութեան սկիզբը, հոգեւոր ու մարմնաւոր պառակտումից [դէախ] կրկին միաւորում: Եւ ինչպէս որ քարի հիմքը դրուեց սրբութեան միջոցով, յուսով ենք, որ Քրիստոս Աստծոյ ողորմութեամբ աւարտը եւս լաւ կը լինի:

Արդ՝¹⁰ շտապեցինք ծեր սրբութեանը իմացնել մեր ցաւը, ինչպէս հիւանդները, որ իրենց վերքերը ցոյց են տալիս հմտութիշկներին եւ նրանցից ապարհութիւն են խնդրում: Մենք էլ աղաջում ենք, որ դրս օգնելու Քրիստոսի եկեղեցուն: Կիրոնը, որ ծեր հաւատակիցն էր ու աշակերտը եւ այժմ հիւանդացել է նեղուածութիւնից, նախ աղօքներուն Աստծուց եւ ապա ծեր անխոնց վարդապետութեամբ եւ փառաւորուած իշխանների օգնութեամբ ջանանք ժողովուին ժխտութիւն ու ապատամբին վերադրածնել [ճշշտ] ուղղութեան եւ բերել մի հոգուի նոյն գալիքը: Եւ շտապենք այսուհետեւ [դէախ այն], ինչն ընդհանուրի շահն է, դէախ շատերի չափազանց քարծրացանան՝ ըստ երանելի Մովսէսի եւ սուրբ Պողոսի օրինակների: Նրանցից մէկն աղաջում էր իրայինների՝ քողութեան չխասնելու դէպրում իրեն եւս կենաց դպրութիւնից տարագրել, իսկ միսմ ասում էր, թէ՝ «Ես ինքս էլ ուխտով խնդրում էի Քրիստոսից՝ ինձ նզուել իմ մարմնական եղբայրների ու ազգակիցների համար»: Եւ ահա նրանց առաջինութիւնն աշխարհի բոլոր ազգերի մէջ քարոզի խօսքով տարածում է պայծառացած: Որովհետեւ նրանց գործը օրինակ ընդունելով եւ նրանց հետեւող [լինելով]՝ կը լինի [այնպէս, որ] դուք եւս կը պարծենաք Քրիստոսով եւ կ'ասէք, թէ Տիրաջից ինձ տրուեցին այս շնորհները՝ Վիրեջից մինչեւ Աղուանից աշխարհ քարոզելու Քրիստոսի փառքի անքննելի մեծութիւնը եւ այսքան ազգերի շահելու եւ Քրիստոսին պատարագելու: Որից յետոյ էլ կը լսուի այն հրաւիրող խօսքը, թէ՝ «Բարի եւ հաւատարին մշակ, թէս հետ միասին սատարու այս քարեկամներով եւ փրկուած գնուվ եկ մտի՛ր քո Տիրոջ խնջոյքին քո նախնիների եւ իմ անունը սիրողների հետո»:

Իսկ երէ մեր անարժանութիւնից էք հարցնում՝ Վրքանէս Զերքողի տեղիկութեամբ կ'իմանաք: Եւ իմ տառապեալ անձը եւ մոլորուած երկրի քո ծեր սրբութեանը յանձնուած լինենք: Եւ դուք ողջ եղէք, մեր տէք»:

ԳԼՈՒԽ Խթ

ՅՈՒՐՏՍԱԻԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՎՍԵՍԻ ՆԱՍԱԿԻ
ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԵԿՈՍ ԱԲՐԱՀԱՄԻ ԿՈՂՄԻՑ

«Սրբաւր տէր Սովուս եպիսկոպոսին՝ թէպէտեւ ոչ իր կամքով Հայոց կարողիկոս Աբրահամից՝ Տիրոջով ողջո՞յն:

Ձեր պրութեան ողջունագիրը տեսայ, որ իմ էր Աստծոյ ողորմութեան մասին բազմաթիւ գոհարանութիւններով եւ՝ “արդինաշատ օրինութեամբ մեր տկարութեան հասցէին՝ նաեւ արժանաւոր անուաններով ինձ՝ անձնունախս, որի համար եւ բողոքում ենք, որ բոլորի պարզեւարաշչով [Աստուած] ձեր սրբութեանը շնորհահատոյց լինի: Իսկ [թէ ինչպէս] այս սովորակի եւ ծանր բեռները բարձուեցին [ինձ], որի ակնկալիքը չունէի, անիմանալի է ինձ համար, [թէ] ինչպէս ընդունեցի, եւ կամ թէ բազմութեան կամքը՝ միաբանութեան զալու: Այս [բոլորն] ինձ ոչ մի տեղից չի [տրուած], բացի միայն Աստծոյ ողորմութիւնից եւ ձեր սրբաւր աղօքքներից:»

Արդ՝ աղաշում եմ ձեր սրբութեանը, որ շղաղարէք աղաշանքներ մատուցել ամենազօր Աստծուն, որ ինձ ուժ ու կարողութիւն տայ՝ լստ իր հանութեան աւելի կատարեալ դարձնելու նրա տնօրինութիւնը մեր երկրու, որպէսզի նմանապէս եւ Վրաց ու Աղուանից երկրներում պայծառանայ Յիսոս Քրիստոսի ճշմարիտ հաւատը մեր՝ նուաստիս միջոցով: Եւ կամենում եմ օրինուել ձեր սրբութեան կողմից, ուստի մի՛ յապալիք սուրբ Զատկին այստեղ գալու, որպէսզի շատերին ուրախութիւն լինի: Նաեւ Կիրոնի ու վրացիների հոգեւոր գործն է առջնուում. քանի դեռ տէր Սմբատն այստեղ է, շտապում ենք որեւէ ձեւով նախ դա [էլ] աւարտին հասցնել մեր իրամանով ու գրով, մեր Քրիստոս Աստծոյ շնորհի: Ողջ եղի՛ր:

ԳԼՈՒԽ Խզ

ԹԵ ԻՆՉՈՒ ՅՈՒՐՏՍԱԻԻ ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍը ՉԵԿԱՐ¹⁹
ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԺՈՂՈՎԻՆ, ՈՐ ԱԲՐԱՀԱՄԻ
ՉԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ [ԵՐ]

Այս առաջին նամակը, որ Աբրահամին գրուեց Յուրտավի Սովուս եպիսկոպոսի կողմից, ուր ամիս անցնելուց յետոյ գրուեց, որովհետեւ ասում են, [որ] նա այն ժամանակ մերձիմահ իիւանդացել էր, եւ այդ պատ՛թնագրում զի է, սակայն «Գիրք բորոցում» եւ:

ճառով ժողովի շկարողացաւ զալ, նաեւ ոչ իսկ գրաւոր իմաց տալ կարողացաւ իր ցալի ու հալածանքների մասին Կիրոնի կողմից: [Նա] առաջ ամբաղջութեամբ Վատահում էր Վրանէսին եւ յոյս ուներ, որ նա սւտար կը լինի, քանի որ իր պատասխանի միջոցով յայտնել էր նրան, թէ մօս օրեր կանենում են կարողիկոս ծեռնարել, [եւ թէ] քո հոգով նա կը հոգայ, իսկ մենք կ'օգնենք մինչեւ գործի աւարտը:

Իսկ երբ Աբրահամը Մովսէսի նամակը կարդաց եւ Կիրոնի ու Վրացիների մասին գրածին փոքր ինչ տեղեկացաւ, այդ ժամանակ Վրանէսը սկսեց ամեն ինչ գրաւոր ու բանաւոր պատմել Կիրոնի կողմից արուածների մասին՝ կարողիկոսին վերահասու դարձնելով նախ՝ Կիրոնին Մովսէսի ուղարկած այն նամակի մասին, որ վերաբերամ էր խոտիկին, եւ ապա Կիրոնի կողմից Մովսէս եպիսկոպոսին [պատճառած] նեղութիւնների ու հալածանքների մասին, եւ դրանից յետոյ՝ այն նամակների, որ ինքը գրեց Կիրոնին, [Վրաց] երկրի իշխաններին ու Պետրոս եպիսկոպոսին, եւ պատասխան շտանալու [մասին], նաեւ՝ Կիրոնի հակառակ պատասխանների, որ ոչ գրաւոր, բայց շատ խօսքելով ու սպառնալիքներով տուել էր նա, նաեւ՝ ազատների կարծ պատասխանների [մասին], որ կիսատ նամակով գրաւոր գրել էին Վրանէսին, ու նաեւ՝ արքայի [կայսեր] հասցէին Կիրոնի [ինչեցքած] մեծարանքների եւ պարծենալու [մասին], եւ Երուսաղէմի հայրապետով սպառնալիքների եւ մնացեալ ամեն բանի մասին՝ մի առ մի:

Այս ամենը Վրանէս Քերթողից լսելով՝ Աբրահամ կարողիկոսը խիստ զարմացաւ եւ իր սրտի խորքում մտածում ու խորիում էր, թէ ինչ ձեւով շահի Կիրոնին եւ այն երկիրը, կամ ինչ եղանակով յաղթի գոռող վայրագին: Ապա Մովսէս եպիսկոպոսին ուղղած իր պատասխանում գրեց, որ արագ ու անյապաղ սուրբ Զատկին գայ այստեղ, որպէսզի՝ շատերն, ասում էր, ուրախ լինեն, նաեւ հոգեւոր գործ կայ անելու: Եւ դարձեալ, թէ՝ «Տէր Սմբատն այստեղ է, եւ շտապում ենք որեւէ ձեւով գործերը գրուի բերել»:

Եւ [այն], որ գրեց սուրբ Զատկին գալու [մասին], դա Աբրահամի երկրորդ Զատիկն էր՝ կարողիկոսութեան արքուն նրա հասնելուց [յետոյ]: Իսկ այն, ինչ Սմբատի մասին էր գրում, թէ այստեղ է, թում է, թէ [Սմբատը] պատրաստում էր զնալու Վրկանայ երկիրը, որտեղ մարզպանական իշխանութիւն ուներ:

Արդ՝ սա առաջին նամակն [էր, որ] Մովսէսը Հայոց կարողիկոս Աբրահամին գրեց մեծ բախանձանքով, որպէսզի սա օգնի իրեն ամեն բանում, ինչպէս ասուեց: [Գրեց] նաեւ Կիրոնի վերաբերեալ բազմաթիւ մերժուանքներ, եւ իր ակնկալութիւնը ապագայի յոյսի, որ ուներ: Եւ հոգում էր

առաջիկայ անելիքի մասին, որպեսզի գուցէ կարողանայ դէպքերի դէմ հնար գտնել: Որովհետեւ պրտի բազում տառապանքից ու նեղութիւններից տարակուսանքի մէջ մտահոգուած էր՝ մէկ՝ իր հալածանքների պատճառով, չնայած եւ Աստծու համար [էր դա], իսկ միւսը՝ իր վիճակի [թեմի] անտերունչ լինելու համար, որ չիմի թէ նրանց այլագունակ քան պատահի (ինչպէս որ Կիւրոնին եղաւ), որն Աստծոյ կամքից դրս լինի: Իսկ երրորդը՝ Կիւրոնի կորստի ու ամդարձութեան պատճառով:

[Ուտի] եւ հայցում է մեծ աղաշանքով, որ [Արրահամն] իրեն սասարի գրով [նամակով] եւ օգնական լինի աղօթքներով, իսկ Կիւրոնին գրածները [մի] արի մարդու միջոցով ուղարկի, որպեսզի քանի դեռ խայտ չի գործուել [Կիւրոնը], կարողանայ կանգնեցնել [նրան]: Այլև [Խայցում է] իր եւ իր երկրի համար հոգալ՝ երկուսի նեղութիւնն [էլ] ներկայացներով:

Ապա այնուհետեւ Արրահամը սկսում է գրել Կիւրոնին եւ ամեն ինչ գրով յիշեցնում նրան իրաւացի պատգամի միջոցով՝ այսպիսի օրինակով.

ԳԼՈՒԽ ԽԴ

**ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՍՍԱԾ ՎՐԱՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒՐՈՆԻՆ՝ ՊԵՏՐՈՍ ԵՊԻՄԿՈՊՈՍԻ ԵՒ
ԱՅԼ ԱԶԱՏՍԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ, ԵՊԻՄԿՈՊՈՍԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ**

«Վրաց կարողիկոս սրբաւէր տէր Կիւրոնին եւ քո այլ արռողակից եպիսկոպոսներին՝ Հայոց կարողիկոս Արրահամից եւ այլ եպիսկոպոսներից Տիրոջով ողջո՞յն:

Նախկինում մեր երանելի հայրապետ Մովսէսը ծեզ մեղադրութիւն գրեց՝ այնպիսին երի հետ ծեր հաղորդակցուելու պատճառով, որ պէտք չէր [խաղորդուել]: Իսկ դուք գրաւոր եւ պատգամով յանձն էիք առել մեր երկրի միարանական հաւատի հաղորդակցութիւնից չհեռանալ: Արդ՝ այժմ աւելի շարք եւ ծանրը մեզ քամին ընկաւ լսել: Քանզի երկու երկրների հաւատի միասնութիւնը եւ փոխիմիքընկարութիւնը Ցուրտափի Եկեղեցին էր անխախտ միջնորդութեամբ պահում, ուստի եւ մեր աշխարհիկ խնդրութիւնը եւ հոգեւոր հաղորդութիւնը ցնծալից ուրախութեամբ էին կատարում՝ այստեղից ծեր Սծիփքայի³²⁰ Խաչը գալով³²¹, իսկ այդտեղից՝ [մեր] Սուրբ կարուղիկէն: Այժմ Ցուրտափի Եկեղեցու եպիսկոպոսը պահածութեան հաւատը եւ սուրբ Շուշանիկի հաստատած հայրենի ծիսա-

կարգը»³²², [որն], ինչպէս լսում եմ, խափանել էր:

Սեզ մահու չափ եւ էլ աւելի ծանր երեւաց [ծեր] այդ գործը: Որովհետեւ թէպէտեւ արքայից արքայ Կատախի տարիներին քննութեան հարց եղա մեր եւ հոռմէացիների երկրի միջեւ, որոնք ընդունել էին Քաղկերմի ժողովս ու Լեռնի տոմարը³²³, [սակայն] մեր եւ ծեր երկրների վարդապետներն ու իշխանները հեռացան նրանց հետ հաղորդակցութերուց, եւ երկուսիս միարանութեամբ ու [նաև] գրով³⁴ պահում է [դա] մեր միջեւ մինչեւ այժմ: Արդ՝ այժմ դուք չպէտք է երկու երկրներիս միջեւ օտարութիւն գցէք եւ հեռացնէք մարմնաւոր սէրն ու խնամիութիւնը եւ հոգեւոր հաղորդութիւնը, որպեսզի ոչ ոք չգայ աղօթելու այստեղից ծեր Սուրբ Խաչը եւ այդտեղից՝ [մեր] Սուրբ կարուղիկէն: Քանզի եթէ զինուորականներից մէկը դառնար այդպիսի պառակտման ու չար խոռվութեան պատճառ, [ապա] դուք [անձամբ] պէտք է խնամք տանէիք եւ պատճառ դառնայիք խաղաղութեան, իսկ եթէ դու ես պատճառ դառնում միմեանցից մեր օտարանաւոն, [էլ] ո՞վ կը կարողանայ տանել այդպիսի աղետով:

Կամենում էինք եպիսկոպոսներ ու վարդապետներ ուղարկել ծեզ մօս եւ ճանաչեցնել ծեզ Քաղկերմի աղանդի ու Լեռնի տոմարի վճասակարութիւնը եւ նրանց պիտի կրոնն ու անսուրբ վարքը, որ [ծեր] աշխարհ մուտք գործեցին եւ դրա պատճառով հալածուեց սրբաւէր Մովսէս եպիսկոպոսը: Բայց առայժմ պատշաճ ու հաճոյ համարեցինք՝ նախ Պետրոս եպիսկոպոսի ու պատուական ազատներիդ միջոցով քեզնից նամակներով պատասխան ստանալ, թէ կա՝ [արդեօք] ինչ-որ քան, որ մեզ հաւատի չի ցոյց տրուել: Որովհետեւ ի՞նչ [քան] է օտար արքայից արքայի թագաւորութեան ներքոյ գտնուողը ծառաների հետ սէր ու միարանութիւն անել, իսկ հարազատներիմ³²⁴ հեռացնել. դա շատ ծանր է:

Ողջ եղի՛ր Տիրոջով: Եւ նամակի պատասխանը եւ ծեր ողջութիւնը թող մենք լսենք՝ բայտ Աստծոյ հաճոյութեան, որ առիթն է միարանութեան»:

ԳԼՈՒԽ ԽԵ

**ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒՐՈՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԷՐ ԱՔՐԱՀԱՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՍՍԱԾԻՆ**

«Իմ սրբաւէր տէր Արրահամին՝ Հայոց կարողիկոսին, եւ քո բոլոր առողակից եպիսկոպոսներին՝ Վրաց կարողիկոս Կիւրոնից խնամքի երկր-

³²² Այսինքն՝ գրաւոր դաշնագրով:

պագործին եւ սիրով ողջո՞յն. նաեւ իմ արտօնակից բոլոր եպիսկոպոսներից՝ կրկնակի խոնարհութեամբ ողջոյն ու օրինութիւն ձեզ մեր Սուրբ Խաչից: Զեր գրած նամակին վերահասու եղայ եւ երանելի սուրբ Գրիգորի արորը ժառանգելուն [ձեր] իմ տիրոջ արժանի լինելու առիրով եւ ձեր ողջորեան համար մեծապէս ուրախացայ եւ Աստծուց գոհ եղայ:

Իսկ որ գրուած էր, թէ՝ «Նախկինում մեր Մովսէս կաթողիկոսը ձեզ մեղադրութիւն գրեց՝ այնպիսին ենթ ձեր հաղորդակցուելու պատճառով, որոնց հետ բոյլատրելի չէր [խաղորդուելու], [ապա իրօք նա] գրեց մեզ խոժիկի մասին, բայց ոչ թէ հաւատի ինչ-որ խնդիրների մասին: Ես իմ եպիսկոպոսների եւ երկրիս երեւելիների հետ խորհրդակցեցի [եւ] օրինական համարեցի լին չնետել նրանց, ովքեր վերադառնում են զոջման եւ ապաշխարութեան եւ հերծուածից դժափ հաւատը: Բայց երբ իմացանք նրանց դարձլ դէալի իրենց չար տիղմը, նզովեցինք եւ հեռացրինք եկեղեցուց, և այժմ նրանց ոչ որ չի յանդառում ողջոյն տալ:

Իսկ որ գրել էիր, թէ Ցուրտավի եկեղեցին հաստատուած է երկու երկրներիս միջեւ հոգեւոր խաղաղութեան եւ մարմնաւոր սիրոյ համար, եւ [թէ] այժմ ուղղափառութեան պատճառով եպիսկոպոսը հալածուած է, իսկ մենք փոխել ենք հայրենի ծիսակարգը, [ապա իրականում] ծիսակարգը չի փոխուած. բայց ով որ եպիսկոպոս եղաւ, [նա] Վրացի ուսումը եւ¹² գիտ եւ երկու լեզուով է արարութիւնը¹² կատարում: Իսկ ինչ վերաբրում է Ցուրտավի եպիսկոպոսի հալածմանը, [ապա] իր գործերն են ցոյց տալիս՝ ուղղափառ հաւատի համա՞ր է զնացել, թէ՝ այլ բանի պատճառը: Ես նրան չեմ հալածել, այլ կանչել եմ ինձ մօտ՝ խրատ տալու, իսկ նա եկեղեցին բաղեց եւ զիշերով գաղտնի գնաց:

Իսկ այն, որ գրուած էր հաւատի, ժողովի եւ տոմարի վերաբերեալ, եւ դարձեալ, թէ՝ «Օտար արքայից արքայի ծառաների հետ միաբանուել, իսկ հարազատներին հեռացնել», [ապա] մեր եւ ձեր հայրերը արքայից արքայի իշխանութեան տակ էին եւ Երուսաղեմի հաւատն ունեին, եւ արքայից արքայ է տիրում հոռոմներին ու Արեաց երկրին», եւ սա այնպէս [է ասում], կարծես թէ նրանով պարծենում է: Ապա այդ ժամանակ մի փոքր իմացնում է նրան ծածկած շարութեան մասին, որ այս խօսքերի մէջ է:

Իսկ որ գրել էիր, թէ կարող էինք¹³ եպիսկոպոսներ ու վարդապետներ ուղարկել, որ զային սովորեցնեին, [ապա] եթէ կամենում էր, ուղարկեցէ՛ք թող զան: Ես էի պարտաւոր զա, աղօթել ձեր սուրբ եկեղեցիներում եւ ձեր կողմից օրինուել. կամ իմ աշակերտներին ուղարկել, որ ձեր արքութեան ողջոյնը մեզ բերէին: Բայց չար ժամանակի եւ երկրիս կարիքների պատ-

ճառով խափանեցինք [դա]:

Ողջ եղէք, իմ տէ՞ր՝ Քրիստոս Աստծով»:

ԳԼՈՒԽ ԽԶ

ԱՅՆ ՍԱՍԻՆ ԻՆՉ ՈՐ ԵՂԱՌ ԱԲՐԱՀԱՄԻ ՈՒ ԿԻՒՐՈՆԻ ՆԱՍԿՆԵՐԻՑ ՅԵՏՈՅՑ

Հայոց կաթողիկոս տէր Արքահամը տեսաւ Կիւրոնից [եկած] պատասխան նամակը եւ սրա մէջ իմացաւ Կիւրոնի նենգութիւնը, որ դեռեւ իր շար խմորը ծածկել էր իր մէջ, այսինքն՝ կրէական նենգութիւնը (որ ունէր Քաղկեդոնի անօրէն ժողովից), որը քիշ-քիշ յապաղումով շարից գողացուց, որպէս նրա բարձն է, կամ թէ փոքր-փոքր եղաւ նրա կուրութիւնը, ինչպէս այն ժամանակ իսրայէլցիներինը: Որովհետեւ երկարաւուել հիւանդի նման իւնց սկզբում իր մէջ իր ցաւն է ցոյց տալիս, որը մահիճն էր զցեն, տեսնողներին կարծել է տալիս, թէ մերձինան է: Նմանապէս եւ սա, որովհետեւ տալիս էր այն պատասխանը, ինչ որ Մովսէսի օրօք տալիս էր Հայոց կաթողիկոսին. «Ես, ասում է, իմ խորհրդակիցների հետ միասին օրինական համարեցի շարգելել նրանց, ովքեր ապաշխարութեան են զալիս»: Եւ դարձեալ, թէ՝ «Ցուրտավի եպիսկոպոսի հալածման պատճառի մասին՝ իր գործերն են [իրեն] հալածել»: Եւ դարձեալ, թէ՝ «Սեր եւ ձեր հայրերը արքայից արքայի իշխանութեան [ներքոյ] էին եւ Երուսաղեմի հաւատն ունեին, եւ արքայից արքայ է տիրում հոռոմներին ու Արեաց երկրին», եւ սա այնպէս [է ասում], կարծես թէ նրանով պարծենում է: Ապա այդ ժամանակ մի փոքր իմացնում է նրան ծածկած շարութեան մասին, որ այս խօսքերի մէջ է:

Իր երկրորդ նամակում դարձեալ գրում է նրան՝ մի փոքր յանդիմանական խօսքեր ի յայտ թերեւով: «Այն, ասում է, ինչ ընդուն ու հակառակ էիր գոնի, իմացանք, բայց նենք հակառակ պատասխանը կը քողոններ, որովհետեւ Աստուած մեզ կոչեց խաղաղութեան, իսկ մենք մեր անձի օգուտը չենք որոնում, այլ ընդիմանուրի, որպէսզի ապրեն: Իսկ դուք մի՝ պարծենար Երուսաղեմի պանծալի անունով, որից աստուածային փառքը կուրուպտեցին և բազմաթիւ հերձուածներ սերմանեցին ու եկեղեցի մտցրեցին, որն այժմ [եւ] դուք ունեք եւ [դրանով] պարծենում էք: Արդ՝ մի՝ պարծենար այն հաւատով, որ դուեց Երուսաղեմուն, եւ մեզ [ինս] միարան այն պահպանած լինելով, որովհետեւ գիտենք, որ միարան էինք, բայց այժմ

միայն մենք ունենք Երուսաղէմի [հաւատը], իսկ դուք, ուրիշները եւ Երուսաղէմի բնակիչները փոխուեցիք, իսկ մենք՝ ո՞չ:

Բայց նա թշպէտել այսպիսով եւ այսպիսի խօսքերով յանդիմանուեց, սակայն չխրատուեց, որովհետեւ անիրաւ էր եւ ապատախանելու մէջ պատրաստ, ծոյլ [էր] բարի գործերի [համար] եւ պատրաստակամ՝ գործելու չարիքը, որն ունէր: Եւ ոչ մէկի համար օգտակար բան չէր մտածում, ոչ իրեն, եւ ո՞չ էլ ընկերոջ, քանզի անզէտ էր Աստծոյ արդարութեանը, [միայն] իրենն էր փորձում հաստատել: Չանզի ո՞չ [Սուրբ] Գիյորը գիտէր, ո՞չ էլ Աստծոյ զօրութիւնը, որովհետեւ Աստուածաշունչ գրքերը մեզ մշտապիս պատմում են մեր եւ մեր ընկերոջ պէտքական օգուտի մասին խորհեն, խաղաղութեան հետեւից գնալ եւ ծոյլ լինել չարիքի նկատմամբ, քանի որ միեւնոյն բանն է Վատրարների նկատմամբ չար պատրաստակամութիւնը եւ լաւագոյնների նկատմամբ ծովանալը: Արդ՝ այսպիսի խրատներն ու յանդիմանութիւնները, եւ աւելի քան սա, զրուեցին նրան Հայոց կարողիկոս Սովուսի եւ Վրբանէս Զերբողի կողմից, բայց նրանցից ոչ ոք չկարողաց նրան փրկել, որովհետեւ քարոզութիւնը չօգնեց հնազանդութեամբ շամոքուողներին, իսկ նա ամեն ժամանակ հակառակ կողմն էր շտապան:

Արդ՝ Արքահամբ դարձեալ երկրարդ թուրքն է գրում Կիրոնին՝ գրածութեամբ եւ ոչ թէ այլատեսակ, որպէսզի իր օրերում աղմուկ ու խոռվորին չին: Եւ գրում է. «Մի արա դա, ասում է, այլ ճայի՛ր թեզ եւ մի՛ եղի՛ր աղմուկի ու խոռվորեան պատճառ երկու կողմերի [միջեւ]:»

ԳԼՈՒԽ ԽԵ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ԱԲՐԱՀԱՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՍՍԿԸ
ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒՐՈՆԻ

«Ձեր ողջունաբար նամակը ստացանք, եւ որ գրել էիք, թէ սուրբ Գրիգորի արողու նորոգութեան համար չափազանց ուրախացաք, որա հետ միասին եւ մեր անարժանութեանն էիք օրինել՝ գոհութիւն յայտնեցինք Աստծուն: Արդ՝ դրա համար թոյ Տէրը ծեզ շնորհահատոյց լինի: Իսկ ինչ որ հակառակ ու ընդդէմ գրեցիք, այդ էլ իմացանք:

Արդ՝ մենք ընդդիմութեան ու վիճաբանութեան պատախանը պէտք է քողմնենք ու դեն նետենք եւ շտապենք դէպի հայրենի միաստորութիւնը սիրով ու հաւատով: Եւ չպէտք է որոնենք միայն անձնական օգուտը, այլ՝ բազմութեան, որպէսզի ապրեն: Եւ չպէտք է պարծենանք բարգաւաճ սուրբ Ե-

րասաղէմ քաղաքի միայն պանծալի անունով, որից աստուածային փառքը կողոպատելով մերկացրին եւ առաքելական հաւատը վերացրին նրանից եւ բազմաքի ու տեսակ-տեսակ հերձուածներ ու աղանդներ սերմանեցին: Իսկ դուք այժմ դրանով պարծենալով՝ գրում էք մեզ, թէ մեր եւ ձեր հայրերին սուրբ Գրիգորը Երուսաղէմի հաւատը տուեց, եւ մենք նոյնը պահպանում ենք: Սակայն լաւ քննեց՛ք, տեսէ՛ք, որ դուք եւ ուրիշները սուրբ քաղաքի բնակիչների հետ հեռացաք նրանից եւ նոյնը չէք պահպանում:

Իսկ մենք այժմ էլ պահպանում ենք Երուսաղէմի հաւատը, այն, որ ասացին, թէ Սիոնից են եկանու օրենքները, իսկ Տիրոջ խօսքը՝ Երուսաղէմից, որտեղից եւ ծագեց մեր Փրկիչը՝ Բանն Աստուած Զրիստոսը: Այլ ոչ թէ Քաղկեդոնի ամիծեալ ժողովի հայույթինը եւ Լետոնի պիղծ տոմարն ենք պահպանում, որն ինչ-որ ժամանակ բերեց, սերմանեց ոսն Յորնադ շեպիսկապս կոչուածքը Երուսաղէմ աստուածակերտ քաղաքում: Եւ ամբողջ առարեական կարգը փշացրեց եւ զլիխիվեր տապալեց: Այդ մոլորութիւնը, ինչպէս նախապէս գրեցինք, եկաւ նաև մեր երկիրը Հայոց կարողիկոս Բարգենի եւ Վրաց կարողիկոս Գաբրիէլի ժամանակ: Եւ [Յորանք] եպիսկոպոսների ու ազնուականների միաբանութեամբ նզովեցին եւ հեռացան իրեական ժողովն ու տոմարը մեծարողների միաբանութիւնից, եւ այժմ [էլ] գրաւոր վիաստարութը պահուում է մեզ մօս: Արդ՝ աղաչում եմ թեզ, որ չինանդանաս ուրացողների հիանքութեամբ, որպէսզի նրանց հետ շաբաժուես եւ հայրերի նզովքի տակ շընկնես ու գեհենը շժառանգես:

Արդ՝ միաւորման խօսք գրի՛ր ինձ եւ դրանում [նաեւ] քո կամ մեր սահմաններում [որուել] տեղ մատնացոյց արա՛, որպէսզի սուրբ Զատկից յետոյ միմեանց տեսնենք: Իսկ մնացեալը կարող ես լսել Պետրոս եպիսկոպոսից:

ԳԼՈՒԽ ԽԸ

ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒՐՈՆԻ ՊԱՍԱՍԽԱՆԸ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱԲՐԱՀԱՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՍՍԿԻՆ

«Ժնչ որ գրել էիք, իմացայ: Բայց, թէեւ դու՛ իմ տէ՛րը, լաւ գիտես, սակայն եւ մենք պարտաւոր ենք յիշեցնել, որ թեզնից առաջ այդ սուրբ Եկեղեցուն եղած վարդապետները միմեանց հանդէպ սէր եւ հաշտութիւն ունեն: Նաեւ՝ մի հաւատ եւ մի կարգաւորութիւն: Եւ մինչ Սովուս [կարողիկոսը] կենդանի էր, ինձ գրեց, թէ՝ «Դուք չպէտք է հաղորդակցուէք խուժիկի՝ Այստեղ բնագրում Բարկէն, որը համապատասխանեցնում ենք հետագային (գլ. ԽԹ, Ծ):

հետ», ինչպէս դուք յիշել էիք ձեր առաջին նամակում: Եւ ես հասկացայ, որ դա արդարացի է, [ես] լստ նրա հրամանի՝ նրանց մեզնից հեռացրեցի: Իսկ այդ Մովսէսին մինչ Ցուրտալի եպիսկոպոս էինք կամենում դարձնել, ինքը պարտադրութիւն էր ասել, թէ՝ «Ես ձեզնից չեմ օրինուի, որովհետեւ դուք ուղղահաւատ չեք»: Մինչեւ այն ժամանակ մեզնից օրինուեց, այժմ ինչո՞ւ պէտք է մեզ քննի, մեր հաւատը մի՞՞ք դրանից յետոյ փոխեցինք: Եւ իրենից առաջ եպիսկոպոսները, որ Ցուրտաւում եղել են՝ սկսած սուրբ Շուշանիկից և մինչեւ իինա՞ Ափողը, Գառնիկը, Սահակը, Եղիշան, Յակոբը, Ստեփանոսը, Եսային, Սամուելը, միս Ստեփանոսը, Յովհաննեսը եւ որիշ եպիսկոպոսներ էլ, [նրանց օրօք] երկու կողմերիս միջեւ ոչ մի հակառակութիւն չէր եղել, այժմ ինչո՞ւ եղաւ, որ մենք չգիտենք»:

ԳԼՈՒԽ ԽԹ

ԱՅՆ ՍԱՍԻՆ, ԻՆՉ ՈՐ ԵՂԱՄ ԱԲՐԱՀԱՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՍԱԿԻՑ ԵՒ ԿԻՒՐՈՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԻՑ ՅԵՏՈՅ

Իսկ արդ՝ այս նամակներում, որ Աբրահամը գրեց Կիւրոնին՝ յիշեցնելով նրան նախկին ժամանակների ուղղափառութեան մասին եւ դարձեալ՝ շարահաւատների հակառակութեան մասին, եւ ընդդիմաքանոթեան մասին, եւ մանաւանդ այն, որ վաղուց Երրուսաղեմում եղաւ շարիմաց եպիսկոպոս Յորնաղի ժամանակ, որի մասին ասում են, թէ երբեմն ուղղափառ է եղել եւ յետոյ շարափառ՝ նման Կիւրոնին իր շար մտածողոթեամբ: Որովհետեւ հրեական հերծուածի հայինութեան շար սերմը, որ հասաւ Քաղկեդոնի անիծեալ ժողովին, նմանապէս նաեւ Լեռնի պիծտումարին, նա [Յորնաղը] սերմանեց: [Յիշեցնում է նաեւ] այն, որ եղաւ Հայոց կարողիկոս Բարգենի եւ Վրաց առաջնորդ Գաբրիէլի ժամանակ, եւ դարձեալ՝ [այդ] ժողովի միաբանական խորհութիւնը, որ Վերաբերում էր այնպիսի եպիսկոպոսներին ու ազատներին, ինչպէս վերեւում ասուց: Նաեւ պատահած այլ իրողութիւնների մասին, որ այն ժամանակներում եղան, յիշեցնում է նրան:

Ապա խրատական խօսքերով դարձեալ աղաջում է [Կիւրոնին], որպէսզի արժանաւորապէս ընթանայ առաջին հայրերի ընթացրով, եւ դարձեալ ժամանութիւն եւ տեղ է խնդրում՝ միմեանց հանդիպելու, որպէսզի թերեւս կարողանայ երես առ երես բուժել նրան խօսքերով եւ դեռ դնել բուժելի վերքերի վրայ, որով ինքն իրեն վիրաւորեց:

Իսկ ապա նա [Կիւրոնը] իրեշտակի կողմից խոշտանգուելով՝ խոստովանում է երկու կողմերի նախկին միաւորութիւնն ու դաշնարդութիւնը, որ Հայատանում ու Վրաստանում եղած նախկին հայրերը գրաւոր կերպով հաստատեցին: Բայց ապա Ցուրտալի երանելի եպիսկոպոսի մասին յրողորում էլ, թէ ինչո՞ւ քննիչ եղաւ, [յետոյ] բուարկում է այն եպիսկոպոսներին, որ եղել են սուրբ Շուշանիկից մինչեւ ինքը: Եւ սրանցից յետոյ էլ [ասում է] քաներ, որ յաջորդն է բացայացում:

Եւ ինչպէս որ Հայոց Մովսէս կարողիկոսի ժամանակներում սկսեց քարցնել եւ կեղծաւորութեամբ պատասխան տալ՝ նոյնը եւ այստեղ: Քանի որ չնայած տեղ-տեղ [այնպէս] է կարծել տալիս, թէ մօս է զալիս, սակայն դարձեալ անշափի իեռու է փախչում: Բայց Վրանէսին տուած պատասխանը [նես] չգէտք է զանց առնենք, որը լի է չարութեամբ, ինչպէս որ պատմում է իր այն նամակում, որ գրուած էր Ցուրտալի Մովսէս եպիսկոպոսին: Եւ թէպէտեւ մեզ մօս չգտնուեց այն նամակի պատասխանը, որ զգուած էր] Կիւրոնին եւ երկրի իշխաններին ու Պետրոսին, սակայն [մենք] տեղեկանում ենք Մովսէսի եւ Վրանէսի խօսքերից, որ գրել էին միմեանց, Մովսէսի սպասարկի լածից եւ մի փոքր գրութիւնից՝ ազնուականների կողմից գրուած: Եւ այդպիսի պատասխանն արժանի չէր մեր նամակին, որովհետեւ ինքը [Կիւրոն] արժանի պատասխան, ասում է, չսուեց եւ ոչ էլ որիշին բողեց դառան անել: Քանզի բարկութեամբ լիքն էր, որպէս հիւանդ մէկը, որ ցավի մէջ գունատուած է եւ որեւէ տեղից ակնկալիք չունի բուժուելու. այդպէս էլ նա:

Արդ՝ դարձեալ [Աբրահամը] մի այլ նամակ էլ է գրում Կիւրոնին եւ գրածութեամբ ու աղաջական խօսքերով (թէպէտեւ նա չէր լսելու [այլ] խօսքերի ծայնը) ասում այսպէս.

ԳԼՈՒԽ Ծ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ԱԲՐԱՀԱՄԻ ԵՐՐՈՐԴ ՆԱՍԱԿԸ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒՐՈՆԻՆ

«Ի՞նչ պէտք է անենք, ո՞վ պատուական եղբայր, աստուածային պատուիրանների ծայնը, որ միշտ գգուշացնում է մեզ, թէ՝ «Զգոյշ կացէ՛ այդ հօտի՛ Տիրոց ժողովրդի համար, որի վրայ Սուրբ Հոգին ծեզ նշանակեց հովուելու», որին իր պատուական արինով փրկեց եւ ասաց, թէ՝ «Երանց համար հաշիվ էք տալու», իսկ մենք ծովութիւնից գարկուած ենք եւ մեղկ ու ծոյլ:

Արդ՝ այս արդէն երրորդ անգամ գրուեց քեզ, որպէսզի երկու եւ երեք վկաների բերանով հաստատով ամեն բան: Արդ՝ գրուած է: «Փոքրեցք ամեն ինչ եւ բարին ընդունե՛ք ու ամեն շար բանից ենուու մնացէ՛ք», եւ դարձեալ, թէ՝ «Սիմեանց հաստատէ՛ք եւ իրար զննե՛ք, եւ մէկի առաւելութիւնը միասի կակասութիւնը կը լրացնի: Եւ արդ՝ չծովանանք նորոգելու երկու ազգերի միջեւ եղած հոգեւոր սէրը եւ այն վարդապետութիւնը, որ միեւնոյն աղբիրից է առած: Որ նախ իրենք առան կենդանութեան լոյսը, ինչպէս մեզ առվորեցրին մարզարէներն ու առաքեալները, եւ ապա ճեր ու մեր մէջ առհասարակ սերմանեցին ուղղափառ աստուածապաշտութիւնը, նախ երանելի սուրբ Գրիգորը, եւ ապա Մաշտոցը: Եւ մենք պարտաւոր ենք ապրել նոյնով մինչեւ մեր Աստծոյ Յիշուս Քրիստոս Տիրոջ գալուստը: Եւ արժան է [նաեւ], որ այդպիսի վրիպած մտքերից հեռու փախչենք:

Քանզի առաքեալները եւ նրանք, ովքեր նրանցից ծշմարիտ կերպով սովորեցին՝ նաեւ մեզ ուսուցեցին մկրտուել Սուրբ Երրորդութեամ՝ լստ Փրկչի խօսքի, եւ քարոզեցին, թէ Որդին Երրորդութիւնից է մարմնացած եւ միացած, մի եղած [ու] նաեւ նոյնը՝ [Աստուած] մնացած՝ Հօր եւ Սուրբ Հոգու կողքին: Եւ այսպէս են ասում. «Մի է մեր Տէր Յիշուս Քրիստոսը», եւ դարձեալ՝ «Որոնց հետ միասին նաեւ Քրիստոս Աստուածն է օրինեալ յահիտեան. ամէ՛ն»: Եւ դարձեալ Կաքութիկուս էլ ասում է. «Աստուած ծշմարիտ է, եւ կեամքը՝ յահիտեանական»: Եւ քազմաքի մարզարէներ նոյնպէս սկսած Մովսէսից մինչեւ Յովհաննէս Սկրտիչ, նախապէս իմացնելով՝ վկայեցին: Իսկ թէ ծշմարիտ մարդ է եղել [Քրիստոսը] առաքեալ է յիշատակում՝ ասելով, թէ՝ «Մարդով եղաւ մեռնեների յարութիւնը»: Եւ դարձեալ, թէ՝ «Երկրորդ մարդը Տէրն [է] Երկնքից [իշած]:» Առաքեալներն [առանձին] բնութեան մասին չեն խօսում, այլ այն մասին, թէ իր [այն] մարմնով, որ սուրբ Կոյս Աստուածածնից ծնուեց, մարդ է, իսկ իր մարմնով՝ Աստուած, այլ ոչ թէ՝ երեմն մարդ է, եւ երեմն՝ Աստուած: Չի՛ լինի, այդպէս չեն քարոզի:

Նոյնպէս եւ երանելի հայրերը, որ հաւաքուեցին Նիկիայում, այսպէս սովորեցրին՝ լստ առաքեալների վարդապետութեան: Ասում են. «Պէտք է հաւատալ մի Աստծոյ՝ ամենակալ Հօրը՝ երկնքի Արարչին, եւ մի Տէր Յիշուս Քրիստոսին (քայց ոչ թէ երկու բնութեան կամ երկու որդու մասին ասացին, այլ՝ մէկ Տէր Յիշուս Քրիստոսի), որ Հօրից ծնուեց անձառաքար, նոյն ինքը մարմնին ստացաւ սուրբ Կոյսից եւ մարդացաւ, խաչուեց եւ քաղուեց, եւ յարութիւն առաւ եւ համբարձուեց (եւ գալու է դատելու, որի քաջարութեանը չկայ վախճան), եւ Սուրբ Հոգուն, որով խօսեցին առաքեալներն ու մարզարէները: Այս հաւատով սկսուեց¹²⁹ Աստծոյ եկեղեցին սուրբ առաքեալներից, եւ սրանով է պարձենում, թէ վերին Երուսա-

ղէմում ժողով կը լինի:

Իսկ Քաղկեդոնի ալիդ ժողովում սուրբ առաքեալներին եւ Նիկիայի սուրբ ժողովին հակառակ խոստովանեցին մի Քրիստոսի երկու բնութիւն [Եռութիւն] ասելով՝ խարեւով պարզամիտներին, եւ Սուրբ Երրորդութեան փոխարէն չորրորդութիւն քարոզեցին: Նոյնպէս եւ Լետոնի անիծեալ տոմարն էր այսպէս ասում: «Պէտք է, ասում է, Քրիստոս Աստծու համար ընդունել երկու բնութեան կերպարանը՝ մէկը միասի յարակցութեամբ. մէկով անում է այն գրգերը, ինչ որ Աստծուն է վայել, իսկ միասով՝ մարդկային-ները, ինչ որ մարդուն է արժանի»: Եւ այսպիսի շատ բարբաջաններ [է ասում], որը լոկ Աստծուց խոտորում է:

Արդ՝ եթէ չէր փոխուել մեր հաւատքից, ինչպէս որ շատ անգամ մեզ գրեցիր, [թէ] չես ընդունել Քաղկեդոնի անիծեալ ժողովն ու Լետոնի ալիդ տոմարը, ապա դրանք նգովի՛ր դու ես, ինչպէս որ քո նախնի՝ Վրաց երանելի Գաբրիէլ կարողիկուսը նգովեց մեր երանելի հայրերի հետ միասին, իր արոռակիցներով իանդերձ, որոնց անուններն այս են, որ յիշատակում են. ինքը՝ Գաբրիէլը, որ կոչում է Մծխիթայի եպիսկոպոս, քաջատրական տան Պաղեդն¹³⁰ եպիսկոպոսը, Աստուրիալի¹³¹ Եղիփաս եպիսկոպոսը, Տիմուլի¹³² Սամուլ եպիսկոպոսը, Բողմիլի¹³³ Դավիթ եպիսկոպոսը, Սիրավի¹³⁴ Յակոբ եպիսկոպոսը, Ռուսաւիլ¹³⁵ Ստեփանոս եպիսկոպոսը, Տիփիսի Սահակ եպիսկոպոսը, Մանգեաց Եղատէս¹³⁶ եպիսկոպոսը, Մարտիլի Ենէս եպիսկոպոսը, Սամբատայի Եղինիս եպիսկոպոսը, Արսունելի¹³⁷ Յովսէփ եպիսկոպոսը, Սառութիլ¹³⁸ Յոհան եպիսկոպոսը, Կումրտայի¹³⁹ միևն Յովսէփ եպիսկոպոսը, Քողեղնալայի¹⁴⁰ Ղազար եպիսկոպոսը, Փորքի Թէռուդորս եպիսկոպոսը, Կատացի¹⁴¹ Զաքարիան եպիսկոպոսը, Աստերմիդի¹⁴² Փոկաս եպիսկոպոսը, Հնարակերտի¹⁴³ Իսահակ եպիսկոպոսը, Տարպի Մովսէս¹⁴⁴ եպիսկոպոսը, Ջորգանի Ըստնգենէ¹⁴⁵ եպիսկոպոսը:

Արդ՝ այս երանելի եպիսկոպոսները, որոնք ճեր երկրից էին, Աղուանքից եւ Սիմենքից [Եղանձների] հետ համդիացեցին Հայաստանում Հայոց Բարգեն կաքողիկոսի օրօք այն ժողովում, որտեղ նրանց կողմից միաբան անիծուեց Քաղկեդոնի ժողովը, Լետոնի տոմարը եւ պայմանը¹⁴⁶:

Դարձեալ իսկ գրեցիր մէկ եւ երկու անգամ, թէ առաջ դուր էլ Երուսաղէմի հաւատն ունեիք: Բայց մենք այժմ էլ ունենք այն, որն առաքեալներից քարոզուեց, ինչպէս որ գրուած է, թէ՝ «Օրէնքները Սիրնից են դուրս գալու», որը վերմատանը հաւաքուած առաքեալներն են, եւ [թէ] «Երուսաղէմից [է] Տիրոջ խօսքը», որը Բանն Աստուած Քրիստոսն է: Եւ ինչ որ նրանցից սովորեցինք, պահում ենք եւ կը պահենք միշտ եւ յահիտեան: Եւ այլոց էլ պատուիրում ենք՝ չխոտորուել եւ օսար ուսմունք չուսանել: Քանզի այս եր հասկանում Պօղոս առաքեալը, որ գրում էր, թէ՝ «Զարմանում

եմ, որ այդպէս շուտ-շուտ շոտ էք գալիս դէպի այլ աւետարան, որպիսի որիշը չկայ», եւ՝ «Ոչ միայն [որ] այս [Աւետարանը] պիտի զիտենաք, այլեւ եթէ մենք էլ, ասում է, կամ հրեշտակներն աւետարանն ձեզ [աւելին], քան [այն], որ մենք աւետարաննեցինք, բռոյ նզովուած լինեն»: Իսկ եւ [այն] նոյնն եմ ասում, ինչ որ առաքեալներն են ասում:

Իսկ որ Ցուրտափի եպիսկոպոսի մասին է գրուած, թէ՝ «Եթէ մեզ ուղղափառ չէր համարում, [ուղենքն] արժան չէր, որ մեզնից օրինուեր», [ապա] նա երրունով հանդերձ հաստատեց այլ բան, թէ՝ «Չէինք իմացել, բայց թէ ձեռնադրութիւնից յետոյ հասկացանք»: Որբ եւ մեզ խիստ արժանահաւատ թուաց, քանզի ուղղափառներից ոչ որ ստոյգ չփոտէր այլ բանն այդպէս: Որովհետեւ երանենի Սովուր, որ ինձնից առաջ էր առաքելական արռողին յաջորդել³⁴⁷, չէր գրել այնպէս, թէ դուք ուղղափառ չէք, այլ թէ՝ «Չուղղափառների հետ ինչո՞ւ էք հաղորդուել»:

Արդ՝ այս անգամ Քաղկեդոնի ամիծեալ ժողովի եւ Լեռնի պիղծ տոմարի մասին ինձ ճիշտ ու հաւաստի պատասխան տուէք, թէ ինչպէ՞ս էք ընդունում: Եւ եթէ Աստուած կամենայ եւ [որով] միաւորման խօսք գրես, [ապա նաև] Ժամադրիք ինձ եւ թեզ՝ մի տեղ գալու, [եւ թող] լինի խաղաղութիւն, եթէ Աստուած կամենայ: Իսկ մնացեալը կը տեղեկանաք Պետրոս եպիսկոպոսից»:

ԳԼՈՒԽ ԾԱ

ԿԻՒՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԻ ԵՐՐՈՐԴ ՆԱՍՍԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱԸ

«Սրբաւէր եւ ճշմարտասէր Հայոց կարողիկոս տէր Աբրահամին՝ Վրաց կարողիկոս Կիւրոնից խոնարհութեամբ եւ սիրով ողջո՞յն:

Ահաւասիկ մեր կողմից այս երրորդ նամակը գրուեց ձեր սրբութեանը: Եթէ կամենում էք մեր հաւատքը քննել եւ իմանալ, [ապա] քարզմանել ու թերել տուեցի շորովների գրութիւնները, որոնցով հոռոմներն են կառավարում, եւ սուրբ Անաստասից ի վեր³⁴⁸ Սուրբ Սիրոնում էլ նոյնն է քարոզում: Կամենար, թէ չկամենաք՝ մեր հաւատն այլ է: Եւ այն, ինչ մեզ գրում էք ողջոյնի կամ թէ այլ ինչ պատճառով, կամ [ինչ-որ] պէտքերի համար, այն մասը, որ [վերաբերում է] սիրոն [քարեկամութեանը], գրեցէք, ընթունում ենք, բայց այս վճռի մասին ոչինչ աւելին ինձ մի՛ գրէք: Եւ մի՛ շարշարուիր, ապա թէ ոչ՝ պատասխան չես ստանայ:

Արդ՝ եթէ կամենում ես միարանութիւնն ու սէրը պահպանել եւ [որ] ձեզ հետ խաղաղութեամբ ապրենք, ինչպէս եւ մեր եւ ձեր հայրերն ապրեցին,

[ապա] մենք պատրաստ ենք խաղաղութեան համար: Իսկ եթէ ինչ-որ ճարտարութիւն [ցոյց տալու] համար էք կամենում մտածել, [ապա] առաւել եւս մի՛ շարշարուէք եւ այդ մասին այլեւս մի՛ գրէք մեզ: Որպէսզի ինձ յետոյ չփիճակուի երբեւից Հայաստանով [շանցնել] բացի ճանապարհ անցնելուց, [իսկ] եթէ ոչ՝ այլ գործ չկայ»:

ԳԼՈՒԽ ԾԲ

ԻՆՉ ՈՐ ՊԱՏՄՈՒՈՒՄ Է ԿԻՒՐՈՆԻ ՄԱՍԻՆ ՆՐԱ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԱՍԽԱՆԱԸ ՅԵՏՏՈՅ

Արդ՝ այսպիսի լրբախօսութեամբ այս պատասխանը տուեց Կիւրոնն Աբրահամին: Քանզի որքա՞ն ուղղուելու եւ զգուշանալու յոյս կար այն ժամանակ, իսկ այժմ ինքնասատարումը³⁴⁹ [Վերածուեց] հակառակարանութիւնների՝ ընդունելու իր փրկութեան: Նաեւ իր երկրորդ նամակում էք այսպէս ընդդիմաբաններով դէպի հակառակ կողմը շտապում: Այլ թէպէտեւ իր տեղում մենք չիշատակեցինք՝ բաւական համարելով նրա անարժան պատասխանները, բայց վերադառնալով՝ նրան յանդիմանելու համար ասենք, որովհետեւ [ինց] ինքն իրեն յանդիմանեց. քանզի հրեշտակի կողմից խոչտանգուելով՝ խոստովանեց ստոյգը:

Ասում է՝ «Բազմաթիւ եպիսկոպոսներ՝ ոմանք հայերից, ոմանք վրացիներից, Հայաստանում [են] սովորել եւ գիտուններ [են] ու վարդապետներ, եւ միմեանց հետ խաղաղութեամբ մնացին. միմեանցից սովորում էին եւ սուրբ Ծուշանիկին պաշտելու էին գալիս կամ Սծիխթայում աղօթելու, եւ հաղորդութիւն էին ընդունում: Նոյնպէս եւ նրանք, որ այնտեղից այստեղ էին գալիս, այդպէս էին անում Սուրբ կարուղիկում եւ այլ եկեղեցիներում աղօթում էին, առանց խոճի խայրի Փրկչի մարմնով ու արխինով հաղորդութիւն էին ստանում միմեանցից՝ հաւատի ու սիրոյ սովորութեամբ: Եւ հայերի ու վրացիների միարանութիւն կար միմեանց հետ, եւ ամենքն էլ սուրբ Գրիգորի թեմն [էին] եւ միարան Երուսաղեմի հաւատին, [որով հոռոմներն են կենցաղավարում]: Եւ ինչ-որ այլ բաներ ու խօսքեր]³⁵⁰ շեն եղել ներսում, իսկ այժմ որտեղի՞ց եղան: Այդ [հայրապետն է]³⁵¹, որ Տիրոջ եղբայր երբուաղենացի սուրբ Յակոբի տեղն է ստանձնել, [որը] եւ մեզ ու մեր հայրերին հաւատ է տուել, եւ [այն] մեզ մինչեւ այս պահպանել է, արդ՝ ինչպէ՞ս այն բողնենք եւ ձեզ հաւատանք: Եւ կամ այլ եպիսկոպոսները, ³⁵² ինչ-որ պատճառով ձեռագրում մէկ տողի չափ պակաս կայ: Համարելով դա որեւէ գրի փիպան հետեւանք՝ պակասը բառակուսի փակագուվ լրացնում ենք «Գիրք բորոցից»:

բազաւորները, իշխանները եւ մեր երկրի բոլոր բնակիչները, նրանց ամենքին ինչպէ՞ս կարելի է բողնել եւ ծեզ հետ միաբանուել»:

Եւ թշուառականը զիտէր, թէ [հենց] ինքը եղաւ իր եւ նրանց կորստան պատճառը: Եւ դարձեալ ասում է. «Այս երեսունինգ եպիսկոպոսները, որոնք Վիրքում կան³⁵¹, ուղղափառ ու զիտուն չեն, միայն այդ Մովսե՞սը եղաւ ուղղափառ»: Եւ այսպէս իր բոլոր նամակներում մաքառում ու կուտամ է երանելի Մովսէսի դէմ, որովհետեւ նա եղաւ Կիրոնի շարութեան յայտնի դառնալու պատճառը, որը գաղտնի էր պահում Կեղծաւորութեան վարագոյրով: Եւ ոչ միայն այնժամ, այլև ամեն ժամանակ, նոյնիսկ այժմ էլ տակալին առագաստ է գգուած նրանց սրտերի վրայ եւ չի վերանայ, քանզի Ըրիստոսով է խափանուելու: Բայց սա թիշ-թիշ յայտնում է իր շարութիւնը այստեղ եւ այլ տեղերում: Նախ՝ պատասխանի մէջ [այն] նամակում, որ [գրեց] Վրքանեսին, թէկտեւ բոլորը չէ, [որ] կայ զրաւոր [պահպանուած] իրեն [Վրքանեսին] առարուածի մէջ (Եւ որիշներին առարուածում էր թիշն [է] զրաւոր), իսկ բազմաթիւ խօսքերով ու սպառնալիքներով՝ Մովսէսի սպասաւորի միջոցով [է ի յայտ թերում], եւ այն էլ խառնաշփոր կերպով, իրեւ մի հիւանդ, որն ընկել է շար ցափ մէջ եւ իր նեղութիւնից չի իմանում, թէ ինչ է խօսում:

Բայց յետոյ կեղծաւորութեամբ համաձայնութեան գալով՝ ասում է, թէ՝ «Մենք ե՛ն այս հաւատն ենք պահում, ե՛ն այդ, եւ հաղորդութիւնը թէ՝ այստեղ ենք ստանում, թէ՝ այդտեղ»: Եւ դարձեալ՝ «Մեր հայրերն, ասում է, վարդապետները եւ երկրի բոլոր բնակիչները, երբ զալս էին այստեղ, աղօրում էին ծեր սուրբ եկեղեցիներում, նոյնպէս եւ ծերոնք էին այստեղ՝ Սցխիբայր³⁵² Սուրբ Խաչը զալս եւ աղօրում»: Եւ այսպիսի խօսքերով խոստովանում է ու մօտենում, իսկ գործերով՝ ուրանում ու հեռանում: Եւ մեծարում է միայն անունով, այլ ոչ թէ գործով՝ ըստ Տերաւական այն խօսքի, թէ՝ «Այս Ժողովուրդն իր շրունքներով մեծարում է ինձ, իսկ իրենց սրտերով հեռացած մեկուսի են ինձնից եւ զոր են ինձ պաշտում»³⁵³:

Արդ՝ այս բաները մէկ անգամ եւ երկից գրել էինք [մի] այլ տեղում, որոշ բաներ՝ նամակներից իրաքանչիրի հետ, եւ որոշ բաներ՝ մեր կողմից էինք կրկնարանել: Որի պատճառով, կարծում եմ, չենք ազատուի ծեր կողմից կշտամբուելուց: Բայց զիտէր, որ երբ հիւանդին ծանր ցաւեր են պատահում, հեծեծանքը շատ է ելուում: Սակայն սույզ լինելու համար յաւելեալ զրեցինք նրա որունների մասին, որ իր մահաշունչ թերանով ցանեց ցորենի վրայ, [եւ] որ իր խիստ յապաղունով հազիւ յայտնի դարձեց անասելի [եւ] գովելու անարժան բաները:

³⁵¹ Մարկ. Է 6:

ԳԼՈՒԽ ԾԳ.

ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԱՍԻՆ

Այս Պետրոսը Աքրահամ Հայոց կարողիկոսի ժամանակ պալատական տան եպիսկոպոսն էր³⁵⁴, [մի] կորովամիտ, ճոխարան ու ճարտարախոս մարդ եւ հմուտ ատենադպիր: Աքրահամը սրան ազնուական մարդկանց հետ միասին իր նամակների հետեւից ուղարկեց Կիրոնի մօտ: Եւ երկրորդ անգամ զնացին Վրաց իշխաններն այնտեղ, սպառնացին նրան, թէ մի՛ երթեւեկիր մեզ մօտ հաւատի որեւէ խնդրի համար, այսպէս մեր ծեղով կը սպանուես: Եւ կամ [ասում էին]. «Ինչո՞ւ ես այդպէս գայլաբար յարձակում մեզ վրայ՝ քո գրով ու պատզամով՝ մեզ մօտ գալով: Եւ այս խօսքերով Վրաստանի բնակիչները դեռեւս պարծենում են՝ աւանդաբար միմեանց փոխանցելով, որդին հօրից սովորելով, թէ՝ «Զեր գայլ Պետրոսին մեր իշխանները Կանգարք կոչուող լեռան վրայ սպանեցին: Բայց մենք զիտենք, թէ [արդեօ՞ք] այլպէս է եղել, ինչպէս նրանք են ասում: Նաև հոռոմներն են զայլ կոչում Պետրոս Անտիռացուն, որը փախար Քաղկեդոնի շար ժողովլից: Եւ ոմանք ասում են, թէ նոյնն են եղել սա եւ նա, ոչ սրանք են նրան ճանաչում, եւ ոչ նրանք՝ սրան, քանի որ այդ Պետրոսն անօրէն Մարկիանոսի ժամանակներում էր, իսկ սա՝ Մուրիկ³⁵⁵ կայսեր, բայց նրանք յիմարամտութեամբ են կարծում եւ մէկ [անձ] համարում, քանի որ Մարկիանոսից մինչեւ Մուրիկը հարիր յիսուն տարի է:

ԳԼՈՒԽ ԾԳ.

ԹԷ ԻՆՉՊԻՍ Է ՊԱՍՄՈՒՄ ՎՐԿԱՆԻ ՄԱՐԶՊԱՆ ՍՍԲԱՏԻ ՆԱՍԱԿՆԵՐԻ ՍԱՍԻՆ, ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ՆՈՅՆ ԽՆԴՐՈՎ

Բայց «Գիրք թղթոցում», որը մեզ հանդիպեց, Վրկանի մարզպան Ամբատի նամակը զգտանք [ճիշտ] հերթականութեամբ արտազրուած: Նոյն պէս էլ այստեղ անցանք ամրողզը, եւ մոռացուուց: Ջանզի խօսքի միտքը մեզ կարծել էր տալս, թէ Աքրահամի առաջին նամակից յետոյ էր այս նամակը, որ ուղղուած էր Կիրոնին: Որոհետեւ որոնելով՝ մի այլ օրինական գտանք այնպէս, ինչպէս կարծում էինք, քանզի ինքն իսկ նամակը եւ ծանօթ խօսքերով, որ Կիրոնին գրուած Աքրահամի առաջին նամակում կային, ի յայտ է թերում, թէ սրանք համազոյց են, միաբան եւ միմեանց նման: Ջանզի այնտեղ ասում է, թէ՝ «Կամենում էինք եպիսկոպոսներ ողարկել մեզ մօտ՝ վարդապետների հետ միասին, որ զային ծեզ տեղե-

կացնելին Քաղկեդոնի ու այլ աղանդերի քնոյթի մասին, որպէսզի դուք ստոյգ գիտակցելիք», եւ այստեղ նոյն քանն է յիշատակում դարձեալ ու նաեւ՝ այլ մեղադրանքները Կիրոնի հանդէավ: «Եթէ մէկն, ասում է, աշխարհականներից ու տգէտներից պատճառ լիներ [շարի], դու էիր պարտաւոր խրատել, թէկուզ եւ դու անէիր դա»³⁵: Եւ դարձեալ ամենայն հոգեւոր ու մարմնաւոր սէր է առաջարկում եւ անմիջապէս նրան յիշեցնում երկու կողմերին հաւատի հաստատութիւնը, եւ թէ՝ «Մենք ու դուք սուրբ Գրիգորի աշակերտներն ենք», եւ թէ՝ «Երկուս էլ ունենք ուղղափառ հաւատը, որ սուրբ հայրերն են մեզ աւանդել»: Եւ դարձեալ, թէ՝ «Մենք աշխարհական ոմանցից լսել ենք հաւատի նկատմամբ ձեր թերութեան մասին եւ որոշ չափով հաւատացել, իսկ ապա Յուրտակի եպիսկոպոսից տեխէկանալով՝ ստուգի հաւատացինք: Եւ դարձեալ՝ սուրբ Շուշանիկի սուրբ Վկայարանի մասին, որ խաղաղութեան միջնորդ ու աղօրատեղի էր երկու կողմերին համար: Այս խօսքերը համապատասխան են Արքահամի նամակին:

Եւ դարձեալ իր պատասխանի մէջ, որ ուղղուած էր Յուրտակի եպիսկոպոսին, խօսքը նոյնն է ցոյց տալիս, թէ համապատասխան են միմեանց, եւ այս նամակները միասին են գնացել Կիրոնին: Եւ մի այլ տեղում ասում է թէ՝ «Մենք եւ տէր Սմբատը միասին նամակ գրեցինք ձեզ»: Քանզի այսպէս է ասում Մովսէսին. «Քո հոգսն, ասում է, նախ պէտք է լինի Աստծոյ ողորմածութեանը յանձնել, եւ յետոյ՝ տէր կարողիկոսին»: «Թող որ նա գրի, ասում է, երկու եւ երեք անգամ: Արդ՝ քանզի մեզ որեւէ չափով օտար եւ հեռու չքուաց առաջինի բովանդակութիւնից այս նամակը, որ Կիրոնին գրուեց Սմբատի անունից (թէպէտել Արքահամի առաջին թղթից մի փոքր ընդմիջուեց), այլ պատճառով մենք ներկայացրեցինք [ստորեւ]:

ԳԼՈՒԽ ԾԵ

ՎՐԿԱՆԻ ՄԱՐԶՊԱՆ ՏԵՐ ՍՍԲԱՏԻ ՆԱՍԱԿԸ ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒՐՈՆԻՆ

«Վրաց սրբաւէր կարողիկոս Կիրոնին, եւ ձեր այլ արոռոակից եպիսկոպոսներին, եւ երկրիդ իշխաններին՝ Աստրներսէին եւ բոլոր երեւելիներին՝ Վրկանի մարզպան Սմբատից՝ Տերանց գինութից, Դաշտկարինից³⁶, Հայոց Շարսաղար Վարդապէտից եւ այլ ազնուականներից՝ խոնարհութեամբ ու սիրով ողջո՞յն:

Քանզի ինչպէս նախկինում մեր եւ ձեր հայրերն ու վարդապէտները երկրի միարանութեամբ տեսան ոմանց յետին ընթացքը եւ ատելի վարքը,

որ թերի ու անվայել էր մեր հաւատին ու կանոններին, եւ անէծրով մերժեցին նրանց, եւ այնուհետեւ ամեն հակառակութիւն վերացաւ³⁷, եւ Ծրիստոս Աստուած վառաւորուեց, մեր երանելի հայրերի ու սուրբ վարդապէտների հաւատը հաստատուեց, եւ ամենը, ովքեր արքայից արքայի իշխանութեան ներքոյ ենք, մի հաւատի եղանք, արդ՝ այս քաներն անհրաժշտ համարեցինք ձեզ գրել, որպէսզի դուք մեզ հետ միարանուեք, ինչպէս որ մեր հայրերն էին: Քանզի միեւնոյն վարդապէտի աշակերտը եւ թեմն ենք եղել, եւ նոյն հաւատով, ինչպէս մեր հայրերը, պահպանել յոյսը եւ հաւատն առ Աստուած եւ սէրը միմեանց հանդէավ:

Բայց ահա կայ մի լուր, որ աշխարհականներից լսեցի, եւ սակայն չէի հաւատայ, բայց հաւատացի, [երբ] Յուրտակի եպիսկոպոսից էլ լսեցինք, որն այստեղ է, եւ խիստ վշտացանք: Քանզի մեր ու այդ երկրիդ ազատանիր միջին թէպէտ արին[ակցութիւն] եւ հարազատութիւն կար, բայց մեզ հանար հաստատութիւնը եւ ասես ինչ-որ երդումի չափի վստահութիւնը աղյ սուրբ վկայարանով էր, որ Յուրտակի պատուական հայրենի եկեղեցին է, որ ձեր մէջ է, եւ [դա] փոխելիք ինչ-ինչ թշնամութիւն է մէջ գցում: Սանաւան թերութիւն է նաեւ մեզ արգելելը՝ ովքեր կամենում են՝ այստեղից զալ ու երկրպազել ձեր Սուրբ Խաչին, եւ զգան չմտնեն նրանք, ովքեր այդտեղից զալիս են [մեր] Սուրբ Կաքուութիւն եւ այլ վկայարաններն աղօրեւու: Եւ այս մեծ պարզելը, որ Աստուած տուել է մեզ եւ ձեզ, կը խափանուի: Երէ մէկը [Խոգեւոր] խրատ չստացածներից կամ տգէտներից լիներ՝ դու պիտի պարտաւոր լինէիր վարդապէտութեամբ խրատել ու պատուհասել այդպիսին, որպէսզի հակառակութիւնը մէջտեղից վերանար, թէկուզ եւ դու յանձնամքը անէիր այդ, որ չափազանց դժուարին չար [քան] է:

Կամենում էինք եպիսկոպոսներ ուղարկել թերքողների հետ միասին, որ զիտեն երձուածի չարութիւնը, որպէսզի ձեզ վերահասու անէին ու ճշնարտութիւնն իմացնէին: Բայց առայժմ քաւական համարեցինք ազատ մարդկանց միջոցով նախ նամակով ձեր կամքը գիտենալ: Ողջ եղի՛ր»:

ԳԼՈՒԽ ԾԶ

ՎՐԿԱՆԻ ՄԱՐԶՊԱՆ ՏԵՐ ՍՍԲԱՏԻ ՆԱՍԱԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԸԸ ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ

«Վրկանի մարզպան վառաւորեալ տէր Սմբատին՝ Տերանց գինութին, Դաշտկարինին, Հայոց Շարսաղար Վարդապէտին եւ Հայաստանի այլ ազատներին՝ Սուրբ Նշանից՝ աղօքք, եւ Կիրոնից՝ Վրաց կարողիկո-

սից, եւ իմ բոլոր արոռակից եպիսկոպոսներից եւ իշխաններից՝ Աստմերսից եւ Աշուշանից եւ Վրաց երկրի բոլոր երեւելիներից՝ խոնարհութեամբ ու սկզբով ողջո՞յն:

Այն նամակը, որ դուք գրել եիք, տեսայ եւ ձեր ողջոյնը լսելով ուրախացայ: Բայց որ գրել եիք, թէ ոմանք մեր հայրերի եւ մեր շեղուած ու ատելի կարգերն ու հաւատը տեսնելով՝ մերժեցին ու դեն շարտեցին՝ այդ առիթով [արքայի] բարի հրամանը [կատարելու] համար քեզ՝ մեր տիրոջը, այդ գործով գրադացնելով՝ [կասեն]: Աստուած արքայից արքային բոլ անման անի, իսկ քեզ՝ տերանց տիրոջը, որ զաւակներով հանդերձ՝ էլ առաւել պատուականագրյան դարձնի՝ քան, որչափ որ կաս: Այն, որ հաւատի մասին գրել եիք, թէ մեր ու ձեր հայրերը միաբան էին, դա [այդպէս էր], որովհետեւ սուրբ Գրիգորն [այն] ուղղափառ հաւատըն ուսուցանեց մեզ, որը Երուսաղեմից սովորեց, նոյնը հաստատեց, եւ մեր ու ձեր անսխալ հաւատն այդ է: Իսկ եթէ այդ Մովսէսն այլ կերպ է լսնունում, ոյլը մենք ու դուք չիմք ընդունել, իսկ դուք կամենում եք լրան համաձայնել ու նորածել դարձնել [ապա] մենք լրան շենք հնազանդոլի: Որովհետեւ ինչ որ սովորեցինք, շենք բողնի, քանզի մեր եկեղեցիներն այսպէս են հաստատուել:

Նոյնպէս եւ Ցուրտափ եկեղեցին, ինչպէս որ է, [այդ էլ] եղել է ու կայ, եւ եկեղեցու ծխակարզը ոչնչով չի փոխուել: Բացի այն [լոկ], որ եպիսկոպոսը, որին նշանակեցինք, վրաց ու հայ դպրութիւնները գիտ եւ ծխակարզը երկու [լեզուով] է կատարում: Բայց իմ սրտին մեծ ցաւ է, որ դուք մի նարդու խօսքին եք հաւատում, ով իր զիշաւորին հաւատարիմ չեր, թող թէ՝ հենց մեզ, ով իր չար գործերի պատճառով գիշերով գաղտնի փախստական հեռացաւ ու գնաց ապստամբած Վահրամի մօտ: Եւ այդպէս գնաց շարութիւն գործելու, քանզի որոշ շափով յաջորդութիւն ունեցաւ եւ քիչ մնաց քաղաքներ առնել տար ու Արեաց աշխարհին մեծ վնաս բերէ: Եւ արդ դուք նրան հաւատացիք ու իր խօսքով դադարեցիք մեզ մօտ զայ:

Ողջ եղէք Տիրոջով: Եւ Աստուած բոլ ապրեցնի [նաեւ] կայսրին, որովհետեւ նա մեր երկիրն ապրեցրեց»³⁵⁸:

ԳԼՈՒԽ ԾԷ

ԹԷ ԻՆՉՊԵՍ ԷՐ ԿԻՒՐՈՆԸ ԿԵՂԴԱՍՈՐՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՈՒ
ԿՈՂՄԻ ՎՐԱՅ ՀԱԿՈՒԱԾ

Այս առաջիկայ յյուտագում [զիշում] մենք պէտք է պատմենք, թէ ինչպէս Կիւրոնը կեղծաւորաբար երկու՝ Պարսից ու հոռմէացիների կողմն էր հա-

կուած, եւ այն էլ՝ լի նենգութեամբ ու կեղծաւութեամբ: Որովհետեւ եքք կամեցաւ իր խորամանկութեամբ իր չար շինութեան խարխուլ հիմքը դնել եւ սկսեց ծեռնադրել այն խուժիկ նետորականին, որը նրա ծեռակերտ կորստեան սկիզբը դարձաւ, դնելով նրա Վրայ իր աջը՝ մեղքերի աջը, նրան դարձեց իր մահուան մահինը, նրանով հիւանդացաւ հոգու հիւանդութեամբ, որով եւ մեռաւ նրա մեջ ու մեռցրեց Վրաց ողջ երկիրը նոյն հիւանդութեամբ:

Իսկ մենք ի տես զնալով նրանց հիւանդութեանը եւ մօտենալով նրանց իրեն թժկապեսներ՝ կապելու համար նրանց վերքերը, եւ խոնարհուելով նրանց հիւանդութեան վրայ ու դիմանալով [հիւանդութեան] մահակոսութեանը՝ շկարողացանց նրանց թժկել: Որովհետեւ [այն] բուժական դեղը, որը մենք կազմել էինք օրէնքներով ու մարզարեներով, աստուածային աւտարանութեամբ ու առաքելական քարոզութեամբ, նոյն սուրբ հայրերի ու երանելի վարդապետների բուն ուսմունքով, որեցինք նրանց վրայ, [սակայն] ընդունեցին, որպէսի առողջանան այն վերքերից, որ ընդունել էին նետորի նետերից, որ բաքցուած էին քաղկեդոնականների կապարճներում ու նետուած աղերմատոր Լեւոնի կողմից: Այլ աւելի հեռացրին իրենցից, եղան անշնորհակալ շարի ստացուածք եւ իրենք պատրաստեցին իրենց համար մահացու եւ մահաբեր դեղ, որն իրենց վրայ դրեցին նեսորական խուժիկի դաւանութեամբ:

Իսկ մենք այդ տեսնելով՝ մտքով հիւանդացանք՝ երկար ժամանակ հեծեծարով նրանց կործանման ու մահուան պատճառով: Բայց նրանց կողմից մի անզամ ասուած հակառակաբանութիւնը եւ ընդդիմարանութիւնը կրկնաբնում էր միւս անզամ եւ կրկնակի անզամ եւ էլ առաւել յաճախ, որովհետեւ ինչպէս նախորդ [տեղում] ասացինք, թէ եքք հիւանդի յաւերը երկար են տեսում, հեծեծանքն էլ շատ է ելուում ու յաճախ, այդպէս էլ մեզ պատահեց նրանց պատճառով, որովհետեւ մտքով հիւանդացած [լինելով] նրանց համար՝ մշտապէս հեծեծում ենք եւ ամենայն ժամ հոգոց հանում: Եւ ջանում ենք նրանց մի խօսքին հազար խօսքի պատախան տալ՝ կրկնաբնուկ մէկը երկու եւ երկուսը երեք [անզամ], եթէ հաճելի է [քեզ դա խանալ]:

Բայց մենք վերադառնանք նախորդ շարադրանքին՝ այս ճառի [գլխի] սկզբի բովանդակութեանը: Արդ՝ Կիւրոնն իր միտքը երկուսի բաժանելով՝ անցնում է հոռոմների կողմն՝ փառաւորելով ու հաճոյանալով Սուրբկ կայսեր, եւ նրանով պարծենում է՝ ասելով. «Մենք, ասում են, կայսեր հաւատն ընրանեցինք եւ պահում ենք»: Եւ չէր իմանում այն մարդադաւանը, թէ պէտք է «Աստծով պարծենալ հանապազօր», եւ՝ «Ով պարծենում է, քող

Տիրոջով պարծենայ»[†]: Եւ դարձեալ ասում էր. «Կոստանդնուպոլիսը սուրբ Յովհաննէսի արռոն է եւ կայսեր տունը, եւ այն հայատը, որ այնտեղ քարոզում է, մենք այն ենք պաշտում»: Եւ դարձեալ, թէ՝ «Ժարգմանելու բերել տուեցի չորս ժողովների գլուխիսները, որով հոռոմներն են առաջնորդում, եւ մենք այն հայատն ենք պահում, եւ Աստուած քող կայսերն ապրեցնի»:

Իսկ ապա թեքում էր դէպի այս՝ Պարսից կողմը, որովհետեւ նրանց երկրն էլ երկատուած էր՝ Պարսից կողմը եւ հոռոմների: Իսկ նա արքայից արքայի համար կասկածի մէջ էր ընկել, թէ մի՛ գուցէ Վրկանի մարզպան Սմբատի սաղմանքով քննութեան առնի իր արարքները: Որովհետեւ Մովսէսին գրած նրա [Սմբատի] խօսքը բացայայսում է այս մտադրութիւնը, քանզի՝ «[Աւելի] վաղ ասացի քեզ», ասում է, թէ կը գրեմ արքայից արքային, որ իր բարերարութեամբ հրաման տայ քեզ, որպէսզի զնան նստես քեկեղեցում, [իսկ] դու յանձն չառար»: Արդ՝ այսպիսի պատճառով կասկածի մէջ էր Կիւրոնը, այն կողմով պարծենում էր, որովհետեւ նրանց հայատն էր ընդունել, եւ այս կողմից էլ վախենում էր, թէ արքան հայատի քննութիւն կը կատարի հայ ազնուականների դրդումով: Եւ ասում էր՝ «Աստուած թու փառաւորի արքային»:

Եւ այսպէս երկու ոտքով կաղալով՝ միտում էր [մէկ] այս կողմ, [մէկ] այն կողմ, եւ [այսպէս] կոծելով դեգերում էր ծովով ու ցամարով[‡] իր շորջ հայաբեկով Քաղկեդոնի պիտի ժողովի ու Լետոնի տոռմարի դաւանողներին, ել առաւել հրեական իին հայիոյութիւնն էր իր մէջ քարմացնում, եւ ըստ դրա ապավինելով մարդկանց՝ պարծենում էր, քանի խօսքերով ու աղերսանքով կեանք էր խնդրում կայսեր համար եւ [միաժամանակ] սնտի մտքով փառք հայցում արքային:

ԳԼՈՒԽԾԸ

ՑՈՒՐՏԱՒԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՎԱԼ-ՍԻ ՆԱՍԱԿԸ ՎՐԿԱՆԻ ՍԱՐՁՊԱՆ ՏԷՐ ՍՄԲԱՏԻՆ

«Աստուածաշնորհ պատուով պայծառացած Վրկանի մարզպան տէր Սմբատին՝ Տերանց զինուորին՝ Մովսէսից Տիրոջով ողջ՝ յս:

Տեսայ այն նամակների պատասխանները, որ անօրէնութեամբ եւ

[†] Բ Կորնք. Ժ 17:

[‡] Հմտ. «Վև յ ձեզ՝ դպրաց և փարիսեցոց կեղծաւորաց, զի յածիք ընդ ծով և ընդ ցամաք՝ առնել նկամուտ մի» (Մստք. Ի. 15):

շարութեամբ տուել էր Վրաց աւերիչ կաքողիկոս կոչուածը մեր աստուածապատի տէր կաքողիկոսին եւ քեզ, տէ՛ր իմ: Տէր կաքողիկոսի հետ կապուած իմ [Մանդրի] առիթով սրտի ցա չկայ, որովհետեւ նա տեղեկացել է եւ ամրողովին վերահասու եղել, թէ ինչի՞ համար կամ ինչպէ՞ս հալածուեցի: Բայց ինչ որ քեզ՝ իմ տիրոջն է Վերաբերում, ծանր սրտի ցա ունեմ, մի՛ գուցէ անօրէն նամակներով, որ գրեց ձերդ փառաւորութեանը, արդեօն երկայութեան մէջ չի՝ ցցել ձեզ իմ նկատմամբ:

Բայց դր՝ տէ՛ր իմ, Աստծոյ ողորմութեամբ, ձեռնիսա եւ՝ եւ երեւանի հեռաւոր տեղերում ինչ-ինչ քննութեամբ պէտք լինէր տեղեկանալ, եւ քող երէ շափազանց մօտ է [տեղը]: [Իսկ] Հայատանն ու Վրաստանը նաեւ սահմանակից են միմեանց, եւ շատերն ազնուականներից, յաճախ եւ իշխաններից այստեղից այնտեղ են հասնում եւ այնտեղից այստեղ զայխ: Նրանցից կարելի է տեղեկանալ, թէ արդարե՞ն այդպիսին եմ, ինչպէս ձեր սրութեամբ գրուել է նրանց կողմից, եւ [արդիօ՞ք] այլածել եմ ես տեղեկացրել ձեզ ու այսպիսի վարդապետների եւ իշխանների եւ [ողջ] երկրին խարել: [Երէ այդպէս է՝ արժանի է, որ ես այստժուեմ, որպէսզի ով ինձ նայի, այլեւս չկարողանայ խարել]: Բայց թէ քննել հրամայեցէք, [եւ] յոյս ունեմ Աստծոյ ողորմութեան վրայ, որ նամակներում իմ մասին գրուած բալոր խօսքերը տուտ կը գտնէք: Սանաւանդ որ հալածանքների ժամանակ ինն օր Տիգիսաւում նրա լրճերում մնացի, եւ ինձ չլնորսնեց: Եւ ամբողջ երկիրը գիտէք, որ նա չարեց դա ոչ թէ այլ քաների պատճառով, այլ հայատի պատճառով: Բայց ես միջնորդի միջոցով շատ խօսքերով խօսեցի նրա հետ եւ նրան ցոյց տուեցի՝ ինչ որ տեսել էի ու իմացել իինց մասին՝ ոչինչ չքարցնելով նրանից, իսկ նա ինձ պատասխան չտուեց եւ չընդունեց ինձ: Եւ ինն օրից յետոյ ինը Սցխիքայ[§] գնաց:

Իսկ ես այստեղ ցերեկով եմ եկել, այլ ոչ թէ գիշերով, ինչպէս որ նա է գրել: Եւ երբ նրանք զնացին, դրանից յետոյ եօթերորդ օրն էր, որ ես եկայ Սուրբ Յովհաննու վանքը, [իսկ] ժողովրդին յանձնեցինք հոգու շնորհներին: Ես չեմ զնացել Վահրամի մօտ, եւ ոչ ել նրանք կարող են այսցուցել դա: Բայց ես քեզ, տէ՛ր իմ, Վահրամի մասին կը վստահեցնեմ: Ինձ գրել էր [նա], թէ՝ «Իմ սրտին մեծ ցաւ է սուրբ եկեղեցուց ձեր հեռանալը, բայց քանի որ զնացիք, ճանապարհը կարելի էր մեր մօսով անցնել, որովհետեւ եկեղեցին մեծ քաժին ունի այստեղ, որը դոր պէտք է ընդունիք»: Այս նամակը տէր կաքողիկոսը տեսել է, քեզ՝ իմ տիրոջն էլ ցոյց կը տամ: Եւ նա դրան պատասխան տուեցի ու ասացի՝ «Հայա այնտեղից ինչո՞ւ զնացի, երէ ձեզ մօտ պիտի զայխ. որովհետեւ ձեր ու նրանց հայատը մէկ է»:

Եւ որ չար գործերի մասին էր գրել, թէ ծածուկ փախաւ, ապա ինձնից

բացի այլ մարդ չի կարող մեղաւոր լինել: Իմ մեղքը, որ Աստուած է միայն իմանում ու ես, չի կարող բացայաց երեւալ: Իսկ որ ծիսակարգը փոխեցին՝ յայտնի է: Եւ նետորական նպիլակապոսը, որին նշանակեցին, թէ [իբրև] վրացերեն դպրութիւնն էլ գիտէ¹⁶¹ ինչպէս արժան է, չհաշուած հայերենը, բայց [դա] անյայտ է¹⁶²:

Իսկ ձերդ փառաւորութիւնը թող տեղեակ լինի, որ [Կիրոնն] այդպիսի չար մերենայութիւններ շատ է իմանում եւ ձեզ հաւատացնել ու գործը խափանել է կամենում: Բայց Աստծու եւ ձեր հոգու համար ջանացէք, որքան հնարաւոր է, ո՞վ գիտէ, գուցէ Տէր Աստուած [մեր] տառապեալ աշխարհին փրկութիւն տայ ձեր փառաւորութեան միջոցով: Իսկ դուք Աստծուց վարձք կը ստանաք, իսկ մարդկանցից բարգաւաճութիւնը կը լինի: Եւ ես՝ անարժանս, քանի կենդանի եմ, քո եւ որդեակիդ հոգու եւ մարմնի փրկութիւնը կը խնդրեմ Տէր Աստծուց, որպէս իմ անձի համար:

Ողջ եղի՛ր Տիրոջով»:

ԳԼՈՒԽԻ ԾԹ

ՎՐԿԱՆԻ ՍԱՐՁՊԱՍ ՍՍՐԱՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸԸ ՑՈՒՐՏԱՒԻ ՍՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՍԱԿԻՆ

«Ձեր սրբութեան ողջոյնի գիրն ստացանք եւ Քրիստոսով ուրախ եղանք:

[Իսկ] որ զարմացաք նամակների այն պատասխանների համար, որ մեզ գրեց Վրաց կարողիկոսը, [ապա] մենք աւելի ենք զարմացել երկու կողմերից՝ նրա համար [զարմացել ենք], թէ ինչպէս է այսպիսի նահարեր սուս խօսքեր գրում մեզ, ու երեւ [ճիշտ չլիներ]: յանդիմանուելու էր ձեր եւ մեր կողմից: Եւ ձեզ Վրայ վստահ [զարմացել ենք], որ այստեղ մօս [եք], [ու] ինչպէս էք կանգնում եւ մեզ յորդորում ու նամակ գրել տալիս [Վրաց] երկրին, եւ ինքներդ ձեզ յանդիմանում: Բայց նաև կար այն քանը, որ նախապէս աշխարհականներից լսել էլնք ձեր սրբութեան մասին, իսկ այժմ Վրանէս Քերքողից աւելի [լաւ] տեղենկացանք, թէ ինչպէս հալածուեցիք ու եկաք այստեղ, եւ մանաւանդ՝ հոգեւոր գործերի մասին, որին տէր կարողիկոսը վերահասու է եղել, տեղենկացել եւ ձեզ ընդունել է, [ուստի] մենք քննութիւն անելու ի՞նչ պէտք ունենք:

Արդ՝ այժմ ինձ արքայից արքան շտապ պալատ է կանչել, թեզ [աւելի] վաղ ասացի, թէ կը գրեմ արքայից արքային, որ բարելարութեամբ իրաման տայ, եւ կը զնաս քո նկնդցում կը նստես ու քո հաւատով քո ժողովր-

դին կը կառավարես: Դու ասում ես, թէ Աստծերսէիր, Վահանը եւ եղբայրները չեն արել¹⁶³: Վեր կաց, ունդդէմ կամցնի՛ր. ես չեմ կարող սուր վերցնել եւ ամբողջ Վիրքի դէմ կոռուել: Այժմ քո հոգու եւ գործը նախ Աստծոյ ողորմութեանը եւ այս տէր կարողիկոսին թու յանձնուեն: Որովհետեւ մեզ գրուած էր [կարողիկոսի կողմից], թէ՝ «Կիրոնին երկու անգամ գրել ենք»¹⁶⁴: Բայց այս թող որ գրի երկու եւ երեք անգամ, ո՞վ գիտէ, գուցէ թէ ուղղութեան զան: Իսկ երեւ նոյն յամառութեան մէջ մնան՝ կը տեսնենք: Ուրիշետեւ նրա իսկ նամակում հենց գրուած էր, թէ մեր եւ ձեր հայրերը Երասաղիմի հաւատոն ունենին, եւ սուրբ Գրիգորն է այն տուել նրանց, մենք էլ նոյն ենք պահում: Այժմ դրան թող տէր կարողիկոսը պատասխանի: Երեւ մնում են նոյն խելազարութեան մէջ ու մեր միաբանութիւնից հեռանում են, թող Տէր Աստուած նրանց արինն իրենց զիսից պահանջի, իսկ մենք անպարտ կը լինենք:

Բայց թէ ինչպէս են այդ գործերն աւարտում՝ գրեցէք ինձ: Երեւ [նրանց] անհնազանդութեան¹⁶⁵ մասին լսեմ, եւ Տէր Աստուած յաջողակ պահ տայ, ապա ո՞վ գիտէ, թերեւս արդէն այս [կեանքում] Աստծուց [արդար] հաստուցում կը ստանան մեր մարմնաւոր տէրերի ծերողվ:

Ողջ եղի՛ր Տիրոջով»:

ԳԼՈՒԽ Կ

ՎՐԱՅ ԲԱԺԱՆՍԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԳՐՈՒԱԾ ՆԱՍԱԿՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԽՍԹԻ¹⁶⁶ ՍԱՍԻՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ

Գրուեցին եւ աւարտուեցին բոլորի նամակները, որ ուղղուած էին մի-մեանց Վրաց բաժանման մասին՝ սկսած Մովսէս կարողիկոսից մինչեւ այս պահը¹⁶⁷: Եւ դարձեալ գրուեցին երեք ժամանակներից իրաքանչիրի մեկնաբանութեան պատճենները¹⁶⁸, որ վերաբերում են Վրաց բաժանմանը:

Նախ՝ այն ամենը, ինչ որ Հայոց կարողիկոս տէր Մովսէսի ժամանակներում [եղաւ] իր նամակի ու պատգամի [իրովարտակի] միջոցով, եւ ապա երկրորդն [այն] էր, ինչ որ Վրանէս Քերքողի օրերում եղաւ, որը սուրբ Գրիգորի արսուի տեղապահն էր, նամանապէս նամակի եւ պատգամի միջոցով, իսկ երրորդը՝ տէր Արքահամի ժամանակ, որը Հայոց հայրապետութեան արողը ստանձնեց Մովսէսից յետոյ:

Արդ՝ Վրաց բաժանման սկիզբը եղաւ Մովսէսի ժամանակներում, ինչ-

պես թեզ տեղեկացնում են սկզբում գրուածները՝ Կիւրոնին ուղղուած նրա նամակում: Իսկ երկրորդը եւ երրորդը, որ եղան Վրթանէսի ու Արքահամի օրերում, դրանց մասին եւս տեղեկացնում է «Գիրք թղթոցը», որը գրուեց [նաեւ] այստեղ [այս] պատմութեան մէջ: Բայց այսքանով քող բարական լինեն մեր կողմից ասուածները:

ԳԼՈՒԽ ԿԱ

ԿԻՒՐՈՆԻ ԿՇՏԱՍՔՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ ԵՒ ԻՆՉ ՈՐ ՆՐԱ
ԿՈՂՄԻՑ ԳՐՈՒԵՑ ՈՒ ԱՍՈՒԵՑ ԱԲՐԱՀԱՍԻ ԵՐՐՈՐԴ
ՆԱՍԱԿԻ ԴԷՄ ԵՒ ԻՆՉ ՈՐ ԲԱՆԱՏՈՐ ՊԱՏԱՍԽԱՆՈՒԵՑ

Բազմաքի խօսքերից որքան կարողացանք ընտրելով՝ հաւաստին շարադրեցինք այս նամակներում: Բայց կային շատ այլ խօսքեր խրաքանչիւր նամակից յետոյ եւ [նամակներից] խրաքանչիւրի միջեւ, որոնք քաներ էին պատմում, որ մենք ոչ կարեւոր եւ ոչ անհրաժեշտ համարեցինք, խոկ հաւաստին ու մեզ համար պիտանին դրեցինք, շատը՝ մէկ անգամ, խոկ մի մասը կրկնակի՝ խօսքը ստոյգ դարձնելու եւ թեզ պարզաբանելու համար, ո՞վ հոգեւոր հայր:

Արդ՝ թիւ խօսքերի յիշատակութեամբ շարադրեցինք [նաեւ] Կիւրոնին կշտամբելու մասին, նաեւ այն, ինչ նրա կողմից [ասուեց] տէր Արքահամի երրորդ նամակից յետոյ: Նաեւ Կիւրոնի պատասխանի [մասին], որը հականատեց ընդդէմ Արքահամի ցնորուած շարափառութեամբ եւ շարի նախանձով իր կամքի կորստեան կայծակները ջրմխեց[†] եւ ջանք ու հնարամութիւն քաֆեց՝ խափանելու սուրբ հայրերի եւ երանելի վարդապետների բովանդակ աշխատանքը, խարիսկելով ու խախտելով սուրբ եկեղեցու կարգերը, եւ [մի] ողջ երկրի բարեապաշտութիւնը վերացրեց:

Նաեւ Աստծոյ մարմնացեալ Բանի [Քրիստոսի] եւ նրա նախախնամութեան միաւորութիւնը երկու բնութեան բաժանեց ըստ՝ Քաղկերնի շարափառ ժողովի: Նաեւ բազմաքի հայիութիւներ ու անօրէն հերձուածներ մուծեց եկեղեցի այս Կիւրոնը՝ իր հետ միաբանուածներով հանդերձ, որի համար քող Աստուած սրան եւ նրանց խորտակի: Եւ չարիմաց այս մարդու շարագրծ, շարահնար ու շար մտադրութիւնները թեզ ցոյց են տալիս իր նամակներն ու խօսքերը: Իսկ երէ համառօտ ցանկանաս, թեզ ցոյց կը տայ նաեւ [նրա] խօսքերի այս բացատրագիրը, որը մեր կողմից

[†]Հմտ. «Որպէս նետք հզօրի մինեալ կայծակամբը կաղնույ» (Սաղմ. ՇԺԹ 4):

կ'ասոի շար նամակագիր Կիւրոնի դէմ, եւ ասում է:

Արդ երբ լնթերցուեց Արքահամի նամակին ի պատասխան Կիւրոնի [գրած] երրորդ նամակը, [որը] նման չէր առաջին կամ երկրորդ նամակին, այլ ուրիշ [մի] բան էր՝ լի խծբանքներով ու խարդախութեամբ, [ապա Կիւրոնը] մեր կողմից [վերջնականօրէն] մերժուեց, որովհետեւ այն առաջն երկուսում նրա կեղծաւոր շարաթիւնը բաքցուած էր, թէպէտեւ տեղտեղ կծում էր, խոկ երրորդում լնթերցողների ականջներին լսելի եղան այն [մարդու] մտքի շարահաղորդ բառերը, որը եղաւ շարի ակնյայտ գտնողը, շար ուամունքի ուսուցիչը եւ այն շար սերմի երկրագործը [իսոյին տուողը], որը ցանուեց ցոյքնի վրայ սադրանքով Քաղկեդոնի տիեզերակործան ժողովի ու Լեռնի՝ յիշելու անարժան տոմարի, որոնք ինքն իր մէջ յայտնաբերեալ ցանեց Վրաց երկրում նրանց ինքնակամ ցանկութեամբ եւ յօժարական մտքով: Եւ կամ թէ կամեցել էր իր սխալ ու խսուրիչ, սնուտի ու դատարկ խօսքերով, չիմաճալով, թէ ինչ էր գրում իր շար նամակում իր շար կամքի պայմանը դնել, ինչ որ մտածում էր: «Իսկ երէ հաւատի մասին ինձ գործք, ասում է, ինձնից պատասխան չէր ստանայ»: Եւ դարձեալ, թէ՝ «Ես Հայատանով ինչ-որ տեղ ճանապարհ անցնելուց բացի ուրիշ մի բան չունեն [անելու]:»

Եւ այսպէս իր կորստեան այս մահուան վճիռը կայացրեց, եւ այն էլ՝ ոչ թէ գրաւոր կամ զիտութեամբ ասելով անջատուեց մեզնից, այլ մարդկային ինչ-որ ուսմունքով եւ խաւարի իշխանութեամբ վարուեց՝ իրեն գործակից գտնելով հաւատի հակառակ այն նեսուրական խուժիկին ու իր համախոներին, որ նրա հետ էին, եւ նրանցով էր մարտնչում ընդդէմ սուրբ հայրերի եւ երանելի վարդապետների կենսամիտ վարդապետութեան, որոնք ուղիղ դաւանութեամբ մեզ տարան Աստծոյ Աւետարանի փառքին: Իսկ որ մինչ այն ժամանակը իր անօրէն ունայն մտադրութիւնը քարուն էր պահում [դա] մեր կողմերից երկիսի ունենալու պատճառով [եր]: Նախ մինչեւ [այդ] կենդանի էր մեր հայրապետ Սովուսը, որի ձեռքից նա ձեռնադրաբիւն էր ստացել: Որովհետեւ Սովուսի ժամանակ վրայ հասաւ Կիւրոնի մահուան երկունքը եւ հոգու հիւանդութեան հեծեծանքը, որով յացել էր երկունքի ցաւերը, խոկ Վրանէսի ու Արքահամի օրերում ծնուեց անօրէնութիւնը, եւ իր նոյն ցաւերի մէջ մեռաւ եւ իր հետ մեղքը մի ողջ ազգ:

Բայց որովհետեւ Հայոց աշխարհն անիշխանութեան մէջ ընկաւ եւ հռոմներն ու պարախկները իրենց միջեւ բաժանեցին [Հայատանը] Սուրբի կայսեր եւ արքայից արքայ Խոսրովի ժամանակներում[‡], [Կիւրոնն] ի-

[‡]Ինձ Հայատանի երկրորդ բաժանումը 591 թ:

բենից դեմ նետեց մեր կողմի երկիւն [ու] կասկածանքը, եւ դրա համար համարձակ վստահանալով երկու իշխանութիւնների միջեւ՝ հակառակուեց, ընդդեմ դարձաւ սուրբ հայրերի Աւետարանի Ծմարիխտ քարոզութեանը, ինչպէս առաքեալների³⁶⁹ ժամանակ Եղիաս նոզը եւ կամ Կերիխոսու³⁷⁰ կախարջը եւ կամ նոյն ինքը կախարջների մայր Սիմոնի: Հակառակուեց Տիրոջ նախախնամութեան³⁷¹ վերաբերեալ երկու՝ մարգարեական եւ առաքելական պատուիրաններին եւ մեզ մօտ միացեալ քարոզուող բնութիւնը երկու բնութեան բաժանեց: Նաեւ իրենց խաւարային խորհուրդների ալեկոծ խորութեան մէջ այս [բնութեան խնդիրը] ներհակ ու հակառակ դրեց իր հակածառ բարբաջաններով:

Եւ ես այնպէս եմ կարծում, թէ հենց սկզբից մարդասպան է եղել այն նենգագործը՝ իրեն տեղից տեղ փոխելով եւ ամեն բանում սուստ գտնուելով: Բայց ես սրա վրայ խիստ զարմացած չեմ, քանզի սուստ ու ի սկզբան Տիրոջ կողմից վկայուած մարդասպան է նաեւ նրա հայրը՝ սատանան: Քանզի նա էլ Աստուածորդուն նկատմամբ ունէր իրեաների հայլոյութիւնը: Իսկ սա [Կիրոնը] ոչ [միայն] մարդասպան էր, այլեւ հոգեսպան, որովհետեւ անմեղ էակների հոգիները, որոնք դեռ երեխայամիտ մարդիկ էին, ջանաց սպանել: Կամ թէ սպանեց իսկ գրով ու խօսքից Հոգին հեռու փոստեց նրանցից, իսկ օտարամուտ շարը եռթեամբ ամրողովին իր մէջ բնաւորեց, ինչպէս որ սովորութիւն ունի շարը բարու դէմ մարտնչել եւ մտնել բռնարարել ազատութիւնն ու հակառակի միջոցով հակառակների հետ շտապել, եւ այդ անում է իր համակիրների միջոցով: Եւ այստեղ հենց դա էր մեզ վիճակուել տեսնելու, որովհետեւ իր անհերեք եւ անճոռնի, անվայել ու խոռվարար խօսքերն այստեղ-այնտեղ սփոնով՝ ջանք էր քափում դառնալու Սամարտիկոս [խոռվարար]³⁷² եւ իր վարդապետութեան նոյն շար սերմն է տալիս եւ արդարութեան խօսքը կիսատ-պուտ կատարողներին խմենում շարախու ցաւախառն մրուրը, որն ինքը հնուց ուներ, եւ որը նենգօրէն, դառնապէս ու դժնիակ կերպով անթշշկելիօրէն խմենում են իրեական զանգուածին իր քացախուտ շարութեան մէջ, որոնց մրուրը չի սպառում: Եւ այնպէս հակառակորդ լինելով աջակողմին եւ իրեն թերելով ծախակողմը՝ հոխորտում է, տիհաս մտքերով ընթանում առասպեկների սնուտի խօսքերի հետեւից, մարդկանց պահում սատանայական ու դատարկ, խաբերայական պատուիրանով եւ այդպէս բաց քողում Աստծոյ պատուիրանը, որպէսզի մի՛ գուցէ կարողանայ աւարել ու գերել իր հետ համաձայնող պարզամիտներին:

Նաեւ, ինչպէս որ պատմուեց, նախապէս զատեց իր հօտից ու հալածեց Տիրոջ տանից Ցուրտաի եկեղեցու այս առաջնորդին, որը համարձա-

կորեամբ Աստծոյ խօսքն էր ասում նրան, որտվիետեւ նախքան նրա շարութեան յայտնի դառնալով կասկածելով [այդ մասին՝ եավիսկոպով] յանդիմանում էր նրան, ինչպէս որ ինքն է յիշում իր նամակում, եւ այն էլ ոչ թէ կասկածով, այլ սոոյց կերպով: Իսկ նա [Կիրոնը] նրա հետ չխամաճայնուեց եւ շընդունեց նրա վարդապետական խրատը, մինչեւ որ ընկաւ կորստեան խորխորատը:

Ապա այնուհետեւն դաւադիր լինելով իր վերքերի ու խաւար մտադրադիմների մէջ՝ [Կիրոնը] կամենում էր զաղտնի սպանել անմեղին, բայց խփուելով այն ժայռին՝ փշրուեց (ինչպէս որ հրեաները [փշրուեցին] Փրկչի կողմից), եւ ժայռին ոչ մի վնաս չտալով՝ ինքը ժայռին բախուելով՝ խորտակուեց: Չանզի կամեցաւ նրան հեռացնել իր ժառանգործինից, [բայց] ինքն արտաքսուեց անվախճան կեանքից, քանզի իրեն համական գտաւ այն նեստորական խուժիկին եւ նրա նման շատերին: Որովհետեւ Կիրոնն ինքը շատերի անունից է խօսում, եւ ոչ թէ մէկի, քանզի Արքահամն գրած իր նմանակի մէջ ինքն է ասում [դա]: «Եթր իմացանք, ասում է, նրանց չար աղանդի մասին, հեռացրինք մեզմից, եւ դրանից յետոյ ոչ ոք թէ համարձակում ողջոյն տալ նրանց»:

Բայց [իրականում] նրան ծածկելով՝ բաքցնում էր իր մօտ եւ այս կամ այն բանն էր պատճառարանում եւ նրանցով հանդէս էր զալիս ուղղափառ ծմբարիս հաւատիք դէմ, ինչպէս որ մի ժամանակ ի սկզբանե սատանան դրախտում օծով էր հանդէս զալիս մեր նախահօր դէմ: Չանզի ինչպէս նրանով եւ նրա միջոցով մահը աշխարհ մտաւ, նոյնպէս էլ սրա միջոցով բազմաթիւ հերծուածներ ու հայլոյութիւններ մտան եկեղեցիները: Ընդ որում իրեն էլ ներկայացնում էր լուսոյ իրեշտակի կերպարանքով, ինչպէս որ սատանայի սովորութիւնն է [այդպէս] կերպարանուել: Եւ զարմանալի չէ, որ սա էլ նոյն կերպ էր անում, որովհետեւ նրա [սատանայի] խարկանքը կատարեց Վրաց աշխարհի համար: Չանզի վարագործելով իրեն՝ շարին բարի էր ներկայացնում, [եւ] այն, ինչ որ իրօք խաւար էր, լոյս էր կերպարում, եւ [իրքեն] կամենալով լինել օրէնքի վարդապետ, խոտովելով իր խօսքերի դատարկութիւնից՝ չէր իմանում, թէ ինչ խօսէր եւ թէ ինչ մասին էր պնդել: Եւ Հիմենիոսի ու Աղեքսանդրի նման մատնուեց սատանային, որ խրատուի՝ չհայլոյելու: Որովհետեւ ասում են, [թէ] այն Կիրոն Ակուտրացին ծանր ու շարորակ հիւանդութիւնից սատանելով աւարտեց իր կեանքը, քանզի իրենից հեռացրեց սուրբ մտքի հաւատը եւ նաւարեկուեց ծմբարիս հաւատքին բախուելով, [եւ] ոչ մի բան նրան չօգնեց հնազանդութեան զարկ բուժուելու:

Իսկ այն ուղղափառների եկեղեցիները, որ աստուածային պատուի-

բանի գիտելիս եւ սովորել էին Տիրոց տանը եւ իրենց մէջ բերել արմատաւորել էին Աւետարանի խօսքն ու գործել առաքելական քարոզութեան ճշմարիտ խոստովանութեան հաւատով, չասանուեցին՝ այն խարերայի սխալական չար վարդապետութեան շփոքնունքից դրդուելով։ Քանզի գիտուրագրուած էին գեղեցիկ զինուորութեամբ եւ սնուել էին հաւատի խօսքերով ու բարի վարդապետութեամբ, նաև հետեւել էին ճշմարտութեանը եւ մինչեւ այժմ կան ու մնում են յենուած եւ յոյս դրած Տիրոց օրէնքների վրայ։ Եւ Աստծոյ պատուիրանների բարեպաշտութեան սահմանն իրենց մէջ ունենալով արմատաւորուած, ինչպէս ասացինք, օրէնքով պայքարում էին չար ոստիի դէմ, որ դեռնէս կան ու մնում են նոյնը եւ միշտ նայում են այս մոլորութեանն ու վարդապետութեանը դեւերի կեղծաւորութեամբ՝ տանջուելով իրենց խոճմտանքից։ Խսկ մերոնք եւ մերոնց համար նրա կողմից հալածուածները հետեւեցին այն սուրբ ու աստուածահանոյ հայրերի ուղղափառ խոստովանութեան բարեպաշտութեանը, որ հաւարուեցին Նիկիայում, Եփեսոսում եւ Կոստանդնուպոլսում։ Եւ նրանք ստացել էին [այդ ուղղափառ խոստովանութիւնը] սուրբ առաքեալներից, խսկ առաքեալներն ընդունել էին Սուրբ Հոգուց, եւ ուղղափառ խոստովանութեան գեղեցիկ հաւատը գործում է մեզանում ի սկզբանե եւ մինչեւ այժմ, եւ նրանց հետ մենք դաւանեցինք ու կը դաւանենք մինչեւ վերջ։ Եւ նա [Յուրտափի եպիսկոպոսը] այլ նոյն բարեպաշտութեան մէջ աշքի ընկերով՝ նոյնն էլ աւանդեց իր եկեղեցուն հաւատի խօսքերով եւ բարի վարդապետութեամբ, քանի դեռ Կիւրոնի կողմից չէր հալածուել, խսկ հեռացուելուց հետոյ էլ նոյնը հեռուից գրաւոր էր հաստատում։

Խսկ քանի դեռ Կիւրոնը չէր ունայնացել, որեւէ մէկի դէմ պատախան չէր տաիս՝ գրաւոր կամ քանաւոր, մինչեւ նրան Վրբանսի գրելը, այլ միայն Արքանսի խոնարիութիւնն էր ցոյց տայիս, որը երանելի Կիւրեղի ժամանակ էր, եւ կամ նոյն իրեն՝ Սիմոն կախարդի [խոնարիութիւնը], որը Պետրոսի ժամանակ էր, թէկուզ եւ գրէր որեւէ մէկին կամ խօսէր՝ մինչեւ Արքահամի երկրորդ նամակի պատախանը։ Բայց երբ Յուրտափի եպիսկոպոսի կողմից գրաւոր կերպով, խսկ Վրբանէս Քերբողի կողմից խօսքով տեղեկացուեց Կիւրոնի կեղծաւոր կորուստը, նոյնպէս նաև Սմբատ մարգարանի, իշխանների, շինականների կողմից, որոնք իմացան նրա մոլորութեան մասին, խսկ յետոյ ստոյզ ու հաւատի [Արքահամին] իր երրորդ պատախան նամակից իմացուեց Կիւրոնի քացայայտ շարութիւնը՝ ամբողջական դարձած եւ մոլորութեան աւարտին հասած, ապա եւ նա [Արքահամը] շրջաբերական նամակ գրեց նրա դէմ ուղղափառների բոլոր եկեղեցներին եւ նրան կտրեց ու հեռացրեց Սուրբ Հոգու սրով։

Եւ գրեց, որ զգուշանան նրանից [Կիւրոնից], նրա նորահունչ չար վարդապետութիւնից եւ [Վրաց] աշխարհի հետ սիրուց ու խնամութիւնից, նաև՝ մկրտութեամբ նրանց հետ միաւորուելուց եւ կամ միմեանցից [ամուսին] առնելուց եւ այլ տեսակի հաղորդութեամբ միաւորուելուց, այլ միայն իրաւունք ունենալով] իրերն այլադաւանների հետ՝ ինչ-որ բան վաճառել կամ գնել միմեանցից։ Նաև՝ [Սուրբ] Խաչին, որ Սցխիքայինն է եւ կամ Մանգրիսինը¹, ոչ որի բոյլ շտաղով գնալ նրանց մօտ երկրպագութեան, եւ կամ խափանից ուխտի [գնալ] մի այլ տեղի որեւէ եկեղեցի, եւ կամ՝ որտեղ որը ուխտի պատրուակով անուանում են Խաչ ու դրանով խարում անմեղների սրտերը։ Այս ամենի վրայ կապ ու կնիք դրեց՝ շարաշար նզովքով ու տայֆի սպառնալիքով՝ հոգեւորականների համար, եւ տուգանքներով՝ աշխարհականների։

Եւ այսպէս Տիրոց բարկութեան բաժակը հասաւ² վրացիների վրայ՝ նրանց անեծքով ու ցաւազին հեծեծանքով պատելով։ Որպիտեսել նրանք չմնացին Տիրոց ուխտին հաւատարիմ եւ չկամեցան զնալ ըստ նրա իրաւունքի [օրէնքի], այդ պատճառով բարձիրողի արուեցին՝ զնալու իրենց կանքով։ Եւ այս եղան նրանց Կիւրոնի պատճառով, որովիտեսել նա իժից խայթուց անասէի, անբաժեկի վերքերով։ Նաև առաջին չար ու հայրեայ օծից զարկուեց, քանզի քանդեց հայրենի պարիսալ եւ եղան շարիքներ գտնող ու հակառակորդ՝ իր նորահունչ խօսքերի ինչ-որ ստանուն գիտութեամբ եւ հակառակութիւն ու կրի զցելով երկու կողմերի միջեւ։

Խսկ հապա ի՞նչ ասեմ նրա մասին եւ կամ ի՞նչ գովասանք ասեմ նրա նամակներում մեր մասին գրուած պարաւանքներին՝ հեզնելով նրա անմիտ իմաստութիւնը, աներկիւլ վախուորածութիւնը, որ իր խարերայական շարութեամբ խարեց ու հաւատքից խախտեց Արեաց [Ենքակայ] այն ամբողջ Վրաց երկիրը, այդ անզգամն ու անմիտը՝ իրեն իմաստուն կարծելով։ Եւ սրանով իմաստուն Սողոմոնի խօսքն է յարմար գալսի նրանց, որոնց բում է, թէ իրենք իմաստուն են [իրենցով]։ Քանզի Սողոմոնն ասում է. «Վայ նրանց, որոնց բում է, թէ իրենց իմաստուն են իրենց անձերով»³։ Խսկ աստուածային առաքեալն ասում է. «Մբութեամբ խաւարեցին նրանց սրտերը, եւ իրենց իմաստուն էին համարում [ու] յիմարացան»⁴։ Խսկ սա իր անմտութեամբ այդպիսին եղան. իրեն իմաստուն կարծեց այդ անմիտը եւ Աստծոյ ճշմարտութիւնը փոխեց ստորեան հետ, քանզի ատելութիւն բերուց նրա բերանով, եւ սուր շողաց նրա շրբունքներին, եւ նենգութիւն

¹ Խաչ Մանգրեաց Սուրբ Խաչը (բնագրում այստեղ՝ Մանգր)։

² Ես. Ե 21:

³ Հոմ. Ա 22:

գտնուեց նրա լեզուի վլայ, եւ ամեն բանով ամեն ինչի մէջ էլ խուսան դրսու եկա: Որովհետեւ խոտորուեց ուղիղ ճանապարհից, որին ուղղափառությամբ հետեւեցին մեր հայրերը եւ մեզ սովորեցրին նոյն [ճանապարհով] լոնքանալ: Եսկ այն խեղճն ու քշուառականն բողեց սուրբ հայրերի օրէնքները եւ հետեւեց խուժիկին ու մոռացաւ⁷⁴ երանելի վարդապետների պատուերը: Ընթացաւ նեստորականների յետեւից, իրեն խոհեմ ու իմաստուն կարծելով՝ անօրինարար զայրացրեց Սուրբ Հոգուն: Անօտակար ջանք բափեց եւ իր սնուտի ցանկութեամբ խոտորեց շատերի միտքը եւ այն, որ մեր սուրբ հայրերը եւ ուղղափառ վարդապետները միմեանց համաձայնութեամբ եւ Սուրբ Հոգու հաճութեամբ աւանդեցին մեզ, այսինքն՝ առաքելական վարդապետութիւնը եւ իրենց դաւանութիւնը, որպէսզի մենք ճշմարիտ խոստովանութեամբ պատուենք, պաշտենք եւ մեր Տիրոց մարդեղութեան տօնը տօնենք, որ մինչեւ այժմ արմատաւորուած թերում են ուղղափառների եկեղեցիները:

Սրան ոչ որ հակառակ չկանգնեց, բացի միայն նրանից, որ հակառակ կանգնեց իրեն եւ հերետիկոսների⁷⁵ հետ դատաստան է ընդունում, որոնք մերժուելով սուրբ հայրերի ու վարդապետների կողմից՝ կործանուեցին: Եւ արդ՝ որովհետեւ սրանք այսպէս սուրբ ու բարեպաշտ հայրերի կողմից մեզ աւանդուեցին, ինչպէս ասսացինք, սրանից յետոյ նաև յաջորդը յանձն կ'աւանդն պահել ու կատարել, որպէսզի թերեւս կարողանանք զգուշանալ չար ոսխի սուտ ուսմունքից եւ չար սերմը ցորենի վլայ սերմանողից՝ գիշերը ցանող չար մշակից եւ ճշմարտութեան թշնամուց: «Այսուհետեւ, ասում է, գիշերային աղջամուղջի սեսութիւն սերմանողին ծեզնից զգուշորեն հեռացրէք»:

Արդ՝ առանելով սուրբ հայրերի պատուէրը՝ մենք չարը չար մտածողի գլխին կը կոտսենք եւ դարձեալ չարը չարով կը կորզենք, որպէսզի ցաւերը նրա գլխին կպչեն եւ ամօրենութիւնները՝ նրա ճակատին: Որովհետեւ քարածիզ եղաւ իր խօսքերով եւ Քարծորեալին խօսքեր ասաց, եւ ըստ իմաստունի խօսքի՝ «Իրեն ընդունեց՝ ինչ որ նետեց», [եւ] «Եթէ մէկը դէպի վեր քար նետի՝ իր գլխին կ'ընկնի»: Եւ սուրբ հայրերից միւսն էլ հաստատում է այս խօսքը. «Եթէ մէկն, ասում է, հերծուածող անմիտ կենդանի է, թող խոնարի մնայ, ապա թէ ոչ՝ ճշմարտութեան խօսքով կը քարկոծուի»:

Քանզի Քրիստոսի՝ մարմնով մարդանալը եւ մարմինը Հոգուն միասրեւ շիռոբուած ու խառնակուած համարեց այն աւերիչը՝ Վրաց կարողիկոս անուանուած Կիրոն կոչեցեալը, որը եղաւ Կերինքոսին⁷⁶ հաւասար,

⁷⁴ Ոխտանեսն օգտագործում է հերեւովտացն եղորյը:

որից երանելի առաքեալ եւ աւետարանից Յովհաննէսը վախենալով՝ բաղմիքից փախաւ: Կերինքոսին ներսուն տեսնելով: Եւ կամ թէ ծնունջ [եղաւ Կիրոնը] Քաղկեդոնի անօրէն ժողովի եւ պտուս՝ Լետնի աղանդի: Քանզի իրեն պատրաստեց նրանց յետեւից այլ Քրիստոսի քարտգելու, որը Պողոսի կողմից քարոզուածը չէր, եւ Հոգին օտարացնելու, որն առաքեալներից ու նրանց կողմից քարոզուածներից ոչ ոք չարեց, եւ կամ օտար աւետարան ընդունելու, որը սուրբ հայրերից ոչ ոք չէր ընդունել եւ կամ [ոչ էլ] երկրորդ սուրբ առաքեալը՝ մեր երանելի սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, որը մեզ ավորեցրեց ճշմարտութիւնը:

Եւ այսպէս ապա շարիքներ խորհուր կամ գտնողը շրաւականացաւ՝ մնալու իր հնացած շարութեան կամ թէ անօրէն հայիոյութեան մէջ, այլ դարանակալօրէն իր մօս նստեցրեց այն խուժիկին եւ նրա նման նեստորականներին: Եւ հենց ինքը Նեստոր եղաւ՝ եւ երկրորդը, եւ առաջինը, որը դէպի մեզ փշեց Արիստոսի չար ու աղտեղի մտածմունքները՝ տարագրելու եւ գերեւու համար նրանց, ովքեր դեռեւս չին խոտորուած նրա չար խմորի շնորհի (այդ [խմորը] կենդանարար հաց չի դառնայ), եւ կամ փաղաղից, որ այն խուժիկը [իրբեւ] փարիսեցիների անաստուած վարդապետութեան նշխար թերեւ հրեական աղանդի հին ու քացախսու շարութիւնից եւ նրանով առհասարակ խմորեց Վրաց ամբողջ երկիրը: Եւ այսպէս Կիրոնը նրանով մաքառեց ու կրուեց ճշմարտութեան դէմ իր անարժան գրութեան եւ չար նամակի միջոցով, որ ուղղուած էր Աքրահամին, եւ այդպէս դարձաւ ժառանգորդ այնպիսի անէծքի, ինչպէս Կայէնի անէծքի ծնունդ այն մեստրացի քուշանը, որը փորձեց ուսուցիչ դառնալ Սէմի՝ Արեաց երանելի ազգին:

Եւ արդ՝ որովհետեւ մեզ այսպէս վիճակուեց պատմել Կիրոնի մասին, ապա թող այստեղ նշանակուի եւ հեռու տարուելով տարագրուի մեզնից նրա անհանձար ու անքնտրենի միտքը, եւ նրա հերետիկոս լեզուն [թող] կապ ընկնի նենգութիւն խօսելուց, եւ նրա ծաղրական ու ցնորական մտքի խօսքերը իրբեւ ինչ-որ փշրանք հեռու թքելով՝ թռնենք եւ ջանանք խոպան դարձնել նրա դժոխընքաց ճանապարհը, որ նրան բում էր, թէ ուղիղ է: Քանզի աստուածային Սողոմոնն ասում է՝ թէ՝ «Կան ոմանք, ում բում է թէ իրենց ճանապարհներն ուղիղ են, բայց նրանց [ճանապարհների] ծայրը նայում է դժոխընքի յատակին»⁷⁷:

Արդ՝ այս մեր ասածները մինչեւ այստեղ թեզ այս մասում բաւական թող լինեն, [իսկ] մնացածը կը թռնենք այլ տեղում ասելու:

⁷⁵ Առակ. ԺԶ 25:

ԳԼՈՒԽ ԿԲ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՇԵՎԻ ԲԱՑԱՐՈՒԹԵԱՆ ՄԵՍԻՆ. ՈՐ ՎԵՐԱՎԵՐՈՒՄ Է ԿԻՒՐՈՒՄ [ՁԵՌԱԶՈՎՎԱ] ՎՐԱՅ ԲԱԺՄԱՆԱԾԱԸ

Այժմ թեզ գրաւմ եմ ինձին որ մենք ենք վերահսկու եղել Վրաց բաժանման առաջին պատճառի մասին, որովհետև «Գիրք թվորում» պատմար այլ պատճառի [մասին] գրաւած, քայլ միայն այն նետուրական խոժիքը, որի մասին Կյարանին գրեց երանելի հայրապետ Սովուսք, որ միշտ այժմ լիչամ է:

Այդ կ'անցման նամառօտակի յիշառակերտ առաջին պատճառի մասին, որի առջի վերեւում խոտուացանք ստու՝ յետ քաղներով այն խոժիքին: Տանզի մենք ստոյգ վերահսկու եղանք [մի] շարք գրայցների լոսման միայն մէկից կամ երկուսից, կամ երեքից, այլ շատերից [և] շատ անգամ, և այժմ քա հայրապետանք կ'ասեմ քառ իմ առաջին յանձնառութեան, ու վ հոգեւոր եղինակ, որովհետև նախապէտ պատուիք ստացայ թոգինք, որ մենք ամեն քանի [խամար] եղա տանենք և հասաւովին ի լրոյ եւ ի գրայ շարադրենք այս պատմութեամ մէջ: Իսկ մենք յանձն առանք, ու քանզի մեզ քա կողմից վատահետք այս գործի պատասխանաւորինքն երբեք գունց շամեն քա երանանք, այլ ամենայն ջանք գործադրել եւ յանամքով եղավալ, որքան մէր միտքն ու կարողութիւնը կը քաւականացնեմ: Ուսովհետև քա ցանկաթեան պարուացանքն է այդ խնդրի վերաբերեալ համը քառայ քա աց մնաք, [աստի որոշեցինք] մեր տկարութիւնը մի կողմ դնել եւ քա երանանի կատարման դժուարութիւնը եեշտութիւն [խաճոյք եամարդք]:

Այդ առաջին պատճենի մասին այս համառօտակի յիշառակումից յետոյ կը շարադրենք այն, ինչ որ պատմուեց քառ իրենց ժամանակների եերականութեան խարաբանչիքն [իր] տեղում: Իսկ դրանից յետոյ կը յիշառակենք եւ այն, ինչ որ պատշաճ կը համարենք քառ մտքի եերականութեան թերման:

Այդ ծանօթացիք նաեւ մեր պարզաբանածին այս [միւս] խնդրի մասին, թէպէտեւ հաւաստի քննութեան մէջ [զրուտ] մեր ջանքը փոքր է թում: Որովհետև շնայած թեզ եեշտ կը քուայ կամ կը գուարճանաս իմ ասսեների վյայ, սակայն միմեանց եետ համեմատեզք իմ խորհուրդն ու ցանկութիւնը արդ ընկալիք հաւաստի քննածն, որովհետև քառ մեր զօրութեան որքան կարողացանք ստոյգ քննեցինք շատերից լսածները, ինչպէտ

*[†] Հետեւակ քառ տուեալ դէպրու պէտք է ընկալիք իր առաջնորդ նշանակութեամ:

որ վերեւում ասացինք: Բայց [ճշմարիտ] վստահելին գրասեր մարդկանցից սովորեցինք, որ կարծում եմ քաւարար է: Որովհետեւ այն նոյն առաջին պատճենները, որ իրենց նամակներում [կան], ստոյգ պատմուում են՝ «Գիրք թվորում», եւ մենք լստ մեր կարողութեան եւ [մեր] մտքին վերահսկու լինելով՝ նոյնը գրով պատմեցինք թեզ: Որովհետեւ դրանք միմեանց միջեւ վիճարանութեան պատճենները [մեկնարանութիւններն] էին, իսկ սրանք՝ խապառ [իրարից] հեռանալու պատճառներն են: Քանզի այնտեղ լուցա ցաւը, իսկ այստեղ ծնուեց անօրէնութիւնը, այնտեղ հիւանդացաւ եեծծանըով ու քաղցուկ, իսկ այստեղ մեռաւ մեր [Սուրբ] Հոգու մահով:

Որովհետեւ դա այսպէս են պատմում ծերերի աւանդութիւնից, թէ Հայոց կարողիկոս Արքահամի ժամանակներում, երբ սա նստեց իր հայրապետական արռողին, նրա մօտ եկան Վրաց եւ Աղուանից կարողիկոսները, քանզի այն ժամանակ նրանք սուրբ Գրիգորի արռողի արքեախսկուպութեան աստիճան ունեին, եւ լստ նախկին հայրերի սահմանման ու սովորթեան եկան Արքահամի մօտ նրա հայրապետութեան առաջին տարում ի սէր եւ ի հնազանդութիւն: Իսկ սա նրանց ընդունեց մեծ պատուկ և նոգեւոր սիրով, ինչպէս հարկն է, եւ նրանց նստեցրեց իրաքանչիրին իր գահաւորակին, ինչպէս որ նրանց նստելու սովորութիւնն էր: Եւ ճաշի ժամին տէր Արքահամի ծեռքից առան հացը, օրինեցին ու կերան մինչեւ գինի [լուսակիր] ժամանակը: Ապա տէր կարողիկոսն առաւ [զինին], օրինեց եւ նախ տուեց Աղուանից կարողիկոսին, իսկ երբ կամեցաւ յաջորդը տալ Կիւրոնին, նա չկամեցաւ վերցնել՝ յստոռուելով իր մտքում: Իսկ երբ Արքահամ կարողիկոսն այս տեսաւ, այլ պահին ոչինչ չսասց: Ապա երբ ստիպէց Կիւրոնին պատճառն ասել, հարցրեց [նրա] արարքի որպահութեան մասին: Իսկ նա պատասխան տալով՝ ասաց. «Ինչո՞ւ եղաւ իմ այս ստորացուելու քա կողմից, քանզի ես աւելի աւագ եմ, քան նա եւ [աւելի] մեծ իմ տնուկ [երկրուով]: Իսկ այս տանը գահերեցութիւնը նախ իմն էր եւ ապա դրանը, որովհետեւ ես իմ վիճակով աւելի վեր եմ քան դա, եպիսկոպոսների [քանակով] եւս առաւել, հաւատով ել դրանից աւելի վաղ եմ՝ [սկսած] սուրբ Գրիգորից եւ այս կողմ»:

Իսկ Արքահամը, քանզի կամեցաւ խաղաղեցնել, սկսեց արդարացնել նրան [Աղուանից կարողիկոսին] եւ ասաց. «Ես այդ ամենը զիտէի, ո՞վ տէր եղբայր, միաժամանակ այդ պատին արեցի նրա ծերեւուան համար՝ սովորելով Սուրբ Գրքից: Զանզի իմաստուններից մէկն ասաց, թէ՝ «Սայտակ մազերը պատուեցի եւ ծերերի առջեւ ուորի կանգնեցի»: Եւ դարձեալ աստուածային Պօղոսն [ասում է], թէ՝ «Ծերունուն պէտք է ընդունես իրեւ հայր», իսկ մէկ ուրիշն [ասում է], թէ՝ «Ծերութիւնն աւելի պատուական է»:

Եւ Մովսէսի ժամանակ էլ իբրև խրատ Խորայէլի ժողովրդին [Սուրբ] Գիրքն ասում է. «Սպահտակ մազերի առջեւ պէտք է վեր կենաս ու պատուես ծերունու երեսը, եւ [պէտք է] երկխնդես քո Աստծուց»: Եւ սրանց նման այլ խօսքեր ասում են [նաեւ] այլ տեղերում: Արդ՝ քանզի նա ծեր էր, իսկ դու երիտասարդ, նրան այլ պատիւը ոչ թէ մեծութեան համար արեցինք եւ ոչ էլ այլ քաներով նրան նախամեծար համարեցինք, այլ միայն ծերութեան համար»:

Եւ այսափ և այսպիսի խօսքերով խօսեց նրա հետ, [քայլ] չկարողացաւ հաշտութեան թերեւ: Եւ վեհարանի այլ պաշտօնեաներ, որ կային [այնտեղ], նոյն խօսքերն էին ասում, որ թերեւս խաղաղուի գրգռուածութինից եւ լրի: Քայլ նա աւելի ու աւելի էր գրգռում ցատումով, իրեն նրան խոռվութեան, որ կարծում եմ, [թէ] միայն խոռվութեան պատճառ էր որոնում: Եւ այնուհետեւ նրանցից ոչ ոք չկարողացաւ նրան լրեցնել, քանզի թէպէտես կամնցան վերացնէլ այն պատճառը, որ կամնում էր պատճառներ [համարել] չկարողացան: Եւ այնուհետեւ խաղաղութիւն չեղաւ երկուսի միջեւ: Քանզի [Սուրբ] Գիրքն ասում է. «Խաղաղութիւն, խաղաղութիւն, քայլ այնտեղ խաղաղութիւն չկար»:

Ապա այնուհետեւ Կիրունը վեր կացաւ ու հեռացաւ սեղանից: Եւ ոչ ոք այնտեղ եղած մարդկանցից չկարողացաւ նրան յետ դարձնել: Նա մի բաժակի փոխարէն անդրանիկութիւնը վաճառեց՝ ինչպէս այն Եսաւը հեռում, որ մի կերակրի համար անդրանիկութիւնը վաճառեց իր եղբօրք՝ Յակոբին. եւ չնայած նա յետոյ արտասուրներով զղաց, [քայլ] ներում չգտաւ: Իսկ սա ոչ առաջ զղաց, եւ ոչ՝ յետոյ: Նա կերակուր առաւ եւ օրինութիւն տուեց, իսկ սա բաժակ տուեց եւ անեծք առաւ իր անձի համար՝ [եւ] առանց բռնութեան:

Արդ՝ սա մեզ աւանդութիւնից է հասել, այլ ոչ թէ գրով, քանզի Սուրբ Գիրքը սովորութիւն ունի նաեւ հերանուների զրոյցներից խօսք ասել եւ վկայութիւն թերեւ: Նաեւ առաքեալն է յիշում այս խօսքը իր այն թղթում, որ ուղղուած է Տիմոքեոսին. «Պէտք է, ասում է, նաեւ հերանուներից օգտակար վկայութիւններ վերցներ»: Եւ դարձեալ գրեկի առասպելներից [յիշենք] այն խօսքը, թէ՝ «Ուտնեք, խմենք, քանզի վաղը մեռնելու ենք»: Եւ այս աւանդագրոյցներում Կիրունը կործանուեց ըմպելիքի համար: Իսկ աւելի կատարեալ անձանցից մէկը, որի անունը եւ խօսքը յիշում է պատմագիրներից մէկը, այսպէս է ասում. «Ուղոմափիոսոս անունով մէկն ասաց՝ «Կը պատմեմ ձեզ, ասում է, աւանդութիւնից մեզ հասած անզիր զրոյցներ, որոնք գեղուուներից շատ-շատերը պատմում են մինչեւ այժմ»: Եւ դարձեալ, թէ՝ «Ումանք այլատեսակ, եւ ոմանք այլաբանօրէն մատեան-

ների [գրքերի] զրոյցներ էին տալիս»⁷⁷: Արդ՝ մենք ոչ [թէ] գեղջուկներից, ոչ էլ գուեիկ առասպելներից [իմանալով] ասացինք, այլ զրասէր չափազանց զրոյակ մարդկանցից սովորելով՝ պատմեցինք թեզ: Որովհետեւ պէտք էր, որ մենք ծերերի վատահեկի մարդկանց աւանդութիւնից մեզ ասուած անզիր իին զրոյցներից [եւս] պատմենք թեզ այս պատմութեան մատեանում, նաեւ՝ մեր ժամանակ [Եղանակներից], թէկուզ էլ [դրանք] դեռեւս գրաւոր հաստատուած չեն:

Այս դրուագում [զիխում] ասացինք առաջին պատճենի պատճառները, որ մեզ վրայ պատուիաս հասաւ՝ մարդադաւ Կիրունի փառասիրութեան պատճառով, որը մէկն էր, քայլ մի բաժակի համար պատճառ եղաւ մեզնից այժման բազմամարդ ազգի բաժանման: Քանզի կայ մահ, որ [ընդամենը] մի ցաւից է հասնում մարդկանց: Քանզի Աստուածաշունչն Աղամի՝ փառքի ընկնելու մասին ասում է, թէ՝ «Սի պտղից ճաշակեց, ասում է, եւ մահն է ընդունեց»⁷⁸ այդ մէկից», այլ ոչ թէ երկու կամ երեք պտղից: Եւ դա՝ փառքի պատճառով, որից էլ [ծագում է] մեղքը, իսկ մեղքից էլ՝ մահը, [քանի] որ աստուածային հրամաններից լսեց, թէ՝ «Հող էիր՝ հող կը դառնա»⁷⁹: Որովհետեւ ծգտելով այլ փառքի, որ չունէր, նաեւ կորցրեց այն, որ ունէր: Եւ դրա պատճառով բոլոր մարդկանց մահ վիճակուեց, եւ մի մարդու մահով մեռան ամենքը, [ինչպէս որ] գրուած է: Եւ մահից յետոյ եղաւ մեղքը, որը տիրեց մարդկանց էութեանը: Եւ այս [մահը] մեր ներսը դրանից յետոյ մտաւ, այլ ոչ թէ՝ [ի սկզբանէ] Արարչի կողմից: Յետոյ [Եղան] նաեւ տեսակ-տեսակ կոռապաշտութիւնները, որ բողնելով Արարչին՝ արարածներին պաշտեցին, այսինքն՝ արեգակին, լուսնին եւ աստղերին, նաեւ ուկին ու արծարը [պաշտեցին], նաեւ՝ քարը, փայտը, այլ անքին բաներ, որ նիստերի մէջ են. բող բոյլ տրուի ասել՝ նաեւ [պաշտեցին] սողուններին, զրային գեռուններին, որոնց բոլորին եւ վերացրեց Քրիստոսը եւ Քրիստոսի քարոզը: Եւ ապա նրանց պաշտամունքը Քրիստոսին մատուցեցին, եւ մատուցանում ենք Նրան, որ յախտեանս օրինեալ է, ամէն:

ԳԼՈՒԽ ԿՊ

**ՎՐԱՅ ԲԱԺԱՆՍՍՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏճԱՌԻ ՄԱՍԻՆ, ՈՐ
ԵԱԱԻ ԿԻՒՐՈՒՆԻ ՀԱԿԱՌԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ**

Այս [ստորեւ ներկայացուածն] ասուած է մեզ այլ պատմագիրների շարադրանքից, որը նպաստեց մեզ մեր գործում, քանի որ մենք պատմա-

⁷⁷ Ծննդ. գ. 19.

գրքերից տեղեկացանք Վրաց բաժանման մէկ այլ պատճառի մասին եւս:

Այն ժամանակներում, երբ պարսիկներն ու յոյները Հայոց երկիրը բաժանել էին իրենց միջեւ, հայերի ու յոյների մէջ քննութիւն եղաւ եկեղեցու դասակարգութեան մասին՝ Վերին [Երկնային] ինը դասերի նման: Որպեսուեւ յոյները վիճում ու մեծաբանում էին հայերի վրայ, թէ՝ «Ինչո՞ւ, ասում էին, մեր եկեղեցին ունի ինը դասակարգութիւնը, իսկ ձերը՝ ոչ: Մերը դասակարգուած է լստ վերինների ինը դասի, որ սրանք են՝ պատրիարքներ, արքեպիսկոպոսներ, մետրոպոլիտներ, եպիսկոպոսներ, քահանաներ, սարկաւագներ, կիսասարկաւագներ, կլերիկոսներ, գրակարդացներ»: Այս այդ ժամանակ մերոնց բերանով եւս ասուեց (նրանց այդ կարգը դնելուց յետոյ), եւ ասացին. «Սենք էլ ունենք եկեղեցու նոյն դասերը հաստատուած, որ մեզ աւանդուել է սուրբ Գրիգորից, եւ [մենք] էլ Աստծոյ կամքով ենք դասակարգում, որպիշտուն մեր [աքոռոր] եւս սուրբ Թաղթոսի առաքելական արուու է, եւ նրանից յետոյ՝ սուրբ Գրիգորի, որը մեզ համար երկրորդ առաքեալ եղաւ, միաժամանակ նաեւ՝ Լուսաւորիչ:

Այն ժամանակ պարսիկներն ու յոյները, ինչպէս շատ անգամ ասուեց, Հայաստանը բաժանել էին իրենց միջեւ, եւ տէր Մովսէս սուրբ Գրիգորի արուու էր զբաղեցնում Դուինում: Խակ Յունաց բաժնում նրան հակաքոս [կարողիկոս] նատեցրին ուն Յոհանն՝ նրան [Դուինին] մօտիկ: Խակ Սիրնիքի տէրերը հայրապետական երկատուուած աքոռը մերժեցին եւ շխամածայնուեցին հնազանդուել հակառակութեան մէջ [գտնուողներից] որեւ մէկին՝ իրենց առաքինի Պետրոս եպիսկոպոսի հրամանով, որն [իր] վախճանին մօտենալով՝ իր թեմին պատուէր տուեց, որպէսզի ծեռնադրութիւնը եւ օրինութեան մեռոնը ստանան Աղուանքից, մինչեւ սուրբ Գրիգորի հայրապետական արուու միաւորուի: Եւ դրանից յետոյ եւ հետազայում սխնեցիները ծեռնադրութիւնը եւ մեռոնը Աղուանքից էին Վերցնուում, մինչեւ որ Վերացաւ հակառակութիւնը, ասում է Պատմագիրից⁴: Այդ պատճառով Աղուանքի կարողիկոսը [եւս] չեկաւ Աբրահամի ծեռնադրութեան ժողովին, մինչեւ որ Աբրահամը միապետեց իր հայրապետական արողուն:

Եւ եկեղեցական աստիճանների ինը դասակարգութեան համար աւարտեցին եւ Աբրահամին նշանակեցին պատրիարք, Աղուանքի [եպիսկոպոսապետին] արքեպիսկոպոս, իսկ Վրաց [եպիսկոպոսապետին]⁵ մետրոպոլիտ: Եւ Վրաց [կարողիկոս] Կիրոնը շխամածայնելով մնալ այն աստիճանին, որին [նրան] հաստատեցին, ըմբռատացաւ եւ հակառակն էր

⁴ Ուխտամէսի խօսքը Մովսէս Կաղանկատուացու (Դասխուրանցու) կամ այս դրուագու վերջինիս աղքատիք՝ Մաշտոց Եղիշվարդեցու երկի մասին է:

վիճարկում: Խակ Աբրահամ հայրապետն ասում էր, որ [Աղուանքը] Վրաստանից աւելի վաղ է ընդունել հաւատը, ուստի նրանց է պատշաճ⁷⁷⁹ արքեպիսկոպոսութիւնը: Այս մաքանման մէջ եւ ուղափառ հաւատի խնդրով վրացիները շուր եկան եւ դարձան քաղկեդոնիկ սատանայի ու Կիրոնի սարքանքով, եւ առաւել՝ Մուրիկ կայսեր կամքով: Այն վիր Կիրոնը նաեւ յունական գորափարներից էր գրգուել՝ իր համար գահերեցութիւն պահանջելով Աղուանքի նկատմամբ:

Դրան շխամածայնելով՝ Աղուանքում մէկ ուրիշին ցոյց տուեցին, որն աւելի վաղ էր իրերն առաքեալ եկել Աղուանքի Եղիշէ ամունով, որի ով լինելը կը կամենայի նախ պատմել: Սա եղել է Փրկչի աշակերտներից մէկը՝ ծեռնադրուած Տիրոջ Եղբայր Յակոբի կողմից: Եւ համածայնելով դրան՝ Աղուանք տանը արքեպիսկոպոսութիւն տուեց [Աբրահամը] իրատանք վերապահելով [ունենալ ստորադաս եպիսկոպոսները]⁷⁸⁰, խակ մետրոպոլիտութիւնը⁷⁸¹ [տուեց] Սիրնեաց տանը: Խակ Կիրոնը հեռացաւ նաեւ այդ անգամ, եւ Աբրահամ մնեց հայրապետը միապետեց իր [իշխանութեան] ներքոյ Աղուանքն ու Սիրնիքը, եւ այնուհետեւ դարձան մի հօտ եւ մի եղինի եւ հնազանդ սուրբ Երկնային տանը՝ սուրբ Գրիգորի արողին:

ԳԼՈՒԽ ԿԴ

ԴԱՐՁԵԱԼ ՆՈՅՆ ԽՆԴՐԻ ՍԱՍԻՆ ԱՅԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Երկրորդը այս [Ճերքոշարադրեալ հանգամանքներն] են, որ մեզ ստիպում են տագնապալի շարչարանքով պատմելու միեւնոյն խնդիր մասին: Որպիշտուն դարձեալ խոռվութիւն ու շփորձունք առաջ բերեցին յոյների կողմից եկեղեցական դասակարգումների միեւնոյն խնդրով, եւ յոյների բոլոր մնեամնեներն իրար անցան, եւ ուր որ առաքեալ էր վախճանուել՝ բոլորի աքոռը պատրիարք համարեցին: [Բայց] նաեւ մնեց մաքանման մէջ մնան մեր կողմի դէմ, զանացին նուազեցնել սուրբ Թաղէուս առաքեալի գերեզմանի թէմի [յարգը]: Հերեապահելով ունենալու պատրիարք, արքեպիսկոպոս եւ մետրոպոլիտ՝ այլ դասակարգութիւնների հետ միասին: Բայց ապա նրանը տեսան, որ Աղուանքն ուղղափառ հաւատի մէջ Հայոց հետ միարան է՝ սկսած սուրբ Գրիգորից [եւ] մինչեւ այժմ, քանզի իրենց համար առաջնորդ էին խնդրել սուրբ Գրիգորի զարմից երանելի Գրիգորիսին:

Թէպէտեւ նրանք էլ ասում էին, թէ սկզբնապէս ուրիշ մէկն է եկել Աղու-

ամք՝ Եղիշէ անոնպ, որի մասին վերեւում յիշատակեցինք՝ Փրկչի աշակերտներից [մէկը]. Տիրոջ եղբայր սուրբ Յակոբից ծեռնադրուած. [որը] և քարագել [է] այստեղ [Աղուանքում] եւ եկեղեցի շինել նախքան Հայոց լուսաւարութիւնը: Եւ յա Գիտի եկեղեցին է, [քոլոր] Եկեղեցիների մայրը, [արզ] գտնուում է Ամարասի ստորատին՝ այն գաւառում, որը կոչուում է Գորոգու մօմ Պարտու քաղաքի դաշտին, որը կոչուում է Փայտակարան^{**}: Եւ ինքը [Եղիշէն] սպանուել է անյայտ մարդկանց կողմից, [եւ] չգիտենք, թէ ում [ծեռքով է] եղել նրա կեանքի վախճանը:

Այս նախասկզբնական կարգը եւ Աղուանքի հաւատի միաբանութիւնը Հայոց հետ տեսնելով՝ նրանց պատի շնորհեցին՝ լինելու Հայոց արքեպիսկոպոս: [Եւ] նոյն կերպ Սինէրի տէքերին տեսնելով [իրենի] աստուածաերկիւ եւ հաւատի մէջ հաւատարիմ, նաեւ ամեն բանով լաւ ուսեալ եւ ուղղափառ՝ նրանց եւս պատի շնորհեցին՝ լինելու Հայոց մետրոպոլիտ, նաեւ խաչանշան [կրծիոն] մեծարանքով պատուեցին նրանց: Եւ այսպէս կարգ առ կարգ հաստատեցին ինը դասերը եւ եղան մի հօտ, մի հովին՝ այն ժամանակ եւ այժմ եւ մինչեւ իրենց ժամանակների վախճանը:

Եսկ Կիլունին հեռացրին իրենցից եւ նրա բաժինը կեղծաւորների շարքում դրեցին: Բաց բողեցին նրան գնալու իր կամքի հետեւից, որովհետեւ ամեն ծառ, որ բարորակ պտուու չի տալիս, պիտի կտրուի եւ կրակը նետուի, եւ «Ամեն տնիկի, որ Երկնային Հայրը չի տնկել, արմատախիլ պիտի արտիվ»[†]: Այսպէս էլ նա՝ [Կիլունը], որովհետեւ նրա կեանքը հակառակութիւն ու կոխ եղաւ, որից յետոյ նա տնկուեց իրեն անպտուղ ծառ ու անծիւղ որք: Եւ ապա նրա աղմուկի յիշատակը կորաւ:

Ահա քեզ ցոյց տուեցինք Կիլունի նամակների պատճննը եւ դարձեալ [նաեւ] բաժանման պատճառը, որ լուրերից ու գրութիւններից մեզ հասաւ:

ԳԼՈՒԽ ԿԵ

ԹԷ ԵՐԲ ՀԱՅԵՐԻՑ ԱՌԱՋ ՀԱՄԱՏՔԻ ԵԿԱՄ ՍՂՈՒԽՆՔԸ՝
ԻՐԵՆՑ ՊԱՍՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Այս [ստորեւ շարադրուածը] մեր [կողմից] լաւածն է Աղուանքի պատմագիւներից, [որոնք] հաւատիօրեն պատմեցին մեզ իրենց Երկրի՝ ճշմարտութեամբ ու իիմնաւարապէս հաւատքի գալու սկզբի մասին, որովհետեւ [այդ] պատմութիւնը ճշմարիս է:

[†] Մատք. ԺԵ 13:

Եւ այդ պատմութիւն ասում է. «Անելին, քան Վաղարշակի կողմից Աղուանք տունը [Երկիրը] Առանի հնագանդութեան [տակ] դնելը, ոչինչ չգտնանք մինչեւ Վաշագան Քաջը, որն ամբողջապէս տիրեց Աղուանից կողմիցն: Խոչ երբ հասաւ արդարութեան արեգակի ժամանակը, [ապա] նաեւ մեր փրկութեան [համար իր] հայեացքը յատեց^{**} անքննելի էութեան փառքի լոյսը եւ Հօր էութեան ծագումը [Քրիստոսը]: Տէրունական նախախնանութեամբ ամենայնի մարմնացեալ եւ ամենայնի նստած [մնալով] իր ծնողի [Հայր Աստծոյ] փառքի մէջ, որից չեր էլ բաժանուել: Եւ իր սուրբ ու սրբելի աշակերտներին իբրեւ քարոզիչներ ուղարկեց տիեզերքի [ողջ աշխարհի] համար, որոնցից եւ մեզ՝ արեւելցիներիս վիճակուեց սուրբ Թաղթու առաքեալը: Սա եկաւ Հայաստան՝ Արտագ գաւառը, եւ այստեղ մարտիրոսական վախճան ընդունեց Հայոց Սանատորուկ բազաւորից:

Եւ նրա աշակերտ սուրբ Եղիշէն վերադարձաւ Երուսաղէմ եւ այստեղ Տիրոջ ներայը մեծն Յակոբին պատմեց նրա առաքելակից ընկերների տենչայի նահատակութեան մասին: Ապա այնտեղ Սուրբ Հոգու ազդումով Եղիշէն ծեռնադրուեց սուրբ Յակոբի ծեռքով, որը Երուսաղէմի առաջին հայրապետն էր:

Եղիշէն իրեն թեմ ստացաւ արեւելքը, Երուսաղէմից ճանապարհ ընկնելով՝ Պարսկաստանի միջով մտաւ Մասրուք՝ իսոյս տալով հայերից: Քարոզութիւնը սկսեց նորայից, որ Դարբաննն է, եւ զանազան տեղերում շատերին աշակերտ դարձնելով՝ նրանց ծանօթացքներ փրկութեանը: Եւ այնտեղից եկաւ Ուտի գաւառի Սոխան^{***} բաղարը իր աշակերտ Երեք նարդկանց հետ: Սրանց անօրէն հարազատներից ումանց հետապնդեցին նրանց, եւ աշակերտներից մէկը նրանց կողմից մարտիրոսական վախճան ընդունեց, իսկ [միաւ] Երկուսը, բողնելով Երանելի Եղիշէին՝ գնացին անօրէն ու խողխոնի մարդկանց հետեւից:

Եսկ սուրբ հայրապէտ Եղիշէն եկաւ Գիս, այնտեղ Եկեղեցի կանգնեցրեց եւ անարին պատարագ մատուցեց: Այս վայրից եղաւ Արեւելից [աշխարհի] մայրաքաղաք [Եայսկոպոսանիստ] Եկեղեցիների եւ տիեզերքի [ողջ աշխարհի] լուսաւորութեան սկզբնաւորումը: Այստեղից գնաց Զարգոնն^{**} դաշտը՝ դիւանոլ կոսապաշտների գոհարանների տեղերը, եւ այնաւող ընդունեց նահատակութեան պատմակը ([եւ] անհայտ է մնացել, թէ ուրիշ եղաւ սրբի՝ կեանքից հեռանալը): Եւ սրբի պատուական նշխարների այնտեղ նահապարտների մի փոսի մէջ գցուեցին, եւ այն տեղը, որ կոչաւ է Հոմենք^{***}, Երկար ժամանակ ծածկուած [գաղտնի] մնաց՝ ի փառս Քրիստոս Աստծոյ:

[†] Աղքարքի և մեր պատմիչի եզրոյրով՝ Հայաստանեացրաց:

Արդ՝ այս պատճառով մեր հայրապետ Աքրահամը պատշաճ համարեց Աղուանից տանը արքեպիսկոպոսութիւն տալ, իսկ Վրաց տանը՝ մետրոպոլիտութիւն, որին չհամաձայնուելով՝ Կիրոնը բաժանուեց հայերից եւ մերժուեց տարագրուեց:

ԳԼՈՒԽ ԿԶ

ԴԱՐՁԵԱԼ ԿԻՒՐՈՆԻ ՆՈՅՆ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԻՆՉ ՈՐ ՆԱՍԱԿՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ Է ՊԱՏՄՈՒՄ

Այս գրքում [զիխում] յարմարեցնելու [եւ] շարադրելու եւ քեզ համար այն ամենը, ինչ որ Կիրոնի մասին [յայտնի է] նամակներից յետոյ, որ գրեցին նրան, բայց ոչ մի հնար չկարողացան գտնել նրա դարձի ու փրկութեան համար, քանզի շատ վաղուց էր կայացրել իր անդարձութեան վճիռը:

Որովհետեւ սաւուղարար երկու տարի [միայն] եղաւ ճշմարտութեան հետեւող, ինչպէս մի անգամ ասուեց: «Սաւուղը^{1*} չափահաս տղայ [ը] թագաւորելիս եւ երկու տարի թագաւորեց» գրուած է²: Որովհետեւ այդ շափ էլ հածոյ եղաւ Աստծուն, ապա այնուհետեւ սկսեց անօրէնութիւն անել եւ ստել Տիրոց ուխտին: Որ թէպէտեւ Տէր Աստծուն զոհեր մատուցեց, երբ ազգերը նրա վրայ կուտակուեցին, սակայն Տէրը չհածեց նրա նկատմամբ, իսկ Սամուէլ մարգարէն յանձին Աստծոյ սպառնալով նրան՝ ասաց. «Քո թագաւորութիւնը չի մնայ, ուստի ինչ որ անում ես քեզ համար, զոր է, որովհետեւ իմ պատուիրանը չպահեցիր, ինչ որ Տէրը պատուիրեց: Արդ՝ այսուհետեւ Տէրը կ'որոնի իր սրսով ուրիշ այրի եւ նրան իշխան կը նշանակի իր ժողովրդի վրայ, քանի որ ինչ որ քեզ իմ բերանով պատուիրեց՝ չպահեցիր»: Արդ՝ այդ պատճառով Տիրոցից դատավճիռ ստացաւ [Սաւուղը], որովհետեւ Տիրոց ուխտի վրայ չմնաց, ըստ նրա օրէնքների չկամեցաւ զնալ եւ Տիրոց պատուիրանին չանսաց: Գրուած է. «Ունկնդիր եղէք Տիրոց պատուիրաններին, որովհետեւ Տիրոց պատուիրանները լոյս են»³, եւ այն, ինչ շարունակութեան մէջ է: Մատադներն ու զոհաբերութիւններն այնքան ընդունելի չեն, որքան Տիրոց ծայնին անսալը, որովհետեւ Տիրոց ծայնը նրա պատուիրաններն են: Եւ ահա՝ «Աւելի լաւ է ունկնդութիւնը, քան ընտիր գորի, եւ հնազանդութիւնը, քան խոյերի ճարպը», ասաց իմաստուններից մէկը:

^{1*} Ա Թագ. ԺԳ 1:

² Սաղմ. ԺԸ 9:

Այժմ այս բաները Կիրոնի վրայ իրականացան, թէպէտեւ հնում ատեցին Սաւուղի վերաբերեալ, որովհետեւ սա եւս չանացա Տիրոց ծայնին: Արդ՝ սրա կսղմից արուածները սկզբնապէս ցոյց տրամեցին Ցորտափ եախովապոսի կողմից: Իսկ նրա յայտնաբերածները շատ արագ կատարուեցին՝ բացայայտելով կաթողիկոսին այն, որ վաղուց ի վեր ծածուկ էր պահում [Կիրոնը]: Իսկ երբ նրա գործերը իրավաբակա գուժուեցին և ամենքի համար բաջայայտ դարձան, եւ աւելի ու աւելի տարածուեց նրա ընթառանալու մասին լուրը, ապա այնուհետեւ սկսեց բիլ շատախութեանը դէմ առ դէմ վիճաբանել նրանց հետ, ովքեր խօսրով յանդինանում էին նրան: Որովհետեւ իր մտքում իրեն բարձր համարեց, բայց զինով առանել շդարձաւ, քան ինչ որ էր՝ նման նրանց, ովքեր իրենց իմաստուն էին փորձում պահել, [բայց] յիմարացան: Իսկ սա [Կիրոնը] անզգամարտեան իրուրութիւնը ձեռքում պատրաստ պահելով՝ յետոյ հաղորդակից նրա անմիտներին, իր չար ու սնոտի վաստակներով ինտազայում աւելցնելով իր չար վարդապետութեան չար ուսմունքը, իր չար երկրագրութեանը ցորենի վրայ ցանելով այն որոնմ. որը հունձի մամանակ Փրկիչը խստացաւ հնձուղների ձեռքով քաղել ու խրծեր կապե՛ այրելու համար, իսկ ցորենը հաւաքել արքունի շտեմարանում:

Իսկ երբ նայեցին նրա անվերադառներն [եւ հասկացան], որ ինը է իր վրայ մեծասաշարջար խնդիրներ բարորում եւ կամ թէ իր խօսքերն այստեղ-այնտեղ թափում որպէս ինչ-որ քամի կը հեծեծայ, եւ կամ թէ տարութերաւմ է պէս-պէս եւ օտարահունչ ուսմունքների մէջ, այնուհետեւ անուշադրութեան մատնեցին նրան, բարձիրովի արեցին նրան, որ լնրանյ իր կամքով: Ասում էին՝ «Թող այս աշխարհում լինի նրա ժամանակը, որովհետեւ այս է նրա ժամանակը եւ խաւարի իշխանութիւնը», քանզի գրուած է՝ «Սարդոյ համար մեծ թշուառութիւն է շարիք գործելք»: Եւ դարձեալ՝ «Բարի է ու աւելի հաստատ լեզուն խնայելը, քան թէ խօսքերին սրավ ուշը դարձնելք»: Որովհետեւ պարտ ու արժան է ամենեւին փախչել տգեղ խօսքերի հոսանքից, քանզի՝ «Ինչպէս շատ անորջներն են փուչ, այդպէս էլ շատ խօսքերը», ասաց [Սողոմոնի] հմաստուրինը:

Իսկ նա [Կիրոնը] սրանից ոչինչ չէր զգում եւ չէր նայում իր դատարկաբանութեանը, այլ անհմաստ մտքով, աներկիդ համարձակութեամբ երկարացնում էր իր խօսքերն ինչպէս պարան, եւ չէր իմանում, որ Աստծոյ երկիւն է մարդկանց փրկութիւնն՝ ըստ գրուածի: Քանզի թէպէտեւ շափազան ենու ենք երկնքից, սակայն իմանալ, որ Աստծոյ լսող ականջին ենք խօսում [ամենայն քան]՝ դա [Սուրբ] Գրից սովորեցինք: Իսկ նա յուսալով իր խօսքերի մեծաբանակութեան վրայ, շատախօսութեամբ էլ թշու-

առական էր դարձնում իր կեաճքը: Դատապարտելով իրեն լաւագյունից վատքարագոյնին՝ իրեն վայել էր կարծում իր վաստակներին, որ Աստծով չէր ձեռք բերել: Իր համակիրների [մօտ] քարերար էր քարոզում իրեն, որ բոլորովին շար էր: Ինըն իրեն ինքնակամ հալածում էր բարուց եւ շարաշար տագնապով նղում իր մտքի ցնորդների մէջ: Եւ [իւնց] այդպիսի մահուան հանդիպելով՝ քարութեամբ չլցրեց իրեն, եւ նրա նկատմամբ կատարուեց [Սուրբ] Գրքի խօսքը, որ ասաց աստուածայիններից մէկը՝ հեգնելով ու ծաղրելով այսպէս. «Ես, ասում է, այնպիսի մարդու կեանքի երկարութեան վրայ կը նախանձէի, քայլ աւելի լաւ եմ համարում մօր արգանդից անժամանակ վիժած սաղմը, քան նրան, որովհետեւ այդպիսին ինչպէս ունայնօրէն եկա, նոյնպէս էլ ենացաւ»:

ԳԼՈՒԽ

ՍՈՒՐԲ ՇՈՒՇԱՆԻԿԻ^ա ՄԱՍԻՆ

Արդ՝ այսուինտեւ քո ցանկալի պատմութեանն ենք հասնում, որ վերաբերում է յաղըող ու սուրբ նահատակ Շուշանիկին: Կը պատմեմ նրա քարի մարտիրոսութեան մասին, որ եղաւ Քրիստոսի աստուածապաշտութեան եւ ուղիղ հաւատի համար, այսինքն՝ նրան վիճակուեց մարտիրոսուել իր ուրացող եւ անօրէն անուսնու ծեռովք: Եւ նրան գովարանելու համար իմ լեզուն կը շարժեմ ասելու այն, ինչին մեզ գրաւոր ու անզիր յաջողութեանիկանալ:

Արդ՝ քանզի «Գիրք բորոցում» մենք սուրբ հայրերի ու վարդապետների կողմից յիշատակուած գտանք նրա առաքինութիւնը եւ հայրերի օրենքների պատուիրանների պահպանութիւնը, ուղիղ եւ ճշմարիտ խոսովանութիւնն ու հաւատի հաստատութիւնը, նաեւ ծիսակարգը, որ հաստատել էր այն Յուրտափի եկեղեցում, եւ ամենուրեք ամեն տեղ պատմում է այս քանը, մանաւանդ այն նամակներում, որ գրուեցին Կիլոնին, նախ՝ Վրթանէս վարդապետի, եւ ապա՝ Արքահամ Հայոց կաթողիկոսի կողմից, քանզի յանդիմաննելով նրան՝ այսպէս են ասում. «Դու խափանել ես սուրբ Շուշանիկի պաշտամունքը, որ կարգուած ու հաստատուած էր Յուրտափի եկեղեցում», արդ՝ ինչպէս ասացինք, մենք սրա յիշատակումը չկարողացանք ընդմիջել այս նամակների մտքերի շարակարգում եւ այլ տեղում ասել՝ դասաւորուած նամակներից առաջ եւ յետոյ, որպէսզի յանկարծ օտարոտի հնչելով՝ բովանդակութիւնը չիեռանայ [իրարից]: Նաեւ վերեւում

է ասուեց սոյն միտքը, թէ շարադրում ենք պատշաճ համարելի լայնավիպի հերթականութեամբ, որը բովանդակութիւնն է պահանջում, որ մենք իմանանք:

Իսկ այժմ, եթէ ես հնար ունենայի, կը փոխէի իմ տկար զօրութիւնը, ել անիլ առաւել ուժ ու կարողութիւն կ'առնեի, որպէսզի իմ տկարութեանն օժանդակելով՝ զօրացնէր ինձ այստեղ՝ սուրբ նահատակ Շուշանիկի պատմութիւնը [շարադրելիս], նաեւ իմ լեզուն փոխէր ի բարեբանութիւն նրա սիրազորդութիւնների, որ վիճակուեցին նրան Յուրտափում նրա շարարաններից յետոյ եւ նախրան մահը:

Մեծամեծ տանջանքներով դատարնենութեան ենթարկուելով ու [իր] մարմնով անմարմին [իրեշտակների] օրինակը ցուցաբերելով՝ [Շուշանիկը] քաղոցով ու ծարաւով իրեն մաշում էր տքնութեամբ եւ օր ու գիշեր չէր դարարում մշտական սաղմոսերգութեամբ Աստծուն օրինելուց: Կարծես թէ նրան ոչ որ բանտի ու կապանքի մէջ չէր դրել, այլ ասես թէ ինքնայօն կամքով էր կապանքի մէջ մտել: Որովհետեւ վեց տարի նա կապանքների ու բանտի մէջ ապրեց այն բերդում, որ Ուփրեք էր կոչում: Որովհետեւ աւելի քան այն շարչարանքների, որոնց նրան ենթարկեց ամբարիչտ ու անօրէն բդէշչը դաժան ու դառը տանջանքներով, նրան մինչ այդ քարշ տուեցին փողոցներով ու գոենեներով [նրապարակներով], ջարդեցին նրան բրերով եւ ծեծեցին դէմքն ու կզակն այնքան, որ շատ օրեր ոչինչ կարողացաւ տեսնել աշքերի մքանալու պատճառով: Ապա կապանքներում, անուրներում ու բանտերում աղտեղութիւնների ժահահոտութիւնն ու բանտի խոնաւութիւնն այնքան շատ էր, որ, թող ներուի ասել՝ լուերից ու որդերից էր նրան տառապանք էին հասնում, որն ասւում է իր պատմութեան մէջ: Իսկ երանելի նահատակին այդ շարչարանքները ոչինչ էին բում գայիքի յոյսի, սիրոյ եւ այն հաւատի պատճառով, որ [նա] ունէր առ Աստուած: Որովհետեւ իր նախնիներից էլ ժառանգել էր բարեպաշտութիւն, քարի արմատից քարի ճիշ [եր], որովհետեւ՝ «Քարի ծառը քարի պատու է տալիս», եւ այդ պտղուց է ծառը ճամաշուում^ա:

Արդ՝ այսքան եւ այսպիսի նեղութիւններին համբերեց նա եւ^ա դիմացաւ: Ծինչ չէր զգում, այլ աւելի ու աւելի էր քաջալերում իր ճգնութեամբ, որը կրում էր տեսակ-տեսակ առաջինութիւններով՝ հացից հրաժարումով^բ եւ ջրի ծարաւով, նաեւ տքնութեամբ, արտասուրներով եւ անդադար սաղմոսերգութեամբ զիշեր ու ցերեկ: Նաեւ իր մօտ ունէր մի գրքոյն [նա] իր

^ա Մատ. Է 17:

^բ Հմտ. Մատ. ԺԲ 33, Ղոկ. Զ 44:

^շ Ովտանեսի բաներով՝ անսուադութեամբ հացի:

պաշտանութեամբ ու սարմութեգործի նը Ծրանով էր կատարում եւ իր մօտ քայլոր եկածներին [նրանով] քարոզում էր աստուածապաշտութեան ողջ կարգը: Նա Նունի նման առաքելուի եղաւ, այնքան, որ նրա քարոզերն [է] սփոռուցին Վրաց ամբողջ Երկրում: Եր ովքեր զայիս էին նրա մօտ տեսութեան, նրանից տփորում էին քարեպաշտութեան քարոզը, և շատ հիւանդներ ու ախտաժետներ էին բաւժում՝ նրա մօտ զայով:

ԳԼՈՒԽ ԿԸ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ԱԲՐԱՀԱՄԻ ՇՐՋԱԳԱՅԱԿԱՆ^{۳۰} ՆԱՍԱԿԻ ՍԱՍԻՆ

Արք՝ Կիւրոնի ծեռորով Վրաց բաժանման վերաբերեալ եղած տեսակ-տեսակ վէճերը եւ զանազան նամակներն ըստ մեր կարողութեան հաւաստի քննելով ու ստուգելով՝ [արդէն] շարադրեցինք այս պատմութեան մէջ:

Բայց երբ երանելի հայրապետ Աբրահամը չկարսացաւ հնար զտնել եւ փրկել այն անմիտ Կիւրոնին, քանզի Կիւրոնից խելքը կորաւ եւ իմաստութիւնը փախաւ նրանից անասելի հեռաւորութեամբ, ապա այդ ժամանակ [նա] ընդհանրական ծեռնարկ, [այսինքն] շրջագայական նամակ^{۳۱} գրեց Հայոց ամբողջ աշխարհին եւ քոյլոր ուղղափառ հաւատացեալներին՝ քաղաքներում, զաւաներում եւ զիւղերում, որպէսզի ոչ որ ամենեին շահորդակցուի նրանց [վրացիների] հետ խնամիութեամբ կամ սիրով կամ հոգեւոր կարիքների հաղորդութեամբ կամ մարմնական մերձաւորութեամբ, ինչպէս որ մի անգամ [արդէն] ասուեց: Այլ միայն [քայլատրեց] իրարից զնել ինչ-որ բան կամ վաճառել: Եր դարձեալ [զգուշացրեց], թէ՝ «Ոչ որ քող շխարուի նրանց կողմից ինչ-որ վայրի անունով, որ նրանք կոչում են Սցխիքայի խաչ կամ Մանգեաց^{۳۲}, եւ կամ ինչ-որ ուրիշ տեղերի [անունով], որ նրանց համար առիր է դառնում խարելու պարզամիտներին: Եր այնքան ու այսպիսի խօսքերով գրում է, որ զգուշանան, և շատ ուրիշ խօսքերով պատմում է՝ բացատրելով նրանց, թէ ինչ են եւ ինչ են եղել: Նաև մեզ համար օրինացրում է երեք սուրբ ժողովների առաջին հայրերի հաւատու ու խոստովանութիւնը, [այս է] հաւատու Հօրը, Որդուն, Սուրբ Հոգուն եւ մարմնացեալ Քրիստոս Աստծոյ մարդեղութեանը՝ ծշմարիտ, անքակտելի ու անբաժանելի միաւորութեամբ:

Կիւրոնի մասին նաև այս է պատմում, թէ Հայոց կարողիկոս Մովսէսի մահից յետոյ եւ նախքան Աբրահամի արոռակալելը Կիւրոնը ե-

լա Վրկանի մարզպան Սմբատի մօտ, որ խարեբայութեամբ ու խորանանկութեամբ նրանցից քատը խնդրի ուղղուած Վրաց Երկրին, որպէսզի շամածայնուեն այն նեստորական խուժիկի ու նրա համախուների հետ և շրամանուեն Հայոց միաբանութիւնից: Բայց դա եղել էր նենգութեամբ իւ կենդաւորաւթեամբ իրեն շքեղ ձեւացնելով: Եր հենց այս բանն է յիշառակուտ Սմբատն իր այն նամակում, որ [զգուած էր] Ցուրտափի Եպիսկոպոս Մովսէսին, [ասելով]: «Երէ Կիւրոնի իր վրայ վստահ չէր, ինչպէ՞ս եր կանգնուն եւ մեզ յորդորում, եւ նամակ էր գրել տալիս [իր] Երկրին եւ ինքն իրեն յանդիմանում»:

Բայց այդպէս ամենուրեք ամեն տեղ քող յանդիմանուի խարեբան ու փոքրից, այդ վիշապ խարդաւանողը, որն ինչ-որ խարդախութեամբ գրագիտութիւն առվորելով՝ խարեց ու կործանեց Վրաց Երկրի ուղղափառութիւնը:

ԳԼՈՒԽ ԿԸ

ԹԵ ԵՐԲ ԱՆԻԾՈՒԵՑ ՔԱՂԿԵԴՈՆԻ ՉԱՐ ԺՈՂՈՎԸ, ԵՒ ՀԱՅԵՐԻ ՈՒ ԱՂՈՒԱՆՔԻ ՄԻԱԲԱՆ ՄՆԱԼԸ ԵՒ ՎՐԱՑ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՀԱՅԵՐԻՑ, ԵՒ ԴՐԱՆԻՑ ՅԵՏՈՅՑ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ԱԲՐԱՀԱՄԻ ՇՐՋԱԳԱՅԱԿԱՆ^{۳۳} ՆԱՍԱԿԸ

Հոռոմների քուականութեան քառասուներեքերորդ տարին էր, երբ հայրել հաւատորով լուսաւորութեցին. եւ Աղուանից լուսաւորութիւնից երկու հարիր եօթանասուն տարի առաջ^{۳۴}: Հայերի հաւատքի հարիր ութասուն տարին լրանալուց յետոյ՝ Բաբգեն Հայոց կարողիկոսի ժամանակներում Քաղկեդոնի տիեզերակործան ժողովի վերաբերեալ տեղի ունեցաւ ժողովական հանդէս [ատեան], [որտեղ] յոյները, ամբողջ Խոտալիան, հայերը, աղուաններն ու վրացիները միաբանուելով՝ հոռոմների բարեպաշտ քաջարութեամբ Զենոնի ու Անաստայի երամանով նզովեցին Քաղկեդոնի շարափառ ժողովի: Եր ութասունեօթ տարի անցնելուց յետոյ Աբրահամ Հայոց կարողիկոսի ժամանակներում վրացիները անիծեալ Կիւրոնի ծեռորով բաժանուեցին Հայոց միաբանութիւնից, նաև յոյներն ու Խոտալիան նրանց հետ: Խակ աղուանները շրամանուեցին ուղղափառութիւնից եւ Հայոց միաբանութիւնից: Եր այդ առիթով Կիւրոնի հակառակութեան վերաբերեալ իր շրջագերական նամակում Աբրահամը ամբաստանութիւններ [զեց] նրա մասին, [եւ] ամեն ինչի համար [Սուրբ] Հոգու սրով կտրեց-

բաժանեց: Նախ զգուշացրեց աղուաններին եւ տեղեկութիւն տուեց ու նամակում գրեց այսպէս.

ԳԼՈՒԽ Հ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ԱԲՐԱՀԱՄԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ³⁸ ՆԱՍԱԿԸ

«Պատկառելի եւ մարդկային սովորական արժանիքից վեր շնորհ է պարզենում, որ տուեց Բանն Աստուած [Քրիստոսը]՝ ունենալու երկնային, այսինքն՝ առաքելաների ու նրանց յաջորդների արոռու: Եւ ես՝ Արքահամս, որ նոյնպէս անարժանօրէն կոչուեցի մեծն Թաղէոս առաքեալին յաջորդած երջանիկ Գրիգորի արռոին, այս հովուական իշխանութեանը ենթակայ բոլոր եկեղեցների առաջնորդներին՝ վաճացերեցներին, քահանաներին եւ սուրբ եկեղեցու սարկաւագաց դասին, անապատաւորներին, մենակեացներին, ազատներին ու իշխաններին, շինականներին ու համայն ժողովրդին, տղամարդկանց ու կանանց՝ մեր Քրիստոս Աստծոյ ողջոյնով ու խաղաղութեամբ [մաղթում եմ]՝ բող ծեզ վիճակուի բարզաւճել:

Արդ՝ քանզի Դուինում Հայաստանի հայրապետական եկեղեցու կառուցման կարիքների հոգի պատճառով չկարողացանք տեղից շարժուել, շտապեցի շրջաբերական այս նամակով զգուշացնելու արքնացած նահացու թշնամու գայրակորութիւնից, որով ախտաւորուելով՝ բրամիտներն ու մարմնասերները նոյն կերպ ապերախտ եղան նաեւ Աստծոյ Որդու կողմից փրկութեան նկատմամբ եւ ուրացան նրա մարմնի նմանուելը մեզ հետ եւ [ուրեմն] մեզ էլ դէմի երկնի³⁹ բարձունքները վեր տանելը, [զգուշացնելու], որպէսզի խորչէր այնպիսիներից՝ մեր հարազատ հաւատի վարդապետութիւն ճանաչելով ոչ թէ ինչ-որ օտար ձայնով այլնեալ կերպ նորածնուածը⁴⁰, ինչպէս որ պառակտիչի լեզուով [արուածն] է, այլ նախկինում ի սկզբան ականատեսների եւ Քրիստոսի սպասաւորների կողմից աւետարանուածները, որ նաեւ գուշակուած էին մարզարների կողմից, որը մեզ մատուցեցին Նիկիայում հաւաքուած երեք հարիր տասնութ հայրերը, [ես] նոյնանման հարիր յիսուն քաջ նահատակներով Կռստանդնուպոլսում կործանեցին հոգեմարտներին, իսկ երկու հարիրը Եփեսոսում անօրէն Նեստորին: Եւ [նրանք] իրենց խոստովանութեան առաջնորդ համարեցին յափտենական կեանքը, որը ես եւս աւելի համա-

ռու եւ մեկնողաբար կը յիշատակեմ, եւ դա [իետեւեալն] է.

Հաւատում ենք մի ամենակալ Հայր Աստծուն՝ երկնքի ու երկրի, տեսանեիների ու անտեսանելիների Արարշին, եւ մի Տէր Յիսուս Քրիստոսին՝ Աստծոյ Որդուն, որ Միածին է՝ ծնուած Հայր Աստծուց եւ ոչ [թէ] ստեղծուած կամ հաստատուած, եւ ոչ թէ ոչնչից [է] ստեղծուած, այլ համագոյն [է] Հօրք բարը տեսանելիների ու անտեսանելիների [համար], եւ Սուրբ Հոգին, [որ] արարիչ [է], կենդանացնող ու նորոգիչ, [ես] ոչ թէ ծնունդ [է], այլ բխուն: Ասում է՝ Աստծուած Հայր, Աստծուած Որդի, Աստծուած Սուրբ Հօգի, [ես] ոչ թէ [որպէս] երեք աստուածներ, այլ մեկ աստուածութեամբ, կամքով ու զօրութեամբ է փառաբանում Սուրբ Երրորդութիւնը, որ ճանացան են միաւորութեամբ բաժանուած եւ բաժանումով միաւորուած: Ոչ սկզբ [բանեն], ոչ դադարում, եւ ոչ էլ աւագութիւն: Քանզի ինչպէս փառը առանց լոյսի չի ճանաչում, եւ չկայ պատկեր առանց էութեան, ուժ՝ առանց զօրութեան, ինաստուն՝ առանց իմաստութեան, այդպէս էլ չկայ Հայր առանց Որդու: Եւ ինչպէս նրա տեսքի լոյսից միշտ լոյս է ծագում տեսնողներին, ոչ որ [նրանցից] առանձին չի գատում, կամ մեկն առաջ չի երեսմ այդպէս էլ Հայրը, Որպին [չեն] առանց Սուրբ Հոգու:

Իսկ վերջին օրերում Որդին իջաւ [երկնքից], մարմնացաւ ու մարդացաւ, անձառաբար ծնուեց սուրբ Կոյս Աստուածածնից՝ մարմնով, բանական եղով, շնչով, մտքով եւ՝ ինչ որ ունի մարդը՝ իբրև աստուածային ճնշութեան օրինակ: Եւ [հաւատում ենք] մի Տէր Յիսուս Քրիստոսին, [որ] Հօրից անբաժան [է], եւ միաժամանակ՝ կատարելապէս երկրում, [որը] խաչուեց, բաղուեց եւ երրորդ օրը յարութիւն առաւ, ու ելմելով երկիմը՝ նստեց Հօր աջ կողմը, [որը] գալու է նոյն մարմնով՝ դատելու ողջերին ու մեռածներին, [ես] որի բազաւորութեանը չկայ վախճան: Իսկ ովեր ասում են, թէ եղել է [ժամանակ], երբ [նա] չկար, եւ [որ] նախքան լինելը չկար, եւ կամ այդ բանն են ասում Սուրբ Հոգու մասին, կամ [համարում նրան] փոփոխելի կամ այլայնի եւ կամ այլ էութիւնից կամ գոյացութիւնից [ծագող], այդպիսիներին նզովում է Կաքուիլիկ առաքելական եկեղեցին: Արդ՝ այս է մեր խստովանութիւնը՝ Աստծու մարդացեալ Բանի [խօսքի] տնօրինական [մարդեղացման] գործողութեամբ հանդերձ: Իսկ նրանք Աստծոյ մարմնացեալ Որդունը [առանձին] բնութիւն են համարում, որը թող մենք յանկարծ երբեւից չասենք:

Զանզի հոռոմների բազաւոր Մարկիանոսի օրօք, որը գրեթէ⁴¹ Պարսկա Կաւասի ժամանակներում էր, կամ դրանից փոքր ինչ առաջ, Զաղկերունում հաւաքուելով՝ ծշմարտութիւնից վրիպեցին: Որովհետեւ աւս են, որ ինչն ինքը՝ բազաւորը, Նեստորի չար կամքին համածայնուեց,

իսկ հաւաքուած գլխաւորները^{***} եւ նրա [կայսեր] համախոհները իրոն իրեմց շարափառութեան արձան կանգնեցնելով Նետոնի տոմարը, հաստատեցին նախկինում եղած Նեստորի եւ կամ նրանից էլ աւելի բարձր՝ Սամսուացու^{**} աղանդը: Քանզի թէպէտե ծայները տարբերուում են, սակայն դժմքերը նոյն են բերում^{***}:

Քանզի յիշատակութեան անարժան Նեստորը անդուու բերանով յանդնեց երկու որդի ընդունել՝ մէկն Աստծոյ Որդին, իսկ միւսը՝ սուակ Մարիամից ծնուած մարդ՝ [Աստծոյ] խօսքի տաճար [կացարան], եւ ուսուցանում է, թէ նա² Սուրբ Հոգով միջոցով գօրացաւ: Քանզի նա 〔Նեստորը〕 սուրբ Կոյսին մարդածին է համարում, այլ ոչ թէ Աստուածածին, եւ մահկանացու մարդ է համարում [Քրիստոսին], նաև չի ընդունում, [թէ] Բանն Աստծոյ իր մարմնով է ամեն տանջանք կրել: Այդ պատճառով էլ 〔Նեստորը〕 նզուուեց:

Իսկ Քանզիերոնում հաւաքուածները շանդգնեցին նոյնն ասել [եւ] երկու բնուրյին [Եուրին] սահմանեցին, որի [համար էլ] սուրբ վարդապետների կողմից երկարնակներ եւ հայկոյողներ կոչուեցին: Քանզի մի⁴⁰² բնութեանն ուղրում են տանջանքները՝ քաղցելը, [Գողգորայի] ճանապարհին հոգնելը, գոր գգալը^{***}, նաև յանդգնում են անզիտութիւն համարել խաչը եւ բոլոր բոլորինները: Իսկ հրաշագործութիւնները եւ այլ բաները [վերագրում են] միւս եւրեանը՝ իրեւ Աստծոյ, որը պարզապես լիի մեկասացած է մարմնականից: Եւ այսպէս երկուսի են քարոզում, մէկը՝ բնական պահանջներին ենթակայ մարդ, իսկ միւսը՝ մարդուց վեր, մէկն՝ [Աստծոյ] բնակարան, իսկ միւսը՝ բնակիչ, մէկը՝ չարչարելի, իսկ միւսը՝ անչարչարելի, թէպէտե մէկ դէմք [ունեցած] են համարում: Ապա իրաւացիորեն նզուուեցին երկրի ուղղահաւատների ու վարդապետների կողմից:

Քանզի մեր Փրկչի առաքեալները մէկ Տէր Յիսուս Քրիստոսի քարոզեցին: Եւ նոյն նրա խաչ բարձրանալն առաւել քացայայտ Պողոս [առաքեալն] է գումարում. «Եւ փառքի Տիրոջը խաչ հանեցին, եւ Աստուածորին նաեւ ճաշակեց, առաւ է, մինչ թշնամի էինք, [եւ] հաշտուեցինք Աստծուն նրա Որբու մահուամբ»: Եւ թէ՝ «Մեզ համար մեռաւ Քրիստոսը, եւ նոյն Աստուածն, ասսմ է ամեն ինչի վերջում, յախտեանս օրինեալ [է], ամէն»: Եւ մեզ այսպէս քարոզեցին Բանն Աստծոյ [Քրիստոսին] ամենայն մարդկային [տառապանքները] կրած իր մարմնով, անձով [եւ] առանց մեղքերի: Եւ իրաման տուեցին. «Ովքեր այս վարդապետութեանը չեն հետեւում նրանց [ձեր] տանը ընդունել եւ ողջոյն շտար, որպէսզի նրանց մեղքերին մասնակից չլինեք»:

^{*1} Ի՞նա՞ Պողոս Սամսուացու աղանդաւորի:

^{*2} Ի՞նա՞ Մարիամից ծնուած մարդը:

Այս՝ ըստ առաքեալների եւ ըստ երանելի վարդապետների հրամանի՝ փախչներ անհծուածներից եւ նրանց դժոխք ժառանգեցնող փխխումից^{***} առաքեական անրիծ հաւատու մեզանում պահելով. քանզի հերծուածողների խմորը դեռեւս քաղցկեղի նման ճարակում է մինչեւ գրեթե ի մահ: Մանաւանդ որ [այն] հասաւ միեւնոյն վարդապետութեամբ [մեզ հետ լուսաւորածներին]^{***}: այսինքն՝ վրացիներին. որոնք թիչ առաջ ասուած ժահանուտ ուսմունքը մեծարանքով ընդունեցին եւ իրենց մէջ հաստատեցին աստուածապահութեան լոկ ծեր ցոյց տարով պարզամիտներին, իսկ նրանց. ովքեր սովորութիւն ունեն նրանց եւտ միաբանուելու, բայց ի-թենց գօրական [Վրայ] մնացին. նրանց էլ [Վրացիների] հեռացրին:

Այս պատճառով մեզնից առաջ կարողիկոսական աստիճանի վրայ եղածները անհրաժեշտ համարեցին գրել Աղուանքին. իսկ մնեք [գրեցինք] Վրաստած Կիրոնին. որ կարողիկոս է անուանում. եւ նրա աթոռակիցներին: Քանզի [նա] Ցուրտափ եկեղեցու եպիսկոպոսին. որը երկու երկրների [միջևն] միջնորդութիւնն էր պահպանում. ուղղափառ հաւատի պատճառով հայածական արեց. իսկ հայրենի^{***} ծիսակարգը. որ սուրբ Շուշանիկի կողմից էր հաստատուած. հակառակ մեզ խրխխտանալով վերացրեց:

Այս պատճառով գրեցինք. որպէսզի յետ դառնայ ճշմարիտ հաւատին և հաստատուն մնայ առաքեալների աւանդութեան մէջ, որը [մեզ] տրուեց մեր վարդապետների միջոցով: Իսկ նրանք ընդդիմանալով՝ երկու անզամ հակառակ գրեցին մեզ: Քանզի նոյն այն սուտանունը Ուրմզի որդի Խոսրով արքայի ժամանակ նոյն Վրաց եկեղեցու գործիք լինելով՝ Նեստորի ուսունքի [հետեւարդ] մի ոմն եպիսկոպոսի ընդունեց եւ իրեն յանձնեց նոյն հայերիչ վարդապետութեանը՝ [ինը] առջեւում ունենալով Քաղկեդոնի ախտը: Ապա թէպէտե այլ մարդուն ենուացրին. բայց թոյների մրուրը պահպանեցին: Եւ իրենց անօրէնութիւնը աւելի ուժգին ընկալեցինը [նրա] երրորդ նամակում. [որութեոյ] նաև պարծենալով խրխխտացաւ, թէ չի բոլոր պահնոր, ու նաև համարձակուեց մեզ իրենց յետեւից դէպի խորխուատ շեղեմ դաս տալ ամբարիշտ Կիրոնը:

Այս պատճառով նախկինում հոռոմների վրայ մեր վարդապետների դրած քանալրանքը. որը կը մնայ մինչեւ վերջ, եթէ շդառնան ճշմարիտ [հատաքան]. մենք նոյնը վրացիների վրայ հրամայեցինը [ինեւ], եւ ըստ այնու ամենեւին չհադրդակուել նրանց եւտ ոչ աղօքրով, ոչ կերակուրներով, ոչ ընալելիքներով. ոչ բարեկամութեամբ. ոչ դայեակուրեամբ, զննայ Խաչը՝ աղօքելու. եւ ոչ էլ նրանց մեր եկեղեցիներում ընդունել. նաև ամսանալուց ամենեւին ենուու մնալ. այլ միայն որեւէ բան գնել կամ զնով^{***} [տալ. ինչպէս երեւաներին]: Նոյն երամանը նաև արուանների վե-

^{*1} Ի՞նա՞ Մշեսիքի և Սամսուացու խաչը. ինչպէս որ լիու ասուու է. «Եկաք բորբոքում».

բարեկալ թող անկապտելի մնայ, որպէսզի պատկառելով յետ դառնան
թիւր ճանապարհից:

Իսկ մենք չենք լոի խրատելոց, քանի դեռ կենդանի ենք, եւ մեզնից
յետոյ Եեկողներին էլ աղաջում ենք նախանձաւոր լինել մեզ՝ նրանց ուղ-
ղութեան քերելու համար: Իսկ ներկայ ժամանակս [նրանք], ովքեր հա-
ղորդուել են նախկինում եւ կամ [այժմ] մեր կողմից հեռացուածերի հետ՝
կամայ թէ ակամայ, եւ կամ տգիտութեամբ, այդպիսին թող մարզարեխն ա-
զօքբներով ծայճակից լինի, թէ՝ «Իմ մանկութեան անգետ մեղքերը մի՛ յի-
շիր», եւ այլեւ թող զգուշանայ՝ քստ մեր կանոնական հրամանի:

Իսկ եթէ որեւէ մէկը անխրատաքար վարովի [ու] նրանց հետ հաղոր-
դակցովի եւ կամակից լինի նրանց պիղծ հաւատին, այդպիսիները թող
նզումուն հոգով, նզովուեն մարմնով ու իրենց ողջ կեանքով, եւ [քոյ]
հեռացուեն Աստծոյ սուրբ Եկեղեցոց եւ լինեն խաւարաբնակ ու յափսե-
նական իրին կերակոր: Իսկ եթէ որեւէ մէկը գոռոզանայ [ու] արիամարիի
այս նզովքները, այդպիսին թող գիտենայ, որ հոգեւոր պատուհասից
յետոյ պատրաստ ենք նաեւ մարմնական պատուհասը կիրառելք]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

1. Ըստ Աստուածաշնչի՝ Տերը Մովսէսին նշանակում է Խրայէլի ժողովրդի
առաջնորդ եւ ասում, որ նա պէտք է հրեայ ժողովրդին Եզիատոսից առաջնոր-
դի Խրայէլ: Մովսէսը փորձում է խոսափել՝ պատճառաբանելով, թէ ինքը
քարծ ծայճ չունի, նաեւ անվարծ է խօսում (տես Ելք Դ 10): Էջ 19

2. Երեմիա մարգարեխն Աստուած նշանակում է Խրայէլի առաջնորդ, սա
կ պատճառ է բռնում իր անշափահասուրինը: Էջ 19

3. Այս հատուածում հնագոյն ծեռագրի (ԺԵ դար) գրիչը մէկ-երկու տառի
տեղքա է բռնել, ապա գրել մայր օրինակից իր վերծանած իտափ անհասկա-
նալի տառախումը: Հնարաւոր է մտածել, թէ սկզբնօրինակում կարող էր
լինել Տզի անտի, ուստի եւ բնագիրը հասկանալ՝ ի գրոյ, [զի անտի] առաքե-
ցալ ի թեն: Էջ 19

4. Այստեղ տպագրում շեղատառ տրուած, այսինքն՝ անհասկանալի հա-
մարուած, եւ այլուստ իրօք անծանօք բառուտ բառը, մեր կարծիքով, անհրա-
ժշտ է ընկալել բառացի, բանաւոր իմաստով: Էջ 20

5. Անարոնը եւ Եսային հրեական առաջնորդներ էին Քրիստոսից մի քանի
դար առաջ: Էջ 20

6. Զառակուսի փակագծում դրուած այսպիսի բառերով կարելի է լրացնել
միտք՝ անշուշտ ծեռագրական մի կորստի տեղում, որի մեծութիւնը հնարա-
տը չէ անգամ գուշակել: Էջ 21

7. Բնագրում (թէ՝ տպագրում, թէ՝ ծեռագրում) այստեղ՝ յացի. Ենթադրում
ենք, որ պէտք է կարդալ՝ յանցի (յանցանել, զանց առնել իմաստով): Միաժա-
մանակ յաջորդող աստուածային բառի սկզբում վերականգնելով զ նախու-
թը: Էջ 21

8. Բնագրում այստեղ եւ նմա է, որի փոխարէն ուղղելի է՝ ի նմա: Էջ 25

9. Տպագրում այստեղ բազմակետերով պակաս է նշուած, բայց ծեռագրում
առկայ է զի շաղկապը, որը լիովին տեղին է, յատկապէ՝ մեր նախորդ ուղղումն
մնութելու դէպքում: Էջ 25

10. Նարեկայ վանքը գտնուում է Սեծ Հայրի Վասպուրական նահանգի Ռշ-
տունեա գաւառում, Վանայ լիի արեւելեան ափից ոչ շատ հեռու: Այս վանքը
մեծ ծաղկում ապրեց Ժ դարում: Նարեկ էր կոչում նաեւ այդտեղ գտնուուղ գի-
լը, որտեղ ծնուեց Գրիգոր Նարեկացին՝ հայ հոչակատոր բանաստեղծը եւ վան-
քի միաբանութեան անդամը: Էջ 25

11. Կեփաս անուանումն ասորերէն քար է նշանակում. Քրիստոսն այս ա-
նունով էր կոչում Պետրոս առաքեալին, որի անունը յունարէն նոյնպէս քար է
նշանակում: Էջ 26

12. Բնագրում գրչի վրիպակով՝ նման, որը պէտք է ուղղել՝ նմին: Էջ 26

13. Բնագրի յառածի բառը, որը տպագրում շեղատառ է դրուած (իբրև անհասկանալի), կարդում ենք ի առակ, այսինքն՝ միջոցով, շնորհի: Էջ 27
14. Այստեղ ձեռագրի տասմ կապ բառերը տպագրում իրաւացիորեն առաջարկուած է հասկանալ՝ յայսմ կամ («արա մէջ եմ գտնուում»): Էջ 27
15. Բնագրում անշուշտ վրիպակով՝ կատար է: Էջ 27
16. Շեռագրի այս նման բառը տպագրում վրիպակով դարձել է նման: Էջ 28
17. Հաւատարմատը մեզ չխառած գրի անուանում է, որը գրուած է եղել երկարնակների դժմ: Էջ 28
18. Երկարնակները մեր եկեղեցու տեսակետից այն քրիստոնեաներն են, որոնք Քրիստոսի մէջ երկու առանձին բնութիւն (քնոյթ, եռութիւն) են ընդունում աստվածային եւ մարդկային: Էջ 28
19. Պատարագամատոյցը գիրք է, որտեղ պատարագի ասմունքներն են կարգարուած ձեւով գրուած: Էջ 28
20. Ուխտանեսին Հայոց պատմութիւնը պատուիրել է գրել Անանիա Նարեկացին՝ Նարեկայ ուխտի առաջնորդը, ամբողջ Ա գլուում պատմիչը նրա հետ է խօսում, նրան է փառարանում: Էջ 28
21. Ասելով՝ կրում ես [իբրև] հովուապետական մականուն («մակագրեալ ունի զպետական անուն»), Ուխտանեսը նկատի ունի Նարեկայ վանքի անունը: Էջ 28
22. Բնագրում՝ լուեալ էր մեր ... քո ... առնել, որ կարելի է ընկալել նաեւ՝ լու էինք, որ ստեղծեն էիր: Սակայն ըստ բովանդակութեան՝ ճիշտը սա է: Էջ 28
23. Տպագրում՝ հայոց է, սակայն ձեռագրում՝ հաւոց, ուրեմն՝ նախնիների նախնի: Էջ 28
24. Բնագրում՝ իստագիս է, որը պէտք է վերականգնել՝ ի ստացիս: Էջ 28
25. Բնագրում՝ զոր արարեալ, որ կարելի էր հասկանալ նաեւ՝ որ ստեղծեն էիր (հմտ. ծան. 22): Էջ 29
26. Ձեռագրում՝ եւ պայծառութիւն, տպագիրն առաջարկում է շեղատառով՝ եւ ի պայծառութիւն: Սակայն ճիշտ է՝ եւ շաղկապը համարել վրիպակ ու պարզապէս վերականգնել՝ ի պայծառութիւն: Էջ 29
27. Ասելով՝ զայս եւս պատմութիւն, պատմիչը չի բացատրում, թէ կոնկրետ ո՞ր պատմութիւն (թերեւս՝ նախադասութեան առանց այն էլ բարյ ու երկարաշունչ ստացուելու պատճառով), չնայած դժուար չէ ենթադրել, որ նա նկատի ունի Վրաց եկեղեցական բաժանման պատմութիւնը: Էջ 29
28. Տպագրում վրիպակով՝ հայցեք է, սակայն ձեռագիրը տալիս է ճիշտը՝ հայցեի (հման խնդրեցի): Էջ 29
29. Տպագրում՝ յիշատակեալ է, սակայն ձեռագիրը տալիս է վերջին երկու տառերի վրայ պատույ նշանով յիշատակ[...]ի ընթերցումը, որն ըստ բովանդակութեան՝ ճիշտ կը լինի վերծանել՝ յիշատակելի: Էջ 29
30. Բնագրում՝ բաժանեալք է, որը կարդում ենք՝ չըբաժանեալք: Էջ 29

31. Եսու քայլ Գալուստ Տէ՛ Մկրտչանի անշունենու մէջ ցեղի անուն էր, ու ունի նաև Հառուսաւ և մկրտչուցու որու նամաւ ևսու անօսն լուսական նկատու գործ և ուսուած ու ումուտ հարուսաւ անուն ուղարձաւ հայերի մէջ յառած, ուու սուաւ նաև նաւատու մէջ քառու ու ծուր: Էջ 30

32. Բնագրում՝ Անդրանիկ է ուու ասուուր ու ունի գորչ անփութութեան արդիք և Տառաւ: Մես արքայի ասուաւ ուսուատուն էջ 30

33. Տարագրու սուաւ մետաստորեաւ տառ գործ է, աւոր է կարդալ ի պատճեն էջ 31

34. Խամ Մարտիրոս: Սովու սուուսանը, ուոր շատ ձեռագրերում եւս նկատուի է Աստու և աստուեամբ: մեծ սոսասու աստայանուն նար Ուխտանիւ ուոր մոսաւ, եռն ձեռագրու սոսուուսու սոսու ամումնորի ձեւները, թեյտ նարասու և ու քառակ մի սապաւ ուու ուսասպաւ ձեւու շորուաւ լինի ոչ թէ մեր պատճենը, այլ հուսաւած: սոսուագոռուուուր ուու: մելու գորչ տակ: Էջ 31

35. Սոսուուքը Մարտու Սովու սուուսանը է, ու ուոր վնաքերի պատճենը նարասանւած սասասուու: նասուսասու ար ուուրը, «Եյ, ուու ու հանգաւ, այ օնքում ու ու մոսասասու վորա ուուրը» (ուու և Գ. Գ. էջ 16): Էջ 32

36. Եյ, ուորասանուու օստառառոսու և սուաւ ար անուան Հարթը ձեւը, ուու նարասանւու մոսաւ Ֆառար և Ֆառարուու էջ 32

37. Մարտիրոս բրաւանուու Մրջաւանը, հոն բարպարենիւ և իմմնադրուել է թէ և Յու ուսապամատասուու Քառարի շուն: ուոր, մինչեւ մեր բուականութիւն 12-րդ ուորը, աւոր, ու սոսունեարը: Էջ 33

38. Բնագրու հաւորնի չուրուց տառասուու ուուրը գու: Էջ 33

39. Խորանաց Պատուութեան բնագրու կազմուները վերացաւ: և Անդրանիկ ձաւը բաւաւ Պատուասու հրմնակաւ ձեռագրախնբերը ուոյն և նեն ար Անդրանիկ ընթերցուար: Էջ 33

40. Բնագրու այսուու անշուս գորչ ոն-ուու վրիպանու Բաղդովին: սանիս սոսու մի բանը ասաւած սաւ ճրաւ ձևու Գալուստու Գալուստուն: Էջ 36

41. Բնագրու այսուու Հովհաննեսուու (տպագուու վրիպակուու Հովհաննեսուու): ինն Ունինսուուուն հնացւ Հովհաննեսուու Հովհաննեսուու «Եագուննարանքանքանիւ» լանցու ուորը ուայսապաւ աղրութերում և Ցաջորի վյսում նիսունեն ձեռագիրը տալիս: սոսուաս ուուկու Եօմիքիրուրայ (տպագու վրիպակուու): Ին Հովհաննեսուու: տարօրաւարը: Էջ 36

42. Աւ և այսուու գուրսներու տաղանանեսըն ու ցնդանունները 11խտանիւ մեջուշ վեցուց: Փիրու Տրուագաց «Ժանանակագրութիւնից» (որը կրուստասու: որու Անանի Տրուագաց կատ Անանուի երկամիութիւն): սոսամ մեծ ասասաներու և յառնագութեանը: Էջ 36

43. Բնագրու վրիպակուու Մարտը գորսանաւ Մարտը: Էջ 37

44. Բնագրու բայտագութեան արդրեցի: Փիրու Տրուագաց կատ Անանուի երկամիութիւն և Անդրու: Փիրու նաև յացորդ կողու անուն է Անդրու: Փիրու նաև յացորդ կողու անուն է Անդրու: Փիրու նաև յացորդ կողու անուն է Անդրու: Էջ 37

45. Բնագրում վրիպակով՝ **Ռոգոս:** Եջ 37
46. Բնագրում վրիպակով՝ **Պրենել:** Եջ 37
47. Կաւկաս (բնագրում վրիպակով՝ Կաւկաս), Տորոս՝ իմա՝ Կովկաս և Տարոս լեռնաշղթաները, որոնց գոյզ անուանաձեւերն ել հարազատ են վաղ միջնադարի հայ հեղինակներին: Եջ 37
48. Բնագրում վրիպակով՝ **Աղտաս:** Եջ 37
49. Բնագրում վրիպակով՝ **Պատրքենիս:** Եջ 38
50. Փիլիս Տիրակացու մօտ Ինդրոս գետը կոչուած է՝ **Փիսովն,** որը ճիշտն է: Եջ 38
51. Բնագրում գրչական ակնյայտ վրիպակով՝ **Ստածանի:** Եջ 38
52. **Հայոց Զորը Մեծ Հայրի Վասպուրական նահանգի գաւառներից մէկն է եղել:** Վաճայ լի հարաւ-արեւելեան եզերքից հասնում էր մինչեւ Հայկական Տարոսի լեռնաշղթան: **Հայոց Զորին հիւսիսից սահմանակից էր Տոսպ գաւառը, իսկ հարաւ-արեւմուտքից՝ Ռշտունիքը:** Եջ 40
53. **Հարքը Մեծ Հայրի Տորութերան նահանգի գաւառներից էր, որ ըմկնում էր Տարօս, Վարաժնունիք, Ապահունիք, Խորխոռոռնիք եւ Քզմունիք գաւառների միջեւ:** Հարքի կենտրոնական քաղաքն էր Մանազկերտը: Հարքուն է գտնուել Հայկ նահապետի առաջին բնակվայրը՝ Հայկաշեն: Այժմ Հարքը քաշանուած է երկու գաւառակների՝ Մանազկերտ եւ Բուլանուիս: Եջ 40
54. **Արմափիք Հայաստանի հնագոյն քաղաքներից է:** Գտնուել է Երասխ ծախ ափին մօտ՝ Արարատեան դաշտի սրտում: Ըստ Խորենացու՝ Արմափիք կառուցել է Հայկ նահապետի թոռ Արմայիս-Արամայիսը: Ք. ա. Դ դարուն դարձել է Հայոց մայրաքաղաքը: Արտաշատի կառուցումից յետոյ (Ք. ա. 180-ական թթ.) Արմափիք կորցրել է իր դերը: Եջ 40
55. **Գեղայ լեռը Գեղամայ լեռնաշղթան է Սեւանայ լի հարաւում կան նրա գագարներից՝ Գեղասարը, որը հասնում է 3346 մ բարձրութեան:** Եջ 41
56. **Սիւնիքը Հայաստանի հիւսիս-արեւելեան նահանգներից է, որը սահմանակից էր Այրարատ, Վասպուրական, Արցախ եւ Ուտիք աշխարհներին:** Կոչուել է նաեւ Սիսական: Եջ 41
57. **Գառնին Կոտայքը գաւառի մեծագոյն գիսղերից մէկն է, Երեւանից 30 կմ դեպի արեւելյ, Ազատ գետի աջ ափի սարահարքի վրայ:** Ըստ մի աւանդոյթ՝ որպէս թէ հիմնադրուել է Ք. ա. 2166 թ.: Գիտում է գտնում Գառնիի հոշկաւոր հեթանոսական տաճարը, որը կառուցուել է մ. թ. Ա դարի 2-րդ կեսին (ըստ միւս տեսակետի՝ Գ դարի վերջերին): Խորենացին ասում է, թէ Գառնին հիմնադրել է Հայկ նահապետի ծոռ Գեղամը: Եջ 41
58. **Վարաժնունիքը Մեծ Հայրի Այրարատ նահանգի փոքր գաւառներից մէկն է, որն արեւելքից սահմանագծում է Սեւանայ լճով, հարաւից՝ Կոտայք գաւառով, իսկ արեւմուտքից՝ Նիգով (Ապարան): Հետագայ դարերում Վարաժնունիքը կոչուել է նաեւ Ծաղկունք, Ծաղկունեաց Զոր: Այժմեան Ծաղկա-**

- ծորը, ըստ հայր Ղեւոնդ Ալիշանի՝ պէտք է պատկաներ Վարաժնունիքին, բայց այլ աղբիւներ այն յատկացնում են Նիգ գաւառին: Եջ 41
59. **Մեղացիները կամ մարերը Իրանական բարձրավանդակի հիւսիս-արեւմուտքում գտնուող Սեղիա կամ Մարաստան երկրի բնակչներն էին: Առաջին անգամ յիշատակւում են Ք. ա. Թ դարի 2-րդ կեսին: Մարաստանը Ք. ա. 550-ական թթ. նուածել է Կիրոս Սեծը, եւ դրանից յետոյ Մարաց տէրութիւնն անկում է ապերել: Եջ 41**
60. **Կորրուքը Մեծ Հայրի Կործայր նահանգի ամենամեծ գաւառն է՝ Հայաստանի հարաւային սահմանում:** Այն հարաւից սահմանակից էր Ասորեստանին, իսկ հիւսիսից՝ Մոլկաց աշխարհին: Եջ 42
61. **Բնագրում վեց հազար բիւրաք:** Սակայն գտնում ենք, որ այդպիսի արտառոց ծեսակերպումով (այն ուղղի հասկանալու դէպրում նշանակում է՝ վարսուն միլիոն մարդով) Ուխտանեսն իրականում ցանկացել է նշել վարսուն հազար բիւր, որն ստացուել է նրա մօտ (դժուար թէ նման «վերահաշուարկը» կատարեր որեւէ ուզ գրիչ) իր աղբիւրի տեղենկութիւնը բուարանօրեն սխալ հասկանալու հետեւանրով. Ըստ Մովսէս Խորենացու՝ Արամն արեւմուտք է արշաեւ չորթիք բիւրովք հետեւակազարու եւ երկու հազար հեծելովք (Եջ 46), այսինքն՝ քառասուներկու հազարանոց զօրքով, որմ, ի դեպ, իրական պատմական թիւ պէտք է լինի, բանի որ մօտ է անտիկ հեղինակների հաղորդած ինչ-ինչ տուեալների: Եջ 42
62. **Կեարիան Կապաղովկիայի (Փոքր Ասիայի կենտրոնում) քաղաքներից է, որը կոչուել է նաեւ Մաժաք:** Մովսէս Խորենացու վկայութեամբ՝ Արամն այստեղ կուսակալ է նշանակել Հայկի սերունդներից՝ Մշակին: Եջ 42
63. **Բնագրում՝ Պայապիս (տապազրում վրիպակով՝ Պայասիս) քաղաքի,** որն ուղղում ենք ըստ Խորենացու՝ Պայապիս Քաղեայ՝ համարելով, որ Վրիպում որեւէ գրիչ է արել: Եջ 42
64. **Ջեռագրում վրիպակով՝ Արամայ,** որն ուղղուած է արդէն տպագրում՝ Արայի: Եջ 42
65. **Նինուէն Ասորեստանի հնագոյն քաղաքներից է, որի աւերակները Իրաքի Մոսուլ քաղաքի մօտ են:** Տիգրիսի ափին: Ք. ա. 5-3-րդ հազարամեակներում բնակատեղի է եղել, ապա՝ քաղաք: Ասորեստանի մայրաքաղաքն էր: Ք. ա. 612 թ. քաղաքը կործանեցին բարելա-մարական զօրքերը: Եջ 42
66. **Արայի դաշտը Արարատեան դաշտն է:** Եջ 42
67. **Այս ողջ նախադասութեան միտքը Խորենացուն է, որն Ուխտանեսը պարզապէս վերարտադրել է:** Եջ 42
68. **Տօսպը Մեծ Հայրի Վասպուրական նահանգի գաւառներից է, որի կենտրոնը Վան քաղաքն էր. յաճախ գաւառը կոչուել է Վանտոսպ:** Այս գաւառում է եղել նաեւ Վարագայ վանքը, որը 1915 թ. հիմնայատակ կործանուեց բուքք ցեղասպանների կողմից: Եջ 43

69. Բնագրում՝ եւ զմատակ ամբարտակ ի գետոյն հանեալ, որի զմատակ բառը կարդու ենք՝ **վիճայտակ**: Եջ 43

70. **Պարոյըր ըստ** մեզ հասած աւանդոյրի՝ Հայոց առաջին Հայկազունի թագաւորն էր, որը միանալով մարերի Կիաքսար եւ բարելացիների Նարուպալասար թագաւորների հետ՝ գրաւեց Նինուն, որով էլ վերջ տրուեց Աստրեստանի թագաւորութեանը (606 թ. Ք. ա.): Սրա որդին էր Հրաշեան, որը Բաբելոնի թագաւոր Նարուպողնոսորի հետ արշաւեց Երուսաղեմի վրայ, գրաւեց այն եւ իրեւ գերի Հայաստան բերեց հրեայ Շամբար-Բագարատ իշխանին, որից ծագեց Բագրատունիների տոհմը: Եջ 43

71. **Աքրահամը հրեաների մեծ նահապետն էր:** Խսահակը նրա որդին էր, որն Աստծոյ խոստումով (աւետումով) ծնուեց, ուստի կոչուեց Խոստման որդի: Ըստ Աստուածաշնչի՝ Տերը կամեցաւ Աքրահամի հաւատը փորձել, իրամայեց գոհել իր խոստման զաւակին՝ Խսահակին: Աքրահամը մի լեռան վրայ գոհասեղան է սարքում, կրակ անում, կապում է Խսահակին եւ վերցնում սուրբ, որ միխ նրա կործըր, սակայն Աստուած իրեշտակի միջոցով արգելուն և ատելով, թէ՝ «Դու Աստծու նկատմամբ երկիրդած ես այնքան, որ շխնայեցի քա զաւակին»: Եջ 43

72. **Զեռագրում՝ Կահար ամա կենեալ ամաց,** իսկ տպագրում ամա տառախմբի փոխարէն թագմակէտ է դրուած՝ իրաւացիօրէն զնահատելով այն իրեն գրչի գրած, ապա խոտանած աւելորդ տառեր: Եջ 44

73. Սրա օրոք տասը ցեղ ապատամբեցին, որոնց դէմ նա պատերազմեց իր կեանքի ողջ ընթացքում: Ժողովուրդն էլ կոռապաշտ դարձաւ: Եջ 45

74. **Այստեղ եւ նախորդող ցուցակում** բուականները յաճախ լրջօրէն շեղուած են միւս հայկական աղքիրների տուեալներից եւ իրական ժամանակագրութիւնից, սակայն նոյնուրենամբ բողել ենք՝ ըստ բնագրի: Եջ 45

75. **Այս խնդրում Ուխտանէսն անփութութեան սխալ է թոյլ տուել,** քանի որ այս գլուխը վերաբերում է Աքեննենեան թագաւորներին, իսկ տուեալ մտայնութեան աղքիրը՝ Մովսէս Խորենացին, Աքրահամ նախահօր եւ Զեսուրայի որդի Խսահակից սերուած է համարում Պարսկաստանի միայն պարթեազգի արքաներին (տես Եջ 102): Եջ 45

76. **Բնագրում՝ Վշմասպեան Տ-Մ տառերի յաճախադէա վրիպակով:** Եջ 45

77. **Այս արքայի Ավքոս մականունը եւ Քոս է դարձել կամ որեւէ արտագրոյի,** կամ հենց Ուխտանէսի գրչի տակ: Եջ 46

78. **Բնագրում՝ զամենայն արուեստս ի մանկութեան:** Պետք է լիներ՝ արուեստս իմաստութեան, ինչպէս որ յայտնի աղքիրներում է: Այս դէպրու ուղղում ենք տալիս՝ համարելով, որ գրչական վրիպակ է թոյլ տրուել Ուխտանէսից յետոյ որեւէ արտագրոյի կողմից: Եջ 46

79. Խորենացու ծեռագրերի մի մասը եւս ունի անուան այս Աշրաեակ ծեր՝ փոխանակ Աժդահակի: Եջ 47

80. **Աստուածաշնչի այս խօսքի Արարատեան թագաւորութիւն եւ Ասքանացեան գունի անուանումների տակ հասկացուել են Հայաստանը եւ Հայաստանի գորքը,** եւ դա վերաբերում է Ք. ա. Է դարին: Եջ 47

81. Մովսէս Խորենացու Ա խմբի ծեռագրերից մի քանիսում եւս Կոռնակ թագարի անունը Կոռնակ ծեսով է: Եջ 47

82. Խորենացու ծեռագրերից շատերը եւս տալիս են ոչ թէ **Փառոս**, այլ այս Փառս անուանածեւը: Եջ 47

83. Ուխտանէսը ճիշտ չի հասկացել Խորենացու բուն միտքը, որն այլափոխուած է արդեն վերջինիս ծեռագրերում: Ստ. Մայսասեանցը եւս այն միայ է բարգմանել՝ Մրանց անունով կոչուած են վերջին Երուանդն ու Տիգրանց լատ Յոյսի: Խսկ պատճառը զՏիգրան կամ Տիգրան ընթերցումն է, որի փոխարէն պէտք էր վերականգնում տալ [ց]Տիգրան: Եջ 47

84. Խորենացու ծեռագրախմբերից մէկում եւս այսպէս է՝ յիշեսցուք: Բայց ճիշտ միտքը պահել է Ա խումբը՝ յիշեաց ոք, այսինքն թէ՝ [գուցէ] որեւէ մէկը յիշել է: Եջ 47

85. Ձեռագրում՝ զգառոս, որը տպագրում իրաւացիօրէն ուղղում է՝ զգաւուն: Եջ 49

86. Խորենացու մօտ՝ Առաւան: Բացի այդ, ըստ Պատմահօր՝ Առաւանը եւ Զարեհը ոչ թէ Տիգրանի. այլ նրա որդի Վահագնի զաւակներն են: Եջ 49

87. **Բնագրում՝ Զարեհուան:** Եջ 49

88. **Այս Բաա Տիրանի փոխարէն Խորենացու մօտ՝ Բար, Տիրան, Վահագն:** Եջ 49

89. **Բնագրում վրիպակով՝ Աղեքսանդրացոց Մակեդոնացոց:** Բացի այդ, ըստ Խորենացու՝ Աղեքսանդրից պարտուածը եղել է Տիգրանի բոռներից մէկը Վահեն: Եջ 49

90. **Բնագրում անշուշտ գրչի վրիպակով՝ Աքրահամ:** Եջ 49

91. **Բնագրում վրիպակով՝ ի Սահակայ:** Եջ 49

92. **Բահի կամ Բահի, որ կոչում է նաեւ Բահի Առաւոտին (ի մամա՝ Բահի լուսանանշ), Բակտրիա երկիրն է՝ Ամու-Դարիայի հովտում, Պարապամիս, Պամիր եւ Տեանշան լըռների միջեւ՝ իր կենտրոնական քաղաքով:** Սա պարթեանական բնօրրանն էր: Եջ 50

93. **Բնագրում՝ յԱքեղեայ.** Խորենացու ծեռագրերում՝ յԱքիղեայ կամ յԱքիտիղեայ (տես Եջ 102): Եջ 50

94. **Բնագրում՝ զեարց եւ զիրաման,** բայց Խորենացու մօտ՝ զի ամենեցուն: Եջ 50

95. Ըստ Խորենացու՝ դա Սելեսկոս Նիկանովի թոռան՝ Անտիոքոս Թէոսի տանամէկերորդ տարին է (տես Եջ 102). Ուխտանէսը (կամ մի ուշ արտագրոյ) անշաղող կրծատում է արել: Եջ 50

96. **Խաղտիքը** (բնագրում՝ Խախտեաց) երկիր է Փոքր Ասիայի հիւսիս-

արեւելքում. Մենք հարաւ-արեւելեան ափերին: Տարածքը համապատասխանում է ներկայիս Լազիստանին և Ազարիային: Էջ 50

97. Մովսէս Խորենացու ձեռագրերում հանդիպում են եւ հիմնակամ՝ Մաքարա Կատինայ. եւ Մաքիբայ Կատինեայ ձեւերը: Էջ 50

98. Գահենամակը Հայոց նախարարների. իշխանների աստիճանակարդի (զահերի. նատատեղերի) պաշտօնական ցուցակ-իրովաբանակն է: Էջ 51

99. Հնարաւոր է. որ այս անսպասելի եւ կրկնուած (տես ստորեւ) միտքը (և նախնայն մերոյ) առաջացել է Ուխտանէխի կամ անզամ մի որեւ ոչ արտաքրոյի գրի տակ Խորենացու մօտ առկայ նախ եւ առաջին բառերի այլափոխման հետեւանքով: Էջ 51

100. Բնագրում բազաւորութեան. ուղղում ենք՝ բազաւորութեան: Էջ 51

101. Տանուաւրական պատի նշանակում է նախարարական աստիճան, որով մարդը ստանում էր բազմարի արտօնութիւններ: Էջ 51

102. Բնագրում բազաւորին իւրոյ. ուղղում ենք՝ բազաւորին իւրոյ: Էջ 51

